

ՄԻՐԶԱ  
ՅՈՒՍՈՒԹ ՆԵՐՍԵՍՈՎ

---

# ՀՇՄԱՐՏԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ



ԵՐԵՎԱՆ 2000

*Մեկենասությամբ Արմեն և Բերսաբե Ճերեճեան  
Հիմնադրամի - ԱՄՆ*

*This Publication was made possible by Armen and  
Bersabe Jerejian Foundation Inc. USA*

NATIONAL ACADEMY OF SCIENCES  
REPUBLIC OF ARMENIA  
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

---

MIRZA YUSUF NERSESOV

---

**A TRUTHFUL  
HISTORY**

**Translation,  
introduction and commentaries by  
K. P. Kostikian**



---

YEREVAN- 2000.

ՄԻՐԶԱ ՅՈՒՍՈՒՖ ՆԵՐՍԵՍՈՎ

**ՃՇՄԱՐՏԱՅԻ  
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**

Թարգմանությունը՝ քնագրից,  
մերածությունը և ծանոթագրությունները  
Զ. Պ. Կոստիկյանի



ԵՐԵՎԱՆ 2000 թ.



A II  
86142



Խմբագիրներ՝

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Մ. Կ. Զուլայան

պ.գ.թ. Պ. Ա. Չոբանյան

ԴՏՀ 941 (479.25)

ԳՄԴ 63.3 (2Հ) 43

և 631

Ներսեսով Մ.

և 631 Դժմարտացի պատմություն. - Եր.: Զանգակ-97, 2000. - 360 էջ:

և  $\frac{0503020913}{0003(01)2000}$  2000 թ.

ԳՄԴ 63.3 (2Հ) 43

ISBN 99930-2-137-7

© «Զանգակ -97»

© Զ. Կոստիկյան

---

Հրատարակչության տնօրեն՝ ՄՈԿՐԱՏ ՄԿՐՏՉԵԱՆ,  
Հրատարակչության խմբագիր՝ ՄԱՇԱ ՄՆԱՅԱԿԻՆՅԱՆ,

Նկերիչ՝ ԱՐԱ ԲԱՂՂԱՍԵՐՅԱՆ,  
Համակարգչային ձևավորող՝ ՆՈՒՆԵ ՄԱԿԱՐՅԱՆ

---

Տպագրությունը՝ օֆսեթ, բուրդը՝ օֆսեթ, չափեր՝ 60x84/16, ծավալը՝ 22.5 տպ. մամուլ,  
տպաքանակը՝ 300, գինը՝ պայմանագրային

«ԶԱՆԳԱԿ-97» հրատարակչություն,  
Երևան, Վարդանանց փակուղի 8: 54-89-32

E-mail: zangak@arminco.com

*Մեկենասությամբ Արմեն և Բերսաբե Ճերեճեան  
Հիմնադրամի - ԱՄՆ*

*This Publication was made possible by Armen and  
Bersabe Jerejian Foundation Inc. USA*

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի Գիտական  
Խորհրդի որոշմամբ

---

Խմբագիրներ՝

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Մ. Կ. Զուլայան  
պ.գ.ք. Պ. Ա. Չոբանյան

ԴՏՀ 941 (479.25)  
ԳՄԴ 63.3 (2Հ) 43  
Ն 631

Ներսեսով Մ.

Ն 631 Ծշմարտացի պատմություն. - Եր.: Չանգակ-97, 2000. - 360 էջ:

Ն  $\frac{0503020913}{0003(01)2000}$  2000 թ.

ԳՄԴ 63.3 (2Հ) 43

ISBN 99930-2-137-7

© «Չանգակ -97»

© Զ. Կոստիկյան

---

Հրատարակչության տնօրեն՝ ՍՈԿՐԱՏ ՄԿՐՏՉՅԱՆ  
Հրատարակչության խմբագիր՝ ՄԱՇԱ ՄԱՅՄԿԱՆՅԱՆ

Նկարիչ՝ ԱՐԱ ԲԱՂՂԱՍՄԻՅԱՆ  
Համակարգչային ձևավորող՝ ՆՈՒՆԵ ՄԱԿԱՐՅԱՆ

---

Տպագրությունը՝ օֆսեթ, բուրժը՝ օֆսեթ, չափեր՝ 60x84/16, ծավալը՝ 22.5 տպ. մամուլ,  
տպարանակը՝ 300, գինը՝ սխառնագրային

«ԶԱՆԳԱԿ-97» հրատարակչություն,  
Երևան, Վարդանանց փակուղի 8: 54-89-32

E-mail: zangak@arminco.com

فرهنگستان علوم جمهوری ارمنستان

انستیتوی خاورشناسی

---

میرزا یوسف نرسسوف

## تاریخ صافی

ترجمه متن فارسی، مقدمه و حواشی به اهتمام

کریستینه کستیکیان



ایروان ۲۰۰۰



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ .....	11
ԱՌԱՋԱԲԱՆ .....	34
ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ ՀԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՑՅԱԼԻ, ԽԱՄՍԱՅԻ ԵՎ ՋԱՆԳԵՋՈՒՐԻ ՄԱՀԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ԱՅՆՏԵՂԻ ՄԵԼԻՔՆԵՐԻ ՈՒ ԽԱՆԵՐԻ ԾԱԳՈՒՄՆ ՈՒ ՍԵՐՆԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ .....	35
ԳԱՆՉԱԿԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ: ԱՅՆՏԵՂԻ ԽԱՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ .....	38
ՂԱՐԱԲԱՂԻ ԽԱՄՍԱՅԻ ՄԱՀԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԵՎ ՆՐԱՆՑ ՄԵԼԻՔՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ .....	39
ՋԱՆԳԵՋՈՒՐԻ ՄԱՀԱԼՆԵՐԻ ԵՎ ԱՅՆՏԵՂԻ ՈՐՈՇ ԻՐԱԴԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ .....	44
ՂԱՐԱԲԱՂԻ ԽԱՆԵՐԻ ԾԱԳՈՒՄՆ ՈՒ ՀՋՈՐԱՅՈՒՄԸ .....	46
ՓԱՆԱՀ ԽԱՆԻ ԿՈՒՎՆԵՐԸ ԽԱՄՍԱՅԻ ՄԵԼԻՔՆԵՐԻ ԴԵՄ .....	50
ՓԱՆԱՀ ԽԱՆԻ ՀՋՈՐԱՅՈՒՄԸ: ՆՐԱ ԱՎԱԳՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԳԵՐԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՈՐՈՇ ԵՐԿՐՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԻ .....	53
ՇՈՒՇԻ ԲԵՐԴԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ, ՄՈՒՀԱՄՄԱԴ ՀԱՍԱՆ ԽԱՆ ՂԱՋԱՐԻ ՀԱՐՉԱԿՄԱՆ ՈՒ ՁԵՌՆՈՒՆԱՅՆ ՎԵՐԱԴԱՐՁԻ ՄԱՍԻՆ .....	54
ՓԱՆԱՀ ԽԱՆԻ ՈՒ ՄՅՈՒՄ ԽԱՆԵՐԻ ԿԱԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ ՀԵՐԱԿԼ ՎԱԼԻԻ ԿՈՂՄԻՑ .....	57
ՈՒՐՄԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ ՖԱԹՀԱԼԻ ԽԱՆ ԱՖՇԱՐԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ ՂԱՐԱԲԱՂ, ՊԱՏԵՐԱՋՄՆ ՈՒ ՀԱՇՏՈՒԹՅՈՒՆԸ: ԻՐԱՎՀԻՄ ԽԱԼԻԼ ԱՂԱՅԻ (ՊԱՏԱՆԴ) ՏԱՆԵԼԸ ԻՐ ՀԵՏ .....	59

ԻԲՐԱՀԻՄ ԽԱԼԻԼ ԽԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ ԵՎ ԱՅԼՈՒՐ: ՀԱՐԵՎԱՆ ԽԱՆԵՐԻ ՀԵՏ ՆՐԱ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	63
ԻԲՐԱՀԻՄ ԽԱՆԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ ՆԱԽԻՋԵՎԱՆ.....	64
ԻԲՐԱՀԻՄ ԽԱՆԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ ԽՈՅԻ ԿՈՂՄԵՐԸ.....	64
ԱՂԱ ՍՈՒՀԱՍՄԱՆԴ ԽԱՆԻ ՀԱՐՉԱԿՈՒՄԸ ՇՈՒՇԻ ԱՄՐՈՑԻ ՎՐԱ ԵՎ ՆՐԱ ՁԵՌՆՈՒՆԱՅՆ ՎԵՐԱԴԱՐՉԸ.....	66
ԱՂԱ ՍՈՒՀԱՍՄԱՆԴ ԽԱՆԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ ԹԻՖԼԻՍ, ՊԱՏԵՐԱԶՄԸ ՀԵՐԱԿԼ ՎԱԼԻԻ ԴԵՄ, ՆՐԱ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԹԻՖԼԻՍԻ ԱՎԵՐՈՒՄԸ.....	69
ԳԵՆԵՐԱԼ ԿՈՍՍ ՎԱԼԵՐԻԱՆ ԶՈՒԲՈՎԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ ԿՈՎԿԱՍՅԱՆ ԵՐԿՐՆԵՐ ԵՎ ՆՐԱՆՑ ՆՎԱՃՈՒՄԸ ՀԱՂԹԱԿԱՆ ԲԱԶԿԻ ՈՒԺՈՎ.....	71
ԻԲՐԱՀԻՄ ԽԱՆԻ ՀԱՐՉԱԿՈՒՄԸ ՎՐԱՍՏԱՆԻ ՎԱԼԻԻ ՀԵՏ ԳԱՆՉԱԿԻ ՎՐԱ ՈՒ ՄԵԼԻՔ ՄԵՋՆՈՒՆԻ ՍՊԱՆՎԵԼԸ.....	73
ԱՂԱ ՍՈՒՀԱՍՄԱՆԴ ԽԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԱՐՇԱՎԱՆՔԸ ՂԱՐԱԲԱՂ ԵՎ ՆՐԱ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....	73
ՎԱԴԻՖԻ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....	76
ՀԵՐԱԿԼ ԽԱՆԻ ՄԱՀԸ ԵՎ ԳԵՈՐԳԻ ԽԱՆԻ ՎԱԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ ՈՒ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ.....	77
ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ ՈՒՈՒՆԵՐԻ ՍՈՒՏՔԸ ԿՈՎԿԱՍՅԱՆ ԵՐԿՐՆԵՐ, ՔԱՂԱՔՆԵՐԻ ԳՐԱՎՈՒՄԸ: ՂԱԼԱՇՆԵՐԻ ԴԵՄՆՐԱՆՑ ՄԱՍՍ ՊԱՏԵՐԱԶՄԵՐԻ ՈՒ ԱՅԼ [ԴԵՊՔԵՐԻ] ՄԱՍԻՆ.....	78
ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ ԼԱԶԱՐԵՎԻ ՄԱՐՏԵՐԸ ԱՎԱՐԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ ՕՍՄԱՐ ԽԱՆԻ ԴԵՄ ՈՒ ԼԵԶԳԻՆԵՐԻ ԲԱՆԱԿԻ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ.....	79
ԴԱՎԻԴ ՄԻՐՉԱՅԻ ՎԱԼԻՈՒԹՅԱՆ ՈՒ ԹԻՖԼԻՍՈՒՄ [ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ] ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՅՄԱՆ ՄԱՍԻՆ.....	83
ԿՈՎԿԱՍՅԱՆ ՏԱՐԱԾԱՐՉԱՆԸ ՑԻՑԻԱՆՈՎԻ ԿԱՌԱՎԱՐՉԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՐՉԱՆՈՒՄ.....	84

ԻՇԽԱՆ ՅԻՑԻԱՆՈՎԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ ՋԱՌ ՈՒ ԲԱՅԼԱԿԱՆ ԵՎ ԼԵԶԳԻՆԵՐԻՆ ՊԱՏԺԵԼԸ.....	85
ՈՌԻՍԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՀԱՐՉԱԿՈՒՄԸ ԳԱՆՁԱԿԻ ՎՐԱ ԵՎ ՆՐԱ ԳՐԱՎՈՒՄԸ.....	86
ԻՇԽԱՆ ՅԻՑԻԱՆՈՎԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ ԵՐԵՎԱՆ, ԿՈՒՎՆԵՐԸ ՂԱԼԱՍԵՆՆԵՐԻ ԲԱՆԱԿԻ ԴԵՄ ՈՒ ՁԵՌՆՈՒՆԱՅՆ ՎԵՐԱԴԱՐՁԸ.....	87
ԻՇԽԱՆ ՅԻՑԻԱՆՈՎԻ ԺԱՄԱՆՈՒՄԸ ԳԱՆՁԱԿ, ԻՐԱՆԻՄ ՈՒ ՍԵԼԻՄ ԽԱՆՆԵՐԻ ՀԵՏ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿՆՔՈՒՄԸ, ՂԱՐԱԲԱԴԻ ՈՒ ՆՈՒԽԻԻ ՀՊԱՏԱԿԵՑՈՒՄԸ ՈՌԻՍԱՍՏԱՆԻՆ.....	91
ԻՐԱՆԻՄ ԽԱՆԻ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....	92
ՂԱԼԱՍԵՆՆԵՐԻ ՋՈՐՔԻ ՆԵՐԽՈՒԺՈՒՄԸ ՂԱՐԱԲԱԴ: ԳՆԴԱՊԵՏ ԿԱՐՅԱԳԻՆԻ ՄԱՐՏԵՐԸ.....	93
ԻՇԽԱՆ ՅԻՑԻԱՆՈՎԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ ԲԱՔՈՒ ԵՎ ՆՐԱ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....	94
ԿՈՎԿԱՍՅԱՆ ՏԱՐԱԾԱՐԱՋԱՆՈՒՄ ՀԵՏԵՎԱԿԱՋՈՐԻ ԳԵՆԵՐԱԼ ԿՈՍՍ ԳՈՒԴՈՎԻՉԻ ԿԱՌԱՎԱՐՉԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՐԱՋԱՆԻ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ.....	96
ՀԵՏԵԼԱՋՈՐԻ ԳԵՆԵՐԱԼ ՏՈՐՄԱՍՈՎԻ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԿԱՌԱՎԱՐՉԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՐԱՋԱՆԻ ՄԱՍԻՆ.....	98
ԿՈՎԿԱՍՅԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ ՄԱՐԿԻՋ ՊԱՌԼՈՒՉԻԻ ԿԱՌԱՎԱՐՉԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՐԱՋԱՆԻ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ.....	100
ԿՈՎԿԱՍՅԱՆ ՏԱՐԱԾԱՐԱՋԱՆՈՒՄ ԳԵՆԵՐԱԼ- ԼԵՅՏԵՆԱՆՏ ՌՏԻՇՉԵՎԻ ԿԱՌԱՎԱՐՉԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՒ ՂԱԼԱՍԵՆՆԵՐԻ ՀԵՏ ԿՆՔԱԿՑ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ.....	102
ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ ԵՐՄՈԼՈՎԻ ԿԱՌԱՎԱՐՉԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՒ ՂԱԼԱՍԵՆՆԵՐԻ ՀԵՏ ԽԱՂԱԴ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՐԱՋԱՆԻ ՄԱՍԻՆ.....	104
ԳԵՆԵՐԱԼ ՄԱԴԱԹՈՎԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԱԲԱՍ ՄԻՐՋԱՅԻ ՀԵՏ.....	106



<p>         ԴՋԼԲԱԸՆԵՐԻ ՈՒ ՌՈՒՄՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ          ԽԱԹԱՐՈՒՄԸ: ԱՐԱՍ ՄԻՐՋԱՅԻ ՆԵՐՆՈՒԺՈՒՄԸ          ԴԱՐԱԲԱՂ ԵՎ ՆՐԱ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ .....       </p>	107
<p>         [ՊԱՐՄԱԿԱԿԱՆ] ԲԱՆԱԿԻ ՆԵՐՆՈՒԺՈՒՄԸ ԴԱՐԱԲԱՂ ԵՎ          ՄՅՈՒՍ ԻՐԱԴԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ .....       </p>	110
<p>         ՄԿՋԲՆԱԿԱՆ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ          ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԸ .....       </p>	116
<p>         ԴՋԼԲԱԸՆԵՐԻ ՋՈՐՔԻ ԴԱՐԱՆԱԿԱԼ ՀԱՐՉԱԿՄԱՆ          ԱՆՀԱՋՈՂ ՓՈՐՉԸ .....       </p>	117
<p>         ԾԱԿԱՏԱԳՐԻ ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ, ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐՆ          ՈՒ ՓԱՌՔԸ .....       </p>	119
<p>         ՊԱԸԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ          ԻՐԱԴԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ .....       </p>	121
<p>         ԳԵՆԵՐԱԼ ՄԱԴԱԹՈՎԻ ԾԱԿԱՏԱՄԱՐՏԸ ԱՐԱՍ ՄԻՐՋԱՅԻ          ԴԵՄ ԳԱՆՉԱԿՈՒՄ: ԱՐԱՍ ՄԻՐՋԱՅԻ ԲԱՆԱԿԻ          ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ .....       </p>	131
<p>         ԴՋԼԲԱԸՆԵՐԻ ՓԱՆՈՒՍՏԻՑ ՀԵՏՈ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ          ՋԱՆԱՋԱՆ ԻՐԱԴԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ .....       </p>	134
<p>         ԻՇԽԱՆ ՊԱՍԿԵՎԻՉԻ ԱՐԸԱՎԱՆՔԸ ԻՐԱՆ, ԿՈՒՎԸ ԱՐԱՍ          ՄԻՐՋԱՅԻ ԴԵՄ: ԱՐԱՍԱԲԱԴԻ ՈՒ ԵՐԵՎԱՆԻ ԲԵՐԴԵՐԻ          ԳՐԱՎՈՒՄՆ ՈՒ ՄՅՈՒՍ ԻՐԱԴԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ .....       </p>	138
<p>         ՔԵՋԼԱՐԻ ՈՒ ՋԵՎԱՆՔՈՒԼԱՂԻ ԾԱԿԱՏԱՄԱՐՏԵՐԸ, ԱՐԱՍ          ՄԻՐՋԱՅԻ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԴՐՈՇՆԵՐԻ ԿՈՐՈՒՍՏԸ .....       </p>	139
<p>         ԱՐԱՍ ՄԻՐՋԱՅԻ ԺԱՄԱՆՈՒՄԸ ԵՐԵՎԱՆ ԵՎ ՆՐԱ          ԾԱԿԱՏԱՄԱՐՏԸ ԱՊԱՐԱՆԻ ՌՈՒՄՆԵՐԻ ԴԵՄ .....       </p>	141
<p>         ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՈՒ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԸ .....       </p>	145
<p>         ԻՇԽԱՆ ԷՐԻՍԹՈՎԻ ՀԱՐՉԱԿՈՒՄԸ ԹԱՎՐԻՋԻ ՎՐԱ .....       </p>	145
<p>         ԲԱՌԱՐԱՆ .....       </p>	150
<p>         ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ .....       </p>	156
<p>         ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ .....       </p>	162
<p>         ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ .....       </p>	169

Ղարաբաղի պատմության ուսումնասիրությունը պատմագիտության արդի խնդիրներից է և կոչված է օգնելու մրա շուրջ ծագած ներկայիս հարցերի ճիշտ ըմբռնման ու լուսարանմանը: Հայագիտության մեջ այդ ուղղությամբ մեծ աշխատանք է կատարվել, որի ընթացքում հայագետները ստիպված էին պայքարել աղբյուրների «պատմաբանների» կեղծարարությունների դեմ: Վերջիններս ջանում են ամեն կերպ սեփականացնել հայոց արևելյան մահաճգնների պատմական ժառանգությունը<sup>1</sup>: Ղարաբաղի պատմության ուսումնասիրության համար մեծ արժեք են ներկայացնում պատմական սկզբնաղբյուրները:

Ղարաբաղի XVIII-XIX դարերի պատմությունն աչքի է ընկնում իր սկզբնաղբյուրների առատությամբ, որոնց մեջ մեծ խումբ են կազմում տեղի հայ ու մահմեդական պատմագիրների երկերը: Այդ երկերի որոշ մասը դեռևս հրատարակված չէ: Հայերեն աշխատությունների մեջ հիշատակության են արժանի Առ. Կոստանեանցի երկհատոր «Պատմություն Արցախի»<sup>2</sup>, Յակոբ Ջաքարեանցի «Պատմություն գաղափին Արցախու»<sup>3</sup>, Բաֆիու «ժամայի մելիքություններ»<sup>4</sup> և Վարդան Օձնեցու «Պատմություն հայոց»<sup>5</sup> պատմագրական երկերը:

Ղարաբաղի XIX դարի պատմության մահմեդական հեղինակների աշխատություններն են Միրզա Աղիգյոզալ-բեկի «Ղարաբաղնամեն» (գր. 1845թ)<sup>6</sup>, Միրզա Ջամալ Ջևանշիրի «Թարիխ-ե Ղարաբաղը» (գր. 1847թ)<sup>7</sup>, Միր Մեհդի Խազանի «Քեփար-ե քարիխ-ե Ղարաբաղը»<sup>8</sup>, Ահմեդ-բեկ Ջևանշիրի «Ղարաբաղի 1747-1805թթ. քաղաքական կացության մասին» գիրքը<sup>9</sup>, Ռզագուլի-բեկ Միրզա Ջամալովիչի<sup>10</sup> և Հասան Ալի խան

<sup>1</sup> К освещению проблем истории и культуры Кавказской Албании и восточных провинций Армении т. 1, Ереван 1991; Մ. Կարապետյան, Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Աղբյուրների բռնակցված շրջաններում, Երևան 1999, և այլն:

<sup>2</sup> Մ. Մաշտոցի անվան Մատենադարան (ՄՄ), ձեռ. 7822, 7823:

<sup>3</sup> ՄՄ, ձեռ. 2734:

<sup>4</sup> Բաֆիի, Երկերի ժողովածու, հ. 10, Երևան 1964, էջ 161-383:

<sup>5</sup> ՄՄ, ձեռ. 4331:

<sup>6</sup> Мирза Адигезаль-бек, Карабаг-наме, Баку 1950: Նրա քարզմանությունը, տե՛ս Միրզա Աղիգյոզալ-բեկ, Որպիստիմը խանացն Գանձակայ, ՄՄ, ձեռ. 4463:

<sup>7</sup> Мирза Джамаль Джеваншир Карабаги, История Карабага, Баку 1959; также: Газета "Кавказ", Тифлис 1855, № 61, 62, 65, 67, 68, 69.

<sup>8</sup> Միր Մեհդի Խազանի, Քեփար-ե Թարիխ-ե Ղարաբաղ, Աղբ. Հանր. ԳԱ ձեռ. ֆոնդ, 5-518/ 11602:

<sup>9</sup> Ахмед-бек Джеваншир, О политическом существовании Карабагского ханства, Баку 1961.

Ղարաղաղի<sup>11</sup> «Ղարաբաղնամեն» խորագիրը կրող ձեռագրերը և Արդու-Սամեղ-բեկ Բահման Միրզայի «Շուրջյուննամեն»<sup>12</sup>:

XIX դարի կեսերից նկատվող պատմագրության վերելքին նպաստում են ինչպես երկարատև խաղաղությունը, որը հաստատվել էր Անդրկովկասում Ռուսաստանի տիրապետության տակ անցնելուց հետո, այնպես էլ ռուս բարձրաստիճան պաշտոնյաների ցուցաբերած հետաքրքրությունը իրենց ենթակա տարածքների պատմական անցյալի նկատմամբ, որի իմացությունը կօգներ նրանց տարածաշրջանում կառավարման ձևերի ընտրության հարցում: Պատմագրական երկերի մի մասը գրվել են հենց Կովկասի փոխարքա Մ. Ս. Վորոնցովի ու այլ բարձրաստիճան պաշտոնյաների պատվերով<sup>13</sup>:

Սակայն փոքր չէր նաև Ղարաբաղում մեկ այլ գործոնի դերը տեղի պատմագրության զարգացման հարցում: Այդ գործոնը երկու հակամարտ կողմերի (քրիստոնյա հայերի և բյուրքական ու քրդական ցեղերի) առկայությունն էր Ղարաբաղում և նրանց միջև չդադարող պայքարը երկրի տնտեսական ու քաղաքական կյանքում գերիշխող դիրքեր գրավելու համար<sup>14</sup>:

XIX դարի 40-ականների կեսերից է, որ Ղարաբաղի մահմեդական բեկերը սկսում են գրել պատմական աշխատություններ: Մինչ այդ չի գրվել որևէ պատմագրական երկ մահմեդական որևէ հեղինակի կողմից նվիրված Ղարաբաղի պատմությանը: Համեմատության համար նշենք, որ հայ մի շարք պատմագիրներ (Մ. Կաղանկատվացի, Կ. Գանձակեցի,

<sup>10</sup> Ռաբգուլի-բեկ Միրզա Ջամալովիչ, «Ղարաբաղ», Աղդր. Հան. ԳԱ ձեռ. ֆոնդ, 4701/ 5224:

<sup>11</sup> Հասան Ալի խան Ղարաղաղի, «Ղարաբաղ», Աղդր. Հան. ԳԱ փ. 1949/11844:

<sup>12</sup> Արդու Սամեղ-բեկ Բահման Միրզա, «Շուրջյուննամեն», Աղդր. Հան. ՊԻ, գետ. արխիվ, փ. 3212 (А. Х. Аванесов, Бахман и его сочинение “Шукр-наме-ни шахин-шахи”, Автореферат диссертации на соискание уч. ст. канд. наук, Ташкент 1972): Այս աշխատությունների մասին տե՛ս նաև Դ. Абдуллаев, Азербайджан в XVIII в. и взаимоотношения с Россией, Баку 1965, с. 41-42:

<sup>13</sup> 1844թ. Վրացա-իմերեթական մահմեդի մահմեդապետին է ներկայացվում Ա. Բակիխանովի «Գյուլիստան-իբան» աշխատությունը (տե՛ս А. Бакиханов, Сочинения. Записки. Письма, Баку 1983, с. 320):

Ղարաբաղի զավառապետ փոխգնդ. Կուլեբյակինի պատվերով գրվել ու Կովկասի փոխարքա Մ. Ս. Վորոնցովին է ներկայացվել Միրզա Աղիյոզալ-բեկի Ղարաբաղնամեն, տե՛ս Мирза Агизааль-бек, ур. соч., с. 43:

Նույն փոխարքային է ներկայացվել նաև Շահամիր-խան Բեգյարովի պատվերով գրված Միրզա Ջամալ Ջևանշիրի «Ղարաբաղի պատմությունը», (տե՛ս Мирза Джамаль, ур. соч., с. 61):

<sup>14</sup> Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Զ. Կոստիկյան, Ղարաբաղի պատմության լուսարանությունը XIX դարի պատմագրության էջերում, Միոճավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XVII, Երևան 1998, էջ 73-75:

Եսայի Հասան-Ջալալյան) գրել են պատմական աշխատություններ՝ նվիրված այդ տարածաշրջանի միջնադարյան և ուշ միջնադարյան պատմությանը:

Տեղի մահմեդականները, ցանկանալով պահպանել խանական շրջանի իրենց արտոնությունները և գերիշխող դիրքը տեղի հայության նկատմամբ, մյուս կողմից էլ հայերը, ջանալով պաշտպանել իրենց լիազորությունները և ռուսական կառավարությանը ցույց տալ իրենց դերն ու մասնակցությունը երկրի նախորդ դարի քաղաքական կյանքում, XIX դարում ստեղծում են մի շարք պատմագրական երկեր՝ նվիրված Ղարաբաղի XVIII-XIX դարերի պատմությանը: Համապատասխանաբար պատմագրական աշխատությունների այս երկու խմբերը Ղարաբաղի XVIII-XIX դարերի պատմությունը արտացոլում են հիմնականում տարբեր տեսանկյուններից և կարոտ են պատմա-համեմատական վերլուծության: Ղարաբաղի XIX դարի պատմագրության մեջ կարևոր տեղ է գրավում Մ. Յ. Ներսեսովի «Թարիխ-ե Սաֆի» («ճշմարտացի պատմություն») պարսկերեն պատմագրական երկը:

ՄԻՐՉԱ ՅՈՒՍՈՒՖ ՆԵՐՍԵՍՈՎԻ (ՀՈՎՍԵՓ ՆԵՐՍԻՍՅԱՆՑ) ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅՈՒՆԸ: Հովսեփ Ներսեսյանցը<sup>15</sup> («Յուսուֆ»-ը նույն անվան արաբա-պարսկական տարբերակն է, իսկ Միրզանրա պաշտոնի անվանումը) ծնվել է 1798թ. Ղարաբաղի Հադրութ գյուղում, Ախարից գաղթած հայի ընտանիքում: 8-9 տարեկան հասակում զերվում է պարսիկ ավարառուների կողմից և տարվում Իրան: Այստեղ նա ներկայացվում է շահին, մահմեդականացվում ու կրթություն ստանում<sup>16</sup>: Ապագա պատմագիրը սովորում է պարսկերեն, քուրքերեն և արաբերեն լեզուները, որից հետո որպես գրագիր (միրզա) աշխատանքի է անցնում քաղաքապետ Աբաս Միրզայի քեռի՝ պալատական քաղաքատիվ ճանաչողական պաշտոնյա Ամիր խան սադլարի գլխավորությամբ: Այստեղ իր պաշտոնավարության 18 տարիների ընթացքում, ինչպես ինքը՝ հեղինակն է նշում. «Կատարելապես տիրապետեցի նրանց լեզվին [պարսկերենին] և ճանապարհորդությունների ժամանակ ծանոթացա տարբեր ցեղերի ու ժողովուրդների հետ»<sup>17</sup>: Իրանում գտնվելու ժամանակ Ներսեսովը ուսումնասիրում է նաև պարսկալեզու պատմագրությունը:

1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմի տարիներին շարունակելով վաղել իր պաշտոնը և գտնվելով Ղարաբաղ ներխուժած Ամիր

<sup>15</sup> Այդպես է նրան անվանում Բաֆֆին (տե՛ս, Բաֆֆի, Խամսայի մեկնությունները, Երկերի ժողովածու, հ. X, էջ 349):

<sup>16</sup> Կենսագրական տեղեկություններ կան «Թարիխ-ե Սաֆի»-ի առաջաբանում և Սեիդ-զադեի հոդվածում, (տե՛ս مریز یوسف ترسوف تاریخ صافی - Մ. Յ. Ներսեսով, Թարիխ-ե Սաֆի, էջ 1ա-3բ; Сеид-Заде, Мирза Юсуф Терсесов, Известия Азерб. Фил. АН СССР, 1942, № 9, сс. 10-17):

<sup>17</sup> Մ. Յ. Ներսեսով, նշվ. ձեռ., էջ 2թ:

խան սարդարի զորաբանակում՝ Ներսեսովը ականատես է լինում այն-տեղ ծավալված ռազմական գործողությունների<sup>18</sup>։ Վարում է նաև իր վերադասի նամակագրությունը թագաժառանգի ու այլ խաների հետ<sup>19</sup>։

1828թ. Թուրքմենչայի հաշտության պայմանագրի կնքումից հետո Միրզա Յուսուֆը վերադառնում է հայրենի Ղարաբաղ։ Բաղդասար արքեպիսկոպոս Հասան-Ջալալյանը նրան մկրտում է<sup>20</sup>։ Միրզա Յուսուֆի առաջին կինը, որ Թավրիզի բրթուհի էր, չի ցանկանում քրիստոնեություն ընդունել և բաժանվում է։ Երկուորդ կինը՝ Շողակաթը, հայուհի էր և նրա բոլոր 5 զավակների՝ Ալեքսանդրի, Եկատերինայի, Նիկոլայի, Ներսեսի<sup>21</sup> ու Աննայի մայրը։

Հայրենիքում Ներսեսովը որոշ ժամանակ մանկավարժությամբ է զբաղվում։ 1847-1848թթ. նա ազերի քյուրքերեն ու պարսկերեն է դասավանդում Շուշիի Հայոց Թեմական դպրոցում<sup>22</sup>։ Հետագայում նա, ըստ երևույթին, սեփական մախաձեռնությամբ, բացում է մասնավոր արական դպրոց, որը 1853թ. ինչ-ինչ պատճառներով փակվում է<sup>23</sup>։

Իր մասնավոր դպրոցի փակումից հետո Միրզա Յուսուֆը տեղափոխվում է Դաղստան և ծառայության անցնում հյուսիսային Դաղստանի զորքերի հրամանատար Գ. Օրբելիանու մոտ որպես թարգմանիչ<sup>24</sup>։

Իր կյանքի այս շրջանում է Ներսեսովը գրում «Թարիխ-ե Սաֆի»-ն՝ Օրբելիանու պատվերով ու իշխան Դ. Ջորջաձեի օգնությամբ<sup>25</sup>։ Դաղստանի Դեմիր-խան-Շուրա քաղաքում հեղինակը 1855թ. վնաստիպ եղանակով հրատարակում է XVIII-XIX դարերի քյուրքալեզու պոեզիայի իր հավաքածուն՝ «Վաղիֆի ու նրա մյուս ժամանակակիցների բանաստեղծությունների ժողովածու» վերնագրով, որը նա սկսել էր կազմել 1828 թվականից<sup>26</sup>։

Ներսեսովը իր ժամանակի պարսկերեն ձեռագրերի լավագույն ընդօրինակող-մատենագիրներից (պարսկ. - خوشنویس) էր։ Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում պահպանվում են նրա ընդօրինակած երկու

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 134ա։

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 124բ, 129ա, 133ա, 134ա։

<sup>20</sup> Сеид-Задэ, ук. соч., с. 13.

<sup>21</sup> Մ. Յ. Ներսեսովի Ներսես որդին (1848-1894թթ) Մոսկվայի Համալսարանի քաղաքացիական իրավունքի ամբիոնի պրոֆեսորներից է եղել (Энциклопедический словарь, издатели Ф. А. Брокгауз, И. А. Ефрон, т. XX<sup>а</sup>, СПб. 1897, с. 909)։

<sup>22</sup> Լեո. Պատմորիւն Ղարաբաղի հայոց թեմական դպրոցի, Թիֆլիս 1914, էջ 204։

<sup>23</sup> Акты Кавказской Археологической Комиссии (АКАК), т. II, с. 739.

<sup>24</sup> Сеид-Задэ, там же.

<sup>25</sup> Մ. Յ. Ներսեսով, նշվ. ձեռ., էջ 3բ։

<sup>26</sup> میرزا یوسف نرسوف واقف و دیگر معاصرین، دمیرخانشورا ۱۲۷۲ - ՄՄ, պարսկ. տպ. գրքերի ֆոնդ, 158։

պարսկերեն ձեռագրեր<sup>27</sup>։ Ներսեսովը «Թարխիս-և Սաֆի»-ի վերջում նշում է, որ մտադիր է մի առանձին գիրք նվիրել Դադստանի XIX դարի կողմների պատմությանը<sup>28</sup>, սակայն հայտնի չէ քն աբդյոք նրան հաջողվե՞լ է իրականացնել իր այդ մտադրությունը<sup>29</sup>։

Ներսեսովի մահվան ստույգ ժամանակը հայտնի չէ։ Որոշ տվյալների համաձայն Մ. Յ. Ներսեսովը մահացել է 1864թ. Ղարաբաղում<sup>30</sup>։

«ԹԱՐԻԽ-Ե ՍԱՖԻ» ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ ԵՐԿԻ ՍԿԶԵՆԱԴՅՈՒՐ-ՆԵՐԸ։ «Թարխիս-և Սաֆի»-ի մեզ հայտնի միակ ձեռագիրը գտնվում է Վրաստանի Հանրապետության ԳԱ, Կ. Կեկելիձեի անվան ձեռագրերի ինստիտուտի, Արևելյան լեզուների բաժնում, P- 195 համարի տակ, այն չի հրատարակվել։ Ձեռագրի ֆոտոպատճենը մեզ էր տրամադրել պրոֆ. Հ. Դ. Փափազյանը։ Ներսեսովի պատմագրական աշխատությունը բաղկացած է հետևյալ մասերից. առաջաբան (մոդադդան), 9 գլուխներ (մադալե) և վերջաբան (խաթմե)։ Պատմագիտական արժեք են ներկայացնում աշխատության միայն VIII և IX գլուխները, որոնց բնագիրը, հայերեն և անգլերեն թարգմանությունները ներկայացվում են սույն գրքում։

Իր օգտագործած սկզբնաղբյուրներից հեղինակը հիշատակում է Մ. Չամչյանի «Հայոց պատմությունը»<sup>31</sup>։

Միրզա Աղիգյոզալ-բեկի «Ղարաբաղ-նամե»-ի հետ համեմատությունից պարզ է դառնում, որ «Թարխիս-և Սաֆի»-ի 8-րդ և 9-րդ գլուխների ուրոշ հատվածներ հեղինակը գրել է՝ հիմնվելով այդ աշխատության հանդուդումների վրա։ Երկու պատմական աշխատություններն էլ ունեն համեմատական կառուցվածք<sup>32</sup>։

Ներսեսովը խմբագրում է իր սկզբնաղբյուրների համապատասխան մասերը՝ գրի առնելով զուտ պատմական տեղեկությունները և հանելով

<sup>27</sup> Առաջինը «Թոգուրաք-և Թեյմուրի» ձեռագիրն է՝ ընդօրինակված 1827-1828թթ. Թեհրանի Գոլիակ ամառանոցում, քրիտանական դեսպան Մանի պատվերով (Մ. Մաշտոցի անվան մատենադարան, ձեռ. 579)։ Երկրորդը՝ «Դերբենդ-նամեի» նոր խմբագրությունն է՝ կատարված 1856թ. Դեմիր-խան-Շուրայում Հ. Լազարյանցի պատվերով (ՄՄ, ձեռ. 239)։

<sup>28</sup> Մ. Յ. Ներսեսով, նշվ. ձեռ., էջ 119թ, 149ա։

<sup>29</sup> Հնարավոր է, որ «Դերբենդ-նամե»-ի վերոհիշյալ խմբագրությունը, ուր շարադրված է Դերբենդի միջնադարյան համառոտ պատմությունը, եղած լինի նրա այդ գրքի առաջին մասը (ՄՄ, ձեռ. 239)։

<sup>30</sup> Сена-Задз, ук. соч., с. 17.

<sup>31</sup> Մ. Յ. Ներսեսով, նշվ. ձեռ. 81ա։

<sup>32</sup> Թե Միրզա Աղիգյոզալ-բեկը և քն Միրզա Յուսուֆը խոսում են Ղարաբաղի խաների ծագման ու հզորացման, Շաքիի Հաջի Չելեբիի 1749թ, Ուրմիայի Ֆաթ-հալի խանի 1761-1762թթ., Իրանի շահի հավակնորդ Մուհամմադ Հասան խան Ղաջարի 1757թ ու շահ Աղա Մուհամմադ խանի 1795թ. և 1797թ. Ղարաբաղ կատարած արշավանքների մասին (համեմատիր Մ. Յ. Ներսեսով, նշվ. ձեռ., էջ 77թ-105թ և Мирза Аджизаль-бек, ук. соч., с. 57-96)։

ավելորդ նկարագրությունները ու քնարական զեղումները: Առանձին դեպքերում նա գրեթե առանց փոփոխելու վերաշարադրում է բյուրքալեզու հեղինակի հաղորդումները:

«Թարիխ-ե Սաֆի»-ում շարադրված է Ղարաբաղի հայկական մելիքությունների, մահմեդական խանության և XIX դարի ռուս-պարսկական պատերազմների մամրամասն ու հավաստի պատմությունը: Անտեսված չեն տեղի հայ և բյուրք բնակչության հիշյալ ժամանակաշրջանի պատմության կարևոր դեպքերը: Հեղինակը չի ջանացել խեղաթյուրել իրեն հայտնի փաստերը և չի պաշտպանել հակամարտ կողմերից (Իրան և Ռուսաստան) որևէ մեկին: Նրա երկում չի զգացվում ոչ բյուրքալեզու հեղինակներին բնորոշ ռուսամետ կողմնորոշումը<sup>33</sup>, ոչ էլ պարսկական պալատական պատմագրությանը հատուկ իրադարձությունների կողմնակալ լուսարանումը: Ինչպես իր երկի առաջաբանում է գրում. «Քանի որ պատմական գրքերից մի քանիսում սուտ ճոռոմաբանությունների հանդիպեցի, որոշ ընկերներիս ցանկությամբ ու խորհրդով որոշեցի մի ճշմարիտ պատմություն գրել, որը գերծ կլիներ ավելորդ նկարագրություններից ու ստից»<sup>34</sup>:

ՂԱՐԱԲԱՂԻ XVIII-XIX ԴԱՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ՄԻՋԱՅՈՒՄՈՒՅ ՆԵՐՍԵՍՈՎԻ «ԹԱՐԻԽ-Ե ՍԱՖԻ»-Ի: Հայկական քարձրավանդակի Կուր և Արաքս գետերով սահմանափակված հյուսիսարևելյան հատվածը սկսած XIII դարից կոչվում էր Ղարաբաղ: Այն ընդգրկում էր Մեծ Հայքի նահանգներից Արցախն ու Ուտիքը ամբողջությամբ, իսկ Սյունիքի ու Փայտակարանի միայն որոշ շրջանները:

Ներսեսովին, որպես հայազգի պատմագրի, խիստ մտահոգում էր իր հայրենի Ղարաբաղում մահմեդական տարրի հաստատման և ուժեղացման հանգամանքները: Ուստի նա հարկ է համարում Հայաստանի (Արմենիայի) հողերի բլին Ղարաբաղի պատկանելության փաստը արձանագրելուց հետո նշել, որ «օտար բանակները» տարիներ շարունակ ավերել են իր հայրենիքը. «Արաղի և Ատրպատականի մահմեդական բնակչության մի մասը գաղիս բնակություն է հաստատում մինչև Ալազան գետն ընկած տարածքներում» Ղարաբաղում, Շաքիում ու Շիրվանում»<sup>35</sup>:

Ներսեսովի միտքը հաստատում են միջնադարյան սկզբնաղբյուրները, որոնցում արտացոլված այս իրողության ուսումնասիրությանն է նվիրված Հ. Դ. Փափազյանի աշխատությունը<sup>36</sup>: Հայոց երկիրը XI դարից հետո շարունակաբար ենթարկվում էր արևելյան քոչվոր բյուրքական և մոնղոլ-թաթարական ցեղերի արշավանքներին, որոնց համար

<sup>33</sup> Г. Иманов, Вопросы историографии Азербайджана, Труды Азербайджанского филиала АН, т. 30, Баку 1936, с. 156.

<sup>34</sup> Մ. Յ. Ներսեսով, նշվ. ձեռ., էջ 3ա:

<sup>35</sup> Նույն տեղում, էջ 76բ:

<sup>36</sup> А. Д. Папаян, Аграрные отношения в Восточной Армении, Ереван, 1972, с. 57.

հայկական արևելյան մահաճգնեղի հարթավայրային շրջանները ծառայում էին որպես իջևանատեղի<sup>37</sup>։ Իրենց քոչվոր կենսակերպի և մարտական բարձր պատրաստվածության շնորհիվ նրանք հետզհետե նեղում ու իրենց մշտական բնակավայրերից դուրս են քշում մատակյաց հայ հողագործներին։ Այդ գործընթացը հատկապես զգալի մասշտաբների է հասնում Արարատյան դաշտի ստորին հատվածներում, Շարուրում, Նախիջևանում, ինչպես նաև Մակվի, Խոյի, Սալմաստի ու Ղարաբաղի Արաքսին հարակից շրջաններում<sup>38</sup>։

Նույն պատմական իրողությունն է արձանագրում Ներսեսովի վկայությունն այն մասին, որ Արցախի հարթավայրային շրջանները ևս անցյալում բնակեցված են եղել հայերով, որոնք թշնամական բանակների ու քոչվոր ցեղերի արշավանքների հետևանքով հայազրկվել են։ Հեղինակը ցավով է խոսում այն մասին, որ զրկվելով իրենց նախկին բնակիչներից, Ղարաբաղի բնակավայրերի ու գյուղերի մի մասը իր ժամանակներում «ամայի ու անմշակ մնալով՝ ավերակների են վերածվել» և դարձել քոչվոր ցեղերի ժամանակավոր կացարանները<sup>39</sup>։

Ամայացած բնակավայրերի թվում, որոնցից իր ժամանակներում պատմական հուշարձաններ ու հնություններ էին պահպանվել, Ներսեսովը հիշատակում է Ջառուզիքիլը, «Սնիր կամ Միլ», Պարտավ և Բաքի քաղաքները<sup>40</sup>։

Ջառուզիքիլ տեղանունը ծագել է Ծար գավառի և նրա Տայե բնակավայրի աղավաղված Ջիբիլ տարբերակի կցումից։ Տայելը հիշատակվում է XII-XVIII դարերի հայկական աղբյուրներում, որպես Թարթառի վտակ Թուրխուտի խովտում գտնվող տարածքի անվանում, որը հետագայում տեղայնացվում է գավառի գյուղերից մեկի վրա<sup>41</sup>։ «Ջառուզիքիլ» անվանումը գործածական էր XVII դարից և տարածվում էր Ծար գավառի վրա<sup>42</sup>։ Ջառուզիքիլ գավառի հայության հիմնական զաղթը տեղի է ունեցել 1725թ., և հետագա 2-3 տարիների ընթացքում այն զրեթե ամբողջովին դատարկվել է։ Այնպես որ 1760-ական թթ. նրա տարածքը, իրաք. զրեթե

<sup>37</sup> Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, Երևան, 1982, էջ 170, 188, 207։ Այս հարցերը իր աշխատության մեջ քննում է ռուս նշանավոր արևելագետ Պետրուշևսկին (И. П. Петрушевский, Очерки из истории феодальных отношений Азербайджана и Армении в 16-м начале 19 в. в., Ленинград, 1949, с. 66)։

<sup>38</sup> А. Д. Папазян, ук. соч., с. 64.

<sup>39</sup> Մ. Յ. Ներսեսով, նշվ. ձեռ., էջ 76ր։

<sup>40</sup> Նույն տեղում, էջ 76ա-բ։

<sup>41</sup> Ա. Ա. Հակոբյան, Ա. Հ., Սիմոնյան, Դադիվանքի նորահայտ արձանագրությունը և Տայեի տեղադրության հարցը. «Պատմա-քանասիրական հանդես» (ՊԲՀ), Երևան, 1998, № 1-2, էջ 231։

<sup>42</sup> ՄՄ. Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, քոչ. 241, գործ 1, վավ. 26։ Ս. Կարապետյան, Հայ մշակույթի, էջ 13։



լիովին հայագրելվել էր, քացառությամբ խուրավան գյուղից և քեմական կենտրոն Դաղի վանքից<sup>43</sup>:

Հեղինակը նշում է, որ «Միլ» քաղաքի անվան հնագույն ձևը «Մեիր»-ն է և այդպիսով Միլ քաղաքը նույնացնում է Մ. Կաղանկատվացու հիշատակած Միրավան քաղաքի հետ<sup>44</sup>: Ըստ Ս. Ջալալյանցի, Միլը գտնվում էր Ուտիքի դաշտում, Կուր և Արաքս գետերի միախառնման վայրի մոտակայքում<sup>45</sup>:

Բարդան կամ Պարտավը Պատմական Հայաստանի հնագույն խոշոր քաղաքներից է, որը գտնվում է Թարքառ գետի ափին:

Բաքի կամ Պասպի քաղաքը ըստ XIX դարի ուսումնասիրողների գտնվում էր Արաքսի հյուսիսային ափին՝ Դիզակ գավառի հարավային հարթավայրային հատվածում և կրում էր իր հիմնադրողի անունը<sup>46</sup>:

Օտարերկրյա նվաճողները և քոչվոր վերնախավը XIV-XVII դարերում աստիճանաբար ոչնչացնում են հայ նշանավոր իշխանական տները և տիրում նրանց ֆեոդալական կալվածքներին: Պարսկալեզու հրովարտականերում ու կալվածագրերում հստակ արտացոլված են մահմեդական ֆեոդալների կողմից հայ իշխանավորների հողատիրություններին տեղ դառնալու զանազան եղանակները<sup>47</sup>: Պատմական հայոց մահանգների բնիկ հայ բնակչությունը կենտրոնանում է հիմնականում Արցախի լեռնային շրջաններում, Դիզակի, Վարանդայի, Ջրաբերդի, Խաչենի ու Գյուլիստանի, ինչպես նաև հարևան Սիսիանի, Կասպանի, Քաշաթաղի և Գանձակի հայ մելիքների իշխանության տակ<sup>48</sup>: Իրանի Սեֆյանների ժամանակ մելիքներ էին կոչվում հիմնականում գավառի կառավարիչները, իշխանները, իսկ առանձին դեպքերում նույնիսկ մեկ կամ մի քանի գյուղերի կառավարիչները: XVII-XVIII դարերում Ղարաբաղի մելիքներից յուրաքանչյուրը իշխում էր մի ամբողջ գավառի վրա<sup>49</sup>: Հայ մելիքների ուժեղացումն ու մելիքությունների ամրապնդումը Հայաստանի XVII-XVIII դարերի կարևոր իրողություններից է:

<sup>43</sup> Նույն տեղում, էջ 12:

<sup>44</sup> Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, Երևան 1969, էջ 133:

<sup>45</sup> Ս. Ջալալյան, Գանապահոդություն ի Մեծն Հայաստան, Տիֆլիս, 1842, հ. 2, էջ 364:

<sup>46</sup> Առ. Կոստանեանց, նշվ. ձեռ., հ. 1, էջ 36; Ս. Ջալալյան, նշվ. աշխ., հ. 2, էջ 263; Ղ. Ալիշան, Արցախ, Երևան 1993, էջ 121):

<sup>47</sup> А. Д. Папазян, ук. соч., с. 76, 64, 65.

<sup>48</sup> Նշված հայ մելիքությունների մասին տես Ս. Բ. Արությունյան, Освободительное движение армянского народа в первой четверти 18-ого века, Москва 1954, с. 47-86:

<sup>49</sup> Զ. Պողոսյան, Խամսայի մելիքների իրավունքների ու պարտականությունների մասին, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1966, № 1, էջ 198:

Արժեքավոր է Ներսեսավի վկայությունն այն մասին, որ իր ժամանակ Տաթև գյուղում էին բնակվում Սյունիքի Օրբելյանների սերնդից Մելիք Մուսի, Մելիք Մանուչեի և Ռոստամ-բեկ Օրբելյանովները<sup>50</sup>։ Մելիք Մանուչար և Ռոստամ բեկ Օրբելյանովների մասին հիշատակում է նաև Դ Ալիշանը<sup>51</sup>։ Մելիք Մանուչար Օրբելյանը XIX դարի կեսերին եղել է Տաթևի հոգևոր կառավարության անդամներից<sup>52</sup>։

Երևանի Մատենադարանում պահվում է մի *թա'լիդ* տրված 1813/1814թ. Ֆարհալի շահի կողմից Պետրոս Օրբելյանին, որով հաստատվում են վերջինիս ժառանգական իրավունքները Ամաղու գյուղի և Նորավանքի նկատմամբ<sup>53</sup>։

Ներսեսավի հիշատակությունը Գորիսի, Խնձորակի, Տեղի, ինչպես նաև Սիսիանի որոշ բնակավայրերի նշանավոր մելիքական տների գոյության մասին<sup>54</sup> հաստատում են XIX դարի հետագա ուսումնասիրողները<sup>55</sup>։ Ե. Լալայանի հավաքած տվյալների համաձայն Գորիսում իշխում էին Մելիք-Հուսեյնյանները, Տեղում՝ Մելիք-Բարխուդարյանները<sup>56</sup>, իսկ Սիսիանի նշանավոր մելիքներից էին Անգեղակոթում իշխող Մելիք-Սաֆրազյանները և Բոնակոթի Մելիք-Թանգյանները<sup>57</sup>։

Ղարաբաղը, դեռ վաղնջական ժամանակներից լինելով հայաբնակ, XVIII-XIX դարերում ևս (հատկապես Արցախի լեռնային շրջաններում) բնակեցված էր գերակշիռ հայ բնակչությամբ։ XVIII դարում Ղարաբաղը դառնում է հայոց ազգային ազատագրական պայքարի կենտրոններից մեկը<sup>58</sup>։

Ներսեսավը անդրադառնում է XVIII դարի 20-ական թթ. Դավիթ Բեկի ու Ավան յուզբաշու գլխավորությամբ Սյունիքի ու Արցախի հայության մղած ազատագրական կռիվներին։ Նա արժեքավոր տեղեկություն է հա-

<sup>50</sup> Մ. Զ. Ներսեսով, նշվ. ձեռ., էջ 79թ։

<sup>51</sup> Դ Ալիշան, Սիսական, Վենետիկ 1893, էջ 18։

<sup>52</sup> Документы и материалы по истории армянского народа. Социально-политическое положение Восточной Армении после присоединения к России (1830-1870), Ереван, 1993 с. 218

<sup>53</sup> ՄՄ, Կարթոլ, դիվան, քրդ. 1գ, վավ. 1006։

<sup>54</sup> Մ. Զ. Ներսեսով, նշվ. ձեռ., էջ 80 ա։

<sup>55</sup> Մ. Չամչյանը հիշատակում է սիսիանցի Մելիք Ղազարին, որը Նախիջևանի կառավարիչ Հեյդար Դուլի խանի դեմ մղված պայքարում սպանվում է (Մ. Չամչյան, Հայոց պատմություն, հ. Գ, Երևան 1985, էջ 843)։

<sup>56</sup> Ե. Լալայան, Չանգեզուր, Ազգագրական հանդես, գիրք Դ, Թիֆլիս, 1898, էջ 8։

<sup>57</sup> Ե. Լալայան, Սիսիան, Ազգագրական հանդես, գիրք Գ, Թիֆլիս, 1898, էջ 116-117։

<sup>58</sup> Г. А. Эзов, Сношения Петра Великого с армянским народом. Документы, СПб. 1898, с. С.

դուրդում Ավան յուզբաշու և նրա քաջերի Չավնդուրում օսմանյան զորքերի դեմ մղած հաղթական կռվի մասին<sup>59</sup>:

1724-1725թթ. օսմանյան զորքերի Անդրկովկասյան արշավանքները ընթանում են երկու ուղղություններով՝ Թիֆլիս-Գանձակ-Ղարաբաղ և Երևան-Խոյ-Թավրիզ<sup>60</sup>: XVIII դարի 20-ական թվականների Սյունիքի և Արցախի ազատագրական պայքարի պատմությանը վերաբերող փաստագրական նյութերում հիշատակություն կա այն մասին, որ 1724թ. զարմանը Ղարաբաղի *սղնախնները* Ավան Յուզբաշու և Իվան Կարապետի գլխավորությամբ 2000 մարդկանցով օգնության էին գնացել դավաճ-ցիներին՝ նրանց իսկ խնդրանքով<sup>61</sup>: Ըստ երևույթին, հենց այս շրջանում են տեղի ունեցել Ներսեսավի նկարագրած դեպքերը:

Թե Ղարաբաղում և թե Կասպանում ազատագրական պայքարի մասնակիցները զենքի ու զինամթերքի պակասություն էին զգում, քանի որ շրջապատված էին քչամանիներով<sup>62</sup>:

Հետաքրքրական է այս առումով Ներսեսավի վկայությամբ Ղարաբաղի Ահար քաղաքի հայության կոտորածի պատճառների մասին: Հայ ունեւոր բնակչությանը նախանձելով՝ այնտեղի մահմեդականները շահի մոտ զրպալաւում են, թե՛ «Հայերը այնքան են հարստացել, որ չեն ցանկանում Իրանին հպատակվել: Ավան Յուզբաշուն վառող ու զնդակ են ուղարկում, որպեսզի գա իրենց էլ ազատի»<sup>63</sup>:

Ինչպես վերը արդեն նշել ենք, հեղինակի հայրը Ահար քաղաքից էր, ուստի ամենայն հավանականությամբ Ներսեսավի այս վկայության աղբյուրը նրա հոր հիշողություններն էին:

Տեղեկություններ կան Թավրիզում տեղի ունեցած նմանատիպ մի իրադարձության մասին<sup>64</sup>: Ու թեև Ներսեսավը ժխտում է Ահարի հայության իրական օժանդակությունը Սյունիքի ու Արցախի ազատագրական կռիվներին և այդ մասին պատմական սկզբնաղբյուրներում որևէ վկայություն չկա, չի բացառվում, որ Ահարի հայ բնակիչները իսկապես օգնած լինեին ազատագրական պայքարի մասնակիցներին, քանի որ այդ շրջանում պայքարը օտար բռնակալների դեմ ստացել էր համաժողովրդական բնույթ:

1738թ. Նաղիբ շահի հրամանով Ղարաբաղի հինգ հայկական մելիքությունները՝ Գյուլիստանը, Ջրաբերդը, Խաչենը, Վարանդան և Դիզա-

<sup>59</sup> Մ. Յ. Ներսեսով, նշվ. ձեռ., էջ 80 ք:

<sup>60</sup> П. Т. Аргутин, укр. соч., с. 167, 168.

<sup>61</sup> Ա. Գ. Աբրահամյան, Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից, Երևան 1953, էջ 82:

<sup>62</sup> Г. А. Эзов, укр. соч., с. 367.

<sup>63</sup> Մ. Յ. Ներսեսով, նշվ. ձեռ., էջ 79 ք:

<sup>64</sup> Հ. Ա. Կնյազյան, Ազատագրական պայքարը Ղավիթ Բեկի գլխավորությամբ, Երևան, 1963, էջ 66:

կը միավորվում են մեկ վարչական միավորի՝ «Մահալ-ե Խամսայի» մեջ՝ դրվելով Իրանի շահի անմիջական ենթակայության տակ<sup>65</sup>։

Խամսայի *մահալների* տարածքային բաժանման հարցերը հետաքրքրել են հայ ուսումնասիրողներից Բաֆֆուն, Լեոյին և այլոց, որոնք ընդհանուր գծերով են նշում հայ մելիքությունների սահմանները։ Միշտ է, այդ սահմանները երբեմն փոփոխվել են, սակայն XVIII դարում, ըստ երևույթին, գոյություն են ունեցել որոշակի սահմանագծեր, որոնցում ժողովուրդը առանձնացնում էր մելիքություններից յուրաքանչյուրը։ Ներսեսովի «Թարիխ-ե Սաֆի» աշխատության շնորհիվ հնարավոր է դառնում ճշգրտել XVIII դարի Ղարաբաղի Խամսայի հայ մելիքությունների սահմանները։ Հիմնականում համընկնելով Բաֆֆու տվյալների հետ<sup>66</sup>, դրանք որոշակիություն են մտցնում Ղարաբաղի հայկական տարածքների հարցում, որը անտեսվել էր XIX դարի Արևելյան Անդրկովկասի վարչական բաժանումների ժամանակ։ Համեմատությունը ցույց է տալիս նաև, որ Խորհրդային իշխանության հաստատման տարիներին Այրբեջանի ենթակայության տակ դրված ԼՂԻՄ-ը չէր ընդգրկում Ղարաբաղի հայկական տարածքները ամբողջությամբ։ Նրա սահմաններից դուրս էին մնում բավականին ընդարձակ հայկական շրջաններ, որոնք ինչպես երևում է Ներսեսովի վկայությունից, XVIII դարում պատկանում էին Խամսայի մելիքությունների հայաբնակ տարածքների թվին։

Ներսեսովի վկայությամբ Դիզակի *մահալը* ձգվում էր արևմուտքից դեպի արևելք Հազարի (Աղավնու) գետից (Մալ-թափե) մինչև Քյոնդալանը գետը (Գյուլ-թափե), հարավում՝ Արաքս գետից մինչև Քիրսի լեռնաշղթան (Խորխատ լեռ)։ Վարանդայի հարավային և արևմտյան սահմանն էր կազմում Քիրսի լեռնաշղթան, արևելյանը՝ Ալի Բալի հովիտը<sup>67</sup>, հյուսիսայինը՝ Գարգառի հարավային վտակները։ Խաչենի *մահալը* «Թարիխ-ե Սաֆիում» ներկայացված է հետևյալ սահմաններում. հյուսիսային և հարավային սահմաններն էին կազմում Գարգառ և Ղաբարթու<sup>68</sup> գետերը։ Արևմտյան սահմանը ձգվում էր Ղարաբաղյան լեռնաշղթայի (Միլս-թուրյան և Ղըրխղըզ) երկայնքով, իսկ արևելքում այն եզերում էր Բայաթուրյան և Ղըրխղըզ երկայնքով, իսկ այժմ ետանտառային մարզագետնային մակսկիւում անտառային, իսկ այժմ ետանտառային մարզագետնային գոտին<sup>69</sup>։ Ջրաբերդի արևելյան ու արևմտյան սահմաններն էին կազմում նորից Ղարաբաղյան լեռնաշղթան ու Բայաթի անտառը, այս անգամ իրենց հյուսիսային հատվածներով, իսկ հյուսիսային ու հարավա-

<sup>65</sup> Հայ ժողովրդի պատմություն, հ. 4, Երևան, 1972, էջ 186։

<sup>66</sup> Համեմատիր Մ. Յ. Ներսեսով, նշվ. ձեռ., 77թ-79ա, Բաֆֆի, նշվ. աշխ., էջ 162։

<sup>67</sup> Карта J-38-11-6, (Մարտունի) ռաձ. 1973.

<sup>68</sup> Ղաբարթու (կամ Կավարտ) գետակը հոսում է Խաչենագետի ու Թարրառի միջև ընկած տարածքով (Карта Закавказского края, см. р. Кабарты. Ղ. Ալիշան, Արցախ, էջ 73)։

<sup>69</sup> Советский Азербайджан, Баку, 1958, с. 38.

յին սահմաններն էին Թաթարառ և Ղարաբքու գետերը: Խամսայի 5-րդ՝ Թալիշի *մահալի* սահմաններն են կազմում Մուսլ ու Գյուլիստան լեռները և Կուր, Գերան ու Թարքառ գետերը:

«Թարիխ-ե Սաֆի»-ի 8-րդ գլխի «Չանգեզուրի *մահալների* ու այնտեղի դեսպերի մասին»<sup>70</sup> ենթավերնագրի տակ հեղինակը անդրադառնում է Սյունիքի վարչա-քաղաքական բաժանումների հարցին և խոսում այնտեղի նախկին իշխանական տոհմերի մասին: Չանգեզուրի շրջանը Ղարաբաղին էր միացվել դեռևս Փանահ խանի օրոք և մնում նրա կազմի մեջ մինչև XIX դարի կեսերը: Այստեղ հեղինակը հավաստի տեղեկություններ է հաղորդում, քե՛ անցյալի և քե՛ իր ժամանակի Սյունիքի վարչա-քաղաքական դրության վերաբերյալ, ինչպես նաև հավաստի տվյալներ է տալիս նրա բնակչության կազմի մասին:

Պարսկական պետության բուլացման ու նրա զահին հավակնողների միջև երկարատև զահակալական կռիվների հետևանքով, Անդրկովկասի ու Ատրպատականի տարածքներում 1747 թվականից հետո անկախություն են ստանում և ստեղծվում հետևյալ պետական կազմավորումները՝ Վրաստանի քաղավորությունը, Ղարաբաղի, Երևանի, Նախիջևանի, Մակվի, Ղարադաղի, Ուրմիայի, Գանձակի, Ղուբայի, Բաքվի, Շիրվանի, Շարխի, Թալիշի, Արդեբիլի, Մարադայի, Սովուզ-Բուլաղի խանությունները<sup>71</sup>: Այդ խանությունների հիմքը մեծ մասամբ կազմում էին քոչվոր ցեղերի ժառանգական տիրույթները՝ *օլթաները*, ինչպես օրինակ Նախիջևանի, Խոյի, Արդեբիլի և մյուս խանությունների դեսպում:

Սեֆյան Պարսկաստանի տիրապետության շրջանում Ղարաբաղում բացի հայ մելիքների տիրույթներից, կային քոչվոր ցեղերի մի քանի *օլթաներ*, որոնց թվում էր նաև օթուզիքի ցեղային միության ժառանգական *օլթան*, որը ընդգրկում էր Պարտավից դեսպի հարավ տարածվող Ղարաբաղի հարթավայրային շրջանը<sup>72</sup>: Վերջինս էլ հիմք է ծառայում Ղարաբաղում նաև խանական իշխանության հաստատման համար: XVIII դարի 40-ական թթ. վերջին Իրանի Աղե շահի կողմից Ղարաբաղում խանության լիազորագիր ստացած Փանահը և նրան հաջորդած Իբրահիմ խանը համառ պայքար են սկսում Խամսայի մելիքությունները իրենց ենթարկելու համար:

Պատմա-քաղաքական կարևոր արժեք ունի «Թարիխ-ե Սաֆի»-ի այն վկայությունը, ըստ որի Խամսայի մելիքությունների ամբողջ բնակչությունը քրիստոնյա է եղել<sup>73</sup>: Այստեղ, լիարկե, հեղինակը չափազանցում է պատմական իրականությունը, քանի որ, ինչպես հայտնի է, քաղաքակրթական միատարր բնակչություն ունեցող մեծ տարածքներ չկան: Սա-

<sup>70</sup> Մ. Յ. Ներսեսով, նշվ. ձեռ., էջ 79բ:

<sup>71</sup> И. П. Петрушевский, ук. соч., с. 86.

<sup>72</sup> Там же, с. 136

<sup>73</sup> Մ. Յ. Ներսեսով, նշվ. ձեռ., 77բ:

կայն այն, որ Ղարաբաղյան լեռնաշխարհը XIX դարում ունեցել է 95% հայ բնակչություն, հաստատում են Անդրկովկասի այդ ժամանակաշրջանի պատմության այլ հետազոտողներ<sup>74</sup>:

XVIII դարի սկզբի տվյալներով Ղարաբաղում հայության թիվը հասնում էր շուրջ 100000 տան<sup>75</sup>: Նույն դարի երկրորդ կեսին այդ թիվը նվազում է մինչև 60000<sup>76</sup>: Ղարաբաղի քոչվոր բնակիչները թիվը նույն շրջանում նշվում էր 20000 վրան<sup>77</sup>: Ընդ որում Ղարաբաղում էր բնակվում Անդրկովկասի բնիկ հայության հիմնական մասը<sup>78</sup>: Ղարաբաղի հայության նվազեցման պատճառը մահմեդական խաների այդ ուղղությամբ նախաձեռնած քայլերն էին, որոնց մասին կարևոր տեղեկություններ է տալիս Ներսեսովը:

«Թարիխ-ե Սաֆի»-ում հավաստի տվյալներ կան Փանահ խանի օրոք հարևան խանությունների հաշվին Ղարաբաղի տարածքային ընդարձակման<sup>79</sup> և այդ խանություններից որոշ քոչվոր ցեղերի՝ մասնավորապես Երևանի խանությանը հպատակ քոյանիների, Վրաստանին հպատակ ջինլի ու դեմիրչի-հասանլու ցեղերի և Նախիջևանի բենգերլու ցեղերի այստեղ գաղթեցնելու վերաբերյալ<sup>80</sup>: Ներսեսովի վկայությունը քոյանի ցեղի Երևանի խանությունում բնակվելու վերաբերյալ հաստատվում է այլ սկզբնաղբյուրների տվյալներով<sup>81</sup>: Հովսեփ Էմինը քրդական այդ ցեղի Ղարաբաղ գաղթելու և այնտեղի խանին հպատակվելու ակամատեսն էր<sup>82</sup>: Բենգերլու<sup>83</sup>, դեմիրչի-հասանլու<sup>84</sup>, քոյանի և մյուս ցեղերի

<sup>74</sup> В. Н. Хуладов, Закавказье (Историко-экономический очерк), Москва-Ленинград, 1926, с. 62.

<sup>75</sup> Г. А. Эзов, ук. соч. д. 252, с. 388.

<sup>76</sup> АКАК, т. 2, Тифлис 1866, с. 623

<sup>77</sup> И. П. Петрушевский, ук. соч., с. 136.

<sup>78</sup> С. П. Зелинский, Племенной состав, религия и происхождение государственных крестьян. Свод материалов по изучению экономического быта государственных крестьян Закавказья, т. 2, Тифлис, 1887, с. 13.

<sup>79</sup> Պատմական աղբյուրները հաստատում են «Թարիխ-ե Սաֆի»-ի տվյալները այն մասին, որ 50-ական թվականներին Փանահ խանը նվաճում է Սյունիքի Մեղրիի, Տարևի, Սյախանի, Ջանգեզուրի ու Կապանի «մահալները», որոնք նախքան այդ մտնում էին Նախիջևանի, Ղարաղաղի ու Երևանի խանությունների մեջ (М. Нерсисян, Из истории русско-армянских отношений. кн. 1, Ереван, 1956, с. 265; А. Бакиханов, Полистин-ирам, Баку, 1926, с. 128; Армяно-русские отношения в 18-м веке. Сборник документов. т. 4, Ереван, 1990, с. 213; Մ. Շամյան նշվ. աշխ., հ. Գ, էջ 848):

<sup>80</sup> Մ. Յ. Ներսեսով, նշվ. ձեռ., էջ 84 ր:

<sup>81</sup> Симеон Ереванци, Джамбр, Москва, 1958, с. 106; И. Шопен, Исторический памятник состояния Армянской области в эпоху ея присоединения к Российской империи, СПб. 1852, с. 318.

<sup>82</sup> The Life and Adventures of Joseph Emin, an Armenian. London 1792, Vol. 2, p. 309-310.

ներկայությունը XVIII դարում Անդրկովկասի այլ գավառներում, իսկ Ղարաբաղում XIX դարի բնակչության կազմում<sup>83</sup> հաստատում է հեղինակի վկայությունը հարևան խանություններից նրանց բերված լինելու մասին:

Ներսեսովի նշված վկայությունը լրացնում է Ահմեդ-բեկ Ջևանշիրը, որի համաձայն՝ Ղարաբաղի խաները իրենց երկիրն են գաղթեցնում մահիկյան, սաֆի-քյուրդ, ղըզլը-հաջիլի, բոյ-ահմեդլի, սաաքլի և մյուս ցեղերը<sup>84</sup>:

Ներսեսովի ու մյուս հեղինակների այս կարևոր վկայությունները ցույց են տալիս, որ Ղարաբաղի մահմեդական բնակչության քիվը զգալիորեն ավելանում է միայն սկսած XVIII դարի կեսերից: Խաները այդ կերպ ջանում էին ամրացնել իրենց սոցիալ-քաղաքական դիրքերը Ղարաբաղում:

«Թարիխ-ե Սաֆի»-ի պատմագիտական արժեք ներկայացնող մասերից է Շուշի բերդի (կամ Փանահաբաղի) կառուցմանն ու քաղաքական պատմության հարցերին նվիրված հատվածները<sup>85</sup>: Հեղինակը բյուրիմացության մեջ է, քանի որ Շուշի բերդը կար մահ նախորդ դարերում<sup>86</sup>:

Կարևոր է հեղինակի արձանագրած այն փաստը, որ Շուշիի բնակչության կազմի վերաբերյալ, որի համաձայն «1855թ. քաղաքի բնակչության 2/3 մասը կազմում էին հայերը, իսկ 1/3-ը՝ չիա մահմեդականները»<sup>87</sup>:

Անդրկովկասի ու Ատրապատականի մանր իշխանությունները XVIII դարում անվերջ պատերազմներ էին մղում միմյանց դեմ, որոնց մի մասին անդրադառնում է մահ Ներսեսովը՝ լրացնելով ու ճշգրտելով ժամանակի մյուս սկզբնաղբյուրների տվյալները:

<sup>83</sup> Զենգերու ցեղը, որ պատկանում էր ղըզլաշ ցեղերի թվին, հիմնականում բնակվում էին Նախիջևանում, որը այդ ցեղի ցեղապետների ժառանգական *օրթան* էր (И. П. Петрушевский, ук. соч., с. 127):

<sup>84</sup> Դեմիրչի-հասանլու ցեղը հիշատակվում է XVIII դարում Վրաստանին հպատակ ցեղերի թվում, որոնք, բնակվելով Ղազախում, հաճախ զինվորներ էին մատակարարում վրացական բանակին (Լ. Մ. Մելիքսեթ-բեկ, Վրաց աղբյուրները հայերի ու Հայաստանի մասին, հ. Գ, Երևան, 1955, էջ 132, 140):

<sup>85</sup> Описание Карабагской провинции, сост. полк. Ермоловым и Могилевским в 1823г, Тифлис 1866, владения Мехди Кули хана; Свод статистических данных о населении Закавказского края, извлеченных из посемейных списков 1886, Тифлис, 1893, Елисаветпольская губерния.

<sup>86</sup> Ахмед-бек Джеваншир, ук. соч., с. 71.

<sup>87</sup> Մ. Յ. Ներսեսով, նշվ. ձեռ., էջ 85ա-86բ:

<sup>88</sup> Sh'u Arмянно-русские отношения в XVIII веке, т. 2, ч. 1, Ереван 1964, с. ХLI; Դ. Ա. Չոբանյան, Շուշ և Քարազլուխ սղնախների նույնացման հարցի շուրջ, ԴԲՀ, 1994, № 1-2, էջ 183-187:

<sup>89</sup> Մ. Յ. Ներսեսով, նշվ. ձեռ., էջ 86 բ:

Ներսեսավի պատմագրական երկում կա եզակի մի հիշատակություն 1203 թ. ք. (1788/1789թ.) Ղարաբաղի Իբրահիմ խանի կողմից դեպի Խոյի խանություն ձեռնարկված արշավանքի մասին<sup>90</sup>, որի վերաբերյալ այլ աղբյուրներում որևէ վկայության չենք հանդիպել: Ներսեսավի գրի առած այդ իրադարձության մանրամասն նկարագրությունը որևէ հակասություն չի պարունակում, որը թույլ կտար պնդել նրա տեղեկությունների սխալ լինելու մասին:

1780-ական թվականների սկզբից Ղարաբաղի Իբրահիմ խանի հավակնությունների առարկան էր Նախիջևանի խանությունը, որի համար նա բազմիցս պատերազմներ է մղում և արշավանքներ ձեռնարկում դեպի այնտեղ: Այդ արշավանքներից մեկը տեղի է ունենում 1791թ., որի վերաբերյալ մանրամասն ու հավաստի տեղեկություններ կան «Ժաթիխ-ե Սաֆի»-ում: Ներսեսավի նկարագրությունից ակնհայտ է դառնում նաև Ղարաբաղի խանին հայատակված հայ մելիքների մասնակցությունը իրենց ջոկատներով այդ կռիվներին<sup>91</sup>:

90-ական թվականներին Խամսայի մելիքներն էին՝ Վարանդայի Մելիք Ջումշուղ Շահնազարյանը, Դիզակի Մելիք Աբաս Եզանյանը, Խաչենի Մելիք Ալլահվերդին՝ Միրզախանի որդին, Ջրաբերդի Մելիք Ռուստամը՝ յուզբաշի Ալլահվերդիի որդին և Գյուլիստանի Մելիք Ֆրիդուն Բեգլարյանը<sup>92</sup>: Այն, որ Ղարաբաղի թե Փանահ, և թե Իբրահիմ խաները իրենց ռազմական արշավանքների ժամանակ օգտագործում էին հայ մելիքների ռազմական ուժերը, հաստատվում է նաև այլ աղբյուրների վկայություններով<sup>93</sup>:

Վրաստանի Հերակլ Թագավորի կողմից ռուսական կառավարությանը հղված մի մամուլում նշվում է Ղարաբաղում յոթ հայկական իշխանությունների գոյության մասին: Ամենայն հավանականությամբ այդտեղ հաշվի են առնված նաև Ղարաբաղի խանության մեջ մտած Սյունիքի շրջանների իշխանավորները: Ընդ որում, այդ փաստաթղթում մատնանշվում է այն փաստը, որ «հայերի ռազմական ուժերը հասնում են 4500-ի, իսկ ջաղանշիրցիներինը՝ 2500-ի: Բայց քանի որ հայերի միջև միասնություն չկա, ուստի ջաղանշիրցիները նրանց իրենց իշխանությանն են ենթարկել»<sup>94</sup>: Փանահ խանը իրեն ենթարկելով Նախիջևանի, Սյունիանի ու Կապանի կողմերի մի շարք բնակավայրեր՝ անհրաժեշտության դեպքում այն վայրերից ստանում էր 1000-ական զինվոր<sup>95</sup>:

<sup>90</sup> Նույն տեղում, 91թ:

<sup>91</sup> Նույն տեղում, 91ա:

<sup>92</sup> Кавказская старина, Тифлис, 1872, № 2, с. 35.

<sup>93</sup> Армяно-русские отношения, т. 4, с. 213.

<sup>94</sup> Грамоты и другие исторические документы относящиеся до Грузии, ч. 1, СПб. 1891, с. 434, նույն տե՛ս նաև Լ. Մ. Մելիքսեթ-բեկ, նշվ. աշխ., էջ 154:

<sup>95</sup> М. Нерсисян, ук. соч., с. 265:



Ներսեստվը հավաստի արտացոլում է Իրանի տիրակալ Աղա Մուհամմադ խանի Ղարաբաղյան արշավանքը և նրա զորքերի կողմից Շուշիի պաշարումը: Ներսեստվը վկայում է Ղարաբաղի բնակչության կողմից պարսկական զորքերին ցույց տված համառ դիմադրության մասին, որը հաստատվում է այլ աղբյուրների դրան վերաբերող ավելի ընդարձակ նկարագրություններով<sup>96</sup>:

Ըստ «Ճարիխ-ե Սաֆի»-ի, Ղարաբաղ ներխուժած Աղա Մուհամմադ խանի բանակը կանգ էր առել Շուշիի մոտակայքում Զանախչիի ու Շուշիքենդի միջև գտնվող Նաբաթ-խան կամ Շահ-յուրտ կոչված վայրում: Այստեղ Իրանի ապագա շահը, իր բանակատեղիի շուրջը «ամրություններ է կառուցում, որոնց հետքերը այժմ էլ կան»<sup>97</sup>: Դրանց անհրաժեշտությունը ծագել էր հավանաբար զարաբաղցիների (հատկապես հայերի) անընդմեջ հարձակումների հետևանքով, որոնց մասին վկայում է ինչպես ինքը՝ Ներսեստվը, այնպես էլ այդ շրջանի մյուս քե՛ հայ և քե՛ այլազգի պատմագիրները: Ներսեստվը շեշտում է արցախահայության մեծ դերը Աղա Մուհամմադ խանի զորքերի դեմ պայքարում<sup>98</sup>:

Հեղինակը կարևոր վկայություններ է տալիս Աղա Մուհամմադ խանի զորքի ու սպառազինության մասին, որից ակնհայտ է դառնում պարսից բանակի զենքերի հնացածությունը:

«Ճարիխ-ե Սաֆի»-ում իրենց ճշմարտացի արտացոլումն են գտել 1796թ. տեղի ունեցած Ղարաբաղի Իբրահիմ խանի ու Վրաստանի Հերակլ քագավորի համատեղ հարձակումը Գանձակի Ջավադ խանի վրա, Վ. Ջուրովի գլխավորությամբ ռուսական զորքերի արշավանքը Անդրկովկաս, ինչպես նաև 1797թ. Աղա Մուհամմադ շահի երկրորդ արշավանքը Ղարաբաղ և նրա սպանությունը<sup>99</sup>:

Ներսեստվի երկում հակիրճ շարադրված է Ռուսաստանի Անդրկովկաս ներքափանցման պատմությունը: XIX դարի սկզբից Ռուսաստանը ակտիվ քաղաքականություն է վարում Անդրկովկասյան երկրները իր գերիշխանության տակ առնելու նպատակով: 1801թ. Վրաստանն անցնում է Ռուսաստանի տիրապետության տակ, որին հաջորդում է հարևան Ջառ ու Բալականի, Գանձակի խանության հպատակեցումը: Պարսկաստանը չէր հաշտվում նախկինում իրեն ենթակա անդրկովկասյան տարածքների կորստի հետ: Ռուսաստանի ու Պարսկաստանի միջև տեղի են ունենում երկու պատերազմներ (1804-1813թթ, 1826-1828թթ.), ո-

<sup>96</sup> Грамоты и другие исторические документы, т. 2, вып. 2, СПб. с. 93; Мирза Джа-маль, ук. соч., с. 80. В. Н. Левинатов, Очерки из истории Азербайджана в 18-ом веке. Баку 1948, с. 168.

<sup>97</sup> Մ. Յ. Ներսեստվ, նշվ. ձեռ., էջ 93 ա:

<sup>98</sup> Նույն տեղում, էջ 94 ա:

<sup>99</sup> Նույն տեղում, էջ 97թ- 99ա:

լոնց ընթացքում ռազմական գործողությունների մի մասը տեղի է ունեցում Ղարաբաղի տարածքում:

XIX դարի սկզբին Ղարաբաղում ու նրա հարակից շրջաններում տեղի ունեցած այս դեպքերի պատմությունը առավել ճշգրիտ ու մանրամասը լուսաբանված է ռուսական սկզբնաղբյուրներում:

Ղարաբաղի տվյալ շրջանի պատմության առանձին հարցերին անդրադառնում են նաև Իրանի պալատական պատմագիրները, որոնց հաղորդումներին, ինչպես արդեն նշել ենք, անհրաժեշտ է զգույշ վերաբերվել<sup>100</sup>:

Հավաստի տեղեկություններ ունենալով 1804-1828թթ. իրադարձությունների վերաբերյալ՝ Ներսեսովը շարադրել է այդ ժամանակաշրջանի հանգամանալից ու իրական պատմությունը: Նրա հաղորդած պատմական տեղեկությունները մեծ մասամբ հավաստի են ու անկողմնակալ, հաճախ նաև եզակի, քանի որ պարունակում են այլ աղբյուրներում բացակայող փաստեր:

Ներսեսովի վկայությունները նոր տվյալներ են պարունակում 1805թ. Դիզակում, 1812թ. փետրվարին Սուլթանբուղում և 1812թ. հոկտեմբերին Ասլանդուզում մղվող կռիվների մասին:

Ներսեսովը պաշտպանում է այն տեսակետը, որ Ղարաբաղի Իբրահիմ խանի ու նրա մերձավորների սպանությունը 1806թ. մայիսին մայոր Լիսանկիչի ռուսական զորագնդի կողմից, նրա դավաճանական քայլերի հետևանքն էր<sup>101</sup>: Պարսկական արքունիքի հետ Իբրահիմ խանի հաստատած մամուկագրական կապի և նրա դավաճանական մտադրությունների փաստը արձանագրում են այդ ժամանակաշրջանի աղբյուրներին մեծ մասը<sup>102</sup>:

Ներսեսովը տեղյակ լինելով XIX դարի սկզբի անդրկովկասյան իրադարձություններին՝ հիշատակում է այդ տարածաշրջանում ռուսական կառավարության կողմից նշանակված կառավարչապետներից յուրա-

<sup>100</sup> Այս մասին տե՛ս Զ. Կոստիկյան, Արդ-առ-Ռազակ իբն Նաջաֆզուլի Դումրուլի «Մասսեր-ե Սուլթանիե» պատմական աշխատությունը Արևելյան Հայաստանի XIX դարի սկզբի քաղաքական իրադարձությունների մասին, Երիտասարդ արևելագետների համրապետական XX գիտական նստաշրջան, Ջեկուցումների թեզեր, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Երևան 1999, էջ 15:

<sup>101</sup> Մ. Յ. Ներսեսով, նշվ. ձեռ., էջ 112թ:

<sup>102</sup> Утверждение русского владычества на Кавказе, т. 1, Тифлис, 1901, с. 241; АКАК, т. 2, д. 1480, с. 722; В. А. Потто, Кавказская война в отдельных очерках, эпизодах, легендах и биографиях, т. 1, вып. 3, СПб. 1887, с. 340; Դիվան Հայոց պատմության, գիրք Ե, Թիֆլիս 1902, էջ 494-495; رضاقلیخان هدایت، تاریخ روسیه،

الصفای ناصری، جلد نهم، تهران، ۱۳۳۹، ص. ۴۳۱:

քանչյուրի թիֆլիս գալու ու իր պաշտոնը ստանձնելու ճշգրիտ ժամանակը:

«Թարիխ-ե Սաֆի»-ում քաջակայում է 1807-1811թթ. պարսկական ջոկատների կողմից Ղարաբաղում գործած ասպատակությունների պատմությունը, որոնց մասին մամրամասն տեղեկություններ կան Արդառ-Ռազակ Դումբուլիի պատմագրական երկում<sup>103</sup>:

Ներսեսովը XIX դարի Ղարաբաղի պատմագիրներից միակն է, որ շարադրել է 1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմի ամբողջ ընթացքը, անդրադարձել Ղարաբաղում ու հարևան շրջաններում տեղի ունեցած զրեթե բոլոր խոշոր իրադարձություններին՝ փորձելով լուսաբանել այդ պատերազմի բռնկման պատճառները, պարսից հրամանատարության ռազմական ծրագրերը և դրանց իրագործման ճանապարհին ծագած դժվարությունները: Գտնվելով Ամիր խան սադլարի գլխավորությամբ Ղարաբաղ ներխուժած քանակում՝ հեղինակը ակամատես է լինում այնտեղ ծավալվող իրադարձություններին: Պաշտոնի բերումով Ներսեսովը ծանոթ էր նաև Ամիր խանի նամակագրությանը՝ քարծրաստիճան պաշտոնյաների ու քազաժառանգի հետ և մեջ է բերում դրանցից մի քանիսի պատճենները:

Վերոհիշյալ հանգամանքների շնորհիվ նրա «Թարիխ-ե Սաֆի»-ն հարուստ է այդ պատերազմի պատմությամբ վերաբերող եզակի արժեք ունեցող հավաստի տեղեկություններով:

Պատերազմի դրդապատճառների շարքում հեղինակի աչքից չեն վրիպել ինչպես Եվրոպական երկրների ռազմական օգնությունն ու սադրանքները<sup>104</sup>, այնպես էլ Պարսկաստանի շահագրգռվածությունն այդ հարցում և Ռուսաստանում ստեղծված քաղաքական անկայուն իրադրությունը:

Մյուզա Յուսուֆը իրավացի կերպով մատնանշում է նաև Ռուսաստանի տիրապետության տակ անցած տարածքների մալսկին տիրակալների և հավակնորդների դերը պատերազմի բռնկման հարցում<sup>105</sup>: Վերջիններս պետք է գլխավորեին ռուսական կառավարումից դժգոհ տարրերի ապստամբությունը և անցումը պարսիկների կողմը, որը, ինչպես հայտնի է, վճռական դեր է ունենում պարսկական կողմի սկզբնական հաջողություններում<sup>106</sup>:

Պարսիկ իշխանավորների ու պաշտոնյաների մեջ կային այնպիսիները, որոնք հավանություն չէին տալիս Ռուսաստանի հետ խաղաղ հա-

<sup>103</sup> عبدالرزاق دثلی، مآسر سلطانیه، تهران ۱۳۵۱، صص. ۲۵۵-۱۶۰.

<sup>104</sup> Ују мaшһн տһն Н. А. Кузнецова, Иран в первой половине 19-ого века. Москва 1983, с. 55; АКАК, т. 6, часть 2, д. 341, с. 178.

<sup>105</sup> Մ. Յ. Ներսեսով, նշվ. ծեռ., էջ 121ր:

<sup>106</sup> Н. Н. Дубровин, История войны и владычества русских на Кавказе, т. 6, с. 625-626.

րաբերությունների խզմանը և նրա դեմ պատերազմ սկսելուն: Այդ ան-  
ձինք որքան էլ սակավաթիվ էին, այնուամենայնիվ հնարավորության  
դեպքում ջանում էին շահին ու թագաժառանգին ետ պահել այդ վտան-  
գավոր ձեռնարկումից: Այդ պաշտոնյաներից մեկի՝ Աբաս Միրզայի *սան-  
քուդդար* Հեյդար Ալի խանի այդ ուղղությամբ կատարած համարձակ  
քայլերի մասին եզակի վկայություն է տալիս Ներսեսովը<sup>107</sup>:

Ներսեսովը արժեքավոր տեղեկություններ է հաղորդում պարսկական  
բանակի կազմի, Ղարաբաղի, Շիրվանի, Շաքիի, Գանձակի ու Թալիշի  
տարածքները ներխուժած նրա առանձին զորամիավորումների թվաքա-  
նակի, իրամանատարների և շարժման ուղղությունների մասին:

Ներսեսովի մեջ բերած Աբաս Միրզայի մամակների պատճենները  
կարևոր փաստեր են պարունակում պարսից իրամանատարության  
ռազմական ծրագրերի վերաբերյալ: Հայտնի է դառնում, որ թագաժա-  
ռանգը ստադիո էր չհշտակի գրոհով Ղարաբաղը նվաճել, որի համար Ա-  
միր խան սարդարն ու Մեհլի Դուլի խանը պետք է կազմակերպեին և դե-  
կավարեին տեղի մահմեդականների ապստամբությունը, իսկ ինքը՝ Ա-  
բաս Միրզան, պետք է մարտի ելներ այնտեղի ռուսական զորքերի դեմ:  
Արագընթաց հարձակումով պետք է նվաճվեին Ռուսաստանի տիրապե-  
տության տակ գտնվող Անդրկովկասյան գավառները:

Պարսկական իրամանատարության ծրագրերը խափանվում են գնդ-  
Ռեուտի խելամիտ ու սքափ գործելակերպի շնորհիվ: Պարսից զորքերի  
ներխուժման մասին լուրեր ստանալում պես նա շտապում է ռուսական  
զորագնդերը տանել Շուշի: Իրենց ծրագրին խստորեն հետևելու դեպ-  
քում Աբաս Միրզան բերևս կարողանար հասնել Ավետարանոց (Չա-  
մախչի) նախրան ռուսների այնտեղից հեռանալը: Սակայն Նազիմկայի  
գլխավորած Գորիսի ռուսական կայազորի դեմ տարված հաղթանակը  
արքեցնող ազդեցություն է ունենում Ղարաբաղ ներխուժած պարսկա-  
կան բանակի ու թագաժառանգի վրա՝ դանդաղեցնում է նրանց ընթացքը:  
Աբաս Միրզան հարկ է համարում իր զորքի շարժման ուղղությունը փո-  
խել դեպի Կոռնիձոր գյուղը՝ տեսնելու ռուս զերիներին, հանդիպելու  
պարսիկների կողմն անցած մահմեդական բեկերից Հաջի Աղալարին և  
վայելելու առաջին հաջողության բերկրանքը<sup>108</sup>:

Ներսեսովը պատկերում է պարսկական բանակին բնորոշ անկարգա-  
պահությունը ի դեմս Մուհամմադ Ջաման խանի, որը «կռվել մի կողմ  
դրած» կանգ է առնում Շենեք գյուղի մոտաայքում և զինաբերուք կազմա-  
կերպում»<sup>109</sup>: Ամիր խան սարդարը ևս անհնազանդություն է ցույց տալիս  
զլխավոր իրամանատար Աբաս Միրզայի նկատմամբ ու հրաժարվում

<sup>107</sup> Մ. Յ. Ներսեսով, նշվ. ձեռ., էջ 122բ-123ա:

<sup>108</sup> Նույն տեղում, էջ 125բ:

<sup>109</sup> Նույն տեղում:

պաշտպանվել Գանձակի բերդում<sup>110</sup>։ Պարսկական հսկայական զորքերի պարտությունը բացատրվում է վերջիններիս անկարգապահությամբ ու անկազմակերպվածությամբ<sup>111</sup>։

Շուշի ամրոցի պաշտպանությունը ռուսական փոքրաթիվ կայազորի ու տեղի հայերի կողմից 1826թ. հուլիս-օգոստոս ամիսներին Ղարաբաղի պատմության հերոսական էջերից է։

Շուշիի պաշարման ընթացքում պարսկական կողմի գործողությունների ու պահվածքի վերաբերյալ համաձայնալից տեղեկություններ կան «Ժաքիխ-ե Սաֆի»-ում՝ գրված ականատեսի ձեռքով։

Շուշիի պաշտպանությունը թուլացնելու նպատակով Աբաս Միրզան փորձում էր իր կողմը գրավել տեղի հայ պաշտպաններին։ Այդ նպատակով նա բերդի պարիսպների տակ է ուղարկում պարսից բանակում գտնվող հայերին, որպեսզի նրանք համոզեն այնտեղի հայ պաշտպաններին դավաճանել ռուսներին։ Աբաս Միրզայի պահանջով Շուշիի հայ պաշտպաններին ուղղված հորդորական մամուլներ են գրում Գանձասարի Սարգիս արքեպիսկոպոսը, Մեհդի Ղուլի խանը և այլք, սակայն ապարդյուն<sup>112</sup>։ Այս կարգի մի քանի դեպք է նկարագրում մահ Ներսեսովը, որտեղ երևում է հայերի միահամուռ աջակցությունը ռուսական զորքերին։

Ներսեսովը շեշտում է Ղարաբաղի և հատկապես Շուշիի հայության անձնագոհ աջակցությունը տեղի ռուսական կայազորին։ Այդ պայքարին մասնակցում էր մահ հարևան Շուշիքենդ և Քարինտակ գյուղերի բնակչությունը<sup>113</sup>։ Այդ փաստը իր արտացոլումն է գտել մահ ռուսական աղբյուրներում<sup>114</sup>։

Ռուսներին ցուցաբերած աջակցության հետևանքն է լինում Ղալաբաղի ավերումը, հայության նկատմամբ դաժան վերաբերմունքը և Աբաս Միրզայի հրամանով բազմաթիվ խաղաղ բնակիչների սպանությունը։ Այս փաստերը արձանագրված են ինչպես «Ժաքիխ-ե Սաֆի»-ում<sup>115</sup>, այնպես էլ այդ շրջանի Ղարաբաղի պատմությանը վերաբերող այլ սկզբնաղբյուրներում<sup>116</sup>։

Պարսիկ զինվորականները շատ ցածր ռոճիկ էին ստանում և ստիպված էին իրենց վարձատրությունը հայրայքի կողոպուտի ու ավարա-

<sup>110</sup> Նույն տեղում, էջ 133թ-134ա։

<sup>111</sup> Статистическое обозрение Персии составленное подполковником И. Ф. Бларамбергом в 1841 году, СПб. 1853, с. 53.

<sup>112</sup> Кавказский сборник, т. 24, с. 71, 74, 79.

<sup>113</sup> Լ. Յ. Ներսեսով, նշվ. ձեռ. 128 ք, 131ա-ք։

<sup>114</sup> Утверждение, т. 4, ч. 1, с. 107; Кавказский сборник, т. 24, с. 88, 93.

<sup>115</sup> Լ. Յ. Ներսեսով, նշվ. ձեռ., էջ 131ք։

<sup>116</sup> Առ. Կոստանեանց, նշվ. ձեռ., էջ 74։

ռուբլյունների միջոցով<sup>117</sup>։ Հայազգի հեղինակը վկայում է պարսկական բանակի Ղարաբաղում կատարած ավարառությունների, ալան-քալանի մասին։ Անգամ այն, որ Աբաս Միրզան ջանում էր խաղաղ ճանապարհով հասնել ամրոցի գրավմանը, իսկ մյուսները, մասնավորապես, Ամիր խան սարդարը և զինվորները կոտմ էին նրա ուժով նվաճելու տարբերակին, հեղինակը բացատրում է քաղաքի հարստություններին տիրելու ձգտումներով։ Շուշիի խաղաղ անձնատուր լինելու դեպքում բերդի ողջ հարստությունը ընկնելու էր թագաժառանգի ձեռքը, իսկ հակառակ դեպքում կողոպուտը կատարվելու էր նրա զինվորների ու ենթակայների կողմից և բաժանվելու էր նրանց միջև<sup>118</sup>։

«Թարիխ-ե Սաֆի»-ն ճշգրիտ տեղեկություններ է տալիս Գանձակի խանությունում գտնվող պարսկական զորագնդի ձեռնարկումների ու նրա հրամանատար Ամիր խան սարդարի տակտիկական քայլերի մասին։ «Թարիխ-ե Սաֆի»-ում նկարագրվում է պարսիկներին ցույց տրված ջերմ ընդունելությունը Գանձակի մահմեդականների կողմից, ինչպես նաև Բիլիսաբենդ թաղամասի հայերի խոհեմաբար հնազանդություն հայտնելը<sup>119</sup>։

Ռուսական աղբյուրների վկայությամբ մինչև պարսկական զորքերի գալը Գանձակի մահմեդականները ապստամբել էին՝ մասամբ կոտորելով, մասամբ էլ քաղաքից վտարելով տեղի ռուսական կայազորը։ Այնպես որ պարսկական զորքը առանց որևէ դժվարության կարողանում է մտնել քաղաք<sup>120</sup>։

Հայազգի հեղինակը որոշ մանրամասներ է ավելացնում 1826թ. սեպտեմբերի 3-ին Շամխոր գետի ափին, նույն ամսվա 13-ին Գանձակի Ջազալու վայրում<sup>121</sup> և 1827թ. հուլիսի 5-ին Ջևանբուլաղում<sup>122</sup> տեղի ունեցած ճակատամարտերի վերաբերյալ։ Հեղինակը հավաստի փաստեր է հաղորդում այդ ճակատամարտերին մասնակցած պարսկական ուժերի, նրանց հրամանատարության ծրագրերի, ռազմական գործողությունների և պարտություններին հաջորդած խուճապահար փախուստի վերաբերյալ։

Միրզա Յուսուֆը նկարագրում է գեներալ Մադաթովի մոտորը Շուշի, նրա հոգատարությունը իրեն ենթակա տարածքների բնակչության նկատմամբ<sup>123</sup>, որով էլ Ներսեսովը քաջատրում է 1826թ. դեկտեմբերի 28-ին սկսած արշավանքը դեպի Ղարաղալ։

<sup>117</sup> А. К. Артамонов, Персия как наш противник в Закавказье, Тифлис, 1889, с. 28-29, 30

<sup>118</sup> Մ. Յ. Ներսեսով, նշվ. ձեռ., էջ 128թ։

<sup>119</sup> Նույն տեղում, էջ 132 ա։

<sup>120</sup> Н. Н. Дубровин, т. 6, с. 655-656.

<sup>121</sup> Մ. Յ. Ներսեսով, նշվ. ձեռ., էջ 135թ-137թ։

<sup>122</sup> Նույն տեղում, էջ 142թ-143թ։

<sup>123</sup> Кавказский сборник, т. 26, с. 51, 102.

Պարսկաստանի պարտությունները Շամխորի ու Գանձակի կոլովներում անկումային տրամադրություններ են առաջ բերում պարսկական բանակում<sup>124</sup>, որոնք վառ զույներով արտացոլված են Ներսեսովի երկում<sup>125</sup>:

Առավել հետաքրքրական է «Թարիխ-ե Սաֆի»-ում նկարագրված պատերազմական դեպքերի ընթացքը Նախիջևանում, խոյում ու Թավրիզում, որոնք պատկերում են թագաժառանգ Աբաս Միրզայի անհուսալի դրությունը<sup>126</sup>:

«Թարիխ-ե Սաֆի»-ն գերծ չէ մահ որոշ թերություններից: Դրանց մեջ առաջին հերթին պետք է նշել XVIII դարի դեպքերի հաճախ ոչ ճիշտ թվագրումը: Այսպես, Ավարիայի Օմար խանի 1785թ. արշավանքը նկարագրելիս Ներսեսովը հիշատակում է 1205 հ. թ., (1790/1791թ.)<sup>127</sup>: 1805թ. զնդ. Կարյազինի ջոկատի կոլովները Ղարաբաղում պարսկական զորքի դեմ հեղինակը թվագրում է 1806թ.<sup>128</sup>:

Առանձին դեպքերում նկատվում են որոշ իրադարձությունների հաջորդականության խախտումներ, որոնց պատճառը, թերևս, նրա օգտագործած սկզբնաղբյուրներում տեղ գտած համամասն սխալներն են: 1752թ. Վրաստանի թագավոր Հերակլի կողմից Ղարաբաղի, Գանձակի ու Ղարադաղի խաների դավադրական կալանավորման հետ կապված դեպքերը նկարագրվում են 1757թ. տեղի ունեցած Մուհամմադ Հասան խան Ղազարի դարաբաղյան արշավանքից հետո, իսկ Ավարիայի Օմար խանի 1785թ. դեպի Վրաստան ու Երևանի խանություն և Իբրահիմ խանի 1789թ. դեպի խոյի խանություն կատարած արշավանքները՝ 1791թ. Իբրահիմ խանի զորքերի Նախիջևան ներխուժելուն վերաբերող դեպքերից հետո:

Հաճախ չեն համապատասխանում հեղինակի նշած մույն իրադարձությունների հիջրեթի լուսնային ու եվրոպական օրացույցների թվականները: Այսպես, Բայաթի ամրոցը, ըստ Ներսեսովի, հիմնադրվել է 1162/1752թ.<sup>129</sup>, մինչդեռ 1162 հ. թ. համապատասխանում է 1748/1749 թվականին<sup>130</sup>:

«Թարիխ-ե Սաֆի»-ի լեզուն գեղեցիկ է ու պարզ՝ համեմված բազմաթիվ ասացվածքներով ու բանաստեղծական տողերով: Թեև հեղինակը խուսափում է ճոռոմ արտահայտություններից, սակայն նրան հատուկ է պարսից պատմագրությանը բնորոշ պերճախոս ոճը: Կարծում ենք, որ

<sup>124</sup> B. A. Пятто, *указ. соч.*, т. 3, кн. 2, с. 249; АКАК, т. 6, ч. 2, д. 704, с. 388; д. 705, с. 389:

<sup>125</sup> Մ. Յ. Ներսեսով, *նշվ. ձեռ. էջ 140 ա*:

<sup>126</sup> Նույն տեղում, էջ 147թ:

<sup>127</sup> Նույն տեղում, էջ 92 ա:

<sup>128</sup> Նույն տեղում, էջ 113 ա:

<sup>129</sup> Նույն տեղում, էջ 82 ա:

<sup>130</sup> Մնացած ամհամապատասխանությունները նշվում են բնագրի թարգմանության մեջ:

պատմագրական երկը որոշ չափով ծանրաբեռնում են ճակատամարտերի երկարաշունչ գեղարվեստական նկարագրությունները: Ներսեսովը հարկ է համարում տալ նաև նշանավոր անձանց՝ զորավարների, մելիքների ու շահերի խառնվածքի ու բնավորության բնութագրական գծերը:

Հեղինակը հարկ էր համարում մեջ է բերում բյուրքերեն ասացվածքներ, դիպուկ խոսքեր և արտահայտություններ, չի խորշում նաև բյուրքերեն բառերի հաճախակի գործածելուց («շենլիք»- բրբ. բազմություն: «քե բաքրի-բաք»- բուրբ. մի կերպ, մի հմարով): Հեղինակի խոսքում տեղ են գտել նաև քաղմարիվ ոռոսական բառեր և տերմիններ, ինչպիսիք են «սալդաք» («солдат»), «պոլկ» («полк») «վարս» («верста»), «քլանչի» («клан») բառի բուրքացված տարբերակը, «եներալ» («генерал») և այլն: Ներսեսովը զրի է առել նաև ոռոս նշանավոր անձանց տրված իրանական մականունները, ինչպիսիք են «Փշթախդար» (Ցициановի մականունը, որը «иностранец» բառի աղավաղված ձևն է), «ղըզըլ-այադ» (բուրբ. «կարմրաոտ», Վ. Զուբովի մականունը, որ տրվել էր նրան արհեստական ոտք ունենալու պատճառով):

Ներսեսովի պատմական երկում դրսևորվել են հեղինակի բանաստեղծական հակումները: Այստեղ առատ են բնարական մեջբերումները պարսկալեզու և բյուրքալեզու պոեզիայից:

Թարգմանության մեջ տրված է «Թարիխ-ե Սաֆի»-ի առաջաբանում հաղորդվող տեղեկությունները հեղինակի կենսագրության վերաբերյալ, VIII և IX գլուխների թարգմանությունները, որոնցում տեղ չեն գտել միայն պատմագիտական կարևորություն չունեցող մինչև XVIII դարն ընկած ժամանակաշրջանի հայ ժողովրդի պատմությանը վերաբերող համառոտ ակնարկը, բանաստեղծական մեջբերումները, շատ երկար ու ավելորդ նկարագրությունները:

[ ]- փակագծերում ավելացրել ենք տեքստում չնշված այն բառերը, որոնց առկայությունը սակայն ավելի հասկանալի է դարձնում հեղինակի միտքը:

Թարգմանության մեջ նշել ենք ներկայումս գործածվող տեղանունները, անձնանունների ճիշտ ձևերը, իսկ -( ) փակագծերում տալիս ենք հեղինակի նշած, մեծ մասամբ նրանց իրանական տարբերակները:

Հիմնականում շեղագիր տառերով գրված պարսկական տերմինների բացատրությունը տրվում է թարգմանությանը հաջորդող բառարանում:

Հեղինակը խորին երախտագիտություն է հայտնում «Արմեն և Բերսաբե Ճերեճեան» հիմնադրամի հարգելի նախագահ Արսեն Ճերեճեանին սույն գրքի ծախսերը հոգալու մասին:



## ԱՌԱՋԱԲԱՆ

(2ր) Այսպես է ասում որևէ կողմնակալությունից ու [իրականության] աղավաղումից զերծ այս գովելի պատմության հեղինակ, ձեր խոնարհ ծառա Միրզա Յուսուֆ Ղարաբաղցին: Քանի որ նվաստս մանուկ հասակում Ղարաբաղից տարվելով ղզլբաշների երկիրը<sup>131</sup> 18 տարի մնացի Ամիր խան *սարդարի* մոտ, կատարելապես տիրապետեցի նրանց լեզվին: Որոշ ժամանակ լինելով [Ամիր խանի] դիվանի գրագիրը և վարելով [նրա] մամակագրությունը, զբաղվում էի նաև «պատմությունների» և ուղեգրությունների ուսումնասիրությամբ: Շփվելով ամեն տեսակ ցեղերի ու ժողովուրդների հետ՝ ծանոթացա նրանց հավատալիքներին ու քարքերին:

1828թ. երբ Ռուսաստանի (Ռուսիա) և Ղզլբաշների միջև կրկին հաշտություն է կնքվում, նվաստս վերադառնում է իր հայրենի ծննդավայրը՝ Ղարաբաղ: Ռուսաստանի փառապանծ կայսր Նիկոլայ Պավլովիչ I-ի օրոք, որը մեծահոգաբար (Յա) հավատքի ու գաղափարների համար որևէ մեկի չէր նեղում ու անհամդուրժողականություն չէր ցուցաբերում, նվաստս որոշ ժամանակ զբաղվեցի անտիկ շրջանի սրբերի վարքի ու տարբեր բնագավառների նոր գրքերի ուսումնասիրությամբ: Լիակատար պատկերացում կազմելով նրանց մասին՝ քանի որ պատմագրական գրքերում որոշ կողմնակալ ու կեղծ փաստերի հանդիպեցի, մի քանի ընկերներիս խորհրդով ու առաջարկով որոշեցի մի իրական, ճշգրիտ ու ճշմարտացի պատմություն գրել, որ զերծ կլիներ ստից ու ավելորդ նկարագրություններից:

Ամեն կողմից (նյութը) հետազոտելուց հետո տեսնելով, որ յուրաքանչյուր հարցի շուրջ արդեն գիրք և պատմություն կա ստեղծված, ջանացի գրել Ասիայի խաների ու Կովկասյան տարածքների իշխանավորների կյանքի ու գործերի, ինչպես նաև նրանց երկրների Ռուսաստանի հզոր պետության գերիշխանության տակ անցնելու պատմությունը: Այդ դեպքերի մեծ մասին ինքս ականատես եմ եղել, մի քանիսի մասին լսել եմ վկաներից, մի մասի վերաբերյալ էլ նյութեր եմ քաղել հայերեն և այլ հայտնի գրքերից:

Համառոտ շարադրեցի նաև հեռու անցյալի ու ժամանակակից դեպքերի մասին, որպեսզի պատմությունը հաջորդական և միտքը կապակցված լինի: Այն գրեցի հաճելի ոճով ու գեղեցիկ արտահայտություններով, որպեսզի ընթերցելը հաճելի լինի...

<sup>131</sup> Ղզլբաշ ցեղերը կազմում էին Իրանի Սեֆյան և Ղաջարական քաղաքական տոների ռազմական ուժերի հիմնական մասը, ուստի այդ երկիրը պարսկալեզու սկզբնաղբյուրներում հաճախ անվանվում էր նրանց անունով:

(3բ) Այնուամենայնիվ երկար ժամանակ կարիքի ու նեղության պատճառով չէի կարողանում նպատակս իրագործել, և ցանկությունս անկատար մնաց: Որոշ ժամանակ այս պատճառով մտախոգ էի: Սակայն անդուլ աշխատանքից հետո քախտը նորից ժպտաց և եկավ բարենպաստ մի ժամանակ, երբ 1854/1201թ. Կասպիական գորգերի գլխավոր հրամանատար և Հյուսիսային Դաղստանի կառավարիչ ուղղամիտ իշխան Գ. Օրբելյանի՝ բարյացակամ հրավերով նրան ներկայացա և ստացա նրա գրագրի պաշտոնը: Նրա խնդրանքով էլ ձեռնամուխ եղա գրքիս շարադրանքին և ց. գ. իշխան, Դ. Դ. Ջորջաձեի բարեհամ օգնությամբ այն իր ավարտին հասցրի:

## ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

(74ա) ՀԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ

ԱՆՑՅԱԼԻ, ԽԱՄՍԱՅԻ<sup>132</sup> և ԶԱՆԳԵԶՈՒՐԻ<sup>133</sup>

ՄԱՀԱԼ ՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ԱՅՆՏԵՂԻ ՄԵԼԻՔՆԵՐԻ ՈՒ  
ԽԱՆԵՐԻ ԾԱԳՈՒՄՆ ՈՒ ՍԵՐՆԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայտնի է, որ Ղարաբաղի<sup>134</sup> հողը հայկական տարածքներից է և այն ... երկրամասի մեջ է մտել:

Հին ժամանակներում բաղկացած էր չորս մասերից.

Առաջինը, որ կոչվում էր Սումեսրան, Սիսական, Սիսիան և «Լեռներից այն կողմ»<sup>135</sup>, Սևանա (Գյոքչա) լճից երկայնությամբ ձգվում էր մինչև Խո-

<sup>132</sup> «Խամսայի մահալներ»-ը («խամսա» արաբ. նշանակում է «հինգ») XVIII դարում Պարսկաստանի կազմի մեջ մտնող վարչական միավորներից էր, որը կազմված էր Ղարաբաղի հինգ հայ մեյքություններից, (տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. 4, էջ 186):

<sup>133</sup> Սյունիքի հիմնական մասը, որ ռուսական իշխանությունների օրոք մտնում էր Ելիսավետսկոյի նահանգի մեջ, Զանգեզուր էր կոչվում (Ղ. Ալիշան, Սիսական, էջ 9):

<sup>134</sup> Ղարաբաղ տեղանունը, որն ընդգրկում էր Կուր և Արաքս գետերով սահմանափակված Հայկական բարձրավանդակի հյուսիս-արևելյան մասը, պատմական սկզբնաղբյուրներում իշխատակվում է սկսած XIII դարից (حماد الله مستوفی):

<sup>135</sup> (قزوینی، نزاهة القلوب، تهران ۱۳۳۶، ص ۷۱):

<sup>135</sup> Հայկական Սյունիք գավառի պատմական տարրեր անվանումներն են, (տե՛ս Ղ. Ալիշան, Սիսական, էջ 6):

դա-Աֆերիմի կամուրջը, իսկ լայնությամբ՝ Արաքս (Արաս) գետից մինչև Մռավ ու Գանձակի Այրում<sup>136</sup> լեռները: Այժմ այս վայրերը «Լեռներից այն կողմ», Ջանգեզուր են անվանում:

Երկրորդը՝ Արցախը, որ ներկայումս Ղարաբաղ են անվանում, հարթավայրային կողմում է, երկայնությամբ ձգվում է Զիրս (Զերս) լեռից մինչև Ջավադի մահալը, որ Կուր ու Արաքս գետերի միախառնվելու վայրն է, իսկ լայնությամբ՝ Խոդա-Աֆերիմի կամրջից մինչև Խաչեն գետը:

Երրորդը Ուտիքը (Ուրի, Ուդի) երկայնությամբ ձգվում է Մռավ սարից մինչև Կուրի ափն, իսկ լայնությամբ Խաչեն գետից մինչև Գանձակի Բյուրակ գետը: Նրա խոշոր քաղաքը Պարտավն (Բարդա'ն)<sup>137</sup> է եղել:

Չորրորդը Փայտակարանն է: Այդ շրջանը գտնվում է Կուրի ու Արաքսի միջև և տարածվում մինչև Կասպից ծով:

Գանձակի հողը ևս Առանի<sup>138</sup> տարածքներից է...

(74ր) Այս տարածքները Արմենիա են անվանում, որովհետև կապվում են Հաբեթի որդիներից Նոյի հինգերորդ որդի Արամի անվան հետ...

Ներկայումս Զիրս լեռան արևմտյան կողմը Ջանգեզուր ու Կասպյան (Ղափանաթ)<sup>139</sup> են անվանում, իսկ հյուսիսային կողմը՝ Ղարաբաղ: Նրա կիժման քիչ խոնավ է, և այնտեղի մարդիկ քեև փոքր-ինչ հաստակող են, սակայն քո-

<sup>136</sup> XVIII-XIX դարերում այդպես էր կոչվում Գանձակի խանության հարավային լեռնակողմը, (տե՛ս Ս. Կարապետյան, Այրումներ, լր. «Գարդմանք», 1996, № 3):

<sup>137</sup> Պարտավը միջնադարյան Անդրկովկասի խոշորագույն քաղաքներից էր, որը հիմնվելով VI դարի սկզբին Սասանյան Կավաթ I-ի (մ. թ. 488-531թթ.) կողմից Թարթառի ափին, շուտով դառնում է Աղվանից մարզպանության մայրաքաղաքը (A. A. Акопян, Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, Ереван, 1987, с. 122): Գտնվելով առևտրական ճանապարհների հատման վայրում, այն արաբների տիրապետության շրջանում ևս շարունակում է մնալ տարածաշրջանի գլխավոր քաղաքը (В. В. Бартольд, Сочинения, т. 7, Москва 1971, с. 213):

<sup>138</sup> «Առան» տեղանունը քեև հայ և քեև հատկապես արաբ-սլաոնական միջնադարյան պատմագրության մեջ հիշատակվում է «Աղվանք» տեղանունի փոխարեն: Հունա-հռոմեական անտիկ պատմագիրների և հայ վաղ շրջանի պատմագիրների տվյալներով «Աղվանքը ձգվում է հարավում մինչև Կուր գետը, արևմուտքում մինչև Ալազան գետի արևմտյան ափը, հյուսիսում են Կովկասյան լեռները, իսկ արևելքում Կասպից ծովը: Մ. թ. V դարում Աղվանքին են միացվում հայոց Ուտիք և Արցախ մահաճգները, որի հետևանքով էլ այդ շրջանների վրա ևս տարածվում է «Աղվանք» անվանումը» (A. АКОПЯН, УК. СОЧ., с. 36, 110). XIV դարից մույն տարածքը նշելու համար զուգահեռաբար գործածվում էին Առան և Ղարաբաղ տեղանունները՝ «Առանի Ղարաբաղ» ձևով (Эвхарст Орта Реса, Азербайджан и Арран, Ереван 1993, с. 38):

<sup>139</sup> Ղափանաթի շրջանը Սեֆյան Պարսկաստանի տիրապետության շրջանում ընդգրկում էր Ջանգեզուրի ու Կասպանի լեռների միջև ընկած լեռնաշխարհը (տե՛ս А. Д. Патакан, УК. СОЧ., с. 51):

լոր արհեստներում հմուտ ու քաջությամբ նշանավոր են: Նրանք ամեն մի երկրում իրենց մմանների ու հասակակիցների մեջ առաջնության են ձգտում: Հին ժամանակներում առանձին իշխանություն են ունեցել, բայց երբեմն էլ Իրանին են հալատակվել...

(76ա) Ղարաբաղում մի քանի մեծ քաղաքներ են եղել: Դրանցից են Մեհր<sup>140</sup> քաղաքը, որը ներկայումս Միլ անվամբ է հայտնի, Բաքի<sup>141</sup> քաղաքը, Պարտավը և այլն: Բոլորը օտար բանակների արշավանքների հետևանքով ավերվել են, իսկ նրանց բնակիչները իրենց կյանքն ու պատիվը պաշտպանելու նպատակով լեռնային շրջաններում են բնակություն հաստատել...

(76բ) Հին ժամանակներում Արաղի և Ատրպատականի<sup>142</sup> (Ազերբայջանի) մահմեդական բնակչության մի մասը գալիս, բնակություն է հաստատում մինչև Ալազան գետը ձգվող [տարածքներում]՝ Ղարաբաղում, Շամախիում և Շաքիում: Սեֆյան ժամանակաշրջանում Ջուղայի հայ բնակչության մի մասը գաղթեցվում է Սպահան, այնպես որ այնտեղ այժմ Նոր Ջուղա անունով մի բնակավայր կա: Ղարաբաղի լեռնային շրջանների գյուղերի ներկայիս բնակիչները մեծ մասամբ քաղաքաբնակներ են եղել, որոնք չլիմանալով դաժան կառավարիչների բռնություններին, ցրվել և լեռների ամմատչելի վայրերում են ապաստանել: Այնպես որ Ղարաբաղի գյուղերի բնակչության մեծամասնությունը Մեհր քաղաքից է, որն այժմ հայտնի է Միլ անվամբ, ինչպես նաև Ղարադաղի<sup>143</sup> Միար<sup>144</sup> քաղաքից: Ասում են, Միարում հայերի մեծ քաղամաս է եղել, որի բոլոր բնակիչները ունեկոր էին: Սեֆյան շահերի ժամանակաշրջանում քաղաքի մուսուլման բնակչությունը նրանց դավաճանության մեջ է կասկածում և շահին դիմում հղում, քե. «Հայերն այնքան են հարատացել, որ չեն ցանկանում Իրանի պետությանը ծառայել: Ավան Յուզբաշուն վառող ու գնդակ են ուղարկում, որպեսզի նա ուժեղանալով գա իրենց ազատի»:

<sup>140</sup> Միլ ավերակ քաղաքի մասին հիշատակություններ կան XIX դարի հայ ուսումնասիրողների մոտ (Մ. Բաքիտյան, Արցախ, Բագու, 1895, էջ 68, 69; Ս. Ջալալյան, Նշվ աշխ., հ. 2, էջ 364):

<sup>141</sup> Բաքի ավերակ բնակավայրը նշվում է Դիզակի հարավում Արաքսի գետի հյուսիսային ափին (տե՛ս Առ. Կոստանյան, Նշվ. ձեռ., էջ 36; նաև Ս. Ջալալյան, Նշվ. աշխ., հ. 2, էջ 263: Ղ. Ալիջան, Արցախ, էջ 121; նաև Карта Армении и сопредельных стран, X. Ф. Б. Лихча и Ф. Османова):

<sup>142</sup> Ատրպատականը և Արաղը Իրանի հյուսիս-արևմտյան և արևմտյան սահմանակից շրջաններն են:

<sup>143</sup> Ղարադաղի լեռնաշղթան ձգվում է Ատրպատականի հյուսիսային մասով Արարատ լեռից մինչև Թալիշի լեռները:

<sup>144</sup> Միարը Ղարադաղի կենտրոնական քաղաքն է, որ գտնվում է Սարալան լեռան հյուսիս-արևմտյան կողմում, Քուշե Դաղից, Աղ Դաղից և Այրի Դաղից դեպի արևելք, Թավրիզից 117 կմ, իսկ Մեշքինից 75 կմ հեռավորության վրա: Նրա պատմությունը սկսվում է նախաիսլամական շրջանից:

Դրանից հետո Սեֆյան արքունիքից քաղաքի հայ բնակչությանը կոտորելու կամ մահմեդականացնելու հրաման է արձակվում: Մեծ մասին կոտորում են, ոմանք մահմեդականացվում են, մի մասն էլ՝ ցարուցքիվ է լինում:

Թաղթե Ղափույի<sup>145</sup> բնակչության մի մասը հարթավայրային տարածքներից հեռանալով՝ լեռներում է ապաստանել, մի մասն էլ ցրվել, գնացել է Ղզլարի, Աստրախանի (Հաշտարխանի) և Ռուսաստանի կողմերը: Այնպես որ այժմ բնակավայրերի ու գյուղերի մի մասը ամայի ու անմշակ են: Դրանց թվում է Ջառուզիթիլ բնակավայրը, որ Ղարաբաղի ու Գանձակի միջև է գտնվում<sup>146</sup>, ինչպես նաև գյուղերի մի մասը, որոնց հետքերը պահպանվել են: Մի խոսքով, արգավանդ վայրերը անբնակ ու դատարկ են և հաճախ՝ բնակեցված քոչվորներով:

Սեֆյան շահերի ժամանակաշրջանում Ղարաբաղը ենթարկվում էր Գանձակի կառավարիչներին ու *թեկլարթեկերին*, որոնք էլ գանձում էին այնտեղի *դիվանի մալիյեն*:

## ԳԱՆԶԱԿԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ: ԱՅՆՏԵՂԻ ԽԱՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ

(77ա) Չնայած, որ հնում, թե՛ մոնղոլական նվաճման շրջանում, թե՛ սելջուկյան սուլթանների ու թուրքմեն խաների օրոք Գանձակում միշտ էլ պատվարժան խաներ ու *թեկլարթեկեր* էին նստում, սակայն Սեֆյանների օրոք, երբ շահ Աբասը վերանորոգում է Գանձակ քաղաքը, այնտեղ մեծամասամբ *ղաջարական գիադոլլի*<sup>147</sup> ցեղի խաներն են սկսում իշխել: Նրանց էր ենթարկվում նաև Ղարաբաղը:

Ջիադոլլի խաները մշտապես հավատարիմ են եղել Սեֆյան պետությանը: Այնպես որ շահական հրովարտակներում ու այլ գրություններում նրանց «*Ամիր-ալ-ումմարա*, Գանձակի ու Ղարաբաղի *թեկլարթեկ* Ղաջար Ջիադոլլի» տիտղոսով էին մեծարում: Այդ խաների ենթակայության տակ էր

<sup>145</sup> Թախթ-ե Ղափու - Ղարաբաղի թե հայ մեկիքությունների և թե քոչվոր ցեղերի մասին խոսելիս հեղինակը հիշատակում է «Թախթե Ղափու» տեղանունը: Այս տեղանվանը, բացի «Թախթ-ե Սաֆի»-ից որևէ այլ պատմական աշխատության մեջ չենք հանդիպել: Հավանական է, որ այն լինի հեղինակի կողմից կատարված «Փայտակարան»-ի թարգմանությունը:

<sup>146</sup> XIX դարում Ջառուզիթիլը նշվում էր Երևանի նահանգի Գյոքչա գավառի մահմեդական գյուղերի թվում (И. Шонен, ур. соч., с. 599; Գ. Սմբատեանց, Նկարագիր Ժովազարդ գաւառին Գեղարքունու, Վաղարշապատ, 1895, էջ 630):

<sup>147</sup> Ղաջարական ցեղերը ըստ Արդ-առ-Ռազակ Դումբուլիի կազմվել էին քյուրքական սուլդուգ, ցելայիր և Թանգուր ցեղերի միավորումից (տե՛ս عبدالرزاق دمنلي، مأسر سلطانية، تهران ۱۳۵۱، ص. ۴):

գտնվում Սընդդի<sup>148</sup> կողմերից, որը Թիֆլիսի ու Գանձակի սահմանագծին է, մինչև Խոդա-Աֆերիսի կամուրջը և Արաքսն [ընկած տարածքը] ու երբեմն անգամ Թիֆլիսը:

Նաղիբ շահի օրոք 1148<sup>149</sup> Մուղանի դաշտում անցկացված ավագանու ժողովում, որի ժամանակ Իրանի շահ ընտրելու համար Նաղիբի հրամանով բոլոր *վիլայեթներին* մարդիկ էին հավաքվել, Գանձակի խաները դեմ են լինում Նաղիբի գահակալելուն և անգամ մյուսներին հրահերում, որ քացի Սեֆյանների ժառանգներից, այլ շահ չընտրեն: Նաղիբ շահը, լինելով հիշաչար ու անողորմ, գահ քարձրանալուց և ինքնուրույնություն ձեռք բերելուց հետո ջանում է ոչնչացնել Գանձակի խաներին և աստիճանաբար թուլացնում է նրանց իշխանությունը:

Ղազախ<sup>150</sup> ու բորչալու<sup>151</sup> (բոշչալու) ցեղերին իրենց առաջնորդների հետ նրանց [Գանձակի խաների] ենթակայության տակից հանում ու հանձնում է Վրաստանի *վալիին*: Ղարաբաղի ջևանշիր, օթուզիքի ու քյաքիբու ցեղերին<sup>152</sup> հրամայում է քոչել Խորասան: (77բ) Իսկ Ղարաբաղի Խամսայի Ջրաբերդ (Չեխբերդ)<sup>153</sup>, Խաչեն (Խաչին), Թալիշ, Վարանդա և Դիզակ *մահալներին* յուրաքանչյուրում հայերից մեկի է նշանակում ու հրամայում, որպեսզի երբևէ որևէ այլ անձի չենթարկվեն և իրենց խնդրագրերը ուղիղ շահակամ արքունիք հղեն: Այս պատճառով Գանձակի խաների իշխանությունը հետզհետե թուլանում է:

## ՂԱՐԱԲԱՂԻ ԽԱՄՍԱՅԻ ՄԱՀԱԼՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՄԵԼԻՔՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ

Ղարաբաղի Թախսե Ղափուի հինգ *մահալները*, որոնց բնակչությունը ամբողջովին քրիստոնյա է, հայտնի են Խամսա անունով, քանի որ 5 թիվը արաբերեն խամսա բառն է: Դրանք են.

<sup>148</sup> Սընդդ (քյորփի) - աղբը. կոտրված կամուրջ, այդպես էր կոչվում Խրամ գետի վրայով անցկացված կամուրջը:

<sup>149</sup> 1148 թ. համապատասխանում է 1735/1736 թթ.: Նաղիբ շահը իշխել է 1735-1747 թթ.:

<sup>150</sup> Ղազախ ցեղը համարվում է բյուրքացած մոնղոլական ուզբեկական ցեղի ճյուղերից (տե՛ս В. В. Бартольд, *Сочинения*, т. 5, Москва 1968, с. 212); Այդ ցեղի մի մասը գաղթում է Հայաստանի հյուսիսային շրջանները: Այն պատկանում էր ղզրաշ 15 ցեղերի թվին (տե՛ս И. П. Петрушевский, *ук. соч.*, с. 92, 134):

<sup>151</sup> Բորչալու քոչվոր ցեղը, ինչպես նաև նրա հարևան շամշադինլու և դազախ ցեղերը բնակվելով Երևանի խամսայան հյուսիսային շրջաններում, XVIII դարի կեսերին ընդունում են Վրաստանի իսլամականությունը և զինվորներ մատակարարում վրացական բանակի համար, (տե՛ս Л. У. Меликшеч-реки, *նշվ. աշխ.*, հ. 4, էջ 124, 132):

<sup>152</sup> Օթուզիքին 32 քրդական ու բյուրքական մար ցեղերի արհեստական միավորում էր, որի մեջ էր մտնում նաև ջևաշիր ցեղը, (տե՛ս И. П. Петрушевский, *ук. соч.*, с. 96, 136):

<sup>153</sup> Ջրաբերդի հնագույն անվանումներն են Զարաբերդը, Ճառաբերդը, Զրեբերդը, Զրքերդը, Ջրքերդը և Ջերմուկը (Ղ. Ալիշան, *Արցախ*, էջ 40): Հեղինակը Ջրաբերդի մահալը անվանում է Չեխբերդ, իսկ Ջերմուկ ամրոցը՝ Զարմիխ:

Առաջինը Դիզակի մահալն է: Այն Հազարի գետից ու Մալ-բափեից<sup>154</sup> ձգվում է մինչև Գյուլ-բափե<sup>155</sup> և լայնությամբ տարածվում Արաքս գետից մինչև խորհատ լեռը<sup>156</sup>: Եկամտաբեր շրջան է, այստեղ մշակվում են բամբակ, բրինձ, մետաքս, ցորեն և այլ հացահատիկային բույսեր: Մի քանի խոշոր քաղաքներ է ունեցել Արաքսի ափին, որոնցից այժմ միայն ավերակներն են մնացել: Այնտեղի մելիքները հնում Թուրքիայից (Ռում) են եկել<sup>157</sup>: Նաղիր շահի օրոք Մելիք Եզանը մեծ հարգանքի տեր անձնավորություն էր, և Նաղիր շահը նրա հետ հատուկ բարեհաճությամբ էր վարվում: Նրան շահի «քարալըղ»<sup>158</sup> էին անվանում:

Մի անգամ, երբ Նաղիր շահի բանակը գտնվում էր Մուղանում, Մելիք Եզանը շահին է ներկայացնում: Վերջինս նրան փորձելու նպատակով սունկ է պահանջում: Նա [Եզանը], - \_Լսում եմ, - ասելով դուրս է գալիս:

Գյուլական ավազներն ու տանուտները նրան ասում են. «Ինչու՞ հանձն առար այդ դժվար հրամանը կատարել, չէ՞ որ տարվա այս եղանակին սունկ չի լինում»:

Նա պատասխանում. «Ձեր գործը չէ, ես եմ պատասխան տալու»:

<sup>154</sup> Գյուլ-բափեի գտնվում է Քյոնդալան գետից քիչ հարավ, նրա գետաբերանի մոտակայքում (Карта Кавказского края с показанием густот населения, Баку, 1908; Дорожная карта Кавказского края, составлена и литографирована в военно-топографическом отделе Кавказского военного округа, Тифлис 1870, см. п. Польшатинский):

<sup>155</sup> Մալ-բափեի գտնվում է Հազարի (Աղավնու) գետի միջին հոսանքի աջ ափին (Карта Закавказского края до 1917г. - см. к. Мать-тапа.)

<sup>156</sup> Խորհատը Մեծ Բիրսից դեպի հարավ-արևելք ձգվող լեռնաշղթայի լեռներից մեկն է, որը գտնվում է Դիզակիայտ (կամ Զիարեղ) լեռից քիչ դեպի արևելք (Карта Закавказского края, см. г. Кургат):

<sup>157</sup> Սկզբնաղբյուրների տեղեկությունները Դիզակի Մելիք-Եզանյանների ծագման վերաբերյալ տարբերվում են: Մեր կարծիքով, դրա պատճառը նախնական սկզբնաղբյուրի՝ Միրզա Աղիգյոզալ բեկի «Ղարաբաղ-Նամեի» տվյալ մասի անընթեռնելիությունն է: Ըստ այդ աշխատության ռուսական հրատարակության, Դիզակի Մելիք-Եզանյանները Լոռիից էին (Мирза Абдигезал-бек, ук. соч., с. 57): Նրա XIX դարի հայերեն քաղաքից էին (ՄՄ, ձեռ. 4463, էջ 6): Միրզա Աղիգյոզալ-բեկի աշխատությունը գրված է եղել արաբատառ թուրքերենով, որի դեպքում նշված տեղանունների գրությունը նման է (رومی, رومی): Զանի, որ ըստ Առ. Կոստանեանցի Դիզակի մելիքների ծագումով Վրաստանից էին («Նխորեք հայ մելիքութեան մասին», պր. Ա, էջ 12-13), և Լոռին այդ շրջանում մտնում էր վրաց քաղաքականության կազմի մեջ, ուստի առավել հավանական է, որ Մելիք-Եզանյանները Ղարաբաղ են եկել Լոռուց:

<sup>158</sup> «Բարալըղ»- թուրք. «ժայռացու»:

Մի քանի օր անց շահին ներկայանալով՝ (78ա) [Մելիք Եզանը] զեկուցում է, թե. «Չեր հրամանի համաձայն մարդ ուղարկեցի լեռները: Այն վայրերը, ուր սունկն աճում է, դեռ ձյունով են ծածկված»:

Նաղիր շահին շատ է դուր գալիս նրա խոհանարարությունն ու իր հրամանը կատարելու նրա պատրաստակամությունը: Նա ասում է. «Հա՛յր իմ, ես ինքս էլ զիտեի, որ այս եղանակին սունկ չի լինում, քայց Չեր հնազանդության ու խելամտության աստիճանն էի փորձում»:

Դրանից հետո նրան «շահի բարալըդ» էին անվանում: Նա Նաղիր շահի ժամանակաշրջանում Ղարաբաղի մելիքների ավագն ու ամենապատվարժանն էր: Որոշ դեպքերում իր ազնվության ու արդարասիրտության շնորհիվ նա էր դառնում բոլոր *մահալների* լիազոր ներկայացուցիչը<sup>159</sup>:

Պատմում են, մի օր Նաղիր շահի հարեմի կանայք Մելիք Եզանի կնոջը հյուր են կանչում, որպեսզի վերջինիս պատվեն իրենց հյուրասիրությամբ: Երբ Մելիք Եզանի կինը շահի կանանցն է մտնում, շահական խոհանոցից տանտիրոջ կողմից նման հյուրին վայել զանազան խորտիկներ ու կերակուրներ են բերվում նրան հյուրասիրելու համար: Նա հրաժարվում է՝ ասելով. «Այսօր պաս է, և ուտել չեմ կարող»:

Նաղիր շահին շատ է դուր գալիս նրա բարեպաշտությունը և հրամայում է նրան նվերներ ընծայել:

Երկրորդ Վարանդայի *մահալ*ն է: Այն ձգվում է Քիրս լեռից մինչև Ալի Բալի հովիտը<sup>160</sup> երկայնությամբ ու խորհատ լեռից մինչև Շուշիքենդ ու Խալֆալու գետերը<sup>161</sup> լայնությամբ: Նույնպես եկամտաբեր *մահալ* է: Հացահատիկային և այլ մշակովի բույսերից առավել լավ ցորենն է [այստեղ] աճում: Տեղի մելիքները Գեղարքունիքի (Գյոքչայի) ազնվականներից են եղել և Ջեյվա գյուղից եկել<sup>162</sup>, Ավետարանոց գյուղում են բնակություն հաստատել: Թեև երբեմն (78բ) նրանց ժառանգների միջև երկպառակություններ են ծա-

<sup>159</sup> 1735թ. Մելիք Եզանը Նաղիր շահի կողմից նշանակվել էր Արցախի հայկական մահալների ընդհանուր կառավարիչ կամ, ինչպես նրա ընդունարանի մուտքի վիճագիր արձանագրությունում է նշված «խան և բեկլարբեկի» (Հ. Դ. Փափազյան, Մելիք Եզանի ընդունարանի մուտքի վիճագիր արձանագրությունը, «Լրագիր հասարակական գիտությունների», Երևան 1985, № 5, էջ 76):

<sup>160</sup> Ալի Բալի (կամ Ալաբալի) Արցախի Մարտունու շրջանի հարավ-արևելյան մասում գտնվող հացահատիկի դաշտերից է (Կարա J-38-11-6, (Մարտունի) Խճ. 1973):

<sup>161</sup> Խալֆալուն (կամ Ղայրալի) ու Շուշիքենդը (կամ Ջարինտակ) Գարգառի վտակներն են, որոնցից առաջինը հոսում է Շուշի քաղաքի արևմտյան, իսկ երկրորդը՝ արևելյան կողմով (Ղ. Ալիջան, Արցախ, էջ 110-111):

<sup>162</sup> Ըստ Կ. Տեր-Մկրտչյանի նրանց տոհմից ոմն Մյրզաբեկ 1603թ. Գեղարքունիքի տեղափոխվում է Վարանդա և այստեղ հիմնում Մելիք-Շահնազարյանների մելիքությունը (Կ. Տեր-Մկրտչյան, Դօփեանք և Մելիք-Շահնազարեանք, «Նիւթեր հայ մելիքութեան մասին», պրակ Բ, Էջմիածին, 1914, էջ 134):



գել, և նրանք միմյանց դեմ պայքար են մղել հանուն մեկիքական պաշտոնի, այնուամենայնիվ հիմնականում նրանք են վարել Վարանդայի մեկիքների պաշտոնը և հայտնի են որպես Մելիք-Շահնազարյաններ (Շահնազարովներ): Նաղիյր շահը նրանցից ոմն Միրզաբեկի, հանցանք վերագրելով, պարանով խեղդամահ է անում և ասում. «Սա Շիրույենների<sup>163</sup> ցեղից է»:

[Դրանից հետո] որոշ ժամանակ [Վարանդայի] մեկիքի պաշտոնը վարում են այլ անձինք, բայց շուտով նորից այն անցնում է Մելիք Շահնազարի ժառանգներին: Մելիք Շահնազարը լինելով շատ հարուստ՝ Ղարաբաղի խաներին ծառայություններ է մատուցում, որի շնորհիվ մեծ պատվի է արժանանում: Փանահ խանի իշխանության սկզբնական շրջանում, երբ նա փողի կարիք էր զգում, Մելիք Շահնազարը անհրաժեշտության դեպքում օգնության էր հասնում և նրա կարիքները բավարարում: Իր որդի Ջումշուդի (Ջամշիդ) հետ մշտապես խաներին ծառայելով՝ [նրանց] հարգանքն էին վայելում:

Վերջում Մելիք Շահնազարը իր գործերը բարելավելու և դիրքերն ամրապնդելու համար, աղջկան՝ Հուրզադ խանումին, կնության է տալիս Իրրահիմ խանին, և այդ կերպ նրա հետ բարեկամական կապեր հաստատում: Ասում են, մի անգամ, դեռ Փանահ խանի իշխանության սկզբում Մելիք Շահնազարը նրան ասում է. «Ժնչու՞ ես մտախոգվում, յո՞ր տարի է, քո բանակը ընտիր աշորայով եմ պահում»:

Այժմ ևս Մելիք Շահնազարի հետնորդներից մի քանիսը կենդանի են և Ռուսաստանի տիրապետության ժամանակաշրջանում պատվավոր անձինք են:

Երրորդը Խաչենի *մահալ*ն է: Այն լայնությամբ Գարգար գետից տարածվում է մինչև Ղաբարբու<sup>164</sup>, իսկ երկայնությամբ՝ Ղըրխղզ<sup>165</sup> և Միխրության լեռներից<sup>166</sup> մինչև Բայաթի անտառը: Այնտեղ ևս ցորեն ու զանազան այլ բույսեր են մշակվում, բայց ոչ Վարանդայի նման առատ ու բարձրորակ: Որոշ տեղերում մշակվում է նաև բրինձ, իսկ տարածքները մեծամասամբ ծածկված են անտառներով ու այգիներով: (79ա) Ասում են Խաչենի մեկի-

<sup>163</sup> Շիրույեն կամ Կավատ II-ը Սասանյան շահերից է եղել, որը 628թ. գահ է բարձրանում իր հորը՝ Խոսրով Փարվիզին, գահընկեց անելով:

<sup>164</sup> Ղաբարբու (կամ Կավարտ) գետակը հոսում է Խաչենագետի ու Թարբաղի միջև ընկած տարածքով (Карта Закавказского края, см. р. Кабарту):

<sup>165</sup> XIX դարում նույն անունով է կոչվել Ղարաբաղյան լեռնաշղթայի Ղըզ-դալա գյուղից դեպի հյուսիս-արևմուտք մինչև Խաչենագետի ակունքները ձգվող խառվածը (А. К. Артамонов, ук.соч., с. 105. Карта Закавказского края, Карта Кавказского края.):

<sup>166</sup> Միխրության լեռնաշղթան կազմում է Թարբաղ և Հազարի գետերի ջրբաժանը և լեռների գծով միանում Ղարաբաղի լեռնաշղթային: Միխրության լեռնաշղթային է պատկանում Միխրությանը լեռը, որն ունի 3411մ բարձրություն:

քությունում Հաթերք անունով մի փոքր ամրոց է եղել, որը այժմ ընդամենը մի գյուղ է: Այնտեղի մեկիքները սերում են Հասան-Ջալալյանների (Հասան-Ջալալովների) տոհմից:

Փանահ խանի օրոք, նրանց ոչնչացումից հետո, ի հայտ է գալիս ոմն Մեկիք Միրզախան խնձիրստան (խնդրստան) գյուղից<sup>167</sup>, որը վերոհիշյալ խանին մատուցած ծառայությունների ու նվիրվածության համար մեկիք է դառնում: Նրա զավակները ևս ստանձնում ու վարում են տեղի մեկիքի պաշտոնը մինչև Ռուսաստանի տիրապետության ժամանակաշրջանը: Նրանցից վերջինը Մեկիք Ղահրամանն է:

Չորրորդը Ջրաբերդի (Չեղբերդ) *մահալն* է: Այն երկայնությամբ տարածվում է Ղըրխ-ղըզի սահմաններից մինչև Բայաթի անտառի<sup>168</sup> մի հատվածը և Պարտավ, իսկ լայնությամբ՝ Խաչենագետից ու Ղարաբրուի հովտից մինչև Թարբատ գետը: Այնտեղ ևս բարձրորակ ցորեն ու այլ հացահատիկային բույսեր են մշակվում: Այնտեղի մեկիքները Մաղավուզից<sup>169</sup> են եկել: Այնտեղի բնակիչները հայտնի են իրենց խիզախությամբ ու քաջասրտությամբ: Շատ են անտառային ու անմատչելի վայրերը: Մի ամրոց կա Ջերմուկ (Չարմիխ) անունով, որը բավական անառիկ ու անուր մի վայր է: Մեկիքները միշտ նրանում են բնակվել և գործել խիզախ արարքներ: Քանի որ իր քաջությամբ նշանավոր Մեկիք Ալլահդուլին զորավար Արդալլահ Քյոփրուլուօղլի փաշայի դեմ Նաղիր շահի մղած կռվում՝ վերջինիս ծառայելով մեծ արիությամբ և ցուցաբերում, Նաղիր շահը հրամայում է, որ նրան այսուհետև մեկիք չկոչեն, այլ Ալլահդուլի *սուլթան* հորջորջեն: Նրա տոհմը Հայաստանի նշանավոր տոհմերից է:

Հինգերորդը Թալիշի *մահալն* է: Այն ձգվում է Մուավ լեռից ու այգեշատ Գյուլիստանից մինչև Կուրը երկայնությամբ, և Թարբատ գետից մինչև Գեբրան (Գուրան)՝ լայնությամբ: (79ր) Այնտեղ մշակվում են ամեն տեսակի բարձրորակ հացահատիկային և այլ բույսեր: Մեկիքները Շիրվանից են եկել ու Թալիշ գյուղում հաստատվել: Հայտնի են որպես Մեկիք-Բեգլարյաններ (Բեգլարովներ): Նրանց տոհմից մի քանիսը վարում են [այնտեղի] մեկիքությունը, որից հետո Մեկիք Հովսեփ (Ուսուր) Մեծը գրավում է Գյուլիստանի

<sup>167</sup> Խնդրիստան գյուղը գտնվում է Խաչեն մահալում, Հիլիսի հյուսիս-արևմտյան կողմում (Մ. Բարխուդարյան, Արցախ, էջ 160):

<sup>168</sup> Ներկայումս Բայաթում անտառներ չկան, սակայն անցյալում եղել են, որովհետև նրա հողերը ետանտառային մարգագետնային են (Советский Азербайджан, с. 38):

<sup>169</sup> Մաղավուզը Սյունիքի Աղահեճք, հետագայում Քաշաթաղ կոչված զավառի XVI-XVIII դարերում զործածական անվանումն է (Ս. Կարապետյան, Հայ մշակույթի, էջ 127): Այլ աղբյուրներում ևս վկայություններ կան այն մասին, որ Ջրաբերդի մեկիքները հանդիսանում են Քաշաթաղի Մեկիք Հայկազի հետնորդները (Մ. Բարխուդարյան, Պատմություն Աղուանից, հ. Բ, Թիֆլիս 1907, էջ 51):

քերդը և այնտեղ ամրանում: Ներկայումս նրա ժառանգները Ռուսաստանի պետությանը ծառայելով՝ մեծ հարգանք են վայելում:

## ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՄԱՀԱԼՆԵՐԻ ԵՎ ԱՅՆՏԵՂԻ ՈՐՈՇ ԻՐԱ- ԴԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Լեռան այն կողմում», ուր Զանգեզուրն ու Կապանն են և կարաչոռլու, հաջի-սամլու<sup>170</sup>, քեյրաջար<sup>171</sup> ու մյուս քրդական ցեղերը, կան մի քանի *միմ-րաշիտրյուն* Կարաչոռլու, Հաջի-սամլու, Խնձորակ (Խանգիրաք)<sup>172</sup>, Գորիս (Գորես)<sup>173</sup>, Տաթև<sup>174</sup>, Սիսիան, Մեղրի Գունեյ, Կապան և Չավնդուր (Չուլդուր)<sup>175</sup>: Նրանցից յուրաքանչյուրը կառավարվում է առանձին անձի կողմից: Անցյալում Կապանը<sup>176</sup> Մեղրի - Գունեյի<sup>177</sup> մի քանի *մահալների* ու Աջանանի<sup>178</sup> հետ ենթարկվում էր Ազատ-Ջիրանին, Օրդուբադը<sup>179</sup> և Սիսիանը<sup>180</sup>

<sup>170</sup> XIX դարում Դարալագյազի շրջանում էր բնակվում իսլամի շիա ուղղությանը պատկանող քրդական կիսաքուլվոր կարաչոռլու ցեղը, որի ճյուղերից էր հաջի-սամլու ցեղը, (տե՛ս Ս. Լերք, Исследования об иранских курдах и их предках, северных халдеях, кн. 1, СПб., 1856, с. 89):

<sup>171</sup> Քեյրաջար ցեղի մասին պատմական աղբյուրներում որևէ հիշատակության չենք հանդիպել: Եթե Մ. Յ. Ներսեսյունը չի սխալվում. և այդպիսի ցեղ իրոք եղել է ապա այն իր անունը ստացել է բնակության վայրից՝ Շար գավառում գտնվող Քարվաճառի աղավաղումից (այդ տեղանվան մասին, տե՛ս Ս. Կարապետյան, Հայ մշակույթի, էջ 51):

<sup>172</sup> Խնձորակ բնակավայրը XIX դարում նշվում է Սյունիքի Շահապունիք գավառում, Բջնաղից քիչ դեպի հյուսիս (Ղ. Ալիշան, Սիսական, էջ 486):

<sup>173</sup> XIX դարում Գորիսը Զանգեզուրի մարդաշատ բնակավայրերից էր (Ղ. Ալիշան, Սիսական, էջ 261):

<sup>174</sup> Սյունիքի հոգևոր կենտրոն Տաթևը XIX դարում մտնում էր նույնանուն *մահալի* մեջ, Բարգուշատ գետի հարավային վտակի ափին (Հայ ժողովրդի պատմություն, հ. 5, էջ 15):


<sup>175</sup> Չավնդուրը ընդգրկում էր Արաքսի հյուսիսային նույնանուն վտակի ափի երկայնքով ձգվող Սյունիքի նախկին Կովսական գավառի տարածքը: Հեղինակը այդ տեղանունը նշում է «Չուլդուր» ձևով, որը չպետք է շփոթել Հայաստանի Արևելյան և Արևմտյան հատվածների սահմանագծին գտնվող Չըլդըր լեռների և նույնանուն լճի հետ:

<sup>176</sup> Ըստ Ղ. Ալիշանի, Կապանի շրջանը ընդգրկում էր Սյունիքի իրար սահմանակից Չորք և Բադք գավառները (Ղ. Ալիշան, Սիսական, էջ 8-9):

<sup>177</sup> Մեղրին և Գյունեյը Սյունիքի Արևիք գավառի բուրքական և պարսկական քարգմանական տարբերակներն են (Նույն տեղում):

<sup>178</sup> Աջանանը Սյունիքի Բադք գավառի արևմտյան մասն էր (Նույն տեղում, էջ 315-344):

<sup>179</sup> Ազատ-Ջիրանն ու Օրդուբադը Սյունիքի Գողթն գավառի շրջաններն են:



մրանց շինությունների ու վանքերի ավերակները: Դրանց մի մասը պահպանվել են Միքենցե<sup>185</sup> ու Բազարդուզ<sup>186</sup> գյուղերում, որոնք շատ զեղեցիկ ու ամառանոցային վայրեր են: Այժմ այդ ավերակներում քրդական ցեղեր ու մահմեդականներ են բնակվում:

Հավատքի համար բշնամիների դեմ համառ պայքար մղած նշանավոր անձանցից է Ավան Յուզբաշին<sup>187</sup>, որը Ղարաբաղում ամրանում է Շուշիի Խազինեդարասի<sup>188</sup> կոչվող վայրում և խիզախ արարքներ գործում: Ասում են, որ երբ ... բվականին օսմանյան բանակը զալով՝ Երևանը, Թիֆլիսը և Գանձակը գրավում է, նույն Ավանը քիչ մարդկանցով զիջերային գրոհի է դիմում Կապանի Չավդուրի (Չուլդուր) շրջակայքում կանգ առած օսմանյան 7000-անոց բանակի վրա, պարտության մատնում և մրա մեծ մասին կոտորում: Մյուսը Դավիթ զորավարն էր, որը ... բվականին փոքրաքիվ հետևորդներով ու օգնականներով բավական զորք է ջարդում և մի քանի ամրոցներ գրավում...

## ՂԱՐԱԲԱՂԻ ԽԱՆԵՐԻ ԾԱԳՈՒՄՆ ՈՒ ՀԶՈՐԱՅՈՒՄԸ

Նրանք ծագումով ջհանշիր ցեղի սարիջալու<sup>189</sup> ցեղախմբից են: Ոմանք ասում են, որ նրանք թաթարական ցեղից են սերում: Իբրև թե վերոհիշյալ ցեղի ազդեցիկ իշխանավորներից մեկը ինչ-ինչ պատճառներով հեռանում է

<sup>184</sup> Մատենադարանի պարսկերեն վավերագրերը: Հրովարտականք, պրակ 2, Երևան, 1959, վավ. 15, 9, 32, էջ 67, 89, 99:

<sup>185</sup> Միքենցեղ գտնվում էր Աղահեճք գավառում, Հազարի գետի Երեմես վտակի ափին, (տե՛ս Ղ. Ալիշան, Սիսական, էջ 101, 243):

<sup>186</sup> Բազարդուզ վայրի վերաբերյալ Ղ. Ալիշանը գրում է, որ այն գտնվում էր Աղահեճք գավառի Հազարի գետի Ղորչի-չայ վտակի հովտում, «որ գոյ և ընդարձակ միջոց լերանց Պազարտիզ կոչեցեալ», (տե՛ս Ղ. Ալիշան, Սիսական, էջ 270):

<sup>187</sup> Ավան Յուզբաշին XVIII դարի սկզբի Արցախի սղնախների մղած ազատագրական պայքարի ղեկավարներից է:

<sup>188</sup> Խազինեդարասի (թուրք. - գանձերի ձոր), Շուշիի հարավ-արևմուտքում Զարինտակ գետի խոր ձորի անվանումն է: Ըստ Հ. Ջաքարյանցի, Աղա Մուհամմադ խանի արշավանքի ժամանակ Ղարաբաղի հայ բնակիչներից շատերը ապաստանում են Շուշիի հարավում գտնվող ձորի մի քարանձավում, որը այնքան անմատչելի էր, որ Իբրահիմ խանը այնտեղ է տեղափոխում իր գանձերը (ՄՄ, ձեռ. 2734, էջ 6): Ըստ երևույթին, այս պատճառով է ձորը հետագայում անվանվում Խազինեդարասի:

<sup>189</sup> Թյուրքալեզու սարիջալու ցեղի բնակավայրերը նշվում են XIX դարի ռուսական պաշտոնյաների կազմած վիճակագրական տվյալներում, (տե՛ս Описание Карабагской провинции сост. полк. Ермоловым и Могилевским в 1823г.):

հայրենիքից և գալով Վրաստան՝ քնակություն է հաստատում Լոռի ամրոցում: Գանձակի խաների հզորության շրջանում նա գալիս, նրանց մոտ ծառայության է անցնում: Ի վերջո այնտեղից էլ գալիս է Ղարաբաղ, ջևանշիր ցեղին միանում և այնտեղ էլ ամուսնանում: Նա մի որդի է ունենում, որի անունը Ալի է դնում: Որովհետև այդ Ալին դժգույն էր, նրան Սարիջե<sup>190</sup> Ալի էին կոչում: Հարստության շնորհիվ նրա շուրջը ծառաների և վարձու գործավորների մեծ քաղմություն է հավաքվում, ու այդ խմբավորումը հայտնի է դառնում Սարիջե-ալիլու անվամբ: Հետագայում Սարիջե Ալիի այդ ունեցվածքն ու հարստությունը նրա որդուն՝ Իբրահիմ Աղային են անցնում<sup>191</sup>: Նա իր հարստությամբ էլ ավելի մեծ ճանաչում է ստանում: Նրան են պատկանել Աղդամի<sup>192</sup> ալլին և Արաքսի ավին ու Արասբարում<sup>193</sup> գտնվող հանդերը, արոտավայրերն ու չորքոտանիների հուտերը: Իբրահիմ խալիլի անունը նշված է Ղալաղ կոչվող ամառանոցային վայրում<sup>194</sup>:

Երբ Նադիր շահը ջևանշիր ցեղից զորք էր հավաքագրում, նույն Իբրահիմ խալիլի ավագ որդուն, որի անունն էր Ֆազլ Ալի Բեկ, տանում է իր հետ և դարձնում *իշխրադասիի քարիններից* մեկը: Երբ նա (81թ) ուզեցի դաշտում սպանվում է, Նադիրը կանչում է նրա փոքր եղբորը, որի անունը Փանահ Ալի էր, և մեծ եղբոր փոխարեն նրան հանձնում մուսնեռիկի պաշտոնը: Ծառայության անցնելուց որոշ ժամանակ անց Փանահ Ալին ինչ-որ կերպ Նադիր շահի մոտից փախչում, գալիս է Ղարաբաղ և սկսում մեկուսի կյանք վարել: Որքան էլ Նադիր շահը Ատրպատականի իշխանավորներին, *բեկլարբեկերին* և Շիրվանի ու այլ տեղերի խաներին խստորեն հրամայում է բռնել նրան ու ետ ուղարկել, չեն կարողանում: Մինչև որ 1161 հ.թ.-ին<sup>195</sup> տարածվում է Նադիր շահի սպանության լուրը և Փանահ Ալի բեկը իր գաղտնի ապաստարանից դուրս գալով՝ իր շուրջն է համախմբում ցեղերի մի քաղմություն և սկսում բռնություններ ու ինքնագլուխ արարքներ գործել: Ջևանշիր, օրուգիքի, քյաքիրլու ցեղերին, որ Ղարաբաղի խոշորագույն ցեղերից էին և Վրաստանի ցեղերի հետ խորասանից ետ էին վերադարձել, իր հովանավորության

<sup>190</sup> «Սարիջե» - բուրբ. «ղեղնավուն»:

<sup>191</sup> Ղարաբաղի խաների սերնդաբանությունը տե՛ս AKAK, т. 2, д. 1415, с. 695:

<sup>192</sup> Աղդամ- Գարգառի ծախ կոչմուն գտնվող այս քնակավայրը հիմնվել է XVII երկրորդ կեսին: Փանահ խանն ու նրա հաջորդները Աղդամը դարձնում են իրենց ծննդավայր կացարանը (Ս. Կարապետյան, Հայ մշակույթի, էջ 222):

<sup>193</sup> XIX դարում Արասբարի միևրաշխությունը գտնվում էր Արաքսի հյուսիսային ափին՝ Ջեբրայիլի հովտում (տե՛ս Обзорение Российских владений за Кавказом, в статистическом, этнографическом, топографическом и финансовом отношениях, ч. 3, СПб. 1836, с. 262):

<sup>194</sup> Հեղինակն ամենայն հավանականությամբ ի նկատի ունի Բայաթի մոտակայքում գտնվող Ղալաղ-թափա դամբարանաբլուրը (Ս. Կարապետյան, Հայ մշակույթի, էջ 213):

ներքո, բնակության վայր է տրամադրում: Նրանց բոլորին սիրաշահում է, իսկ անվանի երիտասարդներից իր շուրջը մի խումբ կազմելով, սկսում է երկրում հանդուգն արարքներ կատարել: Սրա-մրա հետ կոխվ է տալիս, բշնամություն անում:

Այդ ընթացքում, Նադիր շահի սպանությունից հետո [Իրանում], գահ էր բարձրացել նրա եղբորորդի Ալի Ղուլի խանը, որ հայտնի էր Ալի շահ անվամբ<sup>195</sup>: Ամիր Ասլան Ղրղուն<sup>197</sup> նրա կողմից նշանակվում է Ատրպատականի երկրների կառավարիչ և զորքերի գլխավոր հրամանատար: Լսելով Փանահ Ալի բեկի գործերի մասին՝ ցանկանում է նրա հետ տեսակցել: Նրան հանդիպելով՝ պահանջում է հպատակվել Ալի շահին: Փանահ Ալի բեկը այդ ժամանակ նպատակահարմար է գտնում հնազանդվել: Ամիր Ասլան խանը այդ մասին տեղեկացնում է Ն. Մ. Ալի շահին ու Փանահ խանի համար խալ'աթ, սուր և խանության ռադամ բերում:

Այնուհետև, քանի որ նոր էր իշխանության գլուխ անցել, Փանահ խանը մտառովում է (82ա) ընդհարումների ժամանակ ապահով ապաստարան ունենալու խնդրով: 1752/1162<sup>198</sup> թ. Բայաթում<sup>199</sup> ամրոց է հիմնում, պարիսպներ կառուցում և այնտեղ բնակություն հաստատում: Այդ ժամանակ օթուզիքի և ջհանշիր ցեղերը Ղարաբաղի Խամսայի մելիքների հետ մախանձից դրդված խնդրագիր են գրում Հաջի Չելեբիին<sup>200</sup>, որը Շիրվանշահների տոհմից էր և այն ժամանակ Շիրվանի ու հարևան այլ շրջանների ինքնիշխան տերը: Նրան հասկացնում են, որ Փանահ խանը Ղարաբաղին տիրելով, ամրոց է կառուցել և ջանում է հզորանալ: Սկսում են խարդավանքներ նյութել և Հաջի Չելեբիին պատերազմի հրահրել: Գրում են, որ եթե այս հարցում անփութություն թույլ տրվի, հետագայում նրա դեմ պայքարելը դժվար կլինի...

<sup>195</sup> 1161 թ. բ. համապատասխանում է 1748թ.-ին: Նադիր շահը սպանվել է 1747թ.:

<sup>196</sup> Ալի կամ Ադիլ շահը իշխել է 1747-1748թթ.:

<sup>197</sup> Ղրղուլ ցեղախումբը բուրքմենական աֆշար ցեղի ճյուղերից էր, որը Թուրքեստանից գաղթել էր Ատրպատական: Նադիր շահը 1151 թ. (1738թ.) Ամիր Ասլան խան Ղրղուլին նշանակում է Ատրպատականի կառավարիչ: Հետագայում Իրանում գահ բարձրացած Ալի Ղուլին հաստատում է նրան իր պաշտոնում (میرزا محمدی خان استرآبادی، تاریخ عالم‌آرای نادرى، صص. ۱۷۱-۱۷۰): Բուտկովի վկայությամբ Ամիր Ասլան խանը գալիս, պաշարում է Փանահ խանի բերդը և վերջինս հարկադրված է լինում հնազանդություն հայտնել (տե՛ս П. Г. Бутков, Материалы для новой истории Кавказа с 1722 по 1803 гг., т. 1, СПб. 1869, с. 236):

<sup>198</sup> 1162 թ. բ. համապատասխանում է 1748թ, ըստ Սիրզա Աղիյովալի Բայաթը կառուցվել է 1161 թ., (տե՛ս Мирза Адагезаль-бек, ур. соч., с. 53):

<sup>199</sup> Բայաթ ավերակ ամրոցը գտնվում է Գարգիսի մախ կողմում, Աղջաբեդուց 26 կմ դեպի արևմուտք:

<sup>200</sup> Շաբիի Հաջի Չելեբի խանը 1745թ. ապստամբում է Պարսկաստանի Նադիր շահի դեմ և անկախություն ձեռք բերում: Նա մահացել է 1755թ. (տե՛ս В. Н. Левинатов, ур. соч., с. 125):

Հաջի Չելեբին նրանց խնդրանքի համաձայն մեծ զորք է Ջառ ու Բայլականից<sup>201</sup>, Շիրվանից և այլ տեղերից հավաքագրում ու գալիս ոչնչացնելու Փանահ խանին<sup>202</sup>: Փանահ խանն էլ իր մարդկանց ժողովում է Բայաթ ամրոցում և սկսում պաշտպանվել: Հաջի Չելեբին երկար պատերազմում է, քայքայված և քայքայված զորքով որևէ արդյունքի հասնել, ձեռնունայն չես է վերադառնում: Ճանապարհին ասում է. «Փանահ խանը մինչև այժմ մի ոսկի էր առանց դրամի դրոշմի, մենք եկանք այն դրամ դարձրինք ու վերադարձանք»: Եվ այս խոսքը մարդկանց մեջ առածի է վերածվում:

Դրանից հետո Փանահ խանը ավելի ամուր մի վայր փնտրելով՝ 1755/1165<sup>203</sup> թվականին գալիս է Թառնակյուտ, որ հայտնի է Շահբուլաղ անվամբ<sup>204</sup>, և սարի ստորոտում ամրոց հիմնում: Կառուցում է մզկիթներ և տներ, հիմնում շուկա ու քաղնիքներ և այն դարձնում մի ապահով ապաստարան: [Այնուհետև] սկսում է պայքարել Ջրաբերդի ու Թալիշի մեկիքների դեմ, վնասել նրանց:

(82բ) Այս դեպքերի ընթացքում Ղարաբաղի մեկիքների միջև անհամաձայնություններ են ծագում ավագ ընտրելու հարցի շուրջ, որը պետք է լիներ նրանց գլխավորը, և բոլորը պետք է նրան ենթարկվեին: Վարանդայի Մելիք Շահնազարը իր հորեղբայր Մելիք Հուսեյնին սպանելով՝ ինքնագլուխ կերպով մեկիք է դառնում: Խամսայի մեկիքները այս վրդովեցուցիչ լուրը լսելով՝ գայրացած, ցանկանում են պատժել նրան: Համաձայնության գալով՝ յուրաքանչյուրը իր զորքն առած հարձակվում է Մելիք Շահնազարի վրա: Մելիք Շահնազարն էլ Ավետարանոց գյուղում մի փոքր ամրություն է շինում, շուրջը պարսպապատում և սկսում պաշտպանվել: Ի վերջո մեկիքները, չկարողանալով Ավետարանոցը գրավել, Վարանդայի մահալը կողոպտում են և չես

<sup>201</sup> Ջառի գավառն «ընկած է Կախալան և Ջաքարայի արևմտեան գետակների, Դաքրանդեան պարսպի շարունակութեան և Բաղասական Բայլական հարավային դաշտաբերանի շարունակութեան վրա», (տե՛ս Մ. Բարխուդարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Թիֆլիս 1893, էջ 271): Ջաքարալայում գտնվող Բայլականի շրջանը չպետք է շփոթել Ղարաբաղի կամ Սյուի հարթավայրում գտնվող հին Բայլական քաղաքի հետ (В. Ф. Минорский, История Ширвана и Дербенда, Москва 1963, с. 33): XIX դարում միասնական վարչական միավոր էին կազմում Ջառի, Բայլականի, Թալիշի ու Մինիխի համայնքները (տե՛ս История, география и этнография Дагестана 18-19-ого веков, Архивные материалы, Москва, 1958, с. 254):

<sup>202</sup> Հաջի Չելեբի խանի դարաբաղյան արշավանքի մանրամասների մասին տե՛ս Զ. Կոտիկյան, Ղարաբաղի XVIII դարի պատմությունն ըստ Միղզա Յուսուֆ Մ. Յ. Ներսեսովի «Թարիխ-ե Սաֆիի», ՊԲՀ, 1999, № 2-3, էջ 348-349:

<sup>203</sup> 1165 հ. թ. համապատասխանում է 1751/1752թթ:

<sup>204</sup> Թառնակյուտ կամ Շահբուլաղ ամրոցը գտնվում է Աղղամի շրջանում, Վանքասարի հարավ-արևելյան ստորոտում, «Շահբուլաղ» անվամբ հայտնի աղբյուրից քիչ հարավ (Ս. Կարապետյան, Հայ մշակույթի, էջ 226):



վերադառնում՝ այն մտադրությամբ, որ հաջորդ տարին կրկին զորք ու բազմությունով հարձակվեն Ավետարանոցի վրա, գրավեն այն և պատժեն Մելիք Շահնազարին: Մելիք Շահնազարը զգալով իր տկարությունը մելիքների հանդեպ՝ անհանգստացած սկսում է ելք որոնել: Ճարահատյալ դիմում է Փանահ խանի օգնությանը, նրան հպատակվում և հավատարմության երդում է տալիս և նրա աջակցությամբ ազատվում մելիքների պատժից:



## ՓԱՆԱՀ ԽԱՆԻ ԿՌԻՎՆԵՐԸ ԽԱՍՍԱՅԻ ՄԵԼԻՔՆԵՐԻ ԴԵՄ

Փանահի խանության սկզբնական շրջանում Դիզակի Մելիք Եսային (Սայի) որը հայտնի էր իր քաջությամբ, նրա դեմ բազում կռիվներ է մղում: Որոշ ժամանակ նրանց միջև թեժ մարտեր էին տեղի ունենում<sup>205</sup>: Եվ մի անգամ Մելիք Եսային Փանահ խանի զորքը այնպես է ջախջախում ու ցարքոցրիվ անում, որ նա, Բայաթի կողմը փախչելով, մեկ ամիս անտառներում է անցկացնում՝ չհամարձակվելով այնտեղից դուրս գալ: (83ա) Այդուհանդերձ Հաջի Զելեքիի օգնությամբ իր զորքը նորից կարգի է բերում ու մարտի դուրս գալիս Մելիք Եսայու դեմ: [Շուտով] հաշտարարների միջնորդությամբ որոշվում է հաշտություն կնքել: Մելիք Եսային, լինելով պարզասիրտ ու հպարտ մի մարդ, իր տանուտերեքից ու ավազներից մի քանիսի հետ Փանահ խանի մոտ է գնում: Վերջինս նրան նենգորեն կալանավորում է և սպանում<sup>206</sup>: Նրա բոլոր զավակներին տանջանքների է ենթարկում և ունեցվածքը բռնագրավում: Ոմանք փախչում են, ոմանք էլ հարկադրված են լինում մահմեդականություն ընդունելով, իրենց կյանքը փրկել: Այժմ ևս նրանց հետնորդների մի մասը մահմեդական է, մի մասն էլ՝ քրիստոնյա<sup>207</sup>:

Խաչենի *մահալում* Ուլուքաթի բոռը<sup>208</sup> ըմբոստանալով՝ տարբեր գյուղերից մարդ է հավաքում ու ամրամալով Բալլուդայա բերդում<sup>209</sup>, սկսում կռվել

<sup>205</sup> Ըստ Առ. Կոստանեանցի Փանահ խանի ու Մելիք Եսայու միջև կռիվները տևում են 7 տարի (Նիսբեր հայ մելիքության մասին, պրակ Ա, Ս. Վաղարշասյատ, 1913, էջ 44):

<sup>206</sup> Մելիք Եսային սպանվել է 1781թ. Իբրահիմ խանի հրամանով (Ս. Գ. Բաբխուդարյան, Դիվան հայ վիճագրության, պրակ 5, Արցախ, Երևան 1982, էջ 179; М. Нерсисян, укр. соч., с. 295, 306):

<sup>207</sup> Այս մասին տե՛ս «Նիսբեր հայ մելիքության մասին», պրակ Ա, էջ 81:

<sup>208</sup> Խոսքը Մելիք Ալլահվերդի Հասան-Ջալալյանի մասին է (Բաբխուդարյան, Դիվան հայ վիճագրության, էջ 201), որը Խաչենի մելիք էր նշանակվել 1728թ. Ղարաբաղը նվաճած Մուսրաֆա փաշայի հրամանով (ՄՄ, Կաթող. դիվան, քրդ. 2թ, վավ. 169):

Փանահ խանի դեմ: Փանահ խանը մեծ բազմությամբ շարժվում է դեպի նրա ամրությունը: Ուժգին կռվից հետո նրանց ամրոցը գրավում է, շատերին կոտորում և սպանվածների գլուխներից աշտարակ է կառուցում: Դրանից հետո տեղի ժողովուրդը Փանահ խանին հնազանդվում է և ընդունում նրա գերիշխանությունը:

Ջրաբերդի *մահալից* Մելիք Ալլահդուլին (այսինքն Ալլահդուլի *սուլթանը*) Փանահ խանի խանության սկզբում, նրա հետ հանդիպելու և իր դրությունը պարզելու նպատակով Ամարաս (Աղ Օղլան) է գնում: Այդ ժամանակ Նախիջևանի կառավարիչ Հեյդար Դուլի խանը հյուր էր Փանահ խանի մոտ: Երբ Ալլահդուլի *սուլթանի* փառահեղությունն ու հաստատակամությունը տեսնում է, Փանահ խանին ասում է. «Այդպիսի փառավոր անձը քեզ չի ծառայի, և երկու իշխան մեկ երկիրը չի ունենա: (83թ) Ելքն այն է, որ դաշույնիդ սայրը նրա կոկորդը խրես և Ամարասի սև հողը նրա արյամբ վարդագույն ներկես: Դէ՞ որ քակարդն ընկած որսը ձեռքից բաց բողբեղ իմաստուններից վայել չէ»:

Փանահ խանը Հեյդար Դուլի խանի կարծիքն ու խորհուրդն ընդունում է և Ալլահդուլի *սուլթանին* սպանել տալիս<sup>209</sup>: Այս պատճառով *[սուլթանի]* որդիների ու խանի միջև բռնամտություն ու հակառակություն է սկսվում: Ալլահդուլի *սուլթանի* սպանությունից հետո նրա եղբայր Մելիք Աբամը (Հաբամ) որոշում է վրեժխնդիր լինել ու անմիջապես խռովություն է բարձրացնում: Թալիշի *մահալի* Մելիք Հովսեփի հետ, որը նրա օգնությամբ իր հորեղբայր Մելիք Աբամին սպանելով, մելիք էր դարձել, Փանահ խանի դեմ կռիվներ է սկսում մղել: Ջերմուկ ամրոցը, որն անառիկ մի վայր էր, իրենց ապաստարանը դարձնելով՝ երկար ժամանակ պայքարում և մարտեր են մղում: Փանահ խանը բազմիցս նրանց վրա գրոհելով՝ տեղանքի անառիկության պատճառով ձեռնումայն ետ է վերադառնում: Սակայն նրանց արտերն ու բերքը, որ լեռների ստորոտում ու հարթավայրային մասում էին, արշավող զորագնդերի երիվարների սմբակների տակ ոտնակոխ էին լինում: Այսպես, 4-5 տարի *[մելիքները]* Փանահ խանի դեմ կռվում ու բռնամտություն են անում<sup>211</sup>: Նրա բռնամիտների հետ դաշնակցելով՝ համառորեն պայքարում են նրա դեմ:

<sup>209</sup> Բալլուդայա կամ Բալլուգայա քերդը գտնվում է Խաչենագետի հյուսիսային ափին, Առաջաձորից քիչ դեպի արևելք (Դ. Ալիշան, Արցախ, էջ 74):

<sup>210</sup> Հայկական տարեգրություններում սխալված մի վկայության համաձայն Ալլահդուլի *սուլթանը* սպանվում է 1749թ. Փանահ խանի հրամանով (Մանր ժամանակագրություններ, հ. 1, Երևան, 1951, էջ 396):

<sup>211</sup> Այս մասին տե՛ս Լ. Մ. Մելիքսեթ-բեկ, նշվ. աշխ., էջ 107, 109:

Պատմում են, Արզուման անունով մեկը<sup>212</sup> այդ ժամանակ իր շուրջը համախմբելով մի խումբ քաջերի, այն վայրերում խիզախ արարքներ էր գործում: (84ա) Փանահ խանի դեմ թշնամություն էր անում և նրա ստորադրյալներին վնասներ հասցնում: Մի անգամ Փանահ խանը Արզումանի հորն ասում է. «Ժնչու՞ որդուդ չես խրատում, որ իր չարագործություններին վերջ տա ու այս կոիվներին ձեռք քաշի»:

Նա պատասխանում է. «Արզումանը իմ՝ որդին չէ, քանի որ, եթե իմ որդին լիներ, ոչ մեկի չէր թողնի, որ Շուշի բերդից դուրս գա»:

Մի անգամ էլ Փանահ խանը Չերաղ բեկ անունով մեկին հեծյալների մի խմբով ուղարկում է, որ գնան, Արզումանին մի հմարով բռնեն: Արզումանը այդ լսելով՝ գալիս է, նրա հեծյալների խումբը ցարդցրիվ անում, իսկ իրեն՝ Չերաղ բեկին՝ գերում: Հաջորդ օրը նրա վրա նշան բռնելով՝ ասում է. «Կամ ընդունիր, որ Հիսուսն է Աստվածը, կամ էլ կրակում եմ»:

Չերաղն ընդունում է, որ Հիսուսն է Աստված, որից հետո Արզումանը նրան ազատ է արձակում: Երբ նա Փանահ խանին է ներկայանում, նրան [խանը] այսպես է դիմում. «Չամաչեցի՞ր, որ մի կաթիլ արյան համար Հիսուսին Աստված անվանեցիր»:

Չերաղն քաջատրում է. «Ո՛վ խան, եթե Արզումանին այնքան վճռական ու անեղ, որ ես տեսա ու Հիսուսին Աստված կոչեցի, դու տեսներ, իրեն՝ Արզումանին, Աստված կկոչեիր»<sup>213</sup>:

Մի խոսքով, հայերը, առանց միաբանվելու երկար ժամանակ պայքարում են, մինչև որ Փանահ խանն ու նրա որդի Իբրահիմ խանը օրեցօր ուժեղանալով՝ նրանց [մեկիքներին] դժվարին կացության մեջ են դնում: Վերջիվերջո Մելիք Աբամն (Հաբամ) ու Մելիք Հովսեփը, ստիպված են լինում, իրենց հայրենիքից փախչել Գանձակի կողմերը և յոթ տարի մնալ Շամխորում: Երբ Աղա Մուհամմադ խանը արշավում է Ղարաբաղ, Մելիք Աբամի որդի Մելիք Մեջնունը նրա մոտ ծառայության է անցնում և ջանք չի խնայում Իբրահիմ խանի դեմ նրա [Աղա Մուհամմադ խանի] մղած կոիվներում:

<sup>212</sup> Արցախահայության հյուսսած ալիանդությունները Թյուլի-Արզումանի, Դալի-Մահրատայի ու Չալսղան-Յուզբաշու մասին, որոնք պայքարում էին այնտեղի մահմեդական խաների դեմ, գրի է առել Բաֆֆին (Բաֆֆի, ճշվ. աշխ., էջ 206-207):

<sup>213</sup> Արզուման Յուզբաշին եղել է իրական անձնավորություն, որը մահացել է 1796թ.: Նրա գերեզմանը գտնվում է Գանձակում (Մ. Բարխուդարյանց, Արցախ, էջ 98):

## ՓԱՆԱՀ ԽԱՆԻ ՀԶՈՐԱՑՈՒՄԸ: ՆՐԱ ԱՎԱԳՈՒԹՅԱՆ ՈՒ ԳԵՐԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՈՐՈՇ ԵՐԿՐՆԵ- ՐԻ ՆԿԱՏՄԱՐ

Նաղիր շափց հետո, երբ Իրանում հզոր միապետ չկար, (84թ) յուրա-  
քանչյուր շրջանում ու երկրամասում որևէ մեկը [գահի] հավակնություննե-  
րով զորք էր հավաքել և կոիվներ էր մղում: Ինչպես որ վերը նշել ենք, Ազատ  
խանը աֆղանների<sup>214</sup> ցեղախմբով մի կողմում էր իշխում: Քերին խանը զոր-  
քով Ֆարսի, Լուրիստանի ու Արաղի կողմերն էր գրավել: Մուհամմադ Հա-  
սան խան Ղաջարը նվաճել էր Աստարաբադի ու Մազանդարանի շրջաննե-  
րը: Նմանապես Ֆարհադի խանը Ուրմիայի ու աֆշարների<sup>215</sup> ցեղախմբի  
տերն էր դարձել: Եվ ոչ մեկը մյուսին չէր ենթարկվում:

Փանահ խանն էլ Ղարաբադի կողմերում ուժեղանալով՝ հայերի միջև հա-  
մերաշխությամբ քացակալության հետևանքով Խամսայի մելիքներին հնա-  
զանդեցնում է, իսկ ըմբոստներին՝ պատժում: Մեղրի-Գյումայի *մահալները*  
մինչև Բարգուշատ խլում է Ղարադադի կառավարչից, Տաթևի ու Սիսիանի  
*մահալները*՝ Նախիջևանի կառավարչից, Չանգեզուրի ու Կապանի *մահալ-  
ները* հանում Թավրիզի *բեկլարբեկի* ենթակալության տակից, իսկ Թարթառի  
և Ուշաջողի<sup>216</sup> վերին մասից մինչև Սևանի (Գյոքչայի) սահմանը, որ քուլանի-  
ների<sup>217</sup> բնակավայրն է, խլում Երևանի կառավարչից: Խոդա-Ալեքինի

<sup>214</sup> Աֆղանները ներկայիս Աֆղանստանի տարածքում բնակվող ցեղերն են, որ-  
ոնք XVIII դարի սկզբին արշավում են Պարսկաստան, նվաճում նրա մեծ մասը:  
Նրանց դեմ պայքարը գլխավորում է Նաղիր Ղուլի խանը, որին հաջողվում է բո-  
թափել աֆղանների տիրապետությունը և 1737թ. հաստատվել Պարսկաստանի  
գահին: Չնայած իրենց տիրապետության կարճատևությանը (1721-1730թթ.), ո-  
րոշ աֆղանական ցեղեր գաղթում են Ատրպատական և 1747թ. Նաղիր շափի մա-  
հից հետո նրանց առաջնորդ Ազատ խանը համոզել է գալիս գահի հավակնու-  
թյուններով: Աֆղանական ցեղերի մասին ավելի մանրամասն տե՛ս Encyclopedie  
de L'Islam, Tome I, p. 223:

<sup>215</sup> Աֆշարները բյուրջական ցեղերից էին, որոնք Մ. Կաշգարիի և Ռաշիդդդինի  
կողմից հիշատակվում են 24 օղուզական ցեղերի թվում (տե՛ս Н. П.  
Петрушевский, у.к. соч., с. 122): Մեֆյանների օրոք այդ ցեղը բնակվում էր Պարս-  
կաստանի զանազան շրջաններում: Շահ Աբաս I-ի օրոք նրանք հաստատվում  
են Ուրմիայի շրջանում ու կարևոր դեր խաղում պարսկական բանակում (տե՛ս  
Encyclopedie de L'Islam, Tome I, p. 247-248):

<sup>216</sup> Հասանրիսից վերև հյուսիս-արևմտյան կողմում Թարթառի վտակներից մեկին  
է միանում Ուշաջող (կամ Ուզաճըզ) գետակը (Ղ. Ալիջան, Արցախ, էջ 43):

<sup>217</sup> Քուլանիների շիա քրդական ցեղը XVIII-XIX դարերում հիշատակվում է  
Երևանի խանությունում բնակվող քուլոր ցեղերի թվում (տե՛ս Сimeon Ереванск.,  
у.к. соч., с. 106. Н. Шонен, у.к. соч., с. 318, 528). Հովսեփի էմինը իր ճանապարհոր-  
դության ընթացքում հանդիպում է այդ ցեղին, որը ընդունել էր Ղարաբադի խանի

կամրջից մինչև Քյուրակ [գետն] ընկած տարածքը, որը [անցյալում] ենթարկվում էր Գանձակի *բեկլարբեկերին*, 1755-1757թթ. 2-3 տարիների ընթացքում, նրանց իշխանության տակից դուրս բերելով՝ ինքն է դառնում նրա տերը: Բացի դրանից, Ղարաբաղ է բերում և այնտեղ բնակեցնում մեկական *միմբաշինների* ենթակայության տակ գտնվող քենգերլու<sup>218</sup> ցեղի մի ցեղախումբ, որը Նախիջևանում բնակվող ցեղերից էր, դեմիրչի-հասանլու<sup>219</sup> և ջինլի<sup>220</sup> ցեղախմբերը, որոնք Վրաստանի ցեղերից էին: [Նրանք] միշտ մվիրվածությամբ էին ծառայում Փանահ խանին և երբեւէ նրա դեմ խռովություն չեն բարձրացրել:

(85ա) Բացի Թախսե Ղափույից Ղարաբաղում բնիկ էին ջևանշիր, օթուգիքի և քյաբիլլու ցեղերը, որոնք բոլորը խանին էին ծառայում, բայց երբեմն նաև (նրա նկատմամբ) դավաճանական արարքներ էին գործում: Կարճ ժամանակամիջոցում [Փանահ խանը] Գանձակի, Ղարաբաղի (պետք է լինի Ղարաղաղի), Արդեբիլի ու Նախիջևանի խաներին իրեն հնազանդեցնելով՝ որոշ շրջաններում իր կողմից կառավարիչներ ու փոխանորդներ է նշանակում: [Իրեն ենթակա] բոլոր շրջանների իշխանավորների ժառանգներից ու կանանցից [ոմանց] բերում է Թառնակույտ ամրոցը և այնտեղ որպես պատանդ պահում:

## ՇՈՒՇԻ ԲԵՐԴԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ, ՍՈՒՀԱՄՄԱԴ ՀԱՍԱՆ ԽԱՆ ՂԱԶԱՐԻ ՀԱՐՉԱԿՄԱՆ ՈՒ ՁԵՌՆՈՒՆԱՅՆ ՎԵ- ՐԱԴԱՐՁԻ ՄԱՍԻՆ

Երբ Մուհամմադ Հասան խան Ղազարի Արաղում, Ատրպատականում ու Մազանդարանի կողմերում ինքնիշխան տեր դառնալու լուրը տարածվում է,

հպատակությունը և ծառայում էր նրան (The Life and Adventures of Joseph Emin, an Armenian, Vol. 2, p. 309-310):

<sup>218</sup> Քենգերլու ցեղը դժբաշ ցեղերի քվին պատկանող ութաջլու ցեղի ճյուղերից էր, և նրա առաջնորդների ժառանգական *օլթան* էր Նախիջևանի *վիլայերը* (տե՛ս И. П. Петрушевский, ук. соч., с. 94, 127):

<sup>219</sup> Դեմիրչի-հասանլու ցեղը XVIII դարում բնակվում էր Ղազախի ու Շամշադինի տարածքներում և լինելով Վրաստանին հպատակ ցեղերից, զինվորներ էր մատակարարում վրացական բանակին, (տե՛ս Լ. Մ. Մելիքսեթ-բեկ, նշվ. աշխ., էջ 132, 140): Դեմիրչիլար անունը կրող ցեղի բնակավայրերը հիշատակվում են XIX դարի Երևանի ու Ղարաբաղի խանությունների վիճակագրական տվյալներում (И. Шопен, ук. соч., с. 318. Описание Карабагской провинции, владения Мехди Кули хана; Свод статистических данных, Елисаветпольская губерния):

<sup>220</sup> Ջինլի ցեղը հիշատակվում է XIX դարի ռուս պաշտոնյաների հավաքած Ղարաբաղի վիճակագրական տվյալներում, (տե՛ս Свод статистических данных о населении Закавказского края, Джеванширский уезд, участок 1):

Փանահ խանը մտահոգվում է. նա Նադիր շահից հետո նրա եղբորորդի Ալի շահի ու Ամիր Ասլան խան *սարդարի* հետ ամուր բարեկամական կապեր էր հաստատել, և հմարավոր է, որ նրանց հակառակ գործելով՝ Մուհամմադ Հասան խանը իր դեմ թշնամություն սկսեց: Հարևան խաները նույնպես հուսալի չէին, քանի որ շատերը նրա տոհմական թշնամիներն էին, և կարող էին (Մուհամմադ Հասան խանին) զրգռել Ղարաբաղի դեմ: Արդյունքում նրա ցեղերն ու հպատակներն էին տուժելու թշնամական զորքերի անցյալարժիք:

Պալատական պաշտոնյաների ու քանիմաց իշխանավորների հետ խորհուրդ է անց կացնում, որ պետք է մի ամուր, գեղեցիկ ու առողջաբար վայր գտնել ամրոց կառուցելու համար, որպեսզի կոիվների դեսպում հանգիստ ու ապահով լինեն: Որոշումներից հետո Մելիք Շահնազարի օգնությամբ ու խորհրդով ընտրում են Շուշի քերդի վայրը, ուր ներկայումս մի մարդաշատ քաղաք է: Փանահ խանը՝ ինքը, գնում, իր աչքով զննում է և շատ է հավանում այն ամեն տեսակետից: Քանի որ այդ տեղով հոսող ջուր չէր անցնում, հրամայում է մի քանի տեղ ջրհորներ փորել, և դրանցից բավականին ջուր է դուրս գալիս:

1765/1771 թ. (85թ) ասադ ամսին<sup>221</sup> հիմնում է Շուշի քաղաքը: Հարավային, արևմտյան և հյուսիս-արևելյան երեք կողմերից այն շրջապատված է բնական քարապատքերով և ձորերով: Այդ տեղերով անցնելը թե՛ ոտքով, թե՛ որևէ այլ կերպ անհնար է: Հյուսիսային կողմում, որը քաղաքի ստորին մասն է, մասամբ նաև արևելյան կողմում չափումներ է կատարում պարիսպ կառուցելու համար: Գյուղերի բնակիչների, *մահալների* մեկիքների ու ցեղապետների օգնությամբ կառուցապատում է այն քարուկիր հինգ *գար* բարձրություն և երկուս ու կես *գար* լայնություն ունեցող պարսպով, որը թնդանորի արկն ու այլ զենքերը չէին կարող վնասել: Նրա վրա չորս դարպասներ է տեղադրում՝ երկուսը հյուսիսային ու արևելյան կողմերից, որոնց անուններն են Շուշիքենդի ու Մոխրաբ դարպասներ: Երկուսն էլ արևմտյան ու հյուսիս-արևմտյան, որոնցից մեկը կոչվում էր Երևանի, մյուսն՝ Գանձակի կամ Զեյքերդի դարպասներ<sup>222</sup>: Զորքորդ դարպասը քանդված լինելով, այժմ նրա փոխարեն պարիսպ է քաշված, և մնացել են երեք դարպասները:

Շուշին կառուցելուց հետո Փանահ խանը Թառնակյուտ ամրոցի, այսինքն Շահրուլաղի բնակչությանը, Ղարաբաղի և այլ տարածաշրջանների որոշ գյուղերի բնակիչների հետ գաղթեցնում է՝ բերում, Շուշի քաղաքում բնակեցնում: Եվ այնտեղ դրամահատարան հիմնելով՝ սկսում է «Փանահաբադ» անունով դրամ<sup>223</sup> հատել: Այն կշռում էր մեկ *մեզալից* քիչ ավելի՝ ար-

<sup>221</sup> 1171 թ. ասադ ամսից համապատասխանում է 1757թ. հուլիսին:

<sup>222</sup> Համեմատելիք Ռ. Հ. Տեր-Գասպարյան, Շուշի, Երևան 1993, էջ 13:

<sup>223</sup> «Փանահաբադ»-ը Անդրկովկասի առավել կայուն արժեք ունեցող դրամներից էր և նրա շրջանառությունը մեծ չափով դուրս էր գալիս Ղարաբաղի խանության

ծաքով: Դրամի մի կողմում փորագրված էր [دینار], իսկ մյուսում [الله و محمد الرسول الله]<sup>224</sup>: Նրա վեց հատը մեկ ռուսական դրամի արժեք ունեւր, իսկ 8 հատը անվանում էին Ղարաբաղի բուման:

Շուշիի կառուցումը ավարտելուց մեկ տարի անց հանկարծ լուր է ստացվում, թե ահա Մուհամմադ Հասան խան Ղաջարը Արադից, Ատրպատականից ու այլ տեղերից մեծաքանակ զորք ու քազմություն հավաքած (86ա) գալիս է Ղարաբաղ՝ Շուշի ամրոցը գրավելու<sup>225</sup>: Ուստի Փանահ խանը հպատակ ցեղերից ու Թախսե Ղափուի այլ գյուղերից երիտասարդներ ու կովոդ այրեր հավաքելով Շուշի բերդում՝ կռվի ու պաշտպանության է մախապատրաստվում: Մուհամմադ Հասան խանը մեծ բանակով գալիս է ու կանգ առնում Խաթուն-Արխ<sup>226</sup> վայրում, որը գտնվում է Շուշիի շրջակայքում: Ավելի վեր չի համարձակվում բարձրանալ: Չնայած, որ երկար բանակցություններ է վարում, խորամանկությունների դիմում, որպեսզի Փանահ խանին իր խարդավանքների թակարդը մետի, այդ նրան չի հաջողվում: Ղարաբաղի հեծյալ գնդերն ու բնակիչներն էլ ամեն օր նրա զորքի վրա հարձակվելով՝ վնասներ են պատճառում, տանում բեռնակիր անասուններին, կողոպտում գումակը և փակում մթերք հասցնողների ճանապարհը: Այդ ընթացքում Մուհամմադ Հասան խանը լուրեր է ստանում Քերիմ խանի ուժեղացման ու նրա՝ դեպի Արադ շարժվելու մասին և այդ պատճառով ետ է դառնում, հեռանում դեպի Արադ: Թեքրանից բերած երկու բնդանոցները, որ հայտնի էին հեսարքուփի<sup>227</sup> անունով, մնում են՝ Խաթուն Արխում և նրա գնալուց հետո տարվում Շուշի բերդը: Դրանք այնտեղ են մնում մինչև 1826/1242թ. Շուշիի պաշարումը ղզրաշների կողմից, երբ ռուսական պետության պաշտոնյաները անհրաժեշտության դեպքում դրանք զործի էին դնում:

Քանի որ Շուշի բերդի քակչությունը օրեցօր աճում էր, Փանահ խանի օրոք կառուցված էին պարիսպը 1789/1204թ. Իբրահիմ խանի օրոք, Ռուսաս-

տաններին: Այդ դրանը շրջանառության մեջ էր գտվում մինչև XIX դարի կեսերը, թեև քակական արժեզրկվել էր: XIX դարում այն համարժեք էր 10 շահիի (1 շահի = 50 դիմար) կամ 1 ռուսական մանեթի, (տե՛ս تاريخ رضاقلخان هدايت, ص ۲۹۷; Статистическое обозрение Персии, с. 60):

<sup>224</sup> Արաք. «Չկա աստված բացի Ալլահից, Մուհամմադն է նրա մարգարեն»:

<sup>225</sup> Մուհամմադ Հասան խանի արշավանքը Ղարաբաղ տեղի է ունեցել 1757/1758թ. (տե՛ս ۲۷ ص. تاريخ رضاقلخان هدايت, ص ۲۷; Առ. Կոստանեանց, նշվ. ձեռ. էջ 101, Ս. Գ. Бутков, ук. соч., т. 1, с. 243-244):

<sup>226</sup> Խաթուն-Արխ - Մ. Բարխուդարյանը հիշատակում է Մար Խաթուն բնակավայրի մասին, որը գտնվում է Վարանդայի գավառում (տե՛ս, Մ. Բարխուդարյանց, Արցախ, էջ 87), խոսքը թերևս այդտեղով անցնող ջրանցքի մասին է, քանի «արխ» բուրբ. նշանակում է «առու, ջրանցք»:

<sup>227</sup> حصارکوبي պարսկ. «պարսպաբնդանոք».

տանի [Անդրկովկաս] ներթափանցման ժամանակաշրջանում, քանդում են: Հմուտ վարպետների գեղեցիկ մախազով պարիսպների հիմքը մեկ վարս հեռացվում է և ավելի ամուր ու բարեշեն մի նոր պարիսպ է կառուցվում:

Այնտեղի բնակիչները մեծամասամբ հայեր են, որոնց մի մասին Փանահ խանը Մեղրիից, Ագուլիսից, Օրդուբադից, Ղազանչիից, մի մասին էլ Ջրաբերդից ու [Ղարաբադի] այլ վայրերից է բերել, այնտեղ բնակեցրել: Ոմանց էլ (Ջ6բ) Իբրահիմ խանն է իր իշխանության տարիներին զանազան տեղերից հավաքել, այդտեղ բերել: Չնայած որ Փանահ խանի օրոք, երբ [Շուշին] նոր էր հիմնադրվել, ավելի շատ էին բաղարի մահմեդական բնակիչները, որոնց [Փանահ խանը] հիմնականում Թավրիզից, Նախիջևանից ու Ղարաբադի ցեղերից էր հավաքել-բերել: Սակայն [Շուշիի] անառիկության շնորհիվ աստիճանաբար հայերը շատանում են, այնպես որ ներկայումս՝ 1855/1271թ., Ռուսաստանի հզոր տերության տիրապետության ժամանակաշրջանում, հայերը կազմում են [բաղարի բնակչության] 2/3-ը, իսկ շիա մահմեդականները՝ 1/3-ը<sup>228</sup>: Քաղաքի շինությունները սկզբում քիչ էին, իսկ այժմ շատացել են և օրեցօր ավելի ու ավելի են բազմանում և գեղեցկացնում [քաղաքը]:

Շուշի քաղաքի բաղամասերի անուններն են. հայկական բաղամասերի՝ Մեղրի, Ղազանչի, Ագուլիս, Չելքերդ, Դարեղաբաղան: Մահմեդական են ստորին և մեկուսի բաղամասերը. Դուրթլարը, Ջուլֆան, Դուլուղը, Չոխուրը, Հաջի Յուսեֆլուն, Մարդինլուն, Ջիուղլարը, Սաաթլուն, Մամահին, Խոջե մարջանլուն<sup>229</sup>:

## ՓԱՆԱՀ ԽԱՆԻ ՈՒ ՄՅՈՒՍ ԽԱՆԵՐԻ ԿԱԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ ՀԵՐԱԿԼ ՎԱԼԻԻ ԿՈՂՄԻՑ

Մուհամմադ Հասան խանի ձեռնունայն վերադարձից հետո Փանահ խանը ինքնավստահությամբ է ձեռք բերում: Ղարադաղի Քազեմ խանի, Նախիջևանի Հեյդար Դուլի խանի ու Գանձակի Շահվերդի խանի հետ խորհրդակցելով որոշում է. «Քանի որ Հաջի Չելքերին Շիրվանի ու Դաղստանի լիիրավ տերը դառնալով մեզ հետ հաշվի չի մատում ու համաձայնության չի գալիս, ուստի պետք է ջանանք նրան պատժել, անտեղյակության քնից արքնացնել ու խռովարար մտքերից հեռու պահել»:

<sup>228</sup> Շուշիի բնակչության ազգային կազմի ու նրա քանակական փոփոխությունների մասին տե՛ս Ռ. Հ. Տեր-Գասպարյան, Շուշի, էջ 70-84:

<sup>229</sup> Ներսեսավը չի նշել XIX դարի Շուշիի հայկական բոլոր բաղամասերի անունները համեմատելի Կենտրոնական Պետական Պատմության Արխիվ, Դադյանի ֆոնդ 319, ցուցակ I, գործ I, էջ 52:



Իրենց այդ մտադրության մասին տեղյակ են պահում Վրաստանի *վալի* Հերակլին: Վերջինս հավանություն է տալիս ու նրանց հրավիրում իրեն պատկանող տարածքում հանդիպելու (87ա) ու իրենց անելիքների մասին միմյանց հետ խորհրդակցելու<sup>230</sup>: Վերոհիշյալ խաները նախապատրաստվելով՝ շտապում են Գանձակ քաղաքի վերևում գտնվող Ղըզըլ-Ղայե կոչված վայրը և այնտեղ կանգ առնում: Նույն վայրում *վալին* այս չորս խաներին (այսինքն Փանահ խանին, Քազն խանին, Հեյդար Ղուլի խանին ու Շահ-վերդի խանին) գերում է: Շահվերդի խանի ծառաներից մեկն անմիջապես ծի է հեծնում ու գնում Հաջի Չելեքիի մոտ, որը նույնպես մեծ բազմությամբ եկել էր Կուրի ափը և կանգ առել Մինգեչաուրի գետանցի մոտակայքում: Հաջի Չելեքին նրան հրամայում է Կուրն անցնել և հարցնում.

-Տղա, ի՞նչ է պատահել:

Շառան պատասխանում է.

-Մեծ հայր, [վալին] խաներին խաբեց:

Հաջի Չելեքին ասում է.

-Մեծ հայրդ խաներին կազատի:

Այնուհետև իր իշխանավորներին ու մերձավորներին կարգադրում է այս մասին խորհրդակցություն անցկացնել՝ զգուշացնելով.

-Ինչպես էլ որ որոշեք, միևնույն է, Կուրը անցնելու ենք<sup>231</sup>:

Այս խոսքը ժողովրդի մեջ առածի է վերածվում:

Նույնժամ Հաջի Չելեքին զորքով Կուրն անցնում է ու շարժվում դեպի *վալին*: *Վալին* այս մասին իմանալով՝ շատ է վախենում, որովհետև մինչ այդ Հաջի Չելեքիի հարվածի ուժը իր մաշկի վրա զգացել էր: Այնուամենայնիվ ստիպված է լինում կռվել:

Շեյխ Նիզամու գերեզմանաքմերի<sup>232</sup> մոտ հակառակորդները ընդհարվում են, և վրաց բանակը պարտություն կրելով՝ փախուստի է դիմում: *Վալին* չկարողանալով դեպի իր բանակատեղին գնալ՝ բանակի ամբողջ ունեցվածքը՝ վրաններն ու գույքը, խաների հետ Ղըզըլ-Ղայեում քողած, փախչում-հեռանում է դեպի Թիֆլիս: Հաջի Չելեքին վրացական բանակը հետապնդելով և շատերին կոտորելով՝ հեռանում է Սընըղ կամրջից 3 *ֆարսախ*:

(87բ) Հաջի Չելեքին Բայդարում<sup>233</sup> ամրոց է կառուցում և իր որդի Աղա Քիշի քեկին նշանակում Թիֆլիսից այս կողմ [քնակվող] մահմեդականների

<sup>230</sup> Այդ դեպքերը տեղի են ունենում 1752թ., (տե՛ս Լ. Մ. Մելիքսեթ-բեկ, նշվ. աշխ., էջ 139, 169; Ու. Գ. Бутков, укр. соч., т. 1, с. 239):

<sup>231</sup> Խոսակցությունը գրի է առնված քյուրքերեն լեզվով:

<sup>232</sup> Խոսքը մեծ բանաստեղծ Նիզամի Գյանջևիի դամբարանի մասին է, որը գտնվում է Գանձակ քաղաքի մոտակայքում: XIX դարի 40-ական թթ. Միրզա Ադիզադալ-բեկը այն վերակազմում է, որը սակայն XX դարի սկզբին նորից քանդվում է (Мирза Адигезаде-бек, укр. соч., с. 21-22):

<sup>233</sup> Խրամ և Կուր գետերի միջև գտնվող քյուրքական քնակավայր:

կառավարիչ: Հիշյալ խաներին ազատ արձակելով՝ իրենց երկրներն է ուղարկում, իսկ ինքը Շիրվան վերադառնում: Աղա Քիշի բեկը երեք տարի կառավարում է այն շրջանները: Դրանից հետո *վալիս* Վրաստանից, Բաշաշողից և չերքեզներից<sup>234</sup> մեծ քանակ հավաքելով, հարձակվում է բեկի վրա: Քանի որ Աղա Քիշի բեկը նրան դիմագրավել չէր կարող, ուստի փախուստի է դիմում: *Վալիի* բանակի ավանգարդը *Թուվուզ* (*Թավուս*) գետի մոտ նրա ետևից հասնելով՝ նրանց միջև ճակատամարտ է տեղի ունենում: Մարտում իր մարդկանցից ու զինվորներից մի քանիսին կորցնելուց հետո ինքը [Աղա Քիշի բեկը] ողջ-առողջ Կուրն անցնելով, գալիս է Շաքի: *Վալիի* բանակը մինչև Խոդա-Աֆերիմի կամուրջը գնալով՝ վերադարձի ժամանակ մարդկանց շատ վնասներ է հասցնում, Գանձակն ու Ղարաբաղը սաստիկ կողոպտում:

## ՈՒՐՄԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ ՖԱԹՀԱԼԻ ԽԱՆ ԱՖՇԱՐԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ ՂԱՐԱԲԱՂ, ՊԱՏԵՐԱԶՄՆ ՈՒ ՀԱՇՏՈՒԹՅՈՒՆԸ: ԻԲՐԱՀԻՄ ԽԱԼԻԼ ԱՂԱՅԻ [ՊԱՏԱՆԴ] ՏԱՆԵԼԸ ԻՐ ՀԵՏ

Ուրմիայի կառավարիչ Ֆաթհալի խան Աֆշարը<sup>235</sup>, որը Նադիր շահի անվանի զորավարներից էր և նրա *չարխաի բաշին*, Ազատ խանից հետո գրավում է Ատրպատականի երկրների մի մասը: Այն կողմերում, քացի Փանահ խանից նա այլ մրցակից չուներ: Մի քանի անգամ Փանահ խանի դեմ պատերազմի դուրս գալով՝ ձեռնունայն էտ է վերադառնում: Վերջին անգամ մեծ զորքով գալիս, կանգ է առնում Բալլուջն-դայա<sup>236</sup> և Խոջալուի (Խոջն-ալիլու)

<sup>234</sup> Չերքեզները Հյուսիսային Կովկասի իրերո-կովկասյան ընտանիքի արասգու-ադիգեական ցեղերի հյուսիս-արևմտյան ճյուղին են պատկանում, (տե՛ս Encyclopedie de L'Islam, Tome 2, p. 22): Բնակվելով օսերից դեպի արևմուտք չերքեզական ցեղերը XIX դարում զբաղեցնում էին Կովկասի հյուսիսային լանջի աննաընդարձակ մասը, Փոքր Կաբարդիան, Թերեք և Մալկա գետերի միջև ընկած կարարդական սարահարթի մեծ մասը, Տեբեղդա, Կուրան, Լաբա, Բեղայա գետերի միջև գտնվող ենթալեռնային տարածքները և Սև ծովի արևելյան ափի մի հատվածը: Հնագույն ավանդության համաձայն չերքեզները սերում են քսպենյանների ու կաբարդիների ցեղերից, (տե՛ս Кавказский сборник, т. 21, Тифлис 1900, с. 63):

<sup>235</sup> Ֆաթհալի խան Աֆշարը Ազատ խանի զորքի զորավարներից էր, որը 1758թ. իրեն է հպատակեցնում Ատրպատականի խանությունները, (տե՛ս В. Н. Левинатов, ук. соч., с. 156):

<sup>236</sup> Բալլուջան կամ Բալլուջա-դայան չախտը է չիտրեյ Խաչենիի մահալում գտնվող Բալլուդայայի հետ: Այն գտնվում է Գարգառի հյուսիսային վտակի ափին (տե՛ս Ղ. Ալիշան, Սիսական, մերդիր քարտեզ):

միջև ընկած մի ընդարձակ դաշտում, որը Ասկերանի վերևում է: Ծանապարհի եզրին մի ամրություն է կառուցում և այնտեղ հաստատվում: Նրա կառուցած պարիսպների հետքերը այժմ էլ երևում են (88ա) և ժողովրդի մեջ հայտնի են «Ֆաթիալի խանի սանգյար» անվամբ: Չմեռն այնտեղ է անցկացնում: Այդ ժամանակ Ջրաբերդի ու Թալիշի Մելիք Աբամն ու Մելիք Հովսեփը ևս - Ֆաթիալի խանի մոտ գալով՝ նրա զորքին են միանում<sup>237</sup>: Նրա ամրության կողքին մեկ ուրիշն են կառուցում, որի հետքերը նույնպես պահպանվել են: Վեց ամիս [այնտեղ] մնալով ոչինչ չեն կարողանում անել: Ի վերջո մելիքների հետ միասնական ուժգին գրոհի են անցնում և կռվի բռնվում: Փանահ խանն էլ կռվի է ելնում դարաբաղյիների փառաբանված մի զորագնդով: Երկու կողմերն էլ զգուշությունը մի կողմ դրած խիզախորեն մարտնչում են...

Այն օրը թեժ մարտ է տեղի ունենում: Հակառակորդները միմյանց ուժգին հարվածներ են հասցնում, ջարդում-սպանում միմյանց: Ֆաթիալի խանը տեսնում է, որ հաղթանակի չի կարողանում հասնել, ու իր բոլոր ջանքերն ապարդյուն են, խորամանկության է դիմում: Փանահ խանի հետ հաշտության բանակցություններ է (88բ) սկսում: Վերջինս խաղաղությունը զերադասելով՝ համաձայնվում է հաշտություն կնքել: Աղ-բյորփիում<sup>238</sup> կողմերը հանդիպում են և հաշտության պայմանագիր կնքելով՝ միմյանց միջև բարիդրացիական հարաբերություններ հաստատում: Ֆաթիալի խանը Փանահ խանին խնդրում է, - «Այսուհետև մեր միջև օտարություն չպետք է լինի, ուստի Չեր արժանավոր զավակին՝ Իբրահիմ Խալիլ Աղային, որին շատ են հավանել, մի քանի օրով մեզ մոտ ուղարկիր, որպեսզի Մեր անկեղծ սիրով ու հյուրասիրությամբ պատվենք նրան: Իսկ հետո մեծ պատիվներով նրան ետ կուղարկենք»:

Փանահ խանը նրա նենգությամբ խաբվում է և իր որդուն, մի քանի քանիմաց մարդկանց հետ, ուղարկում Ֆաթիալի խանի բանակը: Ֆաթիալի խանը իր իշխանավորներից ու զորավարներից մի քանիսին նրան դիմավորելու է ուղարկում ու պատվով հյուրընկալում նրան իր բանակում: Մի քանի օր անց Իբրահիմ Խալիլ աղան նրա զաղտնի նպատակը հասկանում է: Մտքը է ուղարկում հոր մոտ, թե. «Ինչպես երևում է, Ֆաթիալի խանը ինձ իր հետ է տանելու: Իմ աշխետ ձին այստեղ ուղարկեք, որպեսզի միգուցե այդ ձիով այս վտանգից կարողանամ ազատվել»:

Մինչև լուրը տեղ կհասնի ու ձին կուղարկվի, Ֆաթիալի խանը ճանապարհ ընկնելու հրաման է տալիս և Իբրահիմ Խալիլ աղային իր հետ վերց-

<sup>237</sup> Այս մասին տե՛ս նաև, The Life and Adventures of Joseph Emin, an Armenian. Vol. 2, p. 315.

<sup>238</sup> Աղ-բյորփի գետը հոսում է Շուշիի հարավով:

րամ վերադառնում է<sup>239</sup>։ Երբ այս աղետալի լուրը Փանահ խանին է հասնում, աշխարհը նրա աչքերի առջև մթնում է։ Իր մերձավորների հետ խորհուրդ է անում, թե որդուն ինչպե՞ս և ու՞մ միջոցով ազատի։

(89ա) Այդ միջոցին լուրեր են տարածվում Քերիմ խան Չենդի եղբայր Իսրանդար խանի սպանության և նրա վրեժն առնելու նպատակով Քերիմ խանի Ատրպատական գալու ու Փանահ խանին իր մոտ կանչելու վերաբերյալ։ Այս դեպքերի մանրամասները հետևյալն են։

Քերիմ խանը, որ մի քարեսիրտ ու հզոր տիրակալ էր, ամուր քազկի գործրյամբ իրեն էր ենթարկել Արաղը, Ֆարսն ու *դառ-ալ-մարզը*<sup>240</sup>։ Երբ Ֆաթհալի խանը իր երկիրն է վերադառնում, նրա [Քերիմ խանի] դեմ պատերազմ է սկսում։ Քերիմ խանը իր եղբայր Իսրանդար խանին նրա դեմ է ուղարկում։ Սպահանի մոտակայքում նրանց միջև ճակատամարտ է տեղի ունենում։ Իսրանդար խանը Աստոծ կամքով սպանվում է, իսկ զորքը՝ պարտություն կրում, որից հետո Ֆաթհալի խանը նվաճում է Արաղի որոշ շրջաններ։ Քերիմ խանը լսելով այս ցավալի միջադեպի մասին՝ սաստիկ զայրանում է և որոշում վրեժխնդիր լինել։ Հսկայական քանակ է հավաքում և նախքան Ատրպատական մտնելը մի վստահելի մարդ է քարեկամական նամակով ուղարկում Փանահ խանի մոտ։ Նամակում գրված էր. «Հիմա Ֆաթհալի խանը Մեր և Ձեր ոխերին բշտամին է դարձել։ Նա սպանել է մեր եղբորը, իսկ Ձեր որդուն՝ ուխտադրուժ կերպով [պատանդ] է տարել։ Ամեն օր մի ուղղությամբ արշավում է և ամեն պահ մեկի դեմ կռվի է ելնում։ Այս պատճառով, Ալլահը վկա, որոշել են վրեժ լուծել և սուրս մերկացրած՝ Չեզանից քարեկամաբար խնդրում են շտապ Ձեր տրամադրության տակ գտնվող զորքով (89բ) պատրաստվեք միանալու [Մեզ], որպեսզի թե՛ Ձեր որդին պատանդ լինելուց ազատվի, և թե՛ եղբորս վրեժը լուծվի»։

Փանահ խանը, որ, Ֆաթհալի խանի դեմ բշտամացած, Աստծուց խնդրում էր պատժել նրան և հարմար առիթի էր սպասում, անմիջապես հեծյալների ու հետևակայիների մեծ զորախմբով Քերիմ խանի մոտ է շտապում։ Քերիմ խանը նրան պատվով ու հարգանքով է ընդունում, և միասին Ֆաթհալի խանի դեմ կռվի են ելնում։ Երբ հասնում են Ուրմիայի մոտակայքը, Ֆաթհալի խանը նրանց դիմադրություն է ցույց տալիս։ Որոշ ընդհարումներից հետո [Ֆաթհալի խանը], պարտված, ետ՝ դեպի ամրոց է նահանջում և [այնտեղ] պաշարվում։ Մի քանի օրից զգալով իր թուլությունը և պարտության անխուսափելիությունը՝ Քերիմ խանին հպատակվելուց բացի այլ ելք չի գտնում։ Նրա [Քերիմ խանի] խոստումներով հուսադրված, դուրս է գալիս և հնազան-

<sup>239</sup> Վարաբադի խանը պատանդ էր տվել իր որդուն (А. Бакиханов, Гюлистан-е Ирам, с. 130; The Life and Adventures of Joseph Emin, an Armenian, v. 2, p. 315).

<sup>240</sup> Քերիմ խան Չենդի Վեքիլը իշխել է 1750-1779թթ.։

դուրքուն հայտնում<sup>241</sup>: Քերիմ խանը, որը իրեն շահի փոխանորդը համարելով, «վերջի» տիտղոսն էր կրում, նույն վայրում Իբրահիմ Խալիլին կանչում է, նրան խալ'աթ, սուր, ոսկյա քամր ու ճուլյզ է ընծայում և Ղարաբաղի կառավարման ու խանութայան ռադամ շնորհելով՝ ազատ արձակում:

[Քերիմ խանը] Փանահ խանին խնդրում է, որ մի քանի օրով միասին գնան Շիրազ և այնտեղ խնջույքների ու խրախճանքների տրվեն: Փանահ խանն էլ համաձայնվում է<sup>242</sup>: Քերիմ խանը, Ֆաթհալի խանին ևս իր հետ վերցրած, ճանապարհ է ընկնում դեպի Շիրազ: Ու որքան էլ, որ Քերիմ խանի մայրը նրան խնդրում-աղաչում է, որ Ֆաթհալի խանին նրա եղբորը [սպանելու] համար պատժի, չի համաձայնվում և իր խոսք ու պայմանից ետ չի կանգնում, (90ա) մինչև որ ճանապարհին հասնում են այն վայրը, որտեղ տեղի էր ունեցել Ֆաթհալի խանի մարտը Իսքանդար խանի դեմ: Քերիմ խանը նրան հարցնում է. «Սա ի՞նչ տեղ է»:

Ֆաթհալի խանը խիզախորեն պատասխանում է. «Սա հենց այն անեղ վայրն է, ուր Իսքանդար խանի կենաց արևը խավարեց»:

Քերիմ խանը, այս պատասխանը լսելով, այնպես է քարկանում, որ քիչ է մնում կարվածահար լինի: Անմիջապես կարգադրում է սպանել Ֆաթհալի խանին և նրան իր եղբայր Իսքանդար խանի մոտ, հանդերձյալ աշխարհն է ուղարկում:

Մի քանի օր անց [Քերիմ խանը] Շիրազ մտնելով՝ որոշ ժամանակ այնտեղ է մնում: Փանահ խանը այնտեղ հիվանդանում է և մահանում: Նրա դիակը մեծ հարգանքով Ղարաբաղ է տարվում և քաղվում Աղյամում, որը նրա զանձազին ու ժառանգական տիրույթն էր:

Փանահ խանը յոթ տարի իշխել է Ղարաբաղում: Ոմանք ասում են, որ Փանահ խանը դիտմամբ մեռած է ձևացել, մերձավորներին նախօրոք պատվիրելով, որ իր «դին» Ղարաբաղ տանեն, որպեսզի այդպես Շիրազից դուրս գար, ճանապարհին ձի հեծներ և գնար Ղարաբաղ՝ ստանձնելու այնտեղի իշխանությունը: Քերիմ խանը այս հասկանալով ասում է. «Նա իմ լավ բարեկամն էր, պետք է նրա դիակը պատվով ու հարգանքով Ղարաբաղ ուղարկեն»:

Հրամայում է նրա որովայնը պատռել, դեղերով լցնել, որից հետո միայն ճանապարհ է դնում Ղարաբաղ...

<sup>241</sup> Ֆաթհալի խանը Քերիմ խան Չենդին հնազանդություն է հայտնում 1170/1762, (տե՛ս А. Бакиханов, Гюлистан-и Ирак, с. 130):

<sup>242</sup> Ավելի հավանական է բլում, որ Քերիմ խանը Փանահ խանին որպես պատանդ իր հետ տարած լինի Շիրազ, քանի որ նա պատանդ է վերցնում Ատրպատականի նաև մյուս խաներին, ինչպես օրինակ Ղարադաղի Զազեմ խանին, Շահբազ խան Դումբուլիին (میرزا محمد صادق موسوی: تاریخ گیتی گشای، تهران: رشادتبخشان هدایت، ۵۲: ص. ۱۳۳۳):

۷۴: رشادتبخشان هدایت، تاریخ روضهالصفای ناصری، ص. ۷۴

## (90թ) ԻԲԲՐԱՀԻՄ ԽԱԼԻԼ ԽԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ ԵՎ ԱՅԼՈՒՐ: ՀԱՐԵՎԱՆ ԽԱՆԵՐԻ ՀԵՏ ՆՐԱ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Փանահ խանի մահից հետո նրա ավագ որդի Իբրահիմ խալիլ խանն է 1168/1762թ.<sup>243</sup> նրա փոխարեն դառնում Ղարաբաղի կառավարիչը: Ոչ միայն ոչ մեկի չէր ենթարկվում, այլև ավագն էր Շարիի, Շիրվանի, Գանձակի, Թավրիզի, Նախիջևանի, Արդեբիլի, Խոյի, Մարաղայի, Երևանի խաների ու կառավարիչների մեջ, մինչև Արաղի ու Ատրպատականի սահմանագլուխը հանդիսացող Ղաֆլանքուի (Ղափլանքուի)<sup>244</sup> վայրն ընկած տարածքներում: Հաճախ վերոհիշյալ տարածքների կառավարիչների նշանակումն ու հեռացումը նրա հրամանով էր կատարվում: Դրա հետ մեկտեղ Ավարիայի<sup>245</sup> (Ավար) ու Դաղստանի կառավարիչ Օմար խանի հետ բարեկամական ու ազգակցական կապեր էր հաստատել՝ կնուրյան առնելով նրա Աղա Բիբե անունով քրոջը և անհրաժեշտության դեպքում Դաղստանի երկրից զորք էր նրան օգնության էր հասնում: Այնպես որ, հաճախ լեզգիների<sup>246</sup> բանակը Ղարաբաղի գյուղերում հյուրընկալելով, իր մոտ էր պահում:

Ղարադաղի երկիրը նույն զորքով գրավելով՝ քանդում, հողին է հավասարեցնում նրա վարչական կենտրոնը հանդիսացող Քորուշտ ամրոցը, որը Արաքսի ափին գտնվող մի բավական ամուր ու բարեշեն քաղաք էր: Տեղի բնակիչներին գաղթեցնելով այլ երկրներ՝ ցարուցրիվ է անում...<sup>247</sup>

Իսկ Ղարադաղի կառավարիչ Մուսթուֆի խանին գերելով՝ քերում է, Շուշի քերդում պահում և այնտեղի տարածքների մի մասը որպես նվեր ու

<sup>243</sup> 1168 ի. թ. համապատասխանում է 1754/1755թ.: Ինչպես վերը նշել ենք Փանահ խանը մահացել է 1760-ական թթ. սկզբին՝ Ֆաթհալի խան Աֆշարի Ղարաբաղյան արշավանքներից հետո:

<sup>244</sup> Ղաֆլանքուի լեռը գտնվում է Ատրպատականի Միանեի շրջանի հարավարևելյան հատվածում:

<sup>245</sup> Ավարիա էր կոչվում XVIII-XIX դարերում բաուլիցիների, Վրաստանի ու լեռնային չերքեզների միջև ընկած լեռնային երկիրը, (История, география и этнография Дагестана, с. 113):

<sup>246</sup> Ըստ XIX դարի ռուսական տվյալների լեզգիական ցեղեր էին համարվում դաղստանցիները, կազիկումուլսցիները, ավարցիները, ակուշինցիները, կուրենչեցիները, ռուտուլցիները, սուրգինները, դարգինցիները, անցուխեցիները, կարուլեցիները, դիդոյցիները, Ջառի, Բալախանի և Նլիսուի բնակիչները, (տե՛ս Օ. Евсеев, Статистическое описание Закавказского края, СПб. 1835, с. 30):

<sup>247</sup> Բուտկովի վկայությամբ Ղարաբաղի Իբրահիմ ու Խոյի Ահմեդ խաները 1783թ. գրավում են Ղարադաղը և գերում այնտեղի Մուսթուֆի խանին (П. Г. Бутков, ук. соч., ч. 2, с. 140):

պարզեատրում հանձնում իր գորավարներին, որպեսզի դրանց եկամուտներից (91ա) օգտվեն:

## ԻԲՐԱՀԻՄ ԽԱՆԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ ՆԱԽԻՋԵՎԱՆ

Այդ ժամանակահատվածում [մրա ու] Նախիջևանի կառավարիչ Քյալ-բալի խանի միջև ինչ-ինչ պատճառներով անհամաձայնություն ու բռնամտություն է ծագում: Իբրահիմ խանը Դաղստանի լեզգիներից օժանդակություն է խնդրում, որին անմիջապես արձագանքում է Օմար խանը և օգնություն հասնում: Նրա օգնությամբ և Ղարաբաղի *շերիք* կոչվող հեծելագործով ու հետևակագործով [խանը] վճռում է պատժել Քյալբալի խանին և դեպի այն կողմերն է շարժվում: Ղարաբաղա<sup>248</sup> կոչված վայրում կանգ է առնում և զորքն ուղարկում [շրջակա] գյուղերն ասպատակելու: Ղարաբաղ գյուղը շրջապատում է: Քյալբալի խանը նախօրոք Երևանի կառավարից օգնություն էր խնդրել, և վերջինս էլ քուրդ և այլ հեծյալների մի խումբ էր մրան օգնության ուղարկել: Վերոհիշյալ քնակավայրում հակառակորդները հանդիպում են, և Քյալբալի խանը որոշ ընդհարումներից հետո խորամանկորեն փախուստի է դիմում: Օմար խանն այս տեսնելով՝ առանց երկնչելու սկսում է հետապնդել նրան: Որքան էլ Իբրահիմ խանը նրանց արգելում է հետապնդումով տարվել, զուր է լինում: Այդ ժամանակ իրենց քաջությամբ հայտնի գիլան քրդերն ու զարափափախները<sup>249</sup>, կանգնեցնում են իրենց ձիերը և սրերը մերկացնելով լեզգիների վրա հարձակվում: Լեզգիները չկարողանալով դիմադրել նրանց՝ փախչում, հեռանում են: Իբրահիմ խանը, որն իր *շերիք* Ղարաբաղայում էր բողել, ճարահատյալ մարդ է ուղարկում մեծիքների ու յուզբաշիների մոտ և վերադարձի հրաման տալիս: Ինքը Քյալբալի խանի հետ հաշտության բանակցություններ է սկսում և բարիդրացիական կապեր հաստատում: Այնուհետև իր զորքը վերցնելով՝ Ղարաբաղ վերադառնում:

## ԻԲՐԱՀԻՄ ԽԱՆԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ ԽՈՅԻ ԿՈՂՍԵՐԸ

Նախիջևանի գործն ավարտելուց հետո, (91բ) շուտով Իբրահիմ խանը իր ուժերը վերականգնում է: Աղա Մուխամմադ խանն էլ քեև Իրանում իշխա-

<sup>248</sup> Ղարաբաղա- քնակավայր Սյունիքի Շահապունիք գավառում Նախիջևան գետի արևելյան վտակի ափին:

<sup>249</sup> Զիլանիները XVIII դարում Երևանի խանությունում քնակվող քրդական ցեղերից էին, (տե՛ս ۱۸۲ م. ماسر سلطانیه, ص) իսկ զարափափախները՝ բյուրքալեզու ղազախ ցեղի ճյուղերից, (տե՛ս Н. Шонен, ук. соч., с. 457, 535):

նորայան զլուխ եր անցել, սակայն դեռևս չէր հզորացել<sup>250</sup> և Ֆարսի ու Շիրազի կողմերում էր գտնվում, [Իբրահիմ խանը] որոշում է խոյի երկիրը ևս իրեն ենթարկել, ուստի Ջատի ու Ավարիայի լեզզիներից, Ղարաբաղի ու Ղարադաղի չերիք զորագնդերից բաղկացած մի մեծ բանակով 1203թ.<sup>250</sup> գնում է դեպի խոյ: Կանգառից կանգառ շարժվելով՝ հսկայական բանակով մտնում է Մաբանդի շրջանը: Խոյի կառավարիչ Ջաֆար Ղուլի խանը<sup>251</sup> իր բազմությամբ շտապում է դիմադրություն ցույց տալ: Իբրահիմ խանի մոտ ծառայության մեջ գտնվող Մուլա Փանահը՝ Վադիֆ ծածկամուտով, լինելով հարուստ գիտելիքների տեր մի մարդ և աստղագուշակ, իրենց բանակի ճակատագիրը գուշակելով, ասում է. «Մենք վաղը խոյ քաղաքում կլինենք»:

Մի խոսքով, միմյանց ընդառաջ շարժվելով, Մաբանդի տարածքում հակառակորդների առաջապահ գնդերը դեմդիմաց են ելնում: Խոյի չարխչի-րաշին անմիջապես, սուրը մերկացրած, դեպի մարտի դաշտ է արշավում և հակառակորդի հրամանատարին գլխատում: Բանակն այս տեսնելով, այլևս որևէ դիմադրության ցույց չի տալիս ու փախուստի է դիմում: Իսկ չերիքը, առանց մարտին մասնակցելու, գերի է հանձնվում: Հեծյալներից ևս շատերն են գերվում ու կողոպտվում: Մնացածները մարտի դաշտից այլևս բանակատեղի չվերադառնալով՝ դեպի իրենց տունն ու երկիրն են գնում: Իբրահիմ խանի զորքի ողջ ունեցվածքը բախանվում է:

Մուլա Փանահը, (92ա) որը նախորդ օրն ասել էր, - Վաղը խոյը կգրավենք և քաղաքում կլինենք,- մի քանի ազնվականների ու իշխանավորների հետ որպես գերի խոյ քաղաքն է տարվում: Այնտեղ Իբրահիմ խանի հորեղբորորդի Ֆարզի բեկը, որը նույնպես գերի էր ընկել, զայրացած նրան [Մուլա Փանահին] ասում է. «Դուք ասացիք, որ խոյը գրավելով ենք քաղաք մտնելու, ոչ թե գերված ենք այստեղ բերվելու»:

Գերյալները որոշ ժամանակ այնտեղ են մնում: Այնուհետև Իբրահիմ խանը, պատրաստություն տեսնելով, գնում է, Ջաֆար Ղուլի խանի հետ հաշտություն կնքում և իր մարդկանց ազատում...

Քանի որ Իբրահիմ խանը [հարևան] խաների ու կառավարիչների մեծ մասից հզոր էր ու նրանց իր գերիշխանության տակ էր պահում, երբեմն [նրանց] պաշտոնյաներից ու ազնվականներից ոմանց խաների ու խանական որդիների հետ պատանդ էր վերցնում և Շուշի բերդում պահում: Թեև Վրաստանի վալի Հերակլ խանը [Անդրկովկասի] խաների մեջ ավագն ու ամենահզորն էր: Սկզբում նրա ու Իբրահիմ խանի միջև ամուր բարեկամական կապեր կային, և ամեն հարցում նրանք հաշվի էին նստում միմյանց հետ: Բայց քանի որ ազգակցական կապի շնորհիվ Ավարիայի կառավարիչ Օմար

<sup>250</sup> 1203 թ. ք. համապատասխանում է 1787/1788թ.:

<sup>251</sup> Ջաֆար Ղուլի Դումբուլյին խոյի խանն է դառնում 1786թ. (Վ. Ռ. Գրիգորյան, Երևանի խանությունը XVIII դարի վերջին, Երևան, 1958, էջ 125):



խանն ու Դադստանի իշխանները նույնպես հիշյալ Իբրահիմ խանի ենթականերն ու բարեկամներն էին, ուստի եթե նրանց [Իբրահիմ խանի ու Հերակլ վալիի] միջև մի փոքր անհամաձայնություն էր ծագում, անմիջապես Իբրահիմ խանի կանչով Դադստանի իշխանները այն կողմերի զորքով դեսպի Վրաստան էին արշավում և այն երկիրը ասպատակում: Այսպես, 1205 թվականին<sup>252</sup>, երբ վալիի ու Իբրահիմի միջև հարաբերությունները վատանում են, Օմար խանը (92թ) մեծ բանակով Վրաստան է գնում և հնարավորին չափ այդ տարածքը կողոպտում: Գյումուշխանն<sup>253</sup> ամբողջ գրավելով՝ բնակիչներին շատերին կոտորում ու գերի է վերցնում: Այնուհետև շտապում է Ախալ-խա (Ախալսխե)<sup>254</sup>, Սուլեյման փաշայի մոտ և ձեռն ալմուտեղ անցկացնում: Գարնանը այնտեղից վերադառնալով՝ նորից մտնում է Վրաստանի հողը ու պաշարում իր ճանապարհին գտնվող Վահանի (Վախան) բերդը<sup>255</sup>, որը իշխան Արաշիձեի (Արաշիքզա) ապաստարանն էր: Վերջինս իր ընտանիքով այնտեղ էլ ամրացել էր: Հաղթությամբ այն նվաճում է և տեղի բնակիչների մի մասին սրի քաշում, մի մասին էլ գերեվարում: Վերոհիշյալ իշխանի դուստրերից մեկին, որի անունը Ջավահիր Խանում էր, ուղարկում է Իբրահիմ խանին, մյուսին էլ ինքը՝ Օմար խանն է կնության առնում:

## ԱՂԱ ՄՈՒՀԱՄՄԱԴ ԽԱՆԻ ՀԱՐՁԱԿՈՒՄԸ ՇՈՒՇԻ ԱՄՐՈՑԻ ՎՐԱ ԵՎ ՆՐԱ ԶԵՌՆՈՒՆԱՅՆ ՎԵՐԱԴԱՐՁԸ

Աղա Մուհամմադ խանը Քերիմ խանի մահից հետո Շիրազից փախչում, գնում է իր ցեղի ու հարազատների մոտ: Նա համարում է, որ արդեն իր հերթն է թագավորելու: Նվաճում է Արաղի տարածքների մի մասը և 1785/1201թ.<sup>256</sup> Թեհրանում գահ բարձրանալով<sup>257</sup> այն դարձնում է իր թագավորության մայրաքաղաքը ու անվանում այն *դառ-ալ-խալաֆե*: [Այնուհետև] զորքը տանելով Ատրպատականի երկիրը՝ գրավում է Արաքսից հարավ ընկած տարածքները և անցնում Արաքսի մյուս կողմը: Սակայն որքան էլ ջա-

<sup>252</sup> 1205 թ. համապատասխանում է 1790/1791թթ., սակայն պետք է լինի 1785թ. (համեմատիր Լ. Մ. Մելիքսեթ-բեկ, նշվ. աշխ., հ. Գ, էջ 227):

<sup>253</sup> Խոսքը Լոռիի մոտակայքում Լալվարի ձորում գտնվող Ախթալա մեծ գյուղի մասին է (Ս. Ջալալյան, նշվ. աշխ., հ. 1, էջ 85):

<sup>254</sup> Ախալխա ամբողջ գտնվում է Արագվի գետի աջ ափին, Մցխեթից հյուսիս:

<sup>255</sup> Վահանի բերդը նախկին Թմուզվի կամ Թմկաբերդն է, որ գտնվում է նախկին Ջավախքի Վերին գավառի, ներկայիս Ախալքալաքի շրջանում (տե՛ս Լ. Մ. Մելիքսեթ-բեկ, նշվ. աշխ., հ. Գ, էջ 236):

<sup>256</sup> 1201 թ. համապատասխանում է 1786/1787թ.:

<sup>257</sup> Աղա Մուհամմադ խան Պարսկաստանի շահ է դառնում 1796թ. (տե՛ս

(روضاتلخیان هدايت، تاريخ روضهالصفاي نامري، ص ۲۷۳):

նում է գրավել Թալիշի, Լենքորանի ու Երևանի շրջանները, այդ նրան չի հաջողվում<sup>258</sup>։ Այդ ժամանակ *խալ'աթ* ու սուր է ուղարկում Իբրահիմ խանին՝ նրան առաջարկելով իրեն հպատակվել։ Նրանց միջև ձևական սիրալիր հարաբերություններ են հաստատվում։ (93ա) Նույն տարի Աղա Մուհամմադ խանը Ատրպատականից վերադառնում է և սկսում պատժել իր բնամիտներին՝ Ֆարսի ու Քերմանի խոռվարարներին, հանդարտեցնել այդ կողմերում ծագած ըմբոստությունը։

Այդ ընթացքում, որոշ դեպքերի հետևանքով, նրա ու Իբրահիմ խանի միջև բնամտություն է ծագում։ Վերոհիշյալ երկրները խաղաղեցնելուց և տեղի բնակչությանը իրեն հնազանդեցնելուց հետո 1793/1209թ.<sup>259</sup> վերստին անթիվ-անհամար զորքով ու [ռազմական] մեծ պատրաստություններով դեպի Ատրպատական է արշավում, որպեսզի նվաճի Վրաստանի, Թալիշի, Ղաբարադի և Երևանի շրջանները։ Իր եղբայր Ալի Ղուլիին, որն իր զորքի գլխավոր հրամանատարն էր, մյուս խաների հետ ուղարկում է Երևանը գրավելու, իսկ ինքը Արադի, Ֆարսի, Խորասանի ու Ատրպատականի բանակով գալիս, կանգ է առնում Շուշի ամրոցի մոտակայքում՝ Չանախլի ու Շուշիքենդ գետերի միջև գտնվող "Նարաթ-խան"<sup>260</sup> կամ "Շահ-յուրտ" կոչված վայրում։ Իր ճամբարի շուրջը ամրություններ է կառուցում, որոնցից շատերի հետքերը ներկայումս էլ կան, այնուհետև պաշարում է բերդը։

Վրաստանի *վալի* Հերակլ խանը, Երևանի կառավարիչ Մուհամմադ խանը և Թալիշի կառավարիչ Մուսթուֆի խանը, երեքն էլ Իբրահիմ խանի հետ դաշինք են կնքում, որ Աղա Մուհամմադ խանին չեն հպատակվի և հնարավորության դեպքում, որքան կարող են, միմյանց կօգնեն։ Դրանից հետո Իբրահիմ խանը ցեղերի մի մասին ուղարկում է Վրաստան, մի մասը հեռանում է Շիրվանի Մուսթուֆի խանի մոտ, մնացածն էլ գյուղերի բնակիչների հետ ապաստանում է լեռներում ու անմատչելի այլ վայրերում կամ [Շուշի] ամրոցում։ Ցեղերից ու գյուղերից բազում հեծյալ ու հետևակային զինվորներ են զինավառված հավաքվում ամրոցում՝ պատրաստ այն պաշտպանելու<sup>261</sup>։

<sup>258</sup> Այդ դեպքերը տեղի են ունենում 1791թ. (տե՛ս روضه تاريخ هدايت، تاريخ اصفهان، 1791թ.)

<sup>259</sup> 1209թ. թ. համապատասխանում է 1794/1795թ.։ Աղա Մուհամմադ խանի արշավանքը Ղաբարադի տեղի է ունենում 1795թ. հուլիս-օգոստոս ամիսներին։

<sup>260</sup> «Նարաթ-խան» պարսկերեն՝ «ժամանի այգի»։ Վարանդայի դաշտերից է, (տե՛ս Ե. Լալայան, Երկեր, հ. 2, Երևան, 1988, էջ 16)։

<sup>261</sup> Աղա Մուհամմադ խանի երկու արշավանքների ընթացքում Ղաբարադիում զարգացող իրադարձությունների մասին մանրամասն տե՛ս Զ. Կոստիկյան, Ղաբարադի 18-րդ դարի վերջի քաղաքական պատմության մի քանի հարցեր, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», XVIII, Երևան 1999, էջ 123-129։

(93բ) Ընդհանուր առմամբ 33 օր Աղա Մուհամմադ խանը, քար սրտով ու մարտական գորքով, մնում է Շուշիի մոտակայքում: Դեսպաններ է ուղարկում ու բանակցություններ վարում՝ ջանալով, որ Իբրահիմ խանն ու նրա հպատակները կամավոր կերպով անձնատուր լինեն և հպատակություն հայտենեն, բայց ասպարդյուն: Նա բազում սպառնալիքներ է տեղում ու սնապարծ խոսքերով վախեցնում, բայց զուր...

(94ա) Աղա Մուհամմադ խանի բանակի մեծ մասը կազմում էին Մազանդարանի բոժանգչիները<sup>262</sup>, որոնց «ղարա-շուխա»<sup>263</sup> էին անվանում: Նրանց հրահանները առանց հրահանի էին և վառվող պատրույգի միջոցով էին գործի դրվում: Այն օրը առավոտյան ժամը 6-ից մինչև հրակնեզ արևի մայր մտնելը ճակատամարտը շարունակվում էր: Հրազենի ավերիչ կրակահերթերը չէին դադարում, և կողմերից ոչ մեկը կանգ չի առնում: Սպանվածների քրակներ են առաջանում, և նրանց արյունից ատվակներ հոսում: Ղարաբաղի բե՛ մահմեդական, և բե՛ հայ բնակիչները այն ծով բանակի առաջ տղամարդու պես կանգնած կոխվ են տալիս՝ ոչ մի ակնթարթ մարտից չխուսափելով և սխրամքներ գործելով: Շուշի բերդում հրազենի զնդակներից մեծ քվով կանայք ու տղամարդիկ են վիրավորվում ու սպանվում: Իսկ Աղա Մուհամմադ խանի բանակի զոհվածներին թիվ ու հաշիվ չկար:

(94բ) Աղա Մուհամմադ խանը տեսնում է, որ որքան էլ Նեմրուքը հրդեհը բորբոքում է Իբրահիմ խանը Աբրահամի նման անվնաս է մնում, դեմը կրակից չի շրջում և վառողի ծուխն ու բնդանոթի կրակը զվարճալիք է համարում<sup>264</sup>, որի պատճառով, չնայած իր գործադրած ջանքերին, հաղթանակը չի մոտենում: Իսկ իր բանակը ղարաբաղցիների խիզախ հարձակումներից ու հարվածներից կորուստներ է տալիս ու հուսալքվում: Ղարաբաղցիները հարձակվում էին [պարսկական] բանակի վրա, կողոպտում նրա զուսակը:

Աղա Մուհամմադ խանը մտածում է, որ եթե մի քանի օր էլ այսպես անցնի, իր բանակը կկազմալուծվի, ցարուցքիվ կլինի և կատարյալ կորստյան կմատնվի: Ուստի իր բանակի զորավարների ու սպաների հետ խորհրդակցելով՝ կարգադրում է ետ վերադառնալ. չէ՞ որ ճիշտը սխալի կեսից ետ դառնալն է: Հակառակ դեպքում շուտով իրենց բանակից ողջ մարդ չի մնա...

Այդ ժամանակ Գանձակի Ջավադ խանն ու Ջուրբերդի Մելիք Մեջնունը, որոնք Իբրահիմ խանից երես թերած, Աղա Մուհամմադ խանի դաշնակիցն

<sup>262</sup> «Մազանդարանի բոժանգչիներին» գումղը ստեղծվել էր Աղա Մուհամմադ խան Ղաջարի կողմից: Բաղկացած էր հետիոտն ու հեծյալ ջոկատներից, և կազմվելով Մազանդարանի բնակիչներից, քվով հասնում էր շուրջ 14000-ի, (տե՛ս Статистическое обозрение Персии, с. 83):

<sup>263</sup> «Ղարա-շուխա» բուրբ. - «սև հագուստավոր»:

<sup>264</sup> Նեմրուքը (Նեմրուք) ըստ Հին Կտակարանի, Բաբելոնյան բազավորության առասպելական հիմնադիրն է եղել, որը Աբրահամ մարգարեին կրակն է նետում, բայց այն, Աբրահամին որևէ վնաս չի պատճառում:

էին դարձել, նրան ասում են. «Քանի որ Շուշի բերդը չկարողացաք գրավել, երեւոյթն աշխարհի վերջն է. Իրանի ժողովուրդը կըմբոստանա (95ա) և Դուք այլևս չեք կարողանա թագաւորել: Հետեաբար, ելքն այն է, որ այստեղից գնաք, Թիֆլիսը կողոպտեք ու գերիներ վերցնեք, որպեսզի բանակի ոգին բարձրանա և կարիքի դեպքում կարողանա կռիւն»:

Աղա Մուհամմադ խանը այս խորհուրդն ընդունում է և հայտարարում իր դեպի Թիֆլիս ու Վրաստան շարժվելու մասին:

## ԱՂԱ ՄՈՒՀԱՄՄԱԴ ԽԱՆԻ ԱՐԸԱՎԱՆՔԸ ԹԻՖԼԻՍ, ՊԱՏԵՐԱԶՍԸ ՀԵՐԱԿԼ ՎԱԼԻԻ ԴԵՄ, ՆՐԱ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԹԻՖԼԻՍԻ ԱՎԵՐՈՒՄԸ

Աղա Մուհամմադ խանը ի վիճակի չլինելով Շուշի քաղաքը գրավել՝ 1210/1795թ. մտադրվում է նվաճել *դառ-ալ-սորուր* Թիֆլիսը: Իբրահիմ խանը այս պատրաստութիւնների մասին արագընթաց սուրհանդակով տեղեկացնում է *վալիին*: Երբ Հերակլ խանը լսում է, որ Աղա Մուհամմադ խանը Ղաւարադից ձեռք քաշելով, Թիֆլիսի ճանապարհին է բռնել, իր բոռ, Բաշաշողի *վալի* Սուլոմոն (Մուլեյման) խանից, որդիներից ու մյուս ժառանգներից, որոնց միջև (նա) մասնատել էր Վրաստանը, օգնություն է խնդրում: Թեև Հերակլը յորանասունն անց, ծեր ու բույլ մի մարդ էր՝ մի ուտքը արդեն գերեզմանում, այդուհանդերձ անհամբեր ու անհանգիստ էր իր թշնամիներին ոչնչացնելու հարցում: Նա սկսում է իր բանակը կարգի բերել: Սակայն նրա որդիների միջև անհամաձայնություն ու թշնամություն կար, և այդ պատճառով ոչ մեկը օգնության չի հասնում բացի Իմերեթիայի Սուլոմոն խանից, որը 4000 զինվոր է ուղարկում: Չնայած վալին շատ է պնդում ու սուրհանդակներ ուղարկում, բայց իզուր: Ոչ մի տեղից զորք չի գալիս, որովհետև բոլորը զբաղված էին խնջույքներով ու խրախճանքներով: Ուստի [վալին] հարկադրված է լինում նույն փորրաքանակ զորքով դուրս գալ հսկայական բանակի դեմ: Իր մահճեղական ու մյուս հալածակներից, դազախ ցեղի հեծյալներից զինվորներ հավաքագրելով՝ Աղա Մուհամմադ խանի դեմ կռիւն է ելնում (95բ) այն հույսով, որ միգուցե կկարողանա խոչընդոտել նրան մտնել Վրաստանի հողը: Գալիս, կանգ է առնում Ղազախի տարածքում գտնվող Ինջա-չայ գետի մոտակայքում և սպասում որ [իր] որդիներից որևէ մեկը օգնության կհասնի, բայց զուր:

Երբ Աղա Մուհամմադ խանը Գանձակ է մտնում, *վալին* Ինջա-չայից հեռանում է և ապահովության համար իր Դեդա վալու<sup>265</sup> կնոջը Դուշեք (Թու-

<sup>265</sup> Դեդա վալու - (վրաց. վալիի մայր): Ի նկատի ունի Հերակլ վալիի երկրորդ կնոջը՝ Դարեջան թագուհուն:

շեր)<sup>266</sup> է ուղարկում: Իսկ ինքը, իր սակավաթիվ մարդկանցով, Թիֆլիսում է մնում:

Աղա Մուհամմադ խանը կանգառից կանգառ շարժվելով՝ Սողանլու<sup>267</sup> է մտնում: Գիշերը այնտեղ է իջնանում և առավոտյան գրոհում Թիֆլիսի վրա: Վալին իր նույն փոքրաթիվ բազմությամբ ու հրանոթներով շարժվում է մինչև Մարդանես գետը, որտեղ այժմ Կարանտին է<sup>268</sup>: Առաջապահ զնդերը մոտենալով մարտի են բռնվում: Վրացի թնդանորածիզները, մեծ հմտությամբ ու ճարպկորեն գործելով, կասեցնում են ղզրաշների բանակի առաջխաղացումը: Մինչև որ Աղա Մուհամմադ խանը իր ավագ զորավար քաջ Մոսթոուֆի խան Դավալուին կանչում է և հրամայում, թե. «Քեզնից եմ պահանջում Թիֆլիսը գրավել»:

Այդ օրը օղը փոշու կուտակումից այնքան մռայլ ու մութ էր, որ միմյանց տեսնելը շատ դժվար էր: Վերոհիշյալ զորավարը իր բանակով առաջ է շարժվում: Ղզրաշները ճանապարհին ծանոթ չլինելով՝ սկսում են սարն ի վեր բարձրանալ: Երբ ամալի վարագույրը բացվում է, ու օդի հայելին մաքրվում փոշուց, վալին ու վրաց զորքը տեսնում են, որ ղզրաշները իրենց բիկունքում են և քաղաքի վերին մասով են անցնում: Հետևաբար *վալին* ճարահատյալ այնտեղից վերադառնում է և այլևս չկարողանալով իր ապարանքը մտնել՝ մեկ (96ա) հեծյալի ու ջորեպանի հետ անցնում է Հավլաբարի (Հելեվար) կամուրջը և փախչում դեպի Կարակալիան լեռները<sup>269</sup>:

Ղզրաշների բանակը մտնելով *դար-ալ-սորուր* Թիֆլիսը<sup>270</sup>, այն ալան-թալանի է ենթարկում և այդ ուրախ քաղաքը դարձնում ողբալի սգատուն: Բնակչության մի մասին սրի են քաշում, ոմանց էլ՝ գերության քշում...

Վանքերի բանկարծեք իրերը դառնում են ոճրագործ ամբոխի ավարը, ու գեղեցիկ շինությունների հարստությունն ընկնում է ելուզակների խմրի ձեռքը: Այս կերպ Աղա Մուհամմադ խանը իր քար սրտով (96բ) յոթ օր այնտեղ է

<sup>266</sup> Դուշերը Քարքիի հյուսիսային շրջանի բնակավայրերից է, որը XVIII դարի երկրորդ կեսին Ռուսաստանի հետ տնտեսական փոխհարաբերությունների ուժեղացման արդյունքում աստիճանաբար վեր է ածվում քաղաքի (Յ. Ա. Месхиа, Города и городской строй феодальной Грузии, Тбилиси 1959, с. 112, 115):

<sup>267</sup> XIX դարի վիճակագրական տվյալներում նշվում են Սողանլու անունով երկու բնակավայր Կուրի աջ ափին. մեկը՝ հայաբնակ, մյուսը՝ թրքաբնակ (Сборник материалов для описания Тифлисской губернии, т. 1, вып. 1, Тифлис 1870, с. 133):

<sup>268</sup> XVIII-XIX դարերում հաճախակի Անդրկովկաս էին թափանցում համաճարակներ, այդ պատճառով ռուսական իշխանությունները սահմանային հատվածներում կարանտինային ստուգման կետեր են հիմնում, որոնցից մեկը հավանաբար գտնվում էր այդ գետի մոտ:

<sup>269</sup> Կարակալիան լեռները գտնվում են Արագվի գետից հյուսիս-արևելք (W. E. D. Allen, A History of the Georgian People. London 1932, p. 124):

<sup>270</sup> Աղա Մուհամմադ խանի զորքերը Թիֆլիս են ներխուժում 1795թ. սեպտեմբերի 12-ին:

մնում և այն գեղեցկաշեն քաղաքը ավերում ու վշտով է լցնում՝ նրա հրաշալի շինությունները գրկելով կենդանի մարդկանցից ու հարստություններից:

Դրանից հետո [Աղա Մուհամմադ խանը] վերադարձի ճամփան է բռնում: Չմեռող անց է կացնում Մուղանում, իսկ զարնանը հեռանում Արադի կողմերը:

*Վալին Թիֆլիսի* աղետից հետո Դուշեբում ու այլուր ապաստանած իր որդիներին ու ժառանգներին, ողջ մնացած *քավադներին* ժողովի է կանչում ու նախազգուշացնում, թե. «Իմ կյանքը արդեն իր ավարտին է մոտեցել, շուտով յոթամասուն տարիս կլրանա: Այսուհետև վալել չէ, որ Աղա Մուհամմադ շահի սեղանի մատովակը լինեմ և նրա հրամանները կատարեմ...

Այժմ ճիշտն այն է, որ որդիներիցս մեկին ձեզ [քավադների] հետ որպես պատանդ Աղա Մուհամմադ խանի մոտ ուղարկեմ, որպեսզի մեր վիճակը քիչ բերևանա և հանգիստ շունչ քաշենք»:

Այս ընթացքում *վալլին* լուրեր են հասնում նրա [Աղա Մուհամմադ խանի] հեռանալու մասին, և նա սաստիկ ուրախանում է ու հոգեպես հանդարտվում:

## ԳԵՆԵՐԱԼ ԿՈՍՄ ՎԱԼԵՐԻԱՆ ՋՈՒԲՈՎԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ ԿՈՎԿԱՍՅԱՆ<sup>271</sup> ԵՐԿՐՆԵՐ ԵՎ ՆՐԱՆՑ ՆՎԱՃՈՒՄԸ ՀԱՂԹԱԿԱՆ ԲԱԶԿԻ ՈՒԺՈՎ

Թիֆլիսի աղետից և Աղա Մուհամմադ խանի Իրան վերադառնալուց հետո Վրաստանի *վալի* Հերակլ խանը իր դուրքյան մասին մի մանրամասն խնդրագիր է ուղարկում Ն. Մ. Եկատերինա կայսրուհուն, ուր նա հանգամանալից կերպով ներկայացնում է տեղի ունեցած դեպքերը: Հիշյալ միապետը բարեսրտորեն իր հպատակների մասին հոգալով՝ *վալլին* ու նրա ժողովրդին Աղա Մուհամմադ խանի շարագործություններից պաշտպանելու համար (97ա) [Կովկաս] է ուղարկում Դըզըլ Այադ<sup>272</sup> անունով հայտնի Ն. Գ. գեներալ կոմս Վալերիան Ջուրովին 40-հազարանոց մարտաշունչ զորքով: Ջուրավարը 1796/1211թ. Դաղստանի կողմից մտնում է Դերբենդ, բար-ալ-սարվա-րի<sup>273</sup> դաշտը դարձում է իր հաղթական բանակի մարտական գործողությունների հրապարակը<sup>274</sup>: [Նա] գրավում է Կովկասյան այս կողմերի երկրները

<sup>271</sup> Գեներալ Վ. Ջուրովի արշավանքի մասին մանրամասն (տե՛ս Н. Н. Дубровин, ук. соч., т. 3, СПб., 1886, с. 115-209).

<sup>272</sup> «Դըզըլ-այադ» բուրբերեն «ոսկյա ոտը»:

<sup>273</sup> Բար-ալ-սարվար - (արաբ.- դոների դոտ) Դերբենդի հին անվանումն է, որը հայտնի պատմության մեջ հիշատակվում է Շորա Պանակ անունով (տե՛ս Հ. Միքայել Վ. Յովհաննէսեան-Մխիթարեան, Հայաստանի քերդերը, Վենետիկ, Ս. Դազար 1970, էջ 938):

<sup>274</sup> Ռուսական զորքերը Դերբենդին են մոտենում 1796թ. մայիսի 10-ին (Н. Н. Дубровин, ук. соч., СПб. 1886, т. 3, с. 115):

մինչև Ղարաբաղի սահմանը և թշնամիներին պարտության մատնում: Այն տարվա ձմեռն անց է կացնում Մալաթիում ու Չեհելիում<sup>275</sup>, որը Կուրի և Արաքսի միախառնման վայրն է: Նվաճելով Կուրի ու Արաքսի միջև գտնվող խանության նստավայրը՝ [Զուրովը] կանգ է առնում: Աղա Մուհամմադ խանին ուղերձ է հղում, թե՛ «Դուք եկել, Թիֆլիսից այսքան գերի եք տարել, ինձ հանձնարարված է, վերոհիշյալ գերիներին ետ բերել: Կամ գերիներին վերադարձրե՛ք, կամ էլ կռվի նախապատրաստվե՛ք»:

Աղա Մուհամմադ խանը, քանի որ չէր կարող նրա դեմ կռվել, ընդհարումից խուսափելով, կտրուկ պատասխան չի տալիս, այն կողմերից հեռանում է և փորձում ժամանակ շահել:

Նույն ժամանակ Ղարաբաղի Իբրահիմ խանը իր որդի Աբուլ-Ֆաթի խանին վայելուչ նվերներով ու ազնվացեղ մտուցներով ուղարկում է մեծ զորավարի [Զուրովի] մոտ և հայտնում Ռուսաստանի հզոր տերությանը հնազանդվելու և նվիրվածորեն ծառայելու իր ցանկության մասին<sup>276</sup>: Ն. Մ. Եկատերինա արդարադատ կայսրուհուն է հղում իր խոնարհությունն արտահայտող խնդրագրեր: Ազնվազարմ զորավարը նույնպես հարգալից վերաբերմունք է ցուցաբերում Աբուլ-Ֆաթի խանի նկատմամբ:

(97թ) [Զուրովը] Իբրահիմ խանի խնդրագիրը Դեբեճեղի ու Ղզլարի ճանապարհով ուղարկում է Ն. Մ. կայսրուհու արքունիք: Մի իշխանի հետ ընծաներ ու պարզեներ է ուղարկում Իբրահիմ խանին ու նրան հուսադրում արքայական անսահման բարեհաճությամբ ու զրասրտությամբ: Թանկարժեք զոհարներով ու մարգարիտներով զարդարված մի գավազան էլ ուղարկում է նրա [Իբրահիմ խանի] խորհրդական Մուլլա Փանահին: Մյուս խաները, երբ լսում են այդ դեպքերի ու Իբրահիմ խանի ռուսաց հզոր պետությանը հպատակություն հայտնելու մասին, իրենք ևս պատգամավոր ու խնդրագիր են ուղարկում ազնվազարմ զորավարին՝ հայտնելու իրենց հնազանդությունը Ռուսաստանի պետությանը: Այդ խաներն էին Թալիշի Սյր Մուսրոուֆի խանը, Շիրվանի Մուսրոուֆի խանը, Գանձակի Ջավադ խանը, Երևանի, Նախիջևանի ու Ղարաղաղի խաները:

Այս ընթացքում Աստծու կամքով վախճանվում է Ռուսաստանի արեգակնափայլ տիրակալ Ն. Մ. Եկատերինա կայսրուհին, որի հետևանքով մեծ զորավար կոմս Զուրովը Ռուսաստան է վերադառնում:

<sup>275</sup> Չեհել կամ Չեհել-Ղուրասի, բնակավայր Մուղանի դաշտում (Кавказский сборник, т. 26, Материалы к истории персидской войны, с. 14):

<sup>276</sup> Н. Н. Дубровин, ук. соч., т. 3, с. 153.





խանի հրամանով, ցանկանում է Իբրահիմ խանի վրա հարձակվել ու նրան գերելով՝ Աղա Մուհամմադ խանին հանձնել: Կողմերը մարտի են մտնում, որը Ավարիայի կառավարիչ Օմար խանի բույրն էր, միջամտում է և լեզգիներին՝ համոզում, որ ամօրինություն չգործեն: Այս խռովությունների ընթացքում Շուշի ամրոցից մարդ է գալիս՝ հաղորդելով Աղա Մուհամմադ խանի սպանության մասին: Այդ դեպքի մանրամասները հետևյալն են:

Երբ Աղա Մուհամմադ խանը լսում է Իբրահիմ խանի Ջառ ու Բայլական փախչելու մասին, առանց որևէ խոչընդոտի, փարավոնի շուր ու փայլով, Շուշի քաղաքն է մտնում ու իջևանում Իբրահիմ խանի ավագ որդի Մուհամմադ Հասան աղայի ապարանքում, որը գտնվում է ամրոցի ստորին մասում՝ Շուշիքենդ դարպասի մոտ: Հրամայում է ձերբակալել այն անվանի անձանց ու աստիճանավորներին, որոնք չէին կարողացել Իբրահիմ խանի հետ հեռանալ: Չերբակալվածների մեջ էին Վարանդայի Մելիք Շահնազարի որդի Մելիք Ջումշուդը<sup>277</sup>, Մուլլա Փանահ Վադիֆը և շատ ուրիշ ազնվականներ ու իշխանավորներ, որոնք բանտ են նետվում: Աղա Մուհամմադ խանը մտադիր էր յուրաքանչյուրից տուգանքներ վերցնելուց ու բռնագանձումներ կատարելուց հետո, բոլորին էլ մահապատժի ենթարկել և իր վրեժը լուծել:

Այս դեպքերից մի քանի օր անց, գիշերը (99ա) անճշան մի սխալի համար զայրանում է իր գիշերային սպասավորներից երկուսի՝ Սաֆար Ալի բեկի ու Աբաս բեկի վրա և ասում. «Վաղն առավոտյան, երբ արևի սկավառակը հորիզոնում երևա, Շուշի ամրոցի բոլոր գերյալներին առանց որևէ երկմտանքի գլխատելու եմ և սպանվածների գլուխներից աշտարակ եմ կառուցելու, իսկ ձեր կտրված գլուխները դնելու եմ ամենավերևում»:

Ասում են նաև, որ երեկոյան մամազի ժամանակ, նրանցից մեկին հրամայում է զորավարներից մեկին իր մոտ կանչել: Բայց սպասավորը նրա հրամանը չի լսում: Երբ Աղա Մուհամմադ խանը մամազն ավարտում է, նրանից հարցնում է. «Ինչու՞ զորավարը չի եկել»:

Վերջինս ներողություն խնդրելով՝ արդարանում է, քե բանի որ շահը մամազ էր անում, նրա հրամանը իրեն լսելի չի լինում: Շահն անմիջապես հրամայում է կտրել նրա ականջները՝ ասելով. «Ավելի լավ է կտրել այն ականջը, որը չի լսում շահի հրամանը»:

Մյուս սպասավորը ևս ինչ-որ զանցանք էր կատարել: Այն պահից, երբ լսում են շահի սպառնալիքները, այլևս չեն քնում, որովհետև հաստատ գիտեին, որ Աղա Մուհամմադ խանի խոսքը փոփոխության ենթակա չի և միջ-

<sup>277</sup> Աղա Մուհամմադ շահը Մելիք Ջումշուդ Մելիք-Շահնազարյանից զանձում է շուրջ 70000ռ. գումար (Армяно-русские отношения в 18-ом веке. т. 4, Ереван 1990, с. 461):

նորդների գուր հայցող խոսքերը նրա պողպատյա սրտի ոչ մի լարը չեն շարժի: Նույն օրն իսկ, կեսգիշերից հետո նրա վերջը տալիս են:

Արշալույսի մոտերքը մտնելով խանի մնջարանը՝ նրան սրախողխող են անում և մարմինը Դավիթի զրահի պես կտրատում, դեն են նետում<sup>278</sup>: Նրա ապարանջանը, թագն ու գոհարազարդ լանջագոտին (99թ) վերցնելով՝ գնում, ներկայանում են Սադեղ խան Շադադիին<sup>279</sup>, որը զորքի հրամանատարներից էր: Նրան պատմում են դեպքի հանգամանքների մասին: Սադեղ խանը սկզբում նրանց չի հավատում, քանի որ մշտապես զգուշանում էր շահից: Կարծում է, թե շահը նորից նենգորեն իրեն է փորձում: Ի վերջո նրան ծանր երդումներով սրտապնդում են և վախճորած խանին տանում Մուհամմադ Հասան ադալի ապարանքը, որտեղ իջևանել էր շահը: Առաջինը Սաֆար Ալի բեկն է մտնում [շահի] մնջարանը, քարծրացնում վերնակի եզրը Ադա Մուհամմադ խանի վրայից և կրկին դաշույնը խրում նրա սիրտը: Սադեղ խանը այս տեսնելով, անհանգստացած, վերցնում է [շահի] թագը, լանջագոտին ու ապարանջանը և գնում իր կացարանը: Այնուհետև հայտարարում է, որ շահը իրեն հանձնարարել է գնալ, Իբրահիմ խանին ու նրա ընկերներին, որտեղ էլ լինեն, բռնել, ետ բերել: Ահա այս պատրվակով շադադիների<sup>280</sup> զորագունդը վերցրած՝ ողջ-առողջ բերդից դուրս է գալիս՝ իր հետ տանելով շահին սպանողներից Աբաս բեկին:

Սաֆար Ալի բեկը Շուշի բերդում է մնում: Սադեղ խանի՝ Շուշի բերդից դուրս գալուց հետո մինչև կեսօր քաղաքի բնակչությունը տեղի ունեցածի մասին ոչինչ չի իմանում: Երբ կեսօրի մոտերքը շահի սպանության լուրը քաղաքում տարածվում է, ղզբաշ խաները, շփոթահար ու ահաբեկված, յուրաքանչյուրը իր ենթակաների ու շրախմբի հետ մահանջի ճամփան է բռնում, և բանակը խումբ-խումբ ամրոցից դուրս գալով՝ հուսալքված ճանապարհ է ընկնում, հեռանում դեպի իր երկիրը:

<sup>278</sup> Հին Կտակարանում մի ավանդություն կա, որի համաձայն Դավիթ բազավորի զրահը մարտերից մեկում պատտառ-պատառ է լինում:

<sup>279</sup> Այս թանկարժեք իրերը շահական գլխավոր զարդերն էին: Նրանց հանձնումը Սադեղ խանին, ցույց է տալիս, որ Սադեղ խանը ունենալու շահի դառնալու հավակնություններ, և որ բացառված չէ, որ Ադա Մուհամմադ շահի սպանությունը նա կազմակերպած լիներ: Այս տեսակետի օգտին են վկայում մաև մի շարք այլ սկզբնաղբյուրներ (Ու. Գ. Бутков, укр. соч., т. 2, с. 430; Դիվան հայոց պատմության, գիրք Ա-Բ, Թիֆլիս, 1893, էջ 32; գիրք Ժ, Մանր մատենագիրք, Թիֆլիս 1912, էջ 448; Գ. Շերմազանյան, ճանապարհորդություն Հայաստանում, «Արարատ», Էջմիածին, 1877, № 10, էջ 332):

<sup>280</sup> Շադադիների քրդական ցեղը երկար ժամանակ ապրելով շահսկան ցեղերի հարևանությամբ շիա մահմեդականությունն էր ընդունել և դարձել քրդալեզու: Այն բնակվում էր հիմնականում Մուղանի ու Սարաքի միջև, (տե՛ս تذكرو الملوك):

(تذکره الملوك، ۱۳۳۳، ص ۱۹۰):

Ղարաբաղի բնակիչները ներխուժում են (100ա) շահի [ժամանակավոր] կացարանը և սկսում կողոպտել արքայական արծաթյա ու ոսկյա իրերը, քանկարժեք զարդերն ու սպասքը: Ամենուր դզրաշներին քալանում ու կոտորում են: Այդ ժամանակ Իբրահիմ խանի եղբորորդի Մուհամմադ բեկը, մտնելով [շահի] հանգրվանը՝ բռնագրավում է շահական գանձերի՝ ոսկյա ու արծաթյա ամանեղենի, քանկարժեք քարերի մնացած մասը, փոխադրում է դրանք Մուհամմադ Հասան Աղայի սպարանքից իր բնակարանը: Անցնելով իշխանության գլուխ՝ Մուհամմադ բեկը զբաղվում է Ղարաբաղում կարգուկանոնի հաստատմամբ:

Աղա Մուհամմադ խանի անբազ գլուխը, որը մեծամտաբար այլոց գլուխները իրենց մարմինների համար ծանր համարելով՝ ցանկանում էր կտրել [Մուհամմադ բեկը], դարձնում է երեխաների խաղալիքը, իսկ նրա դժբախտ մարմինը՝ գցում [քաղաքի] հրապարակում...

[Այնուհետև] Մուհամմադ բեկը Աղա Մուհամմադ խանի գլուխը Մուհամմադ Ռաֆի բեկի հետ ուղարկում է Բալխական՝ Իբրահիմ խանի մոտ, վերջինս էլ ուրախությամբ այն ուղարկում է *վայրում*...

(100բ) Աղա Մուհամմադ խանը շատ կոպիտ, դաժան ու արյունաբերու մարդ էր, բոլորի հետ թշնամաբար ու չարությամբ էր վարվում, անողորմ սիրտ ուներ: Իր անսահման չարությունից դրդված հաճախ որսորդությամբ ու խնջույքներով էր զբաղվում, որովհետև երեւ տանն էր մնում, անընդհատ արյուն քափելու ու որևէ մեկին պատժելու պատրվակ էր փնտրում: Ու բեկ գուրկ էր առնանդամից, սակայն շատ էր սիրում վարդայտ գեղեցկուհիներին...

(101ա) Իբրահիմ խանը Աղա Մուհամմադ խանի սպանության լուրը ստանալուց հետո Ղարաբաղ է ուղարկում սկզբում իր որդիներից Մեհդի Ղուլի աղային, այնուհետև իր ավագ որդի Մուհամմադ Հասան աղային, իսկ մի քանի օր անց այստեղ է գալիս նաև ինքը և վերահաստատվում խանի պաշտոնում:

## ՎԱՐԻՖԻ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հին թշնամության պատճառով Մուհամմադ բեկը, այն ժամանակահատվածում, երբ վարում էր Ղարաբաղի խանի պաշտոնը, հարմար պահից օգտվելով, [Մուլլա Փանահին] որդու՝ Ալի Աղայի հետ մահապատժի է ենթարկում...

Ասում են, որ երբ նրան որդու հետ սպանելու էին տանում, որդին հարցնում է. «Հայրիկ, մեզ ու՞ր են տանում»:

Հայրը պատասխանում է. «Այնտեղ, ուր մենք շատերին ենք ուղարկել»...

# (101p) ՀԵՐԱԿԼԻ ՄԱՀԸ ԵՎ ԳԵՈՐԳԻ (ԳՈՐԳԻՆ) ԽԱՆԻ ՎԱԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ ՈՒ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Հերակլ խանը Թիֆլիսի աղետից հետո այլևս *դառ-ալ-սորուր* չի վերադառնում: Կախերում<sup>281</sup> է շարունակում բնակվել և երկու տարի անց, 1798/1213թ. վախճանվում է: Նրա վալիությունը տևել է ... տարի: Նրա մահից հետո [Վրաստանի] վալիությունն անցնում է ավագ որդուն՝ Բազաժառանգ Գեորգիին: Մյուս եղբայրները՝ Յուլոն (Ալիոն) խանը, Փարնավազ (Փարինավազ) խանը և Ալեքսանդր Միրզան այս չեն ընդունում, քանի որ նրանք [վալիի] մի կնոջ զավակներն էին, իսկ Գեորգին՝ մեկ այլ կնոջ<sup>282</sup>: Ամեն մեկը [Վրաստանի] մի կողմում ըմբոստանում ու բշնամություն սկսում:

Ալեքսանդր Միրզան իր իշխանությունը հաստատելով Ղազախ, Բորչալու (Բոչչալու) և Շամսադինի (Շամշադինլու) *մահալներում* բոլորովին հաշվի չէր նստում Գեորգիի հետ: Մյուսները նույնպես անհնազանդ էին և նրա հետ հաշտության եզրեր չէին փնտրում: Ուստի *վալին* ճարահատյալ մարդ է ուղարկում և Դադաստանից վարձու զորք բերել տալիս: Լեզգի զորքի և Կախերի վրաց բնակչության օգնությամբ անցնելով *Ջեսամանի*<sup>283</sup> *ղշլաղը*՝ մտնում է Ղազախի հողը: Ալեքսանդր Միրզան չկարողանալով դիմադրել՝ փախչում է Ղարաբաղ, այնտեղից էլ՝ Իրան: *Վալին* կողոպտում ու պատժում է այնտեղի խռովարար ղազախ ու բորչալու ցեղերին: Այնտեղից զորք է ուղարկում Կարսի շրջանը, որը [այդ երկիրը] կողոպտելուց հետո վերադառնում է *դառ-ալ-սորուր* Թիֆլիս:

<sup>281</sup> Կախերը Վրաստանի շրջաններից է, որ զբաղեցնում է արևմուտքում Արագվի և Կուր գետերից մինչև արևելքում Դադաստանի լեռներն ընկած տարածքը:

<sup>282</sup> Յուլոնը Հերակլ Բազալդրի և Դարիայի ավագ որդին էր, Փարնավազը՝ Դարիայի 6-րդ, իսկ Ալեքսանդրը 5-րդ զավակներն էին: (տե՛ս AKAK, т. 1, Тифлис 1866, д. 161, с. 199):

<sup>283</sup> Ջեսամանը գտնվում է Գեղարքունիքում՝ Օդրուչայից դեպի հյուսիս (տե՛ս Ղ. Ալիշան, Միասկան, ներդիր քարտեզ, Վենետիկ 1893):

## ՌՈՒՄՆԵՐԻ ՄՈՒՏՔԸ ԿՈՎԿԱՍՅԱՆ ԵՐԿՐՆԵՐ, ՔԱՂԱՔՆԵՐԻ ԳՐԱՎՈՒՄԸ ՈՒ ՂԶԼԲԱՇՆԵՐԻ ԴԵՄ ՆՐԱՆՑ ՄՂԱԾ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ

Այն ժամանակ, երբ Գեորգին գահ է բարձրանում, ամրապնդում իր իշխանությունը և պատժում երկրի խռովարարներին, Իրանում սպանված Աղա Մուհամմադ խանի փոխարեն շահ է դառնում նրա եղբորորդի զորավար Բաբա խանը, որը հայտնի էր Ֆաթհալի շահ անվամբ<sup>284</sup>: [Նա] հնազանդեցնում է ընդոստներին ու պատժում իր հակառակորդներին. հաղթում է ինքնագլուխ դարձած Սադեղ խան Շադադիին և Ջաֆար Ղուլի խան Դումբուլիին<sup>285</sup>: Մի խոսքով, ոչնչացնում է իր թշնամիների մեծ մասին:

Ղարաբաղի Իբրահիմ խանը գիտեր, որ այս բոլոր պատրաստությունների ու կռիվների վերջնական նպատակը Ղարաբաղն է, և ի վերջո նա է դառնալու քավության նոխազ [Աղա Մուհամմադ խանի սպանության համար], Ֆաթհալի խանը իրեն հանգիստ չի բողոքելու՝ անպայման կպատժի: Նա հեռատեսորեն, [Ֆաթհալի շահի] հետ ազգակցական կապեր հաստատելու և փոխհարաբերությունները բարելավելու նպատակով նրան կնության է տալիս իր դստերը՝ Աղա Բիբեին: Վերջինիս Թեհրան է ուղարկում որդու՝ Աբուլ Ֆաթհի հետ, որին պատանդ է հանձնում շահին: Իր [Թեհրան] չգնալն էլ պատճառաբանում է ծնությանմբ ու բուլությանմբ, որի համար ներողություն է խնդրում:

Վրաստանի *վալի* Գեորգի խանը զգուշանալով իր ժողովրդի դարավոր թշնամիներ Իրանից, Թուրքիայից ու Դաղստանից, ինչպես նաև եղբայրների սաստկացող հակառակությունից, 1798/1214թ. իր ավագ որդի Դավիդ Միրզային աղերսական խնդագրերով ուղարկում է Ռուսաստանի կայսեր մոտ:

<sup>284</sup> Ֆաթհալի շահը իշխել է 1798-1834թթ.:

<sup>285</sup> Դումբուլիների քրդական ցեղը XVII դարում բնակվում էր Խոյի մոտ գտնվող Սոքմանարաղի շրջանում: Նախապես այն եղել է եզդիական, և հետագայում է դարձել սուննիական: (տե՛ս "Джихан-и-юме" и "Фезлеке" Кяпиба Челеби как источник по истории Армении 17-ого века, Ереван, 1973, с. 68): Միրզական Զրդստանի Բերազի ցեղային միության մեջ մտնող քրդական ցեղերից է (Ն. Խ. Մախմուդով, Զուրդ ժողովուրդը, Երևան, 1959, էջ 48), որի վերնախավի ժառանգական *օջաններն* էին XVI-XVIII դարերում Խոյի և Բարգուշատի տարածքները, (տե՛ս И. П. Петрушевский, ук. соч., с. 105, 127, 129):

Մեծ կայսր (102թ) Պավել Պետրովիչին մա տեղեկացնում է. «Ես բազմա-  
թիվ անհավատ բշնամիներով շրջապատված՝ անելանելի դրության մեջ եմ  
գտնվում: Անհանգիստ վիճակում եմ՝ ամեն ժամ, ամեն պահ սպասելով  
նրանցից որևէ մեկի հարձակմանը: Իմ դրությունը լավ հայտնի է Չերոկ Մե-  
ծության մերձավորներին ու բարձրաստիճան պաշտոնյաներին, որոնք կա-  
րող են վկայել Աղա Մուհամմադ խանի բոլոր անիրավությունների ու չարա-  
գործությունների մասին: Հզոր տիրակալին խնդրում եմք, որ մեծահոգաբար  
մեր կրոնն ու ժողովրդին իր պաշտպանության ու հովանավորության տակ  
առնի և իր արդար դրոշի փայլով մեզ ազատի բշնամիների բռնություննե-  
րից»:

Դավիդ Միրզայի հետևից [վալին] ուղարկում է Վրաստանի *թավադներին*  
*խչիրադասիքաշի* Գարսևան բեկ Շավճավաձեին, որը կայսեր աշխարհակալ  
արքունիքում ճանաչված ու հարգված անձնավորություն էր:

Փոքրրկվում է կայսեր ծով գրասրտությունը և գրգռվում նրա պատ-  
վախնդրությունը: 1799/1214թ. զեներալ-մայոր Լազարևին (Լազարով) 5000  
հոգանոց մի զորագնդով ուղարկում է Վրաստանի սահմանները պաշտպա-  
նելու և այդ երկրի ու նրա ժողովրդի անդորրն ապահովելու: Նմանապես զե-  
ներալ-լեյտենանտ Կնորինգին նշանակում է մինիստր և կառավարիչ, որը  
գտնվելով *վալիի* մոտ, պետք է վերահսկեր երկրի կառավարումը, լինել քա-  
ղաքացիական ու ռազմական գործերի գլխավոր հրահանգիչը<sup>286</sup>: Բարձրաս-  
տիճան պաշտոնյաները նույն տարին գալիս են *դար-ալ-սորուր* Թիֆլիս, *վա-  
լիի* մոտ և (103ա) սկսում կարգուկանոն հաստատել երկրում:

## ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ ԼԱԶԱՐԵՎԻ ՄԱՐՏԵՐԸ ԱՎԱՐԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ ՕՍՄԱՐ ԽԱՆԻ ԴԵՄ ՈՒ ԼԵԶԳԻՆԵՐԻ ԲԱՆԱԿԻ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

Ռուսական զորքի Թիֆլիս մտնելուց մեկ տարի անց՝ 1800/1216թ. Ավա-  
րիայի կառավարիչ Օմար խանը Դադստանից ու հարևան շրջանների  
բնակչությունից 20000 հոգանոց բանակ է հավաքագրում: [Այնուհետև]  
պատճառաբանելով, թե, - *Վալին* մեր բարեկամությունն ու հարևանությունը  
մի կողմ է դրել և Ռուսաստանի պետությանն է ապավինել,- որոշում է գնալ,  
ռուսներին Վրաստանից վտարել և Թիֆլիսը, ինչպես անցյալում սովոր էր ա-  
նել, կրկին թալանել:

<sup>286</sup> 1801թ. սեպտեմբերի 12-ի մանիֆեստով Կովկասյան Գծի հրամանատար,  
զեներալ-լեյտենանտ Կ. Ֆ. Կնորինգը նշանակվում է Վրաստանի ռազմական  
ուժերի գլխավոր հրամանատար (Сборник материалов для описания Тифлисской  
губернии, с. 22-23):

«*Վալին* այս լուրը ստանալով՝ մտահոգվում է ու ցանցն ընկած ձկան պես իրար անցնում: Նա և Վրաստանի ժողովուրդը սաստիկ ահից սկսում են անվայել մտքերով տարվել, քանի որ դեռ չէին մոռացել Աղա Մուհամմադ խանի ու մրա զորքի Թիֆլիսին հասցրած ավերածություններն ու գերեվարությունը: Ահաբեկված ու խուճապահար բնակիչները իրենց կյանքը փրկելու համար փախուստի են մախապատրաստվում և ջանում ապահով ապաստարաններ գտնել: Գեներալ Լազարեն այս մասին տեղեկանալով՝ փորձում է մեղմ խոսքերով ու խրատներով մրանց համոզել, որ զուր տեղը անմիտ խոհերով չտարվեն ու չցրվեն: Սակայն *վալին* ու ժողովուրդը ակամջ չեն դնում ու չեն հանդարտվում, քանի որ ռուսաց զորքի հմտությունը դեռևս տեսած չլինելով՝ չէին հավատում, որ գեներալը այն փոքրաթիվ զորքով կարող է լեզգիների 20000 հոգանոց բանակի դեմ կռվել:

Գեներալն այս հասկանալով՝ մտածում է, որ իր խրատները միննույն է, բնակչության վրա չեն ազդի ու մրա մտադրությունը չեն փոխի: Ստիպված (103թ) Թիֆլիսի բնակիչներին է դիմում՝ ասելով. «Դուք քաղաքից դուրս մի՛ եկեք և ձեր հայրենիքը մի՛ քրքրեք: Ես ռուսական զորքով մենակ դուրս կգամ բշմամու դեմ: Եթե հաղթեմ, ձեր գովեստին արժանի կլինեմ, հակառակ դեպքում՝ եթե, Աստված մի՛ արասցե, պարտվեմ, դուք կհասցնեք փախչել երկրի տարբեր կողմերը»:

Վրաստանի ժողովուրդը այս հայտարարությունը լսելով՝ քիչ հանդարտվում է: Դրանից հետո գեներալ Լազարեն գեներալ Գուլյակովի (Մուլաղով) հետ իր բանակով շտապում է Օմար խանի դեմ կռվելու: Երեկոյան կողմ հակառակորդների արմախում բանակները Սաղարեջո գյուղի<sup>287</sup> ներքևով հոսող Իորի (Ղըբըր) գետի շրջակայքում իրար դեմդիմաց են ելնում<sup>288</sup>:

Լեզգիները նկատելով ռուսների զորքի փոքրաթիվ լինելը՝ զարմանում են, թե ինչպես են մրանք համարձակվում այդ փոքր զորագնդով կռվի ելնել: Լեզգի առաջնորդների մի մասը գտնում է, որ ավելի լավ է սպասեն գիշերն անցնի, քանի որ առավոտյան շարիքն էլ սարսափելի չի լինում, և միգուցե մինչ այդ ռուսները կռվից հրաժարվելով ետ կդառնան: Օմար խանն ու առաջնորդների մյուս մասն առարկում են, թե՛

-Բացի Աստծուց էլ ով<sup>9</sup> կիմանա,

Թե վաղը բախտը ինչ խաղ կխաղա:

-Ճիշտն այն է, որ անմիջապես մարտը սկսելով՝ կռվի կրակը բեժացնենք, հրագենի աղմուկով աշխարհը ցնցենք ու բշմամու օրը մրնեցնենք:

<sup>287</sup> Սաղարեջոն 3000 բնակիչ ունեցող հայկական բնակավայր էր Իորի գետի ավազանում, Գիգուլեշտ գետակի ափին (Сборник материалов для описания Тифлисской губернии, с. 162):

Դրանից հետո բանակի կեսին (Օմար խանը) կարգադրում է ռուսաց զորքը շրջապատել՝ բույլ չտալով որևէ մեկին շրջապատման օղակից ողջ դուրս գալ և բոլորին գերելով՝ կենդանի իր մոտ տանել։ (104ա) Դադստանի գեղերը ջանում են կատարել իրենց առաջնորդի հրամանը։ Երբ մոտենում են ռուսաց բանակի զորակայանին, գեներալը խիզախորեն հրամայում է ահեղ թնդանոթներից կրակ բացել։ (Ռուս) քաջ զինվորները անմիջապես գրոհի են նետվում...

Դադստանի զորքը շուտով նկատում է, որ փոքորկված աշխարհը հրետանու բոցերից կրակի ծով է դարձել, իսկ ռուս զինվորները ոտքից զլուխ իրենց արյունով կարմիր են ներկվել։ Այլևս չեն կարողանում դիմադրել և ռազմի դաշտը լքած՝ փախուստի են դիմում։ Ճակատամարտը [լեզգիների համար] տանով էր տրված։ Նրանց մարդկային ու գույքային կորուստները չափազանց մեծ էին, իսկ սպանվածների թիվը՝ մարդկային երևակայությունից դուրս։ Փրկվածները փախչում են և մեծ ջանքերով միանում րսնակի մյուս մասին։ Իրենց գլխին եկածը ամենամոռայլ գույներով պատմում են նրանց։ Նրանք էլ կատարվածի մասին իմանալով՝ մտահոգվում ու հուսալքվում են. «Մեր պատիվը բարձր պահենք, վրեժի սուրը պատյանից հանենք, ձի հեծնենք և զենք ու զրահով անվախ արշավենք դեպի ռազմի դաշտը, որպեսզի հալածենք թշմախներին։ Եթե այս անգամ էլ քաջաբար չկռվենք, ուրեմն իրավունք չունենք այլևս ապրելու»:

Այնուհետև գեներալը հաղթական զորքով արշավում է դեպի [լեզգիների] ամրությունները։ Համարձակ գրոհներով ու քաջ հարվածներով (104բ) կազմալուծում, գեղեցկուհու վարսերի պես ցրիվ է տալիս լեռան պես անասան [համարվող] բանակը:

Օմար խանն ու [լեզգի] մյուս զորապետները որքան էլ ջանում են իրենց բանակը մի կերպ ուշքի բերել ու հանդարտեցնել, որպեսզի զեթ մի վերջին անգամ կռվի դուրս բերելով՝ իրենց պատիվը բարձր պահեն, չեն կարողանում։ [Լեզգիները] ռուսների առաջին իսկ հարվածից այնպես էին ահաբեկվել ու խուճապի մատնվել, որ միայն նրանց անունը լսելով, փախուստի էին դիմում։ Երբ գիշերը վրա է հասնում, լեզգիները հակընթաց քամու պես, առանց որևէ տեղ կանգ առնելու, փախչում են մինչև Գանձակի հողը...

Քանի որ լեռները ձնով էին պատված և իրենց երկիրը գնալ հնարավոր չէր, նրանք մտադիր էին այնտեղով [Գանձակով] Դարաբադ գնալ, ձմեռն այնտեղ անցկացնել, իսկ զարմանը իրենց երկիրը վերադառնալ։ Գանձակի քնակչությունը այս իմանալով, բույլերին միայն հաղթող իրենց սրերը մերկացրած, հարձակվում է նրանց վրա ու այն հուսալքված խմբից շատերին

<sup>288</sup> Վերոհիշյալ ճակատամարտը տեղի է ունեցել 1800թ. նոյեմբերի 7-ին։ Այնտեղ Դադստանի զորքը կորցնում է 2000 մարդ, իսկ ռուսները՝ 13, (տե՛ս AKAK, т. 1, д. 109, с. 168; д. 111, с. 170-175):



կոտորում<sup>289</sup>: Լեզգիներն էլ այլևս ոչ մի տեղ կանգ չեն առնում՝ փախչենք, փրկվենք գոչելով՝ Ջառ են փախչում<sup>290</sup>: Այնտեղ կանգ են առնում ձմեռելու, որտեղ և Օմար խանը վշտից հիվանդանալով վախճանվում է<sup>291</sup>: Նրա դին մույն տեղում հողին են հանձնում:

Գեներալ Լազարեղ սուրհանդակ է ուղարկում Թիֆլիս, քայց ոչ մեկը նրա քերած լուրերին չի հավատում, մինչև որ սպանվածներից մի քանիսի զուխները Թիֆլիս են ուղարկվում, և բոլորը հանդարտվում են: Մի քանի օր անց (105ա) ինքը, [Լազարեն] անձամբ, հաղթական փառքով *դառ-ալ-սորուր* Թիֆլիս է մտնում: Տեղի բնակչությունը [այդ առթիվ] ուրախության տոնախմբություն է կազմակերպում, և նրանց հավատը ռուսաց բանակի հզորության նկատմամբ մեծանում է: Ն. Մ. Ռուսաստանի կայսրը վերոհիշյալ զորագնդին այդ հերոսության համար մեծ զովեստների ու քազում ընծաների է արժանացնում: Իրավամբ, շատ հազվադեպ է պատահում, որ այդքան փոքր զորքը նման մեծության բանակ ջախջախի: Դրանից հետո գեներալ Լազարեի անունն ու պատիվը, նրա բանակի խիզախության ու հմտության համբավը տարածվում է:

Գեորգի խանը դրանից հետո երկու տարի է ապրում ու 1800/1216թ. մահանում է<sup>292</sup>: Նրա փոխարեն որդին՝ Դավիդ Միրզան է *վալի* նշանակվում...<sup>293</sup>

<sup>289</sup> Գանձակեցիների նրանց վրա գործած հարձակման մասին մանրամասն տե՛ս AKAK, Դ. 1, Ժ. 127, Ը. 183:

<sup>290</sup> Լեզգիների Ջառում մնալու մասին տե՛ս AKAK, Դ. 1, Ժ. 132, Ը. 187, Ժ. 812, Ը. 606:

<sup>291</sup> Օմար խանը մեռնում է Բայլականում 1801թ. մարտի 10-ին, տե՛ս AKAK, Դ. 1, Ժ. 424, Ը. 332:

<sup>292</sup> Գեորգի քազավորը մեռնում է 1800թ. դեկտեմբերի 28-ին, (տե՛ս AKAK, Դ. 1 Ժ. 137, Ը. 188):

<sup>293</sup> Արդեն 1800թ. դեկտեմբերի 22-ին Ս. Պետերբուրգում ստորագրվել էր՝ Վրաստանի Ռուսաստանին միացվելու մանիֆեստը: Ուստի քե՛ս Դավիդ Միրզան Գեորգի քազավորի մահից հետո հայտարարում է, որ ընդունում է Վրաստանի քազավորական իշխանությունը և Ռուսաստանի կայսեր հավանությունը ստանալու նպատակով պատվիրակություն է ուղարկում Ս. Պետերբուրգ, սակայն ռուսական իշխանությունները նրան Վրաստանի քազավոր չեն ճանաչում (տե՛ս Н. Н. Дубровин, укр. соч. Դ. 3, Ը. 363):

# ԴԱՎԻԴ ՄԻՐԶԱՅԻ ՎԱԼԻՈՒԹՅԱՆ ՈՒ ԹԻՖԼԻՍՈՒՄ [ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ] ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՅՄԱՆ ՄԱՍԻՆ

Վրաստանի վաղի Գեորգիի մահվանից հետո նրա մյուս եղբայրները Քարթլիից<sup>294</sup> զորք հավաքած շարժվում են դեպի Թիֆլիս, որպեսզի իրենց ավագ եղբայր Յուլոն Միրզային դարձնեն [Վրաստանի] վաղի ու գլխավոր կառավարիչ: [Նուրաթ] գալիս, կանգ են առնում Թիֆլիսից վերև գտնվող Կելմեչուրա (Հալուխալա) գյուղում<sup>295</sup>: Ն. Գ. գեներալ Լազարեղ հաղթական զորքով նրանց դեմ է դուրս գալիս, զորքերը ցարցոցիվ անում՝ հալածելով մինչև Բաշաչոդ և վերադառնում: Դավիդ Միրզային հաստատում է վաղի պաշտոնում, որից հետո դրություները անփոփոխ է մնում մինչև զարուն...

(105թ) 1801/1217թ.<sup>296</sup> զարմանը, երբ Տիրոջ հրամանով ոսկեթագ արեգակը մտնում է ֆարվարդին ամսվա<sup>297</sup> մեջ հետևակազորի գեներալ Կնոքինզը, որը Կովկասյան Գծում<sup>298</sup> էր, Ն. Կ. Մ. հրամանով Թիֆլիս է ժամանում<sup>299</sup> և կազմում այնտեղի կառավարությունը: Ազնվականներից չորս հոգու հաստատում է մղիվանքեկների պաշտոնում<sup>300</sup>, որպեսզի զբաղվեն կառավարման խնդիրներով: Ամեն ինչ պետք է կատարվեր գեներալ Լազարևի վերահսկողության ներքո: Դրությունը մեկ տարի անփոփոխ է մնում: Դրանից հետո կառավարչապետ է նշանակվում Ն. Գ. իշխան Յիցիանովը, գալիս է Թիֆլիս և ամրապնդում նրանց բոլորի [ռուս պաշտոնյաների] դիրքերը:

<sup>294</sup> Պատմական Քարթլին սահմանակից էր չերքեզների երկրի, Իմերեթիայի, Թուրքիայի, Երևանի ու Գանձակի խանությունների հետ: Այն բաղկացած էր երեք մասերից՝ Չեմո-Ք (Վերին Քարթլի, որը ներառում էր Սամցխեն); Շիդա-Ք (Միջին Քարթլի, Կուրից հյուսիս ընկած տարածքը); Զվեմո-Ք (Կուրից հարավ ընկած տարածքը):

<sup>295</sup> Այս դեպքերի մասին մանրամասն տե՛ս (ԱԿԱԿ, տ. 1, ձ. 473, 474, 475, շ. 363-364; ձ. 484 շ. 373):

<sup>296</sup> 1217 թ. թ. համապատասխանում է 1802թ.:

<sup>297</sup> Իրանի արեգակնային օրացույցի առաջին ամիսը, որը համապատասխանում է մարտին:

<sup>298</sup> Կովկասյան Գիծ, այդպես է կոչվել Կուրանով, Մալկայով ու Թերեքով ձգվող կազակական ամրացված բնակավայրերով սահմանագիծը, որոնք զբաղեցնում էին ռուսները, (տե՛ս Энциклопедический словарь, под ред. К. К. Арсеньева, СПб. 1894, т. 13-а):

<sup>299</sup> Գեներալ Կնոքինզը Կովկասյան Գծից Թիֆլիս է գալիս 1801թ. մայիսին, (տե՛ս ԱԿԱԿ, տ. 1, ձ. 537, շ. 420):

<sup>300</sup> 1801թ. հունիսին կազմվում է վրացական կառավարությունը, որի մեջ մտնում էին 4 մղիվանքեկներ: Այդ կառավարությունը պետք է վերահսկեր երկրի եկամուտներն ու ծախսերը, (տե՛ս ԱԿԱԿ, տ. 1, ձ. 542, շ. 425):

## ԿՈՎԿԱՍՅԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԸ ՑԻՑԻԱՆՈՎԻ ԿԱՌԱՎԱՐՉԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Ն. Գ. զեմերալ-լեյտենանտ կառավարչապետ իշխան Ցիցիանովը, որը իրանում հայտնի էր Իշբախդար անունով, Կովկասի կառավարչապետ է նշանակվում 1803/1219թ.<sup>301</sup>: Նա մեր է մոծում նահանգային կառավարման համակարգը և հիմնում հինգ նահանգներ (գուբերնիա)՝ Ղզլարում, Մոզդուկում, Գեորգիևսկում, Ալեքսանդրովսկում ու Ստավրոպոլում<sup>302</sup>: Այդ նահանգներում նույնպես դատարաններ է բացում և ռուսական օրենքներին համապատասխան կարգուկանոն հաստատում: Վալիի որդիները, որոնք բոլորն էլ Վրաստանում էին գտնվում, նոր կարգերի հետ չեն հաշտվում: Չցանկանալով հրաժարվել հին կարգերից՝ սկսում են խռովարար մտքերով տարվել: Որքան էլ իշխան Ցիցիանովը բարյացակամորեն նրանց խրատում է, նրանք չեն լսում ու իրենց արատավոր մտքերից ետ չեն կանգնում: (106ա) Ի վերջո իշխանը տեսնելով որ ամեն-ինչ զուր է, բոլորին պարտադրում է Ռուսաստան հեռանալ<sup>303</sup>: Վալիի այրին՝ Դարեջանը, հրաժարվում է գնալ և այդ առթիվ մեծ աղմուկ է բարձրացնում: Իշխան Ցիցիանովը զեմերալ Լազարևին ուղարկում է, որ նրան խրատներով համոզի Ռուսաստան գնալ: Գեմերալը գնում, շատ խոսք ու լեզու է բափում, բայց ապարդյուն: Այդ կիմը զեմերալի միջնորդությունն ու խնդրանքը չի կատարում: Համառում է և, մոռանալով զեմերալ Լազարևի մատուցած այդքան ծառայությունները Վրաստանի ժողովրդին, թաքցրած դաշույնով զեմերալին վիրավորում է, որից էլ վերջինս մահանում է<sup>304</sup>: Իշխանը կարգադրում է նրան բռնությամբ Ռուսաստան տանել<sup>305</sup>: Դրանից հետո Վրաստանում վալիի ժառանգներից ոչ որ չի մնում, և այնտեղ դրությունը կայունանում է, և նրա բոլոր կողմերում հանգստություն է հաստատվում:

<sup>301</sup> 1219հ. թ. համապատասխանում է 1804թ.: Հետևակազորի զեմերալ իշխան Պ. Դ. Ցիցիանովը Վրաստանի կառավարչապետ է նշանակվում 1802թ. սեպտեմբերի 8-ին (տե՛ս ԱԿԱԿ, տ. 2, Труды 1868, д. 1, с. 3):

<sup>302</sup> Նշված նահանգների կենտրոններն էին Կովկասյան Գծի վրա հիմնված կազակների ամրացված բնակավայրերը, որոնցից Ղզլարը հիմնվել է 1736թ., Մոզդուկը՝ 1763թ., իսկ Ալեքսանդրովսկը, Գեորգիևսկը և Ստավրոպոլը՝ 1777թ. (ԱԿԱԿ, տ. 1, Карта Кавказа с показанием политического состояния до 1801 года):

<sup>303</sup> Արքայազներ Վախթանգն ու Դավիդը Պետերբուրգ են ուղարկվում 1803թ. փետրվարին, (տե՛ս ԱԿԱԿ, տ. 2, д. 112, с. 69):

<sup>304</sup> Գեմերալ-մայոր Լազարևը սպանվում է 1803թ. ապրիլի 19-ին, (տե՛ս ԱԿԱԿ, տ. 2, д. 196, с. 114):

<sup>305</sup> Դարիան Ռուսաստան է տարվում 1803թ. հոկտեմբերի 25-ին, (տե՛ս ԱԿԱԿ, տ. 2, д. 167, с. 102, 103):

## ԻՇԽԱՆ ՅԻՅԻԱՆՈՎԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ ՋԱՌ ՈՒ ԲԱՅԼԱ- ԿԱՆ ԵՎ ԼԵԶԳԻՆԵՐԻՆ ՊԱՏԺԵԼԸ<sup>306</sup>

Այդ շրջանում Ջառի ու Բայլականի լեզգիները իրենց հին սովորության համաձայն չէին դադարում Վրաստանի շրջանները կողոպտել, բնակիչներին գերեվարել և այլ վնասներ հասցնել: Նրանք չէին հանդարտվում ու վատ արարքներ գործելուց չէին հրաժարվում: Ն. Գ. իշխանը մի քանի անգամ խրատական ուղերձներ է հղում նրանց և մեծահոգաբար հասկացնում, որ. «Նախկինում *վալիի* ժամանակներն էին, իսկ այժմ՝ գերապատիվ կայսեր տիրապետության ժամանակաշրջանն է: Անվայել ու վնասակար արարքներից ձեռք քաշեք»:

(106թ) Բայց նրանք չեն խրատվում: Վերջիվերջո իշխանը որոշելով նրանց պատժել՝ մի փոքրարիվ զորագումը վերցրած, գնում է Դաղստանի կողմերը: Լեզգիներն այս լուրն առնելով՝ համախմբվում են ու զայիս, կանգ են առնում Ալազան (Ղանդը) գետի ափին: Նրանց նպատակն էր արգելել ռուսաց զորքի մուտքը Ջառի հողը: Սակայն ստահակների այն խումբը չգիտեր, որ փուշ ու տատակով կուրացնող կայծակի դեմ կովի չեն ելնում և երկնային աղետից մարդու պատրաստած զրաիը չի կարող պաշտպանել:

Երբ ռուսական զորքը հասնում է Ալազան գետին՝ որսի ետևից սուրացող բազիի պես կտրում-անցնում է գետի մյուս կողմը և հակառակորդի հրետանու թնդյունը ուրախ մեղեդի համարելով, այն աղմկոտ քանակը այնպես է ոչնչացնում, որ նրա հետքն իսկ չի մնում: Մինչև Բայլական [ռուսները] նրանց հետապնդում են: Նրանց ամուր ասպատարանը հանդիսացող Բայլականը, թաքալ գեղեցկուհու մազափնջերի պես քանդում են, ոմանց սպալականը, ոմանց էլ՝ գերեվարում: Երբ նրանց խստորեն պատժում են, գիշատիչների այդ խումբը այլևս չի համարձակվում թշնամական քայլեր ձեռնարկել, Վրաստանը ասպատակել, այնտեղից գերիներ ու ավար տանել: Ջառում կայազոր է բողմվում, որի հրամանատար է նշանակվում գեներալ-մայոր Գուլյակովը: [Յիցիանովը] նրան հանձնարարում է հսկել լեզգիներին և կանխել նրանց վնասակար գործողությունները, (107ա) հատկապես, Վրաստան ներխուժելու նրանց փորձերը: Մեկ տարի անց իշխանը [Յիցիանովը] այնտեղից վերադառնում է Վրաստան:

<sup>306</sup> Ռուսական զորքերի արշավանքը Ջառ տեղի է ունենում 1803թ. ապրիլին, (տե՛ս АКАК, т. 2, д. 1387, с. 685-686):

## ՌՈՒՍԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՀԱՐՁԱԿՈՒՄԸ ԳԱՆՁԱԿԻ ՎՐԱ ԵՎ ՆՐԱ ԳՐԱՎՈՒՄԸ

Իշխան Յիգիանովը Ջառի խոռվարարներին պատժելուց հետո Թիֆլիս գալով՝ նամակ է գրում Գանձակի Ջավադ խանին<sup>307</sup> և նրանից պահանջում առանց այլևայլության հպատակվել Ռուսաստանի հզոր տերությանը՝ հեռու մնալով նրա դեմ հակառակ գործողություններից: Ջավադ խանը կառավարչապետի մեծահոգի խրատները չի լսում և շարունակում է թշնամական դիրքերում մնալ: Այդ պատճառով ազնվագարն զորավարը *թավադներից*, դա՛գախ ու շամշադինլու<sup>308</sup> քաջ հեծյալներից կազմված մի ջոկատով ու ռուսական զորքով մտադրվում է Գանձակը գրավել, իսկ Ջավադ խանին՝ պատժել: 1803/1220թ.<sup>309</sup> մի պատկառելի զորախմբով շարժվում է դեպի Գանձակ: Երբ Ջավադ խանը լսում է իշխան Յիգիանովի Գանձակին մոտենալու մասին, իր իշխանավորներին ու ավագանուն խորհրդակցության է հրավիրում: Բոլորը, սկսած *ախունդից ու սեիդներից*, իրենց համաձայնությունն են տալիս [Յիգիանովին] դիմադրություն ցույց տալու հարցում՝ ասելով. «Ռուսաստանի բանակը ինչպե՞ս կարող է Գանձակի բերդը գրավել, երբ անգամ Նադիր շահը իր ողջ հզորությամբ հանդերձ չկարողացավ այն նվաճել»:

Երբ ռուսական զորքը հասնում է Գանձակի շրջակայքը, Ջավադ խանը, տեսնելով նրա զորքի փոքրաքանակ բազմությունը, իր բանակով կռվի է դուրս գալիս: Ղուլուդուքիի մոտակայքում զորքերը ընդհարվում են: Որոշ մարտերից հետո Ջավադ խանը փախուստի է դիմում և, ամրանալով Գանձակի միջնաբերդում, սկսում պաշտպանվել: Այնուհետև (107թ) ռուսական բանակը մտնելով քաղաք՝ միջնաբերդը չորս կողմից պաշարում է և ամեն կողմից փակում այնտեղ տանող ճանապարհները: [Շուտով ամրոցի] պաշարներից մնում են միայն հրազենի գնդակներն ու ծուխը: Պաշարումից մեկ ամիս անց քաղաքի բնակիչները ծանր վիճակում են հայտնվում: Գլխավոր հրամանատարը հարձակման է նախապատրաստվում և Ֆեբր տոնի<sup>310</sup> գիշերը ռուսաց բանակը ... գրոհի է անցնում և սկսում պարիսպներն ի վեր մագլցել: Հաղթական զորագնդերը երկու կողմից սկսում են պարիսպներն ի վեր մագլցել: Ջավադ խանը խիզախ հարվածներով պաշտպանվում էր,

<sup>307</sup> Յիգիանովի նամակները Ջավադ խանին, տե՛ս АКАК, т. 2, 1172, с. 588, д. 1175-1179, с. 590-591:

<sup>308</sup> Շամշադինլու ցեղը ղզրաշ ցեղերի քվին պատկանող զուլ'քադար ցեղի ճյուղերից է, (տե՛ս И. П. Петрушевский, ук. соч., с. 94):

<sup>309</sup> 1220 հ. թ. համապատասխանում է 1805թ., մինչդեռ պետք է լինի 1804թ. (տե՛ս АКАК, т. 2, д. 1182, с. 592):

<sup>310</sup> Ֆեբր - մահմեդական հավատի տոներից է, այդ օրը բացվում էր մահմեդականների պատը:

մինչև որ ռուս սպա Լիսաննիչի գնդակից սպանվում է<sup>311</sup>, որից հետո ամրոցը  
ևս գրավվում է<sup>312</sup>: Ջինվորները տարքեր կողմերից ամրոց են ներխուժում  
Ֆեթրի տոնը վերաժնում մահատակության սև զիշերվա: Ջորավարը տեղի  
բնակչությանը կոտորելու հրաման է տալիս: Երեք ժամ անդադար սրերը կո-  
տորում ու արյուն են հեղում, որից հետո զվսավոր հրամանատարը կարգադ-  
րում է դադարեցնել կոտորածը: Գերյալներին նրա [Յիցիանովի] մոտ են բե-  
րում: Ն. Գ. զվսավոր հրամանատարի հրամանով ամրոցի կին բնակիչներին  
հրապարակ են հանում, իսկ Ջավադ խանի ընտանիքի անդամներին ու ժա-  
ռանգներին տանում են մեծ մզկիթը և պահակազորի հսկողության տակ բող-  
նում: [Յիցիանովի] կազմակերպում է տեղական կառավարումը, նշանակում  
պարետ ու բաց անում դատարան: Գանձակի անունը ի պատիվ Ելիզավե-  
տա կայսրուհու վերանվանում է Ելիզավետալո: (108ա) Հիմնում է մահ պե-  
տական այլ հաստատություններ երկրորդական գործերը վարելու համար:  
Գանձակում կարգուկանոն հաստատելուց և բնակչությանը հանդարտեցնե-  
լուց հետո Ն. Գ. իշխան Յիցիանովը Վրաստան է վերադառնում...

### (108բ) ԻՇԽԱՆ ՅԻՅԻԱՆՈՎԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ ԵՐԵՎԱՆ<sup>313</sup>, ԿՈՒՎՆԵՐԸ ՂԱԼԱՇՆԵՐԻ ԲԱՆԱԿԻ ԴԵՄՈՒ ՉԵՌՆՈՒՆԱՅՆ ՎԵՐԱԴԱՐՁԸ

Ն. Գ. իշխան Յիցիանովը Գանձակից վերադառնում է Թիֆլիս: Այդ  
տարվա ձմեռը այնտեղ է անցկացնում և բանակը նոր արշավանքի մայսա-  
պատրաստում:

Երևանի կառավարիչ Մուխամադ խանը անընդհատ դիմումներ ու  
խնդրագրեր էր հղում կառավարչապետին և հավատացնում, որ Ն. Գ. [Յի-  
ցիանովի] այնտեղ գալուց պես բերդի բանալիները նրան կհանձնի ու հպա-  
տակություն կհայտնի<sup>314</sup>:

Թեև Մուխամադ խանը անկախ կառավարիչ էր, սակայն կառավարման  
կարևոր հարցերում խորհրդակցում էր այդ ժամանակ Երևանում գտնվող  
Նախիջևանի կառավարիչ Ջյալթալի խանի հետ: Վերջինս մույսալիս դիմում

<sup>311</sup> Ըստ ռուս պատմագիր Պոտտոյի՝ Գանձակի Ջավադ խանին սպանում է կա-  
պիտան Կոզլովսկին (Утверждение русского владычества на Кавказе, т. 1, Тифлис  
1901, с. 92):

<sup>312</sup> Գանձակի բերդը գրավում է 1804թ. հունվարի 3-ին, (տե՛ս АКАК, т. 2, д. 1182,  
с. 592):

<sup>313</sup> Ռուսական զորքերի արշավանքը Երևան տեղի է ունեցել 1804թ. հունիսի վեր-  
ջին, (այդ մասին տե՛ս АКАК, т. 2, д. 1232, с. 615):

<sup>314</sup> Երևանի Մուխամադ խանի մամակները իշխան Յիցիանովին, տե՛ս АКАК, т.  
2, д. 1227, 1235, 1241, 1243, с. 614, 616, 618, 619:

է հղում [Յիցիանովին] և հայտնում նրան իր հավատարմության ու հնազանդության մասին: Հավատալով նրանց խոսքերին իշխան Յիցիանովը 1804/1220թ.<sup>315</sup> գարնանը հաղթական զորքով շարժվում է դեպի Երևան ու իջևանում Էջմիածնի մոտակայքում: Իշխան Յիցիանովի քաջության համբավը տարածվում է ղզրաշների երկրի տարբեր կողմերում: Նրան անվանում էին «Իշթախդար», որը ինսպեկտոր քառի աղավաղված ձևն է:

Պարսկաստանի կողմից Իշթախդարի դեմ 170000 հոգանոց զորքով պատերազմելու է ուղարկվում [զորքի] գլխավոր հրամանատար նշանակված Ն. Գ. Բազաժառանգ Արաս Սիրզան, որը դեռևս մանկահասակ մի պատանի էր: Էջմիածնի (Ուլ Քիլիսայի) մոտակայքում հակառակորդները միմյանց են հանդիպում և մարտական շփոթների կանչով սկսում այնպիսի թեժ մի ճակատամատ, որպիսին մինչև այժմ ոչ ոք ոչ լսել էր, ոչ տեսել...<sup>316</sup>

(109թ) Քանի որ պատերազմի սկիզբն էր, և ղզրաշները ռուսներին կռվելիս դեռ չէին տեսել, դեռևս նրանցից երկուդ չէին կրում ու սաստիկ ուժգնությամբ էին կռվում: Պատվարժան խաներից ու անվանի երիտասարդներից շատերն են մարտի հրապարակ ելնում, ներխուժում զինվորների շարքերը ու թեն նրանցից շատերն են զոհվում, այդուհանդերձ մյուսները կռիվը չեն դադարեցնում:

Գլխավոր հրամանատարը այն օրը ռուսական բանակը երեք գնդի է բաժանում: Ղզրաշները այնպես խիզախորեն են նրանց վրա գրոհում և հանդուգն հարվածներ հասցնում, որ այն փոթորկափուլյա հրապարակում բարձրացած փոշուց ու հրազենի ծխից պայծառ երկինքը մթագնում է: Ռուսական բանակի մարտիկները միմյանց չտեսնելով՝ կարծում են, թե իրենք մենակ են մնացել: Իսկ ինքը՝ Ն. Գ. գլխավոր հրամանատարը, ինչպես մի ամեհի վագր այս ու այն կողմ էր նետվում և իր մարտիկներին ոգևորում: Երբ երկինքը պարզվում է, ու օդը մաքրվում, ռուսները տեսնում են, որ իրենք բոլորը ողջառողջ են: Ղզրաշներն էլ նկատում են, որ բոլոր սպանվածները իրենցից են, (110ա) և դաշտի բուսականությունը իրենց արյունով կարմիր է ներկվել: Այդ պատճառով [ղզրաշները] խուճապի են մատնվում և փախուստի դիմում, որից հետո այլևս Երևանին չեն մոտենում: Նրա վերևով անցնում են ու կանգ առնում Քանաքեռ [Քեթիաքեռ] կոչված անառիկ վայրում:

Իշխան Յիցիանովը նույն տեղում երկու օր մնալուց ու զորքին հանգիստ տալուց հետո զորքն ու թնդանոթներն առած գնում է նրանց հետապնդելու: Երեկոյան կողմ մոտենում են [ղզրաշների] զորակայանին: Ղզրաշները նրանց ընդառաջ են ելնում, որպեսզի խոչընդոտեն նրանց առաջխաղացումը դեպի իրենց ճամբար: Իրենց զորքն ու թնդանոթները դասավորում են ճանա-

<sup>315</sup> 1220 հ. թ. համապատասխանում է 1805թ.:

<sup>316</sup> Էջմիածնի ճակատամարտը տեղի է ունեցել 1804թ. հունիսի 21-ին, (տե՛ս AKAK, տ. 2, ձ. 1668, շ. 809):

պարհի երկու կողմերում և կրկին սկսում մի այնպիսի բեժ մարտ<sup>317</sup>, որի առաջ մախորդը խաղ է բվում: Չկարողանալով հաղթել, այնուամենայնիվ, նորից ջախջախվում են: Թողնելով իրենց վրանները, գույքն ու գումակը՝ փախչում են Իրան...

Ռուսները տեղ են դառնում նրանց ողջ ունեցվածքին և հարստություններին: Աբաս Միրզայի զորքի փախուստից հետո գլխավոր հրամանատարը այնտեղից գալիս է, Երևանը պաշարում<sup>318</sup>, մինչև որ Իրանից մեծ բանակով Երևանին օգնության է գալիս Ֆաթհալի շահը: Արքայորդի Աբասին ուղարկելուց հետո Ֆաթհալի շահը, մի անոնի զորք ժողոված, գնում է որդուն օգնության: (110) Ճանապարհին լսում է նրա պարտության մասին և մեծ արագությամբ գալիս Դավալու վայրը<sup>319</sup>, որտեղ հոր ու որդու [շահի ու թագաժառանգի զորքերը] միանում են ու միասին մտնում Երևան քաղաքը: Երրորդ անգամ ռուսների դեմ անեղ մարտի են ելնում և նորից, չկարողանալով հաղթել, ձեռնումայն ու հուսալքված, գալիս, կանգ են առնում Երևանի շրջակայքում և բոլոր կողմերից փակում ռուսներին պարեն հասցնողների ճանապարհները:

Իշխան Յիգիանովը զբաղեցնում է Երևան քաղաքի շրջակա բոլոր այգիներն ու արվարձանները: Ղզրաշների ձեռքում են մնում միայն քաղաքի չորս պատերը: Ռուսական բանակը պաշարում է Երևան քաղաքը: Ղզրաշների բանակն էլ շրջապատում է ռուսաց զորքը և միանգամից այնպես փակում հաղորդակցության ճանապարհները, որ իշխան Յիգիանովի հետ եկած վրաց իշխանների մի մասը փախուստի ժամանակ գերի է ընկնում<sup>320</sup>:

Այնտեղից Ֆաթհալի շահը զորավար Փիր Ղուլի խան Ղաջարին Վրաստանի արքայորդի Ալեքսանդր Միրզայի հետ ուղարկում է Թիֆլիսի կողմերը: Ղազախ, բորչալու ցեղերը, բացառությամբ Նասիր բեկի [հայատակներից], ռուսաց պետությանը դավաճանելով՝ խռովություն են բարձրացնում<sup>321</sup>: Վերջինս իր նվիրվածությունը [Ռուսաստանի] պետության նկատմամբ ապացուցել էր դեռ Գանձակի կռվում, որտեղ նրան մեծ ծառայություններ էր մատուցել: Նրա մոտ էր գտնվում մահ մայրը Լիսանեիչը: [Ալեքսանդր Միրզա] ար-

<sup>317</sup> Քանաքեռի ճակատամարտը տեղի է ունեցել 1804թ. հունիսի 30-ին, (տե՛ս AKAK, տ. 2, ձ. 1668, շ. 809):

<sup>318</sup> Երևանի պաշարումը Յիգիանովի զորքի կողմից սկսվում է 1804թ. հուլիսի 2-ին, (տե՛ս AKAK, տ. 2, ձ. 1668, շ. 810):

<sup>319</sup> Դավալու քնակավայրը գտնվում էր Երևանից 30 մղոն հեռավորության վրա, (տե՛ս Travels in Georgia, Persia, Armenia, Ancient Babylonia etc. during the years 1817, 1818, 1819 and 1820, by Sir Ker Porter, London 1821, vol. 1, p. 207):

<sup>320</sup> Վրաց իշխանները գերվում են 1804թ. օգոստոսի 7-ին, (տե՛ս AKAK, տ. 2, ձ. 1672, շ. 811, ձ. 1678, շ. 813):

<sup>321</sup> Վրաստանին հայատակ ցեղերի ապստամբության մասին տե՛ս AKAK, տ. 2, ձ. 1689, շ. 821:



քայրդդուն են միանում ու ապստամբում Համադանլու (ցեղը), Թիֆլիս քաղաքն ու նրա շրջակա բոլոր գյուղերը, անգամ Բաշադղ փախած արքայորդիները: Ղարաքիլիսայի մոտ (նրանք) շրջապատում են ռուս զինվորների (111ա) և տեղի բնակիչների մի խումբ: Որոշ ժամանակ անց, չկարողանալով նրանց հաղթել, հեռանում են:

Երբ բանակում պարենի պաշարները սկսում են սպառվել, իշխան Յիցիանովը շտապ Վրաստանի կողմերն է ուղարկում մայոր Մոնտրեզորին (Ղանդավարով), որը հայտնի էր Ղարա մայոր<sup>322</sup> անվամբ 150 ռուս զինվորների, Մելիք Աբովի որդի Ռոստոմ բեկի ու նրա հպատակների հետ<sup>323</sup>:

Այս մասին տեղեկանալով՝ ղզլաշների զորքը նրանց հետապնդելու համար մի զորագունդ են ուղարկում: Երեք օր շարունակվում են մարտերը [ղզլաշների ու Մոնտրեզորի զորագնդերի միջև]: Փամբակ հասնելով՝ [ղզլաշները] իմաց են տալիս Ղարաքիլիսան պաշարման մեջ պահող Փիր Ղուլի խան *սարդարին* ու [վրաց] արքայորդիներին, թե՝ «Երեք օր է, ինչ նրանց՝ ռուսների՝ դեմ մարտեր ենք մղում, թե՛ մենք և թե՛ իրենք արդեն ուժասպառ ենք եղել»:

Փիր Ղուլի խանը արքայորդիների հետ նրանց օգնության է հասնում: Լուսաբացից մինչև մայրամուտ կռիվ են տալիս: Երկու կողմերն էլ մեծ կորուստներ են ունենում, մինչև որ մայորը վիրավորվում է, որից հետո մարտը բուլանում է: Երեք տեղից վիրավորված մայորը մահանում է: Նրա ջոկատը պարտվում է, իսկ զինվորները ցարուցրիվ են լինում: Հայերը փախչում, ամրանում են մոտակայքում գտնվող մի քարայրում, սակայն վերջիվերջո բոլորը գերի են ընկնում: Այնտեղից վերադառնալով՝ [ղզլաշները] վերսկսում են Ղարաքիլիսայի պաշարումը:

Նահանգապետը Թիֆլիսից գլխավոր հրամանատարի զորքին սննդամթերքի մի մեծ պաշար է ուղարկում 200 սայլերով փոքրաթիվ զինվորների ուղեկցությամբ: Ուլու *յալադին* հասնելուն պես այնտեղ բնակվող ցեղերը, փակելով նրանց ճանապարհը, ցանկանում են կողոպտել նրանց: Այլ ելք չգտնելով՝ զինվորները սայլերից իրենց համար ամրություն են հարմարեցնում և սկսում պաշտպանվել: Նրանք [ցեղերը] որքան էլ ջանում են, չեն կարողանում այն գրավել: Այս մասին տեղեկացնում են Փիր Ղուլի խան սարդարին: Վերջինս արշավում է նրանց մոտ: (111բ) Սակայն չնայած գործադրված ջանքերին մա ևս չի կարողանում այդ ամրությունները գրավել:

<sup>322</sup> «Ղարա մայոր»-բուրբերեն- «սև մայոր»:

<sup>323</sup> Մայոր Մոնտրեզորի ջոկատի մասին (տե՛ս АКАК, т. 3, д. 1, с. 5; Присоединение Восточной Армении к России, Сборник документов, т. 1, Ереван 1972, д. 195, с. 254; В. А. Потто, Кавказская война в отдельных очерках, биографиях и легендах, т. 1, вып. 3, СПб. 1887, с. 375-376):

Չեղծումայն ու հուսահատ ետ է դառնում դեպի Գեղամա (Աղլաղամ) լեռների ստորոտը:

Երբ այս լուրը հասնում է Թիֆլիս, գլխավոր հրամանատարին պարենամքերը հասցնելու նպատակով նահանգապետը այնտեղ է ուղարկում մի զենքերալի 300 զինվորների մի խմբով ու չորս թնդանոթներով: Երբ վերոհիշյալ զենքերալը իր խմբով միանում է պաշտպանվողների ջոկատին, այլևս ոչ ոք չի համարձակվում նրանց ճանապարհը փակել: Փիր Ղուլի խանը ևս հեռանում է, և պարենամքերը անվնաս Ղարաքիլիսա է հասցվում: Իշխան Յիգիանովը տեսնելով, որ պարենը տեղ է հասել, իսկ Երևանը գրավել չի հաջողվում, և բանակում համաճարակ է սկսվել, որոշում է հեռանալ: Գալիս է Ղարաքիլիսա և պարենը բաժանում բանակին:

Փիր Ղուլի սարդարը և արքայորդիները հուսահատված ետ են դառնում: Վրաստանի բորչալու և մյուս ցեղերը, որոնք ռուսաց պետությանը դավաճանել էին, (պատժից) վախենալով, ցանկանում են իրենց հայրենիքից հեռանալ Ղարաբաղ: Մայր Լիսանկիչը այս մասին լռելիքանալով՝ Նասիբ բեկի հետ սկսում է նրանց խրատել ու հանգստացնել: Գլխավոր հրամանատարը մտնելով Վրաստան՝ Մաղաղլու<sup>324</sup> գյուղում իր մոտ է կանչում վերոհիշյալ ցեղերի ազագներին: Դառն ու կուպիտ հանդիմանանքներով կշտամբում է նրանց և հարցնում, թե արդյոք ի՞նչն էր հզոր պետության դեմ նրանց ընդդիմանալու պատճառը: (112ա) Բոլորը լուռ են մնում և ընդունելով իրենց սխալը՝ ներում խնդրում: Ն. Գ. իշխան Յիգիանովն էլ մեծահոգաբար ասում է. «Քանի որ ձեր արարքների պատճառը ձեր կարճամտությունն էր, ներում եմ ձեր դավաճանությունը, սակայն պետք է Վրաստանից տարված ամբողջ ավարն ու կողոպուտը վերադարձնեք իրենց տերերին»:

Այնտեղից (Յիգիանովը) գնում է Թիֆլիս, հանդարտեցնում և հնազանդեցնում լեռնաբնակ ու այլ ցեղերի մի մասին: Չմեռն այնտեղ է անցկացնում, իսկ զարմանք՝ նախապատրաստվում գնալ Գանձակի կողմերը:

## ԻՇԽԱՆ ՅԻՑԻԱՆՈՎԻ ԺԱՄԱՆՈՒՄԸ ԳԱՆԶԱԿ, ԻԲՐԱՀԻՄ ՈՒ ՍԵԼԻՄ ԽԱՆԵՐԻ ՀԵՏ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿՆՔՈՒՄԸ, ՂԱՐԱԲԱՂԻ ՈՒ ՆՈՒՆԻԻ ՀՊԱՏԱԿԵՑՈՒՄԸ ՈՌԻՍԱՍՏԱՆԻՆ

Երևանից վերադառնալուց հետո 1806/1221թ. Ն. Գ. իշխան Յիգիանովը գնում է Գանձակ: Այնտեղ կանգ է առնում և մարդ ուղարկելով՝ Ղարաբաղի

<sup>324</sup> Մաղախլու (կամ Մաղաղլու) բնակավայրը, որ XIX դարում ուներ 3000 հայ բնակիչ, գտնվում է Խրամի վտակ Մաշավերիի աջ ափին (Сборник материалов для описания Тифлисской губернии, с. 157):

Իբրահիմ ու Նուխիի Սելիմ խաների մոտ, նրանցից պահանջում է հպատակվել Ռուսաստանի հզոր պետությանը: Վերոհիշյալ խաները հնազանդվում են գլխավոր հրամանատարի պահանջին: Իբրահիմ խանը՝ Ղարաբաղից<sup>325</sup>, Սելիմ խանը՝ Շաքիից<sup>326</sup> ու իշխան Յիցիանովը Գանձակից գալիս են Ջյուրակ գետի ափը, այնտեղ միմյանց հետ տեսակցում, զրուցում ու պայմանագիր են կնքում: Դրանից հետո Ն. Գ. գլխավոր հրամանատարը մայրոք Լիսանսիչին 500 զինվորների հետ ուղարկում է Ղարաբաղ: Նույնքան զինվորներ է ուղարկում նաև Նուխի (112թ) և այնտեղից գնում Վրաստան՝ կարգավորելու ու կազմակերպելու Բաշաչոդի ու հարևան շրջանների կառավարումը:

## ԻԲՐԱՀԻՄ ԽԱՆԻ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ջանի որ Ֆաթիալի շահը Իբրահիմ խանի հետ ազգակցական կապեր ուներ, հույս ուներ, որ Ղարաբաղը իրեն կհպատակվի: Երբ լսում է, որ Իբրահիմ խանը Ռուսաստանի պետության հպատակն է դարձել, զորք է ուղարկում Ղարաբաղ: Նրա բանակն անցնելով Խոդա-Աֆերիինի կամուրջը, սկսում է ասպատակել Ղարաբաղի շրջաններն ու կոիվներ մղել: Իբրահիմ խանի որդի Աբուլ-Ֆաթի խանը մեծ բազմությամբ հարձակվում է Տոդ գյուղի<sup>327</sup> վրա, որտեղ ամրացել էին գյուղի ու նրա շրջակայքի հայերը և ինքնապաշտպանական մարտեր էին մղում: [Աբուլ-Ֆաթի] ուժգին գրոհ է ձեռնարկում, բայց ոչ մի արդյունքի չի հասնում: Մեհդի Դուլի խանը իր զորքով ու բազմությամբ այն կողմերն է գալիս և Աբուլ Ֆաթի խանին պարտության մատնում:

Ջանի որ Իբրահիմ խանը շատ ծեր էր, հաճախ նրա գլխում խելահեղ մտքեր էին ծագում: Այս ընթացքում իր մի քանի մերձավորների հետ գաղտնի որոշում է ղզլբաշների պետությանը հպատակություն հայտնել: Շուշի բերդից դուրս գալով՝ նրա ստորոտում գտնվող Սանգյար-խան կոչված վայրում խփում է իր վրանը, որպեսզի ղզլբաշների բանակի ժամանելուն պես նրանց միանա, ռուսական պետությանը դավաճանի և այդ կերպ դառնա [շահի] օրինավոր հպատակը: Ժողովրդի մեջ նաև լուրեր էին պտտվում, քե իբր Աբուլ-Ֆաթի խանը ղզլբաշ զորքով մույմախ Իբրահիմ խանի հրավերով էր Ղարաբաղ եկել:

<sup>325</sup> Իշխան Յիցիանովի ու Ղարաբաղի Իբրահիմ խանի հանդիպումը և պայմանագրի կնքումը տեղի է ունենում 1805թ. մայիսի 14-ին, (տե՛ս AKAK, տ. 2, ձ. 1436, 1437, Ը. 705):

<sup>326</sup> Շաքիի Սելիմ խանի հետ պայմանագիրը կնքվում է 1805թ. մայիսի 21-ին, (տե՛ս AKAK, տ. 2, ձ. 1437, Ը. 705):

<sup>327</sup> Տոդ անունով ավանը և բերդը գտնվում են Ղարաբաղի Դիզակ գավառում:

Այս պատճառով մայրոք Լիսանկիչը, որը հայտնի էր «դելու-մայոր»<sup>328</sup> անվամբ, 1806/1221թ. մայիսի 8-ի գիշերը 100 զինվորներով բերդից դուրս գալով (113ա) [Իբրահիմ խանի] վրանը չորս կողմից շրջապատում են ու նրան՝ իր մերձավորների հետ, տեղում կոտորելով՝ ամբողջ վերադառնում<sup>329</sup>:

Դրանից հետո Ռուսաստանի կառավարության հրամանով հոր փոխարեն խան է նշանակվում Մեհդի Ղուլի Աղան: Նրան է հանձնվում Ղարաբաղի ու նրա ժողովրդի կառավարումը, արդարադատության կազմակերպումը Ռուսաստանի օրենքներին համապատասխան:

Իբրահիմ խանը Ղարաբաղում իշխել է 52 տարի՝ 44 տարի մինչև Բալա-կան գնալը, 8 տարի էլ՝ այնտեղից գալուց հետո...<sup>330</sup>

Նա սաստիկ կնամուղ էր և մշտապես խթանիչ դեղեր էր գործածում, որպեսզի կարողանա կանանց հետ շատ հարաբերվել...<sup>331</sup>

## ՂԱԼԱՄԱՆԵՐԻ ԶՈՐՔԻ ՆԵՐՆՈՒԺՈՒՄԸ ՂԱՐԱԲԱՂ: ԳՆԴԱՊԵՏ ԿԱՐՅԱԳԻՆԻ ՄԱՐՏԵՐԸ

Այս ընթացքում ղզլաշները կարծելով, թե Ղարաբաղը Իբրահիմ խանն է պաշտպանում, և այժմ, երբ նա սպանված է, կարող են գնալ, այն գրավել, այն դարձնում են իրեն հավակնությունների առարկան: 1806/1221թ. Արաս Միրզան անթիվ-անհամար զորք ու բազմությամբ հարձակվում է Ղարաբաղի վրա: Միաժամանակ Թիֆլիսից Ղարաբաղ է (113բ) ուղարկվում գնդապետ Կարյագինը 400 զինվորներով<sup>332</sup>: Ասկերանի մոտակայքում նա թե՛ մարտեր է մղում ղզլաշների զորքի դեմ, սակայն նրանց բանակի ահռելի բազմությունը թույլ չի տալիս [Կարյագինի ջոկատին] առաջ ընթանալ: Այնտեղից վերջինս ետ է դառնում, գնում դեպի Թառնակյոտ ամրոցը:

<sup>328</sup> «Նելու մայոր», բուրքներեն-«խելագար մայոր»:

<sup>329</sup> Իբրահիմ խանի սպանության մասին տե՛ս AKAK, Դ. 3, և. 610, և. 334-335:

<sup>330</sup> Իբրահիմ խանի իշխանության տարիները սխալ են նշված: Նա իշխել է 1762-1806թթ., ապա նշանակվում է նրա իշխանության տարիները 44-ն են եղել:

<sup>331</sup> Իբրահիմ խանի օրինական կանայք էին 1) Ջևանշիրի միսրաշու դուստր Խանումը, 2) Գանձակի Շահվերդի խանի դուստր Խուրշիդ Բեգումը, 3) Լեզգի Նում-ցալ խանի դուստր Բիքե Աղան, 4) Ալլահյար Բեկ Ումուտլուի դուստրը, 5) իշխան Եվգ. Արաշիձեի դուստր Ջավահիր Խանումը, 6) Բաղիր խան Շահսևանի դուստր Շահ-Նիսա Խանումը, իսկ ժամանակավոր կանայք՝ 7) հայտնի Ռուդանը, 8) Դի-գակի մելիքի դուստր Խաթան-Խանումը, 9) Անա Խանումը, 10) Սոնա Խանումը, 11) Հադիջե Խանումը (AKAK, Դ. 2, և. 1415, և. 625):

<sup>332</sup> Ղարաբաղը ներխուժած Արաս Միրզայի զորքի դեմ Կարյագինի ռուսական ջոկատի մղած կռիվները տեղի են ունենում 1805թ. հունիսին (տե՛ս В. А. Потто, укр. соч., Դ. 1, Կн. 3, և. 370-390):

Արաս Միրզան մախօրոք իր զորքից մի ջոկատ էր ուղարկել Ամիր խան րեկ Ջահանբեգլուի գլխավորությամբ՝ այդ ամրոցը պաշտպանելու և թույլ չտալու ռուսներին այնտեղ մտնել:

Երբ գնդապետը իր զինվորներով կռվելով հասնում է Թառնակյուտ ամրոցին, դարպասները փակ է գտնում: Թնդանորներով [դարպասները] գնդակոծում, ջարդուփշուր է անում և զինվորների հետ ամրոց մտնում: Այնտեղի ղզբաշներին կոտորում են, իսկ նրանց հրամանատար Ամիր խան րեկը վախից իրեն պարսպից ցած է նետում և սպանվում: Ռուսները մի քանի օր այնտեղ են մնում, իսկ ղզբաշների բանակը նորից նրանց պաշարում է: Քանի որ ռուսների պարենի պաշարները սպառվում են, Ջրաբերդի Մելիք Վանի Աբաբեկովը մի քանի անգամ զիշերով նրանց հաց ու այլ մթերքներ է հասցնում: Բայց ի վերջո հասկանում են, որ զինվորների համար այդ կերպ հաց հասցնելը դժվար է: Գնդապետը իր [ողջ] մնացած 100 զինվորների հետ զիշերով այնտեղից դուրս է գալիս ու լեռնային ճանապարհով գնում Ջերմուկ քերդը: Այնտեղ հայերից հաց ու պարեն ստանալով՝ հեռանում են Գանձակ, այնտեղից էլ՝ Թիֆլիս: Բայց [Կարյազիներ] կրկին զորք վերցրած գալիս է, Ջազամ գետի մոտ կռվում Արաս Միրզայի դեմ ու նրան ջախջախելով՝ փախուստի մատնում մինչև Իրան<sup>333</sup>:

(114ա) Քանի որ այդ ժամանակ Ֆաթիալի շահը մեծ բանակով Արաքսի ափին էր գտնվում, իշխան Յիցիանովը նույն տարվա օգոստոսին իր զորքով պատերազմի է ելնում նրա դեմ և պարտության մատնելով՝ հեռացնում մինչև Արաղ ու Ատրպատական<sup>334</sup>: Դրանից հետո նորից Վրաստան է վերադառնում:

## ԻՇԽԱՆ ՅԻՅԻԱՆՈՎԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ ԲԱՔՈՒ և ՆՐԱ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ռուսաստանի պետության ղեկավարների ու իշխան Յիցիանովի գլխավոր նպատակը Կասպից ու Սև ծովերի առափնյա շրջանների ու նրանց միջև ընկած ողջ տարածքի գրավումն էր, որպեսզի այնտեղ մարդկանց երթևեկությունն ու առևտուրը հեշտությամբ կատարվեր: Ուստի Ն. Գ. իշխանը ռազմական նպատակներով Սև ծովի ափին կառուցում է Ռեդուտ-Կալե

<sup>333</sup> AKAK, т. 2, д. 1467, с. 717.

<sup>334</sup> Իշխան Յիցիանովի Ղարաբաղ մտնելուց հետո պարսկական զորքերը առանց որևէ ընդհարման մահանջում են Ատրպատական (AKAK, т. 2, д. 1462, с. 715; д. 1464, с. 716):

(Կուլեվի) ամրոցը<sup>335</sup>, որից հետո մտադրվում է գրավել Բաքուն, որպեսզի ապահովի թե՛ իր և թե՛ ժողովրդի հանգիստը: *Դառ-ալ-սորուր* [Թիֆլիս] վերադառնալուց հետո սկսում է զորքը կարգի բերել ու արշավանքի նախապատրաստվել:

1806/1221թ. փետրվար ամսին հաղթական զորագնդերով շարժվում է դեպի Բաքու: Ղարաբաղի կառավարիչ Սեհդի Ղուլի խանը ճանապարհին նրան է միանում՝ օժանդակելու նպատակով: Սակայն Շիրվանի Մուսթուֆի խանը հրաժարվում է մեծ տերությանը հպատակվել ու խռովություն է բարձրացնում: Ն. Գ. գլխավոր հրամանատարը նախ և առաջ անհրաժեշտ է համարում նրան պատժել և իր ուղղությունը փոխում է դեպի Շամախի: Մուսթուֆի խանը այս լսելով՝ սարսափած փախչում է և իր ցեղերով ամրանում Ֆիր լեռան վրա: Գլխավոր հրամանատարի ժամանելուց հետո նրանց միջև հաշտության բանակցություններ են սկսվում և պայմանագիր է կնքվում<sup>336</sup>, (114թ) որով բարեհաջող կերպով լուծվում են այնտեղի խնդիրները:

Այդ ընթացքում գլխավոր հրամանատարը մի քանի անգամ միայն մեկ հեծյալի ուղեկցությամբ գնում է Մուսթուֆի խանի մոտ: Վերջինս բարեկամաբար Ն. Գ. գլխավոր հրամանատարին զգուշացնում է, որ այդպես անփույթ չլինի, որովհետև այդպես մենակ չրջելիս մի օր էլ նրան փորձանք կպատահի:

Գլխավոր հրամանատարը պատասխանում է. «Պայծառափայլ կայսրը ինձ նման միլիոնավոր զինվորներ ունի, եթե զոհվեմ, նրանցից միայն մեկը կպակասի: Ի՞նչ տարբերություն, ես կզոհվեմ, թե զինվորներից որևէ մեկը»:

Ն. Գ. գլխավոր հրամանատարը այնտեղի գործերն ավարտելով՝ գնում է Բաքու: Այդ քաղաքը շրջապատում է ծովի ու ցամաքի հարթավայրային կողմից<sup>337</sup>: Որոշ ժամանակ անց Բաքվի կառավարիչ Հուսեյն Ղուլի խանը հաշտություն կնքելու և Ռուսաստանի մեծ պետությանը հպատակվելու ցանկություն է հայտնում: Գլխավոր հրամանատարն էլ նրա խոսքերով խաբված՝ բարեկամական հարաբերություններ է հաստատում նրա հետ: Հուսեյն Ղուլի խանը դուրս գալով ամրոցից՝ կանգ է առնում նրա մոտակայքում գտնվող մի վայրում և վրան խփում: Գլխավոր հրամանատարին նամակ է գրում, թե մի քանի հարցեր քննարկելու համար անհրաժեշտ է, որ նա [Ֆիցիանովը] այցելի իրեն: Ն. Գ. գլխավոր հրամանատարը՝ պարզասիրտ ու ազնիվ մի մարդ, անփույթ լինելով իր կյանքի նկատմամբ, չի կռահում [Հու-

<sup>335</sup> Ռեզուտ-կալե ամրոցը գտնվում է Խովիս-ցխալի գետաբերանի մոտ, Մենգրելիայում:

<sup>336</sup> Շիրվանի Մուսթուֆի խանը Ֆիցիանովին հպատակություն է հայտնում և նրա հետ պայմանագիր կնքում 1805թ. դեկտեմբերի 25-ին (տե՛ս AKAK, տ. 2, ք. 1365, ց. 673):

<sup>337</sup> Ֆիցիանովի գլխավորած ռուսական զորքերի կողմից Բաքվի պաշարման մասին տե՛ս AKAK, տ. 2, ք. 1521, ց. 745:

սեյն խանի] ետին մտքերը: Գնում է Հուսեյն Ղուլիի վրանը, այնտեղ նստում ու սկսում զրուցել նրա հետ: Հուսեյն Ղուլի խանն էլ, ամրոցի բանալիները արծաթյա սկուտեղի վրա, դնում է գլխավոր հրամանատարի առաջ: Չրույցի ընթացքում վերոհիշյալ խանի ազգականներից Իբրահիմ բեկ անունով մեկը, որին զադտնի հրաման էր տրված, (115ա) տմարդաբար հրազենով վիրավորում է այն բարձրաստիճան զորավարին, և նա նույնժամ վախճանվում է...<sup>338</sup>

Իշխան Յիցիանովը իր քաջությամբ, բանիմացությամբ ու հաջողակությամբ անգերազանցելի մի կառավարչապետ էր: Ասում են, որ լինելով շատ եռանդուն ու արդյար, նա առանց նախօրոք խրատելու երբեք ոչ որի չէր պատժում...

Հուսեյն Ղուլի խանը գլխավոր հրամանատարի գլուխը մի սուրհանդակի ու վերոհիշյալ Իբրահիմ բեկի հետ ուղարկում է ղզրաշների երկիրը՝ համարելով, որ իր այդ քայլով Իրանին մի փառահեղ ծառայություն է մատուցում: Ղզրաշների երկրից անքիվ-պնհամար բազմությամբ մի ահռելի բանակ է լցվում Բաքվի հարթավայրը, որը այնտեղ սփռված վարդազույն վրանների առատությունից, Ահեղ Դատաստանի վայրին է նմանվում<sup>339</sup>:

Այդ դեպքերից հետո ռուսական բանակը զգուշանալով ցամաքային ճանապարհներից՝ նավերով հեռանում է դեպի Աստրախանի կողմերը: Այնուհետև կովկասյան շրջաններում վերահաստատվում են իրանական օրենքները և ստեղծում մի խառնաշփոթ իրավիճակ: Ամենուրեք խռովություններ ու հուզումներ են ծագում:

Ն. Գ. գեներալ-մայոր Նեսվետսկը, որը [ռուսական բանակի] հրամանատարներից էր և գտնվում էր Շաքիում, ժամանակավորապես իր վրա է վերցնում կառավարչապետի պարտականությունները, մինչև որ հինգ ամիս անց Թիֆլիս է գալիս կառավարչապետ (115բ) կոմս Գուդովիչը:

## ԿՈՎԿԱՍՅԱՆ ՏԱՐԱԾԱՐՋԱՆՈՒՄ ՀԵՏԵՎԱԿԱԶՈՐԻ ԳԵՆԵՐԱԼ ԿՈՄՍ ԳՈՒԴՈՎԻՉԻ ԿԱՌԱՎԱՐՉԱ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՐՋԱՆԻ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1806/1222թ.<sup>340</sup> հունիսին հետևակազորի գեներալ Ն. Գ. կոմս Գուդովիչը վրաստանի կառավարչապետ է նշանակվում<sup>341</sup>, իսկ հետևակազորի գեներ-

<sup>338</sup> Յիցիանովը սպանվում է 1806թ. փետրվարի 8-ին (տե՛ս Утверждение русского владычества на Кавказе, т. 1, Тифлис 1901, с. 230-231):

<sup>339</sup> Մահմեդական հավատի համաձայն Ահեղ Դատաստանի օրը հողը կարմրելու է շիկացած երկաթի պես:

<sup>340</sup> 1220 հ.թ. համապատասխանում է 1805թ.:

րալ Բուլգակովը՝ կովկասյան տարածքների զորահրամանատար։ Կոմսը Թիֆլիս մտնելուն պես պատերազմ է սկսում Օսմանյան Թուրքիայի սուլթանի դեմ և վայելուչ պատրաստություններով ու մեծ զորքով շարժվում դեպի Ախալքալաք։ Գեներալ Բուլգակովը ուղարկվում է հարավային Դաղստան։ Նա շարժվելով դեպի Բաքու (Բաղդուրե) ու Ղուրա<sup>342</sup> գրավում է այդ երկրները<sup>343</sup>։ Գեներալ-մայոր Գլազենապը նվաճում է Դերքենդը և զորքը վերցրած գնում Կարաբդիա<sup>344</sup>։ Կոիվներ է մղում ու հաղթանակ տանելով՝ այնտեղի ողջ բնակչությանը հնազանդեցնում է։ Գեներալ Նեսվետանն ուղարկվում է Գյումրիի կողմերը։ Ախալցխայի կառավարիչ Հումշի-գադե Մելիմ փաշան այս մասին իմանալով, սաստիկ ահաբեկված, զորք է ուղարկում Ախալքալաքը պաշտպանելու ու ռուսաց բանակին դիմադրելու։

Ն. Գ. Կոմսը իր քաջ մարտիկների հետ, ոչ մի տեղ կանգ չառնելով, առաջ է ընթանում և ամալա վերջին հասնում Ախալքալաք։ Նրա շրջակա ողջ տարածքը ծածկում է իր հաղթական բանակի վրաններով և չորս կողմից առնում այն պաշարման օղակի մեջ։ Սկսում են սանդուղքներ պատրաստել և մեկ շաբաթ անց արշավույսից երկու ժամ առաջ գրոհում քաղաքը։ Մարտը շարունակվում է մինչև կեսօր, սակայն [ռուսները] ցանկալի հաղթանակին չեն հասնում<sup>345</sup>։ Մեկ շաբաթ այնտեղ մնալուց հետո Վրաստան են (116ս) վերադառնում։

Երբ Կոմսը Թիֆլիս է մտնում, լսում է, որ Յուսուֆ փաշան, զորքի հրամանատար դառնալով, եկել է Կարս՝ պատերազմելու։ Ուստի 1807/1223թ.<sup>346</sup> հունիսի 18-ին մարտի նախապատրաստվելով՝ շարժվում է դեպի Գյումրի։ Արփա-չայի ափին, Գյումրիի մոտ, որն այժմ Ալեքսանդրապոլ է կոչվում, երկու բանակները հանդիպում են։ Գետի երկու կողմերից մարտի են բռնվում և

<sup>341</sup> 1806թ. հունիսի 2-ի հրամանով գեներալ-ֆելդմարշալ Կոմս Ի. Վ. Գուդովիչը նշանակվում է Կովկասյան Գծի և Վրաստանի զորքերի գլխավոր հրամանատար (տե՛ս Н. Н. Дыровиш, укр. соч., т. 5, СПб. 1887, с. 16):

<sup>342</sup> Ղուրան Պարսկաստանի շահ Մուլեյմանի օրոք դառնում է այնտեղի կառավարիչների ժառանգական *օղթան*, որոնց նստավայրը Խոտադն (Կուպկանն) էր, իսկ 1735թ. վերաշինված Ղուրա քաղաքը։ Բաքուն Սեֆյան Պարսկաստանին միացվելուց հետո մինչև XVIII դարի սկիզբը կառավարում էին շահի նշանակած կառավարիչները, իսկ XVIII դարի երկրորդ կեսում Ֆարսիայի խանի օրոք (1758-1789թթ.) այն իր շրջակա տարածքով միացվում է Ղուրայի խանությանը։

<sup>343</sup> Այդ դեպքերի մանրամասները տե՛ս Н. Н. Дыровиш, укр. соч., т. 5, с. 65-80:

<sup>344</sup> Կարաբդիան ընդգրկում է Մալկա և Ուրուխ գետերի միջև ընկած Կովկասյան լեռնաշղթայի հյուսիսային լանջերը զբաղեցնող տարածքը։

<sup>345</sup> Ախալքալաքի րեբղը ռուսական զորքերը պաշարում են 1807թ. մայիսին, (տե՛ս АКАК, т. 3, д. 942, с. 542):

<sup>346</sup> 1223հ.թ. համապատասխանում է 1808/1809թ.:



հրազենով մեղում միմյանց<sup>347</sup>։ Որոշ ժամանակ անց օսմանյան բանակը պարտվելով՝ սկսում է մահամջել։ Օսմանյան բանակի հարստությունները, ողջ ավարն ու թնդանոթները ընկնում են [ռուսների] ձեռքը։ Դրանից հետո կառավարչապետը Թիֆլիս է վերադառնում։

1808/1224թ.<sup>348</sup> ձմռան սառնամանիքին [կոմսը] մեծ պատրաստություններ տեսնելով՝ իր հաղթական դրոշը ուղղում է Երևանի կողմը<sup>349</sup>։ Նրա առաջին մարտը ղզրաշների զորքի դեմ տեղի է ունենում Ղարաբաքայում, որտեղ նրանց ջախջախում է<sup>350</sup>։ Այնուհետև [կոմս Գուդովիչը] գալիս է, Երևանի քերդը պաշարում։ Որոշ ժամանակ անց զրոհում է քերդի վրա, սակայն ապարդյուն։ Մեծ թվով զինվորներ են ընկնում մարտի դաշտում։ Վերջիվերջո տեսնելով, որ ի վիճակի չէ Երևանը գրավել, [Գուդովիչը] ձեռնունայն վերադառնում է Թիֆլիս։

## ՀԵՏԵԼԱԶՈՐԻ ԳԵՆԵՐԱԼ ՏՈՐՄԱՍՈՎԻ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԿԱՌԱՎԱՐՉԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՄԱՍԻՆ

Ռուսաստանի մշտնջենական պետության կառավարությունը 1809/1225թ.<sup>351</sup> Վրաստանի կառավարչապետ է նշանակում հեծելազորի գեներալ Տորմասովին<sup>352</sup>, իսկ կոմս Գուդովիչը Ռուսաստան է կանչվում։ Տորմասովը օսմանցիների հետ հաշտություն է կնքում։ Բայց ղզրաշների հետ հարաբերությունները սրվում են, և (116թ) պատերազմն ու ռազմական գործողությունները՝ շարունակվում։

Այդ շրջանում ղզրաշները նենգորեն քնեցնելով [ռուսների] զգոնությունը՝ 1809/1224թ. Մուհամմադ Ալի Միրզային ուղարկում են Վրաստանի կողմերը։

<sup>347</sup> Արփա-չայի ճակատամարտը տեղի է ունենում 1807թ. հունիսի 18-ին, (տե՛ս АКАК, т. 3, д. 957, с. 548)։ Նրա մասին մանրամասն տե՛ս մահ (Присоединение Восточной Армении к России, т. 1, д. 364, с. 415-416; д. 382, с. 440)։

<sup>348</sup> 1224ի. ք. համապատասխանում է 1809/1810թ.։

<sup>349</sup> Կոմս Գուդովիչի Երևանյան արշավանքը սկսվում է 1808թ. սեպտեմբերի վերջին (Присоединение, т. 1, д. 414, с. 465)։ Երևանի քերդը պաշարվում է 1808թ. հոկտեմբերին, (տե՛ս АКАК, т. 3, д. 875, с. 496)։

<sup>350</sup> 1808թ. հոկտեմբերի 28-ին գեներալ-մայոր Ներսիսի զորք Ղարաբաքայում հաղթում է Արաս Միրզայի բանակին (Присоединение, т. 1, д. 423, с. 480)։

<sup>351</sup> 1225 հ. ք. համապատասխանում է 1810թ.։

<sup>352</sup> 1809թ. մարտի 5-ի՝ հրամանով հեծելազորի գեներալ Ա. Պ. Տորմասովը նշանակվում է Աստրախանի, Կովկասի ու Վրաստանի մահանգների կառավարչապետ և զորքերի գլխավոր հրամանատար (Н. Н. Дубровин, ук. соч., т. 5, с. 227-228)։

Վերջինս բորչալու ցեղը կողոպտելով՝ նրան մեծ վնասներ է հասցնում ու հարուստ ավար ձեռք բերում<sup>353</sup>։ Դրանից հետո, նույն տարվա մեջ, Երևանի կառավարիչ Հուսեյն խան սարդարը (վրաց) արքայորդիների հետ Վրաստանի կողմերն է ուղարկվում Ախալցխայից մինչև Վրաստան ընկած տարածքներում խռովություններ բարձրացնելու ու հանդարտված հուզումները բորբոքելու։

Տորմասովը այս մասին լուրեր ստանալով՝ Շամխորի ճանապարհով գալիս, կանգ է առնում Սադարա կամրջի մոտակայքում։ Գեներալ Պաուլուչիին գեներալ Լիսանսկիի հետ ուղարկում է Ախալցխա՝ Հուսեյն խանի դեմ։ Վերոհիշյալ գեներալները հաղթական զորքով ճանապարհ են ընկնում ու կեսգիշերին, երբ սպանված ղզրաշների համար սզացող երկինքը Արասյանների սև զգեստն էր հագել<sup>354</sup>, հանկարծակի հարձակվում են ղզրաշ զորքի վրա, կողոպտում ու կոտորում նրա մարտիկներին։ Շատերն են սպանվում, իսկ մնացյալները դժվարությամբ փրկվելով՝ ոտքով ճանապարհ են ընկնում դեպի իրենց երկիրը։ Ճանապարհին էլ օսմանցիների ջոկատներն են նրանց քալանում, և թշվառները, հուսալքված, մերկ ու բոկոտն, քազմաթիվ չարչարանքներով Իրան են հասնում։

Ղզրաշների պետության առաջ ամրոսհար ու պատժից տագնապած Հուսեյն խան սարդարը փախչում է Բյոռ-օղլի ամրոցը<sup>355</sup>։ Բայց որոշ ժամանակ անց (ղզրաշները) նրան հանգստացնում են և իր նստավայրը վերադարձնում։

Նույն տարվա նոյեմբեր ամսին գեներալ-մայոր իշխան Օրբելյանովը օսմանյան բանակը ջախջախելով՝ գրավում է գեղատեսիլ Փոթի (Բուդի) ամրոցը<sup>356</sup>։ (117ա) 1810/1225թ. հունվար ամսին այդ ամրոցը դրվում է վերոհիշյալ իշխանի ենթակայության տակ։

Այդ տարվա մեջ ամրոցը Վրաստանը Իմերեթիայի հետ անցնում է Ռուսաստանի պետության գերիշխանության տակ ու դառնում նրա հարկատուն։ 1811/1226թ. կազմվում է Իմերեթիայի կառավարությունը, և այդ շրջանը սկսում է կոչվել Իմերեթիայի շրջան (Իմերետինսկի օբլաստ)։ Նրա շրջկենտրոնն է դառնում Կուրանսկ (Ղուրանսկ) քաղաքը։ Այս միջոցառումներից հետո գեներալ Տորմասովը Վրաստանի կառավարչի պաշտոնը հանձնում է գեներալ-լեյտենանտ մարկիզ Պաուլուչիին, իսկ ինքը Ռուսաստան է վերադառնում։

<sup>353</sup> Մուհամմեդ Ալի Միրզայի զորագնդի Բորչալու մտնելու մասին տե՛ս АКАК, т. 4, д. 1075, с. 695:

<sup>354</sup> Արասյան խալիֆաները սև զգեստ էին կրում:

<sup>355</sup> Բյոռ օղլի անունն էր կրում Երևանի Մարզի Դարաքենդ Փարչենիսի մահալի Իր-աբադ բերդը, (տե՛ս И. Шонен, ук. соч., с. 282):

<sup>356</sup> Փոթի ամրոցը գրավվում է 1809թ. նոյեմբերի 15-ին (Н. Н. Дубровин, т. 5, с. 271):

# ԿՈՎԿԱՍՅԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵ- ՆԱՆՏ ՄԱՐԿԻՁ ՊԱՌԻԼՈՒՉԻԻ ԿԱՌԱՎԱՐՉԱՊԵՏՈՒԹ- ՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ԻՐԱԴԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1811/1227թ.<sup>357</sup> սեպտեմբեր ամսին Ն. Գ. զենեբալ-լեյտենանտ մարկիզ Պաուլուչին նշանակվելով Վրաստանի կառավարչապետ՝ գալիս է Թիֆլիս<sup>358</sup> ու զննապետ Կոտլյարևսկուն ուղարկում Ախալքալաք (Ախաբքալաք): Գնդապետը ղեկտեմբեր ամսին գրոհով նվաճում է այն: Տեղի բնակչությունը հնազանդություն է հայտնում Ռուսաստանի պետությանը:

Գենեբալ-մարկիզը ճանապարհ է ընկնում դեպի Բաքու: Մեծ զորաբանակով ժամանելով Գանձակ՝ ազատ է արձակում Ջավադ խանի բանտարկված ընտանիքին մի քանի ղզրաշ խաների հետ<sup>359</sup> և գնում Բաքու<sup>360</sup>:

Այդ ընթացքում ապստամբում է Կախեթի ու Կիզիբի (Ղասիդ)<sup>361</sup> բնակչությունը: Գենեբալ-մայոր Սիմոնովիչը իշխան Օրբելյանովի հետ գնում, ճնշում է Կախեթի խռովությունը և բնակչությանը հանդարտեցնում<sup>362</sup>:

1812/1228թ.<sup>363</sup> Ղարաբաղի Իբրահիմ խանի բոռ Ջաֆար Ղուլի աղան փախչում է ղզրաշների երկիրը<sup>364</sup>: Թագաժառանգ Աբաս Միրզան գալիս է Ղորչի կոչված վայրը<sup>365</sup> (117թ) ու ոչնչացնում այնտեղ գտնվող [ռուսական] զորագունդը: Այդ դեպքի մանրամասները հետևյալն են: Քանի որ ինչ-ինչ պատճառներով Մուհամմադ Հասան աղայի որդի Ջաֆար Ղուլի աղան վատ

<sup>357</sup> 1227 թ. ք. համապատասխանում է 1812թ.:

<sup>358</sup> Գենեբալ-լեյտենանտ Մարկիզ Պաուլուչին ռուսական զորքերի կորպուսի հրամանատար և կառավարչապետ է նշանակվում 1811թ. հուլիսի 6-ին՝ (ԱԿԱԿ, Դ. 5, Է. 1, Ժ. 2, Է. 1):

<sup>359</sup> Ջավադ խանի կանանց ու ընտանիքին գերությունից ազատելու Իրան գնալու քույլտվություն տալու մասին տե՛ս ԱԿԱԿ, Դ. 5, Խիփու 1873, Ժ. 167, Է. 119, Ժ. 169, Է. 119-120:

<sup>360</sup> Մարկիզ Պաուլուչին Բաքվում էր գտնվում 1812թ. փետրվարին, (տե՛ս ԱԿԱԿ, Դ. 5, Ժ. 88, Է. 59):

<sup>361</sup> Ըստ XIX դարի տվյալների, Կախեթին Ջարքիլից բաժանվում էր Արագվի գետով, այն սահմանակցում էր չերքեզների տարածքի, Ավարիայի և Շարքի խանության հետ: Կիզիբը հանդիսանում էր մրա 3 շրջաններից մեկը, որը Կախեթիի մյուս շրջաններից բաժանվում էր Կալահուրի լեռներով (ԱԿԱԿ, Դ. 1, Ժ. 151, Է. 193):

<sup>362</sup> Կախեթի ապստամբության մասին տե՛ս ԱԿԱԿ, Դ. 5, Ժ. 97, Է. 81, 82:

<sup>363</sup> 1228 թ. ք. համապատասխանում է 1813թ.:

<sup>364</sup> Ջաֆար Ղուլի խանի Իրան փախչելու և Մուլթանքուդի ճակատամարտի մասին տե՛ս ԱԿԱԿ, Դ. 5, Ժ. 88, Է. 59:

<sup>365</sup> Ղորչին Հագարա գետի վտակներից է (Ղ. Ալիջան, Սիսական, էջ 4):

հարաբերությունների մեջ էր իր հորեղբայր Սեդդի Ղուլի խանի հետ, և նրանց միջև մշտական բշխամություն կար, վերջինս զբաղարտում է [Ջաֆար Ղուլի աղային] և նրան Թիֆլիս են կանչում, որպեսզի Ռուսաստան արքային: Նրան տանելու ժամանակ, երբ Թաթարազ գետն էին անցնում, [Ջաֆար Ղուլին] պահակազորի զվսավոր սպային խնդրում է իրեն քույր տալ ձիով այն անցնել, որովհետև զգուշանում է առաջնորդ ջուրը մտնել: Չին հեծնելով՝ մի կերպ այնտեղից փախչում է և իր հալատակների մի մասի հետ հեռանում ղզրաշների երկիրը:

Այդ ժամանակ Արաս Միրզան իր զորքով եկել, կանգ էր առել Արաքսի ափին գտնվող Ասլանդուզ կոչված վայրում: Նույն տարվա ձմռանը [Ջաֆար Ղուլի աղան] քաղաքապետանգ Արաս Միրզային իր զորքի ու բնդամորենների հետ կուլի է հանում Սեդդի Ղուլի խանի դեմ, որը այն ժամանակ գտնվում էր Ղորչի կոչված վայրում և ջանում էր հանդարտեցնել քարաքեմն<sup>366</sup> ու մյուս ցեղերին:

Երկու օր ու գիշեր այնտեղ ուժգին մարտեր են տեղի ունենում: Ղզրաշներից շատերն են զոհվում<sup>367</sup>: Ի վերջո ղզրաշների հետագա կողոպուտի հետևանքարով վախեցնելուց հետո քարաքեմն մահմեդական ցեղերին հաջողվում է զորակայանք բերել: Երբ ցեղերի կամայք մտնում են ռուսական գնդի շարքերը, կարգուկանոնը խախտվում է: Բանակի առջևից բշխամին, իսկ ետևից ցեղերի այրուձին վերոհիշյալ զորագունդը ցարուցրիվ են անում: Մի մասը ստիպված անճանառուր է լինում, շատերը սպանվում են, իսկ Սեդդի Ղուլի խանը այնտեղից փախչելով՝ գալիս է Շուշի ամրոցը: Ջաֆար Ղուլի աղան իր հալատակներից ու ցեղերից շատերին (118) նույն ձմռանն իսկ գաղթեցնում, տանում է ղզրաշների կողմը: Ինքը ևս հեռանում է [Իրան] և այնտեղ մնում մինչև որ մեկ տարի անց հաշտություն է կնքվում, որից հետո կրկին վերադառնում է Ղարաբաղ:

Գեներալ մարկիզը այս դեպքերի մասին լսելով՝ Բաքվից գնում է Շիրվան, Մուսքոուֆի խանի մոտ: Այնտեղ լսում է Ղորչիի միջադեպի մասին ու գալիս Ղարաբաղ: Ժամանում է Շուշի և Ղորչիի դեպքերի համար որոշ անձանց կշտամբում է: Այդ ժամանակ կնոջից նամակ է ստանում, որ հաղորդում էր Կախեթի ու Կիզիքի վրացիների ապստամբության մասին, և նա շտապ ճանապարհ է ընկնում դեպի Թիֆլիս: Չնայած, որ զվսավոր հրամանատարը *դազախ* ցեղի նկատմամբ անվստահություն ուներ, վերջիններս

<sup>366</sup> Թուրքմեն բառի հոգնակին է: Թուրքալեզու բուրքմենական ցեղերը սլավոնում էին ղզրաշ ցեղերի քվին (տե՛ս Н. П. Петрушевский, ук. соч., с. 91, 92): Թարաքեմն անունով հայտնի էին Ղարաբաղի տարածքում գտնվող մի քանի բնակավայր (տե՛ս Описание Карабагской провинции, с. 11):

<sup>367</sup> 1812թ. փետրվարին Սուրբանդուզ կոչված վայրում ռուսական 500 զինվորներից բաղկացած ջոկատը պարտություն է կրում Արաս Միրզայի 18000-անոց բանակի դեմ ճակատամարտում (В. А. Потто, ук. соч., т. 1, вып. 3, с. 480-481):

նաճապարհին նրան դիմավորում են ու հարգանքով ուղեկցում մինչև Թիֆլիս: [Պառլուչին] մի քանի անգամ արշավում է ապստամբած վրացիների վրա ու կողոպտում նրանց:

Այդ ժամանակ, այսինքն 1812/1228թ., լուրեր են ստացվում ֆրանսիացիների Ռուսաստան ներխուժելու մասին: Գեներալ-մարկիզը կառավարչապետի պաշտոնից ազատվելով՝ Ռուսաստան է կանչվում:

## ԿՈՎԿԱՍՅԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ ՌՏԻՇՉԵՎԻ ԿԱՌԱՎԱՐՉԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՒ ՂԶԼԲԱՇՆԵՐԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1812/1228թ. փետրվար ամսին գեներալ-լեյտենանտ Ռտիշչևը նշանակվում է Վրաստանի ու Կովկասի կառավարչապետ, և գալով Թիֆլիս<sup>368</sup>, սկսում է կարգի բերել այնտեղի զորքերը: Նույն տարվա հոկտեմբեր ամսին գեներալ-մայոր Կոտլյարևսկին, որը հայտնի էր Աղզի-Փարե<sup>369</sup> անվամբ, Ամարասից գիշերային գրոհ է ձեռնարկում Ասլանդուզում գտնվող ղզրաշների վրա ու նրանց զորքը ցաքուցքով անում:

Այս դեպքի մանրամասները հետևյալն են: Վերոհիշյալ գեներալը երեկոյան կողմ իր արյունաբերու զորքի մի զորագնդով, (118թ) դազախ հեծյալների ու դարաբաղցի քաջերի հետ, Ամարասից արշավում է, գիշերը Մուրադ խան Դերաղարդեի<sup>370</sup> առաջնորդությամբ ճրագի լույսի տակ անցնում է Արաքսը և հարձակվում Աբաս Միրզայի բանակատեղիի վրա: Արևածագին գրոհի են անցնում Ասլանդուզի վրա<sup>371</sup> և սկսում գնդակոծել այն հրետանիով: Ղզրաշները քմից վեր են բռնում, և, շփոթահար, իրենց գույքն ու վրանները բողած, փախչում դեպի Ասլանդուզ բլրի վրա գտնվող ամրոցը: Գեներալը զրավում է [դատարկ] բանակատեղին և այնտեղ կանգ առնում: Երկրորդ գիշերը հարձակվում են Ասլանդուզի բերդի վրա: Լուսաբացի մոտերքը ռուս զինվորները

<sup>368</sup> Մարկիզ Պառլուչին Ռուսաստան է կանչվում կայսր Ալեքսանդր I-ի 1812թ. փետրվարի 16-ի հրամանով և նրա փոխարեն նշանակվում է գեներալ-լեյտենանտ Ռտիշչևը (AKAK, տ. 5, ժ. 269, շ. 201), որին նրա պաշտոնը հանձնվում է 1812թ. ապրիլից ոչ շուտ, (տե՛ս AKAK, տ. 5, ժ. 40, շ. 23):

<sup>369</sup> «Աղզի-փարե» բուրբերեն - «քերանի պատառ»:

<sup>370</sup> Դելաղարդեները XVIII-XIX դարերում Ղարաբաղում ու Թալիշում բնակվող բյուրբական ցեղերից էին, որոնք Պարսկաստանի հետ բնամակա՛ն հարաբերությունների մեջ գտնվելով՝ պատերազմների ընթացքում օժանդակում էին ռուսական զորքերին: Նրանք հայտնի էին որպես նշանավոր լուտաններ ու զոդեր, (տե՛ս Обозрение Российских владений, ч. 3, с. 274, 244-245):

<sup>371</sup> Ասլանդուզի ճակատմարտը տեղի ունենում 1812թ. հոկտեմբերի 19-20-ին (Утверждение, т. 2, с. 463-466; AKAK, т. 5, ժ. 841, с. 683; ժ. 844, с. 689-690):

երկու կողմերից գրոհում են ամրոցի վրա, և որովհետև գիշերը շատ մութ էր, նրանք խմբվում են մի տեղում: Հակառակորդն էլ կարծելով, թե [ռուս] զինվորները ամրոց են մտել, խուճապի է մատնվում: Մինչև լուսաբաց, դպրաշները միմյանց չճանաչելով, իրար են կոտորում, քրում ամրոցը և ցարուցրիվ լինում: Նրանց մեծ մասը ռուսաց զորքի ձեռքն է ընկնում, մի մասն էլ՝ սպանվում: Արաս Սիրգան փախուստի ժամանակ մի փոսի մեջ է ընկնում և որոշ ժամանակ մնում սպանվածների շրջապատում, մինչև որ [պարսից] առաջապահ զորքի հեծյալներից մեկը նրան նկատելով, նժույգ է հասցնում: [Թագաժառանգը] այնտեղից դուրս է գալիս, ձին հեծնում ու փախչում դեպի Թավրիզ:

Գեներալ Կոտլյարսկին հաղթանակով ու մեծ ավարով այնտեղից վերադառնում է Ղարաբաղ: Որոշ ժամանակ այնտեղ մնալով՝ նույն տարվա ձմռանը, այսինքն 1813/1228թ. հունվար ամսին, նորից զորք վերցրած արշավում է դեպի Լենքորան ու Թալիշ<sup>372</sup>: Այդ տարվա ձմեռը (119ա) այն աստիճան ցուրտ էր, որ ծովի ողջ ընդարձակ մակերևույթը սառցակալել էր: Գեներալը առանց որևէ երկմտանքի Շուշիից արշավում է Արզևան ամրոցի վրա և թեժ մարտեր մղում<sup>373</sup>: Թեև ինչպես սառնամանիքի հետևանքով, այնպես էլ կռիվների ընթացքում [Կոտլյարսկու բանակը] մեծ կորուստներ է ունենում և ինքը՝ գեներալը, մի քանի վերքեր է ստանում, այնուամենայնիվ ամրոցը գրավվում է: Հպատակեցնելով նաև Թալիշի խանի նստավայրը՝ [Կոտլյարսկին] այնտեղից վերադառնում է<sup>374</sup>:

1813/1229թ. հոկտեմբեր ամսին գեներալ Ռոտիշչևը սկսում է դպրաշների հետ հաշտության բանակցություններ վարել: Իրանի կողմից հաշտության կնքման համար թշնամական տարածք է ժամանում Սիրգա Աբուլ Հասան խանը: Այնտեղ հաշտության բանակցություններ են ընթանում, և կնքվում է Գյուլիստանի պայմանագիրը<sup>375</sup>, որից հետո խռովառնայգ ու փոքորկված աշխարհը խաղաղվում է:

Որոշ ժամանակ անց գեներալ Ռոտիշչևը պաշտոնաթող է արվում: Նրա փոխարեն կառավարչապետ է նշանակվում Երմոլովը:

<sup>372</sup> Թալիշի խանությունը կազմավորվել է XVIII դարի կեսին Կասպից ծովի հարավ-արևմտյան ափին, նրա մայրաքաղաքն էր Լենքորանը: 1802թ. այն անցնում է Ռուսաստանի հովանավորության տակ, իսկ 1828թ. վերջնականապես միացվում է Ռուսաստանին:

<sup>373</sup> Արզևան ամրոցը, որն ամրացվել էր անգլիացի մասնագետների օգնությամբ, Կոտլյարսկու զորագնդի կողմից գրավվում է 1812թ. դեկտեմբերի 22-ին (Утверждение, т. 2, с. 479-480):

<sup>374</sup> Լենքորանը գրավվում է 1813թ. հունվարի 1-ին, (Утверждение, т. 2, с. 487; АКАК, т. 5, д. 853, с. 699):

<sup>375</sup> Գյուլիստանի հաշտության պայմանագիրը կնքվում է 1813թ. հոկտեմբերի 1-ին (АКАК, т. 5, д. 877, 734):

# ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ ԵՐՄՈԼՈՎԻ ԿԱՌԱՎԱՐՉԱ- ՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՒ ՂԶԼԲԱՇՆԵՐԻ ՀԵՏ ԽԱՂԱՂ ՀԱՐԱ- ԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՄԱՍԻՆ

1816/1231թ. հոկտեմբեր ամսին Ն. Գ. զեմերալ-լեյտենանտ Երմոլովը նշանակվելով Վրաստանի ու Կովկասի կառավարչապետ՝ Թիֆլիս է գալիս<sup>376</sup>։ Այնտեղի գործերը կարգավորելուց հետո 1817/1232թ. ապրիլ ամսին որոշ նախապատրաստություններից հետո իր մի քանի անվանի զեմերալների հետ գնում է Սուլթանին<sup>377</sup>։ Այնտեղ Ֆարսիայի շահի ու ղզրաշ բարձրաստիճան պաշտոնյաների հետ հանդիպումներ է ունենում։ Թեև կայսեր կամքով Ռտիշչևի կնքած հաշտությամբ Կապան լեռն էր նշված որպես [երկու երկրների] սահմանագիծ, սակայն Երմոլովը նպատակահարմար է գտնում այդ սահմանագիծը դարձնել Արաքսը<sup>378</sup>։ Այնուհետև վերադառնում է ու (119թ) ձեռնամուխ լինում իրեն ենթակա տարածքներում կարգուկանոն հաստատելու և նոր կանոններին համապատասխան նրանց կառավարումը կազմակերպելու գործին։ Որոշ տեղերում անհրաժեշտության դեպքում նոր օրենքներ է մտցնում։

Այդ ընթացքում Ղարաբաղի ու Շիրվանի խաները փախչում են ղզրաշների մոտ։ Առաջինը, 1822/1236թ.<sup>379</sup>, հեռանում է Մուսրոուֆի խանը, այնուհետև, 1823/1238թ.<sup>380</sup> Մեհդի Ղուլի խանը։ Շաքիի խանն էլ նույն տարվա մեջ

<sup>376</sup> Հետևակազորի զեմերալ-լեյտենանտ Ա. Պ. Երմոլովը Թիֆլիս է գալիս 1816թ. հոկտեմբերի 10-ին, տե՛ս AKAK, տ. 6, գ. 1, c. II:

<sup>377</sup> Սուլթանինն գտնվում է Ջենջուանից 30 մղոն դեպի հարավ-արևելք։ Այն Ղաջար տիրակալների սիրելի ձմեռային հանգստավայրն էր մինչև XIX կեսերը (History of Persia under Qajar Rule, Translated from Persian of Hasan-e Fasa'is Farsnama-ye Naseri, by Herbert Busse. New York-London 1972, p. 15): Այն հիմնվել է մոնղոլ տիրակալ Մուհամմադ Խոդաբանդայի (1304-1316) կողմից և Իլխանական Պարսկաստանի մայրաքաղաքն էր (History of Persia, by Sir Percy Sykes, London 1921, Vol. 2, p. 115):

<sup>378</sup> Այն, որ ուսական կայսրը հակված էր զիջումների գնալ, հաստատում են նաև ռուսական պատմագիրները (B. A. Пятто, ук. соч., т. 2, выт. I, СПб 1887, с. 29): Միայն Երմոլովի վճռականությամբ է բացատրվում սահմանների անվիտիոյ մնալը (Утверждение, т. 4, գ. 1, с. 7):

<sup>379</sup> 1236 հ. թ. համապատասխանում է 1820/1821թ.։ Շիրվանի Մուսրոուֆի խանը Պարսկաստան է փախչում 1820թ. օգոստոսի 19-ին, (տե՛ս AKAK, տ. 6, գ. 1, д. 1212, с. 810):

<sup>380</sup> 1238 հ. թ. համապատասխանում է 1822/1823թ.։ Ղարաբաղի Մեհդի Ղուլի խանը Իրան է փախչում 1822թ. մայիսի 21-ին, (տե՛ս AKAK, տ. 6, գ. 1, д. 1293, с. 848):

վախճանվում է<sup>381</sup>, և այս երեք խանութայինները Ռուսաստանի պետության կազմի մեջ են մտնում: Ն. Գ. Երմոլովը այս տեղերում պետական հաստատություններ է հիմնում ու պարետներ նշանակում: Նրանց բոլորի կառավարումը հանձնում է մահմեդական գավառների ու Թալիշի խանության կառավարիչ-մահանգապետին (օկրոժնոյ նաչալնիկ), որի նստավայրն էր Շուշին: Եվ այդպիսով այնտեղի կառավարումը կազմակերպում է իր մտածած օրենքներին համապատասխան:

1818/1234թ. հավաքում է բոլոր քնազավառների մասնագետներին ու նրանց գրանցում: 1819/1235թ. Ն. Գ. Երմոլովը գնում է Դաղստան և այնտեղ ուժգին մարտեր մղելով հաղթանակներ տանում: Մի քանի տարի անընդմեջ այնտեղ պատերազմում է, որի մասին հանգամանորեն շարադրված է այնտեղի դեպքերի պատմությանը նվիրված մյուս գրքում:

Շիրվանի ու Ղարաբաղի խաների փախուստից հետո Կազիկումուխի<sup>382</sup> կառավարիչ Մուրխայ խանը իր որդի Նուհ խանի ու բոռան՝ Մուհամմադ խանի հետ 1823/1237թ.<sup>383</sup> Դաղստանից փախչում, գնում է ղզրաշների կողմը<sup>384</sup>:

Քանի որ այս մի քանի տարիների ընթացքում նրանց (ռուսների) ու ղզրաշների միջև խաղաղություն էր տիրում և կողմերից ոչ մեկը թշնամական քայլերի չէր դիմում, Ն. Գ. Երմոլովը երկիրը քարեկարգում է ու այնտեղ կարգուկանոն հաստատում:

Գեներալ-մայոր իշխան Մադաթովը մահմեդական գավառների (Ղարաբաղի, Շաքիի ու Շիրվանի) ու Թալիշի խանության մահանգապետն էր: Նրա քաջության ու խիզախության համբավը ամենուր տարածվել էր: (120ա) [Իրանի ու Ռուսաստանի] միջև բարիդրացիական հարաբերություններ էին հաստատվել, նրա [Մադաթովի] ու ղզրաշների պետության ղեկավարների

<sup>381</sup> Շաքիի Իսմայիլ խանը մահանում է 1819թ. հուլիսի 24-ին, (տե՛ս AKAK, Դ. 6, Կ. 1, ձ. 1096, c. 738):

<sup>382</sup> Կազիկումուխի խանությունը XIX դարում ընդգրկում էր Կոչսու գետի ակումքների միջև ընկած տարածքը: Ավանդության համաձայն, այնտեղ քնակվող լաքերը դիմադրություն ցույց չեն տալիս իրենց երկիրը՝ Կումուխ, ներխուժած արաբներին և ընդունելով մահմեդական կրոնը, իրենք ևս միանում այլ ցեղերին՝ մահմեդականացնելու համար արաբների մղած պայքարին: Այդ պատճառով ստանում են Ղազի (հավատի համար պայքարող) անվանումը: (տե՛ս B. A. Пятто, укр. соч., т. 2, вып., с. 153):

<sup>383</sup> 1237հ. թ. համապատասխանում է 1821/1822թ.:

<sup>384</sup> Ռուս պատմագիր Պոտտոն այս առթիվ նշում է, որ «ռուսական հետախույզ քաղաքագետները վաղուց արդեն գիտակցում էին, որ Անդրկովկասում ռուսների իրական տիրապետության և երկրամասի միավորման համար անհրաժեշտ է վերացնել նախ և առաջ խանությունների ինքնուրույնությունը և դարձնել դրանք ռուսական գավառներ», ռուսի խաների փախուստը ռուսական միջամտության հետևանքն էր (B. A. Пятто, укр. соч., т. 2, вып. 4, СПб. 1888, с. 669):



միջև մամակագրական կապ կար, և բարեկամությունը երկու երկրների միջև օրեցօր ամրապնդվում էր:

## ԳԵՆԵՐԱԼ ՄԱԴԱԹՈՎԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԱՐԱՍ ՄԻՐԶԱՅԻ ՀԵՏ

Ն. Գ. գեներալ Մադարովը խիստ հավակնոտ ու հպարտ մարդ էր: Բացի իր վերադասից մյուս բոլոր իշխանավորների հետ իրեն պահում էր ինչպես հավասարը հավասարի պես:

Այդ ժամե թագաժառանգը գալիս է Արաքսի ափը ու կանգ առնում Մուղանի հարթավայրում՝ այնտեղ որսորդությամբ զբաղվելու և զբոսնելու համար: Այդ պատճառով գեներալ Մադարովը իր երկրի կառավարության թույլտվությամբ ցանկություն է հայտնում հանդիպելու արքայորդու հետ: Իրեն ենթակա խանություններից մի քանի խանների ու անվանի քեկերի, կազակ-հեծյալների և այլոց հետ գնում է Արաքսի մյուս ափը՝ Խոդա-Աֆերիմի մոտակայքում Արաս Միրզայի հետ տեսակցելու<sup>385</sup>: Արքայորդին մեծ պատվով է ընդունում Մադարովին ու քեկերին: Գեներալը արքայորդուն խնդրում է բույլ տալ նրա բանակում ռուսական ձևով հրավառություն ու տոնախմբություն կազմակերպել: Այնուհետև, թագաժառանգի թույլտվությամբ, լավ նախապատրաստվելով մի այնպիսի հրավառություն է կազմակերպում, որ բանակի ձիերի մեծ մասը, սանձերը կտրած, մետվում են ճամբարի տարբեր կողմերը: Այնպես, որ շատերը մինչև առավոտ չեն կարողանում իրենց ձիերը գտնել: Դժբախտաբար հիացած էին այդ հրավառությամբ:

Մի անգամ թագաժառանգի հետ զրույցի ընթացքում գեներալն ասում է. «Դուք պետք է Գեդարքունիքից (Գյորչա) ու Սադարաքից հրաժարվեք<sup>386</sup>: Դրանք մեզ տվեք, որպեսզի Թիֆլիսի ու Վրաստանի ցեղերը իրենց հոտերի ամառանոցային արոտավայրերի համար (120ր) տարածքներ ունենան»:

Թագաժառանգին (նրա) հանդգնությունն ու անկիրք վարմունքը ապշեցնում ու զայրացնում է: Հաջորդ օրը, երբ գեներալի քեռի Պետրոս քեկ Մադարովը ներկայանում է արքայորդուն, վերջինս զանգատվում է, քե. «Այս Ձեր քրոջորդին շատ գոռոզ ու անմիտ մարդ է, բոլորովին իր չափը չի ճանաչում: Նա ընդամենը մի գեներալ է, որպիսիք Ռուսաստանի թագավորը հազարներով ունի, բայց (նրանցից) ոչ մեկը չէր համարձակվի ինքնագլուխ կերպով մման հարցեր շոշափել: Հատկապես վայել չէ նրան մման հարցեր բարձ-

<sup>385</sup> Գ. Վ. Մադարովի և Արաս Միրզայի Ղարադաղում հանդիպման արդյունքների մասին, (տե՛ս АКАК, т. 6, ч. 2, Тифлис 1875, д. 504, с. 272):

<sup>386</sup> Գեդարքունիքի ու Սադարաքի վիճելի տարածքների մասին տե՛ս Кавказский сборник, т. 21, Тифлис 1900, с. 1-2, 12, 14-42.



երկու պետությունների միջև տարածայնություններ ու վեճեր էին ծագել: Կողմերից ոչ մեկը զիջումների չէր գնում և հարմար առիթի էր սպասում [այդ հարցը զենքի ուժով լուծելու համար]:

Երրորդ [պատճառն այն էր], որ այդ տարիներին լուրեր էին պտտվում Դաղստանի կողմերում Ղազի Մուլլայի<sup>388</sup> բարձրացրած խռովությունների մասին: Նա *ղազավարի* ու *ջիհադի* կոչեր էր անում, այդ ուղղությամբ բուռն գործունեություն էր ծավալել՝ հրահրելով Դաղստանի բնակչությանը ռուսների դեմ պատերազմի՝ ի վնաս իրենց իսկ շահերի: Երկրի *մուլլաները* և *մոջթե-հիդները* կոչվ բորբոքելու ցանկությամբ տարված, զորքեր ու ուղերձներ են հղում *ջիհադի* ու *ղազավարի* մասին (121թ) և իրենց պերճախոսությամբ գրգռում բնակչությանը ռուսների դեմ:

Անգամ պալատական *մոջթեհիդ* Աղա Սեիդ Ալին մի գրություն է հանձնում Ֆաթհալի շահին՝ հայտնելով, որ՝ «Ռուսների դեմ մղվող պատերազմը ևս *ղազավար* է: Երազումս ինձ հայտնվել է, որ այսինչ ամսին դուք հաղթանակներ եք տանելու: Այնպես, որ եթե այդ ժամանակ Ձեր քանակը ռուսների դեմ կռվի ելնի, հաղթելու է»<sup>389</sup>:

Ժողովրդի մեջ ասեկոսեներ են տարածվում, թե Աղան իբր ասել է. «Ես ռուսների բնդանոթի արկը ձեռքովս կվերցնեմ ու նրանց վրա կնետնեմ»:

Այդ ժամանակվա մարդկանց էլ միայն այդպիսի խոսքերի էին պետք, հատկապես Իրանի ժողովրդին, որը հրաշքներին հեշտ էր հավատում:

Չորրորդ [պատճառն այն էր], որ մի քանի տարի էր, ինչ Իրան էր հեռացել Վրաստանի վախժության ժառանգորդ Ալեքսանդր Միրզան, որ այնտեղ պատվավոր վալի էր համարվում: Ռուսաստանից Իրան էին հեռացել նաև [Անդրկովկասի] խաների մի մասը, ինչպես Շիրվանի Մուսրոուֆի խանը, Ղարաբաղի Սեիդի Ղուլի խանը, Գանձակի Օղուրլու խան Զիադօղլին և Շաքիի Սեյիմ խանի որդիները, որոնք մշտապես հարմար առիթի էին սպա-

---

Հակոբյան, Ուղեգրություններ, հ. 2, Երևան, 1934, էջ 374; АКАК, т. 6, ч. 2, д. 341, с. 178):

<sup>388</sup> Ղազի Մուլլան 1823թ. ռուսական իշխանությունների դեմ Դաղստանում կրոնական պատերազմ քարոզող ուսմունքի սկզբնավորողներից էր, ավելի մանրամասն այս մասին տե՛ս Кавказский сборник, т. 23, Тифлис, 1902, Историческая Записка о начале и развитии духовного учения о нравственном элементе человека в Дагестане, с. 1-73:

<sup>389</sup> Մահմեդականների դեքը պատերազմի հրահրման մեջ մեծ էր, քանի որ 1826թ. լուրջ քայլեր են կատարվում նրանց կողմից այդ ուղղությամբ: Պարսիկ պատմագրի վկայությամբ. «1826թ. մայիսին Աղա Սեիդ Մուհամմադը նամակներ է հղում Անդրկովկասի մոջթեհիդներին՝ կոչ անելով նրանց ելնել «Սրբազան» պատերազմի ընդդեմ ռուսների: «Սրբազան» պատերազմի համար պարսկական արքունիքը տրամադրում է 300000 բուման փող» (History of Persia under Qajar Rule, p. 174):

սում, որպեսզի իրենց երկրները վերադառնան ու վերականգնեն իրենց իշխանությունները:

Այս հանգամանքներից ելնելով՝ Ֆաթիալի շահը 1826/1242թ. իր որդի Թափաթաթանգ Աբաս Միրզային Թեհրան է կանչում և (122ա) ուղարկում ռուսների դեմ պատերազմելու: Աբաս Միրզան էլ, հոր հրամանին համապատասխան, Թեհրանից Ատրպատական է վերադառնում, սկսում զորք հավաքել ու կռվի նախապատրաստվել:

Այդ ընթացքում վախճանվում է Ն. Մ. կայսր Ալեքսանդր Պավլովիչը: Այս հանգամանքը ևս նպաստում է խաղաղության խաթարմանն ու կռվի բռնկմանը:

Թափաթաթանգ Աբաս Միրզան այս առթիվ իր պալատականների ու բանիմաց իշխանավորների հետ խորհրդակցություն է անցկացնում: Որոշ իմաստուն իշխանավորներ հետադարձ են օգտակար չեն համարում ռուսների դեմ պատերազմը պետության համար: Նրանք ջանում են այնպես անել, որպեսզի շահը հրաժարվի պատերազմելու իր ցանկությունից: Այդ նպատակով քարծրաստիճան իշխանավորներից ու անվանի խաններից իր պերճախոսությամբ հայտնի *սանդուղդար* Հեյդար Ալի խանին փող բերելու ու որոշ այլ պատրաստություններ տեսնելու պատրվակով Թեհրան են ուղարկում, որպեսզի Շահին ներկայանա ու նրան որևէ կերպ համոզի իր մտադրությունից հրաժարվել: Հեյդար Ալի խանը գալով Թեհրան՝ ներկայանում է շահին: Երբ զրույցի ընթացքում շահը նրան հարցնում է զորքի վիճակի մասին, վերջինս պատասխանում է. «Տիեզերքի կենտրոնի»<sup>390</sup> հրամանով Թափաթաթանգը զորք է հավաքում ու ռազմական պատրաստություններ տեսնում ռուսների դեմ պատերազմելու համար: Եռանդագին ջանք է քափում շահի հրամանները (ճշտորեն) կատարել: (122բ) Քանի որ, Փառք Աստոն, Չեր խոնարհ ծառան եմ, որը եթե մի քան գիտի ու քաջանում է, դավաճանություն է գործում, ուստի եթե Տիեզերքի կենտրոնը քույլ կտա, մի քանի քան կասեմ»:

Այնուհետև շահի քույլտվությամբ ասում է. «Թեև այժմ շահի հաղթական զորքին ոչ ոք չի կարող դիմադրել, և այն որ կողմ էլ իր երեսը դարձնի, հաղթանակը նրանը կլինի: Սակայն ռուսների հետ բարեկամական կապերի խզումն ու նրանց դեմ պատերազմը այժմ ոչ մի լավ քան չի խոստանում և մեր պետության շահերից չի բխում: Ծէ՞ որ Ռուսաստանը հիմ պետություն է, պատերազմում՝ կոշտ, իսկ խաղաղության դեպքում՝ մեղմ: Ոչ մեկին հավատի համար չի նեղում ու ճնշում: Դեռևս ոչ մի քննամական քայլ չի կատարել ու խաղաղության խզման համար ոչ մի առիթ չի տվել: Նամանավանդ, որ կայսրն էլ վախճանվել է, ու նոր կայսր է գահ բարձրացել: Հետևե՛ք նրա գործերին ու պահվածքին: Դրանից հետո միայն համապատասխան քայլեր

<sup>390</sup> Շահին մեծարելու համար տրվող իմանիշներից է:

ձեռնարկենք: Եթե այժմ բնամակա՛ն քայլեր ձեռնարկենք, ժողովուրդը դրանք դաժան ու փոքրոգի կհամարի, որը հաճելի չի լինի շահին»:

Այդ պահին Ֆաթիալի շահը, սաստիկ բարկացած, հրամայում է իր մանկահասակ որդուն՝ Մուշեղի խանին, որը մշտապես, գոհարազարդ սուրը կապած, նրա մոտ կանգնած էր. «Գլխատի՛ր Հեյդար Ալի խանին, (123ա) որովհետև նա դավաճան է, և շահին հակառակ է մտածում»...

Երբ Մուշեղի խանը պատրաստվում է նրան [Հեյդար Ալիին] գլխատել, շահը լինելով սաստիկ փողասեր, կարգադրում է . «Հեյդար Ալի խան, արյանդ գինը վճարի՛ր և կենդանի կմնաս»:

Վերջինս անմիջապես տալիս է այն հարյուր *աշրաֆի բաջադիները*, որոնք իմանալով շահի բնավորությունը, նախօրոք վերցրել էր իր հետ և փրկվում է: Դրանից հետո սկսում է շահի կամքին համապատասխան խոսել և հաստատել նրա մտքերի անսխալականությունը:

Շահի կամքով ու հրամանով բազաժառանգ Աբաս Միրզային նորից հանձնարարվում է հետևակային ու հեծյալ զնդերից բաղկացած և թնդանդր-ներով համալրված մի բանակ նախապատրաստել Ղարաբաղ ներխուժելու ու ռուսների դեմ կռվի ելնելու համար: Այդ հրամանի մեջ շեշտվում է. «Բավական է, ինչ խաբվեցինք: Հանգստի ու անգործության այդ ժամանակամիջոցում կարող էինք շատ տարածքներ նվաճել ու հասնել մինչև Կովկասյան սահմանները»...

## [ՊԱՐՄԿԱԿԱՆ] ԲԱՆԱԿԻ ՆԵՐԽՈՒԺՈՒՄԸ ՂԱՐԱԲԱՂ ԵՎ ՄՅՈՒՍ ԻՐԱԴԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ատրպատականի կանոնավոր հետևակազորը, որը գտնվում էր բազաժառանգ Աբաս Միրզայի ենթակայության տակ, կրում էր *սարբազ* անվանումը, իսկ շահին ենթակա Արաղի կանոնավոր հետևակազորը՝ *ջանբազ* անվանումը:

(123բ) Այսպես, Հեյդար Ալի խանի Թեհրանից վերադառնալուց ու [շահի] միանշանակ հրամանը բերելուց հետո, Աբաս Միրզան բանակում զորատես է անցկացնում և պատերազմի պատրաստությունները ավարտելով՝ մի բանի կողմերից զորք ուղարկում դեպի կովկասյան երկրները:

Ինքը՝ Աբաս Միրզան, Ատրպատականի հեծելազորայինների ու *սարբազների* 60000-անոց մի զորագումը ու 30 թնդանդր վերցրած, Ղարաբաղի

Գոլամբար<sup>391</sup> ու Մոշրամբար *յալլաղների* ճանապարհով շարժվում է դեպի Ղարաբաղ<sup>392</sup>:

Խոյի, Սալմաստի [Սալմաս] ու Ուրմիայի [Ուրումի] աֆշար հեծելազորայինների ու հետևակայինների մի զորագունդ՝ Ամիր խան սարդարի ու Ղարաբաղի Մեհդի Ղուլի խանի գլխավորությամբ, Նախիջևանի ու Սիսիան լեռան ճանապարհով շարժվում է դեպի Շուշի բերդը:

Մեկ այլ զորագունդ էլ, որ բաղկացած էր Արաղի զորքից ու չահարդուի<sup>393</sup> հեծյալներից, դրվելով ծագումով դաջար ազնվական Իրահիմ խան սարդարի ու Շիրվանի Մուսթուֆի խանի ենթակայության տակ, ուղարկվում է Շիրվանի կողմերը:

Երևանի Հուսեյն խան սարդարը իր Սարու Ասլան<sup>394</sup> անունով հայտնի եղբոր՝ Հասան խանի ու Վրաստանի արքայորդի Ալեքսանդր Միրզայի հետ ուղարկվում է Թիֆլիսի կողմերը՝ Փամբակի ու Շորագլայի միջով և Ղարաքիլիսայում ընդհարվում իշխան Սևադզամիծեի (Մեհիզե միրզա) հետ:

Նմանապես Թալիշի Միր Հասան խանը զորքով գնում է դեպի Լենքորան ու Արզևան, Շարիի Սելիմ խանի որդի Հուսեյն խանը իր եղբոր՝ Հաջի խանի հետ բռնում է Նուխիի ճամփան, իսկ Օղուրլու խան Ջիադողլին շարժվում է դեպի Գանձակ: Եվ յուրաքանչյուրը՝ 10-15000-անոց զորքով, կռվի դրոշը վեր պարզած, պատերազմի է ելնում՝ այն տարածքները գրավելու:

Զմայած [այս մասին] լուրերի արագ տարածմանը, (124ա) Ռուսաստանի կառավարությունը չէր հավատում, որ ղզրաշները, խախտելով հաշտության պայմանագիրը, պատերազմի կեկենն: Այդ ժամանակ բարեկամական խաղաղ հարաբերությունները ամրապնդելու նպատակով իր քարգմանիչ Շահամիր խան Բեգլարովի<sup>395</sup> հետ Թեհրան էր ուղարկվել պատվարժան դեսպան իշխան Մեհշիկովը (Մեշիկով)<sup>396</sup>, որպեսզի Ֆարսիայի շահին հա-

<sup>391</sup> Գոլամբար- գտնվում է Վարզեղան քնակավայրից 9000 գյազ (= 9կմ) և Թավրիզից՝ 10000 գյազ (= 10կմ) հեռու դեպի Ահար տանող ճանապարհի վրա (տե՛ս ۲۲ جلد علی اکبر دهخدا لغتنامه جلد ۱):

<sup>392</sup> Տե՛ս նաև, Уквержданье, т. 4, ч. 1, с. 100.

<sup>393</sup> Չահարդուի - Մարաղայի շրջանի 4 գյուղական գավառամասերից մեկն է, որը գտնվում է այդ շրջանի հարավ-արևելյան մասում, (տե՛ս ۲۲ جلد علی اکبر دهخدا لغتنامه جلد ۱): Հավանաբար այդ տեղանունը ծագել է նույնանուն քրդական ցեղից, որը բնակվում է Իրանական Քրդստանում (տե՛ս Ն. Խ. Մախմուտով, նշվ. աշխ., էջ 47):

<sup>394</sup> «Սարու Ասլան» բուրբերեն «շեկ առյուծ»:

<sup>395</sup> Ռուսական բանակի ենթասպա Շահամիր խան Բեգլարովը իր ժամանակի հմուտ քարգմանիչներից էր, որի քարգմանությամբ էին հաճախ անցկացվում ռուս-պարսկական բանակցությունները, (տե՛ս Кавказский сборник, т. 22, Материалы к истории персидской войны 1826-1828, Тифлис 1901, с. 28):

<sup>396</sup> Кавказский сборник, т. 22, Материалы к истории персидской войны 1826-1828, с. 51-52.

դորդեր [Ռուսաստանի] նոր տիրակալի գահ բարձրանալու լուրը, և նրան հանձնել կայսեր կողմից որպես նվեր ուղարկված բյուրեղյա գահը: Հասնելով Ռուսաստան<sup>397</sup>, անվանի դեսպանը տեսնում է ահռելի բանակը, բայց այնս չի կարողանում լուր ուղարկել Ռուսաստանի իշխանություններին<sup>398</sup>:

Դեսպանի առաքումը ավելի է նպաստում Ռուսաստանի անհոգությանը: Յուրաքանչյուրը հանգիստ իր գործով էր զբաղված և որևէ ռազմական պատրաստություն չէր տեսնվում:

Դեսպանը առանց որևէ հստակ պատասխան ստանալու կալանքի տակ է առնվում:

Սկզբում, Ամիր խան սարդարը Մեհդի Դուլի խանի հետ խոչից մտնում է Նախիջևան և կանգ առնում Արաքսի ափին<sup>399</sup>: Միասին խորհրդակցելով՝ այն կարծիքին են հանգում, որ եթե հրամանի համաձայն իրենց զորքով սրընթաց արշավեն Շուշի քերդի վրա, հնարավոր է, որ Մեհդի Դուլի խանի [նախկին] հպատակները դարպասները բաց չանեն և [խանին] չմիանան: Այդ դեպքում իրենց ձեռնարկումը կծախտողի ու զորքը ցաքուցրիվ կլինի: [Նրանք] նպատակահարմար են գտնում Աբաս Միրզային նամակ գրել (124ր) և խնդրել, որպեսզի վերջինս երկու զորագունդ ու երկու քնդանոր ևս իրենց տրամադրի և իրենք կարողանան անհրաժեշտության դեպքում պաշտպանվել:

Աբաս Միրզան նրանց հետևյալ պատասխանն է գրում. «Ձեզ զինվոր ու իրետանի տրամադրել չեմ կարող: Ղարաբաղի բեկերն էլ ինձ գրել են, որ զորքի տեղ հասնելուն պես, իրենք [Շուշիի] խալիֆելու դարպասը բաց կանեն ու մեր պետությանը կհպատակվեն: Ձեզ կարգադրվում է Նախիջևանից Միսիան լեռան կողմով առանց հապաղելու ուղիղ դեսպի Շուշի արշավել, քանի որ, նրանք մեզ ծառայելու պատրաստ, զորքի գալստյանն են սպասում: Եթե ձեզ հետ սարքազ ու քնդանորներ տանք, արագ ընթանալ չեք կարողանա: Բացի այդ, իրետանին լեռներով տանելը խիստ դժվար է: Ռուսաց զորքի դեմ ես եմ կռվելու, և եթե սարքազ հետևակագործ ու իրետանին ձեզ տամ, հաղթել չեմ կարողանա: Սարդալ, մեծ գործ ենք սկսել: Քանի որ առջևում կրակի ծովներ են փոթորկվում, պետք է զարկենք ու առաջ շարժվենք: Եթե առաջինը հարվածենք, երկար տարիներ հանգիստ ենք վայելելու, այլապես տառապանքներից չենք ազատվի... Ալլահի օգնությամբ ու շահի հավերժական բախտով ինձ զարթի օրը կանցնենք խոդա-Աֆերիների կամուրջը և կանգ կառնենք Ջերրայիի այգիներում: Ուրբաթ օրը կմտնենք Ամա-

<sup>397</sup> Ռուսանը Ատրպատականի հնագույն քաղաքներից է:

<sup>398</sup> Մեհմեդուլի դեսպանությունը խոդա-Աֆերիների կամրջի մոտ է հասնում 1826թ. մայիսի 23-ին, (տե՛ս АКАК, т. 6, ч. 2, д. 620, с. 344):

րաս, շարքա օրն էլ գրոհելով Ավետարանոցում (125ա) գտնվող ռուսական գորքի վրա՝ կովի կրոնականն ու մեկ օրում կլուծենք թե՛ ամբողջի, թե՛ նրա կա-  
յազորի հարցերը»:

Հիշյալ խաները, որոնք բազմիցս ակամատես էին եղել ռուսների կոիվնե-  
րին, ծանոթանալով մամակի բովանդակությանը, զորք ստանալու հույսերը  
կորցնում են ու վշտանում Աբաս Միրզայի այս մտքերից:

Լուրեր են ստացվում մաս, որ իրենց քաջությամբ հայտնի եզերների<sup>400</sup> մի  
զորագունդ հրետանիով գտնվում է իրենց ճանապարհին ընկած անառիկ  
Գորիս գյուղում, որպեսզի պաշտպանի Կապանն ու Չանգեզուրը: Այդ պատ-  
ճառով Ամիր խան սարդարն ու Մեհդի Դուլի խանը, Աբաս Միրզայի հրամա-  
նին հակառակ, դանդաղ ու անշտապ են շարժվում: Նախիջևանից մինչև Սի-  
սիանի Սարկողովը (Սարքողուկ)<sup>401</sup> կոչված վայրն ընկած մեկ օրյա ճանա-  
պարհը անցնում են երեք-չորս օրում<sup>402</sup>: Այնտեղ խմանում են, որ գերի են ըն-  
կել հիսուն ռուս զինվորներ, որոնք Բազար-չայի ափն էին եկել ձուկ որսալու  
ու լողանալու: Այս նորությունը նրանց փորք-ինչ ոգևորում է, և նրանք սկսում  
են ավելի համարձակ առաջ ընթանալ: Սարն անցնում են և կանգ առնում  
Բազար-չայ գետի ափին գտնվող Ղարաքիլիսա<sup>403</sup> գյուղում: Այդ գիշեր ռուս-  
ներին դավաճանած ու ղզբաշների կողմն անցած Ղարաբաղի Հաջի Աղա-  
լար բեկի կողմից մարդ է գալիս՝ լուր քերելով, թե՛ Գորիսի ռուսները մայրա-  
մուտին գյուղից դուրս են եկել և անհայտ ուղղությամբ հեռացել: Ղզբաշների  
բանակը խուճապի է մատնվում և նույն գիշերն իսկ գնում դեպի մոտակա յ-  
քում գտնվող Փարսանգի բլուրը: Այնտեղ ամրանում են ու տագնապած կովի  
են մախապատրաստվում, մինչև որ առավոտյան մեկ այլ լուր է ստացվում,  
թե ռուսները դեպի Շուշի են շարժվում, (125բ) որպեսզի իրենց զորքին միա-

<sup>399</sup> Ղարաբաղ ներխուժած պարսկական զորքերի շարժման այս երկու ուղղու-  
թյունների մասին են վկայում մաս ռուսական աղբյուրների փաստագրական նյու-  
րերը (Кавказский сборник, т. 22, Описание вторжения персиян в Грузию, с. 132):

<sup>400</sup> Եզերների բերև հետևակազորային լեյք-գվարդիայի գունդը կազմվել է 1796թ.  
լեյք-գվարդիայի սեմյոնովյան, իզմայլովյան գնդերից և գառլինայի եզերական  
գնդից (Энциклопедический словарь, изд. Ф. А. Брокгауза и И. А. Ефрона, СПб.  
1893, т. XI<sup>4</sup>, с. 511):

<sup>401</sup> Սարկողովը բնակավայրն է, որը ըստ Ալիշանի գտնվում էր «ընդ մեջ Մոզն և  
մեծի Զորոյն եղեգեսաց» ընկած Գայլեժոր հովտում. (տե՛ս Ղ. Ալիշան, Սիսական,  
էջ 129):

<sup>402</sup> Պարսկական առաջին ջոկատները մի քանի տեղերից անցնում են ռուսական  
սահմանները 1826թ. հուլիսի 15-ին, (տե՛ս Н. Н. Дубровский, ук. соч., т. 6, СПб.  
1888, с. 617-623):

<sup>403</sup> Ղարաքիլիսա - չպետք է այն չփոքել Երևանի խանության հյուսիսային  
հատվածում գտնվող Ղարաքիլիսայի հետ: Այս Ղարաքիլիսան Տաթևի  
վանքապատկան բնակավայրերից էր, գտնվում է Սյունիքի Ծղուկ գավառում,  
Բոճակոթի մոտակայքում (տե՛ս Ղ. Ալիշան, Սիսական, էջ 243):



ման: Ամիր խան սարդարը իր եղբորորդի Մուհամմադ Ջաման խանին այդ գիշերն իսկ հազար հեծյալների հետ ուղարկում է ռուսների հետևից, մինչև որ ինքը Մեհդի Ղուլի խանի հետ առավոտյան նրանց կհասնի:

Մուհամմադ Ջաման խանը լինելով գինեմուլ՝ մարտը մի կողմ դրած, մարդ է ուղարկում իր գինիներով նշանավոր մոտակա Շնհեր<sup>404</sup> գյուղը, գինի բերել տալիս և այնտեղ գինարբուք է կազմակերպում:

Հաջի Աղալարը այդ ժամանակ լուրեր է ուղարկում թագաժառանգ Արաս Միրզային, որը իր բանակով կանգ էր առել Խոդա-Աֆերիմի մոտակայքում: Այնտեղից Ղարա-Աղալի<sup>405</sup> ճանապարհով [ռուսների դեմ] է ուղարկվում Քազեմ խան *դուլլար աղասին դոլամ-ե թոֆանգչիների* մի ջոկատով ու երկու քնդանոթներով, որը Հազարի գետի մոտակայքում հասնում է ռուսաց զորքին: [Գլբաշևները]՝ տարբեր կողմերից սաստիկ ուժգնությամբ գրոհի են անցնում. մի կողմից ղզբաշևների զորքը, մյուսից՝ հաջի սամլու քրդերն ու բյուրքական ցեղերը, մեկ այլ կողմից բարկ արևն ու ոլորապտույտ արահետները [ռուսներին] թույլ չեն տալիս ամրոց հասնել: [Ռուսական] զորագունդը ջրին չհասած ցաքուցքիվ է լինում: Ոմանք սպանվում են, ոմանք՝ գերի ընկնում, ոմանք էլ, ամտառները փախչելով, մոտակա գյուղերի հայերի օգնությամբ փրկվում<sup>406</sup>:

Արաս Միրզան լսելով այս ուրախալի լուրը՝ բանակը իր ճամբարում է բողոնում և հաջորդ օրը մոտենում Կոռնիժոր<sup>407</sup> (Քուրունզուր) գյուղին: Այստեղ նրան են ներկայացվում սպանված ռուսների գլուխները և գերվածները, որոնք 300 հոգի էին, այդ թվում նրանց սպաներն ու պաշտոնյաները, գնդապետ Նազիմկան (Նազիմով) ու մայոր Կովալենսկին: (126ա) [Արաս Միրզան գերիներին] վերցրած գնում է Կոռնիժոր գյուղը, ուր հյուրընկալվում է Հաջի Աղալարի կողմից: Այնտեղ նրան են ներկայանում Ամիր խան սարդարն ու Մեհդի Ղուլի խանը, ողջունում, հետո շնորհավորում են նրան:

Ամիր խան սարդարը Արաս Միրզայի քեռին էր: Մեհդի Ղուլի խանը նույնպես իր քրոջ՝ Աղա Բիքեի՝ շահի կինը լինելու պատճառով [թագաժա-

<sup>404</sup> Շնհերը կամ Շինուհերը Տարևի հոգևոր քեմին պատկանող բնակավայրերից էր, որը նշվում է Սյունիքի Հարանդ գավառում (տե՛ս Ղ. Ալիշան, Միսական, էջ 243):

<sup>405</sup> Ղարա-Աղալը գտնվում է Ատրապատականում՝ Կարաօհաղիմից դեպի հյուսիս-արևմուտք (տե՛ս Дорожная карта Кавказского края):

<sup>406</sup> Նազիմկայի ջոկատի պարտության մասին տե՛ս АКАК, т. 6, ч. 2, д. 651, с. 357; Кавказский сборник, т. 24, Тифлис 1903, Материалы к истории персидской войны, д. 76, с. 154, с. 131:

<sup>407</sup> Կոռնիժոր - Սյունիքի հոգևոր քեմին պատկանող բնակավայրերից է (Ղ. Ալիշան, Միսական, էջ 243), որը XIX դարում մտնում էր Ջանգեզուրի ոստիկանական շրջանի մեջ, (տե՛ս «Ազգագրական հանդես», գիրք Դ, Թիֆլիս 1898, 2, էջ 26):

ռանգի] քեռին էր համարվում: Աբաս Միրզան երկուսի վրա էլ բարկանում է, քե՛ «Ժնշու՞» վախեցաք ու թուլակամություն ցուցաբերեցիք: Այս ամբողջ հետապնդումն ու գործի ձգձգումը ձեր մեղքով էր: Եթե այդ զինվորները ողջ-առողջ Շուշի ամրոց հասնեին, և իրենց ընկերներին միանային, այն ժամանակ քեկուզ ողջ աշխարհը զորք դառնար, նրանց չէր կարողանա հաղթել»:

Ամիր խան սարդարը ի պատասխան ասում է. «Քանի որ գործի սկիզբն էր ու դեռևս որևէ տեղ հաղթանակ չէինք տարել, զգուշացանք, որ, Ալլահն ազատի, հաղթական բանակին [մեր պատճառով] չար աչք չկալի: Փառք Ալլահին, որ մեր բանակը հաղթեց, այսուհետև հաջողությունն ու փառքն են լինելու մեր ուղեկիցները»:

Թագաժառանգը այդ պատասխանից էլ ավելի է զայրանում...

Դրանից հետո նրանց զրկելով իրենց զորքից ու լիազորություններից՝ ասում է. «Դուք արդեն ծեղացել եք ու լավ չեք ծառայում, պետք է այսուհետև պատանիներին դաստիարակեք ու սովորեցնեք նրանց իմ կամքով շարժվել ու ինձ ծառայել»:

Այնուհետև [ռուս] սպանվածների զլուխները գերիների ու [պարսիկ] պաշտոնյաների հետ ուղարկվում են (126բ) Ֆաթհալի շահի մոտ, որը եկել էր Արդեբիլ և կանգ առել Ղարադաղի Թավիլե Շամի<sup>408</sup> մոտակայքում, որպեսզի Աբաս Միրզայի կողմից Շուշիի գրավման լուրն առնելուն պես գնա, այնտեղ հաստատվի:

[Աբաս Միրզան] այնտեղից բանակն ու հրետանին Ամարասի ճանապարհով ուղարկում է Շուշի, իսկ ինքը Քիրս լեռան կողմով շարժվում դեպի Ավետարանոց՝ ռուսների դեմ կռվելու: Սակայն այդ ընթացքում ռուսական զորքի հրամանատար գեղապետ Ռեուտը, որ մշտապես լուրեր էր ստանում [դեպքերի զարգացման մասին], զորքը վերցրած, հապճեպ գնում է [Շուշի] ամրոցը: [Ռուսների] ողջ գույքն ու քեռները մնում են [Ավետարանոցում] և կողոպտվում դելավորոդե, զարգյար<sup>409</sup> ու ջևանչիր ցեղերի կողմից:

Թագաժառանգ Աբաս Միրզան գալիս, կանգ է առնում Շուշի ամրոցից մեկ *ֆարսախ* հեռավորության վրա գտնվող մի վայրում, որը կոչվում էր Նաբաբ-խան և ժամանակին եղել էր Աղա Մուհամմադ խանի ճամբարը: [Աբաս Միրզան] սկսում է վերանորոգել այնտեղի ամրությունները, կարգի է բերում ու կազմակերպում իր բանակը: Երեք տեղերում ճամբար է խփում: Վերը նշված Նաբաբ-խանում գլխավոր բանակատեղին էր, որտեղ մնում էր ինքը՝

<sup>408</sup> Թավիլե Շամը Արաքսի հարավային վտակներից է:

<sup>409</sup> Ղարաբաղի բռնվոր ցեղերից են, որոնք նշվում են XIX դարում ռուս պաշտոնյաների կազմած վիճակագրական տվյալներում, տես՝ I, II և III Ջարգյար և Դեմադորդե ամուսնով բնակավայրեր Դիզակի-ջևանչիր գավառում (ՄՄ, կարող. դիվան, քոթ. 241, վավ. 206, էջ 154-156):

Արաս Միրզան: Ավելի վերև, լեռան լանջին, Սղնախի<sup>410</sup> անտառում Ամիր խան սարդարի, Մեհդի Ղուլի խանի և նրանց կողմն անցած դարաբաղցիների զորակայանն էր: Իսկ Ասկերանի մոտ, Խոջալու վայրում գտնվում էր Արաս Միրզայի եղբայր Շեյխ Ալի Միրզայի ճամբարը<sup>411</sup>:

## ՄԿՁԲՆԱԿԱՆ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԸ

Այսպիսով քաղաժառանգը մեծ հանդիսավորությամբ պաշարում է Շուշի բերդը<sup>412</sup>: Ղարաբաղի բեկերի ու մելիքների մի մասը, որոնք ամրոցից հեռու էին ապրում չեն հասցնում ամրոցում ապաստանել և հարկադրված են լինում ներկայանալ Արաս Միրզային ու Մեհդի Ղուլի խանին և հպատակություն հայտնել: Դրանց բվում էին Ջրաբերդի Մելիք Վանին<sup>413</sup>, Դիզակի Մելիք Ասլանը, Գանձասարի (Գյանջեսարի) կարողիկոս Սարգիսը, քերեկու<sup>414</sup>, մուղանլու<sup>415</sup> (127ա) ցեղերի բեկերն ու այլոք: Ղարաբաղցիների մի մեծ բազմություն է հավաքվում: Արաս Միրզան, որը երբևէ այդպիսի մեծաքանակ բազմության հպատակության մասին չէր էլ երազել, Ամիր խան սարդարին ու Մեհդի Ղուլի խանին իր մոտ կանչելով, մեծամտորեն ասում է. «Այսուհետև ոչ ոք չպետք է ինձ հակառակ մտածի ու իմ կամքին հակառակ գործի: Այլապի կամքով այս տարի ռուսներին կովկասյան սահմաններից դուրս

<sup>410</sup> Սղնախ- լեռ Շուշիի հարավային կողմում:

<sup>411</sup> Ռուսական աղբյուրների հակիրճ տվյալները հաստատում են Մ. Յ. Ներսեսովի տեղեկությունները Շուշին պաշարող պարսկական զորքերի դիրքերի մասին (Кавказский сборник, т. 22, Описание вторжения персиян в Грузию, с. 138-141):

<sup>412</sup> Շուշին պաշարվում է 1826թ. հուլիսի 25-ին, (Утверждение, т. 4, ч. 1, с. 105)

<sup>413</sup> Խոսքը 1805թ. գեղասպետ Կարյազիմի ռուսական ջոկատին զգալիորեն օգնած Վանի Արաբեկովի մասին է, որին ձերբակալում են պարսիկները (В. А. Потто, Первые добровольцы Карабага в эпоху водворения русского владычества. Тифлис, 1902, с. 65):

<sup>414</sup> Թերեկու ցեղը բուրքմենական քերքե ցեղի ճյուղերից էր և պատկանում էր դարձ 7 ցեղերի ըվին, որը հանախակի ապստամբությունների պատճառով շահ Արաս I-ի հրամանով մասամբ ոչնչացվում է, սակայն նրա բեկորները պահպանվում են Ատրպատականի որոշ շրջաններում, (տե՛ս И. П. Петрушевский, укр. соч., с. 90):

<sup>415</sup> Մուղանլու ցեղը մոնղոլական ցեղերից է, որը իր անունը ստացել է մախկինում Մուղանի հարթավայրում բնակվելու համար, այդ ցեղը հիշատակվում է ինչպես Ղարաբաղում (տե՛ս Свод статистических данных о населении Закавказского края, Джеванширский уезд, участок 2), այնպես էլ Երևանի Մարզում (տե՛ս И. Шопен, укр. соч., с. 536):

կըշենը, ձմեռը Ղզլարում կանցկացնենք, այնտեղից էլ կգնանք, Ռուսաստանը կգրավենք»:

Նրանք էլ, ճարահատյալ, ակամա համաձայնվում են և ասում. «Անշուշտ կմտնենք ռուսների երկիրը, և այն մի քանի անօգնական թշվառները, որոնք դեռևս Կովկասում են, կհեռանան այնտեղից»:

Երբ մեկիքը [Վանին] առաջին անգամ ներկայանում է [թագաժառանգին], վերջինս այսպես է դիմում նրան. «Մեկի՞ր Վանի, սրանից առաջ, երբ Ասկերանի ու Թառնակյուտի մարտերում ռուսներին գրեթե հաղթել էի, իսկ դու նրանց օգնեցիր ու ոտքի կանգնեցիր, ես երդվեցի քեզ խստորեն պատժել, քայց հիմա երբ դու քո ոտքով եկել, մեր առաջ գլուխ ես խոնարհել, մեքում եմ քո մեղքերը»:

Ու քեև այսպիսի պարծենկոտ մտքեր էր արտահայտում, այնուամենայնիվ շատ էր անհանգստանում, որ Շուշիի ռուսները, որ նախորդ ժամանակների պես գիշերահարձակ կլինեն ու իրենց բանակը ցրիվ կտան:

Մի անգամ Աբաս Միրզան Ամիր խան սարդարին մի գրություն է ուղարկում ու խորհուրդ հարցնում, թե՞ «Մարդա՛ր, մենք բանակի գումակն ու գույքը մեզ մոտ պահե՞նք, թե՞ Ավետարանոց ուղարկենք և առանց բռնների զանք, (127թ) մեր կայանում մնանք»:

Սարդարը ի պատասխան գրում է. «Վեհապանձ թագաժառանգը ղզլաշ գորքի քնավորությունը ավելի լավ գիտի: Ցերեկով այն անվախ մարտնչում է. քայց գիշերը՝ ոչ: Եթե գումակը Ավետարանոցում լինի, իսկ ռուսները գիշերով գորակայանը գրոհեն, բոլորը դեպի իրենց բռնները կվազեն: Իսկ եթե բռնները նրանց մոտ լինեն, ստիպված կպայքարեն դրանք պաշտպանելու համար»:

Այսպես, սարդարի խորհրդով գումակը իրենց մոտ են պահում: Ջորքին կարգադրվում է ասպատակել երկիրն ու կողոպտել հնազանդության չեկածներին: Ռուսների Ավետարանոցում թողած բռններն ու զինամթերքը կողոպտելուց հետո [իրանցի] զինվորները Մեհդի Ղուլի խանի կարգադրությամբ հրդեհում ու ավերում են գեներալ Մադարուլի տունն ու կավածքը, Չանախ՝ շի գետի ափին գտնվող ռուսական շտաբի շինությունները, որից հետո նաև անարգում են գեներալի նախնիների գերեզմանները:

## ՂԶԼԲԱՇ ԶՈՐԹԻ ԴԱՐԱՆԱԿԱԼ ՀԱՐՁԱԿՄԱՆ ԱՆՀԱՋՈՂ ՓՈՐՁԸ

Մի քանի օր անց կողմերը հանդարտվում են: Հեծյալ ու հետևակային զինառիշտիկ խմբեր են ուղարկվում Ղարաբաղի ու հարևան շրջանները, որոնք անհաշիվ են ենթարկում Ռուսաստանին հավատարիմ քնակչությանը և սարապիեյի ավերածություններ գործում այդ վայրերում: Աբաս Միրզան ու

ղզլրաշնեբը չեն հանգստանում մինչև որ ամեն-ինչ չեն քանդում-ավերում՝ վրեժ լուծելով իրենց հին վերքերի համար:

Այդ ընթացքում լուրեր են տարածվում, քե Շուշի բերդի բնակիչները խալիֆալու գետի կողմից դուրս գալով, սննդամթերք հայրաթելու նպատակով այս ու այն կողմ են ցրվում ու շրջակայքի բերքը հավաքելով, քիչ-քիչ ամրոց են տանում: (128ա) Մեհդի Ղուլի խանն ու Ամիր խան սարդարը իրար հետ խորհրդակցելով՝ որոշում են. «Գորիսի գործում բերացանք ու թուլություն հանդես բերեցինք՝ դրա համար կշտամբանքի արժանանալով, այժմ հարմար պահն է [շահին] ծառայություն մատուցելու: Փառապանք քանակից մի գորագունդ վերցրած գնանք խալիֆալու գետի կողմը, որտեղ գտնվում է անառիկ ամրոցի ելևմուտի ճանապարհը: Այնտեղ դարան մտնենք ու փորձենք բռնել պարենի համար դուրս եկած մարդկանց, որից հետո ամրոցի վրա կգրոհենք ու այն կգրավենք»:

Իրենց այս նախաձեռնության մասին հայտնում են բազաժառանգին ու այնպես պայմանավորվում, որ նրանց դարան մտնելուց հետո թագաժառանգը ևս զիշերը հրետանին ամրոցին մոտեցնի, և առավոտյան երկու կողմից գրոհեն բերդի վրա ու այն նվաճեն:

Այնուհետև Ամիր խան սարդարն ու Մեհդի Ղուլի խանը սարբազների չորս գորագնդերով և Ղարաբաղից ու այլ վայրերից հավաքված հեծյալների 2000 հոգանոց խմբով զիշերը գնում, դարան են մտնում խալիֆալու գետի մոտակայքում՝ Խաչենի դարպասից ոչ հեռու<sup>416</sup>:

Նրանց գնալուց հետո նենգ իշխանավորներից մի քանիսը, որոնք վերոհիշյալ խանների թշնամիներից էին, պատեհ առիթ գտնելով, Աբաս Միրզային հասկացնում են. «Ամրոցի ռուսները այնքան շատ չեն և եթե Դուք նրանց [Ամիր խանին ու Մեհդի Ղուլիին] փորք-ինչ օգնեք թնդանորով ու ռազմամթերքով, ամրոցն անկասկած կգրավվի: Ամրոցի բնակչության ողջ գույքն ու հարստությունը, Աղա Մուհամմադ շահի գանձարանը, որ այնտեղ է գտնվում, բանակի ալան-բալանին կենթարկվի ու շահի մոտ նրանց անունը կբարձրանա»:

Այս խոսքերը Աբաս Միրզայի վրա իրենց ազդեցությունն են ունենում, և նա հրաժարվում է թնդանոթ ու զորք ուղարկել:

Վերոհիշյալ խաները նախորդ օրվա պայմանավորվածության համաձայն, լուսաբացին (128բ) աղմուկ-աղաղակով հարձակվում են պարենի համար ամրոցից դուրս եկած մարդկանց վրա: Ամրոցաբնակ այդ թվառների մի մասին գերեվարում են, մի մասին էլ սրով ու հրազենով կոտորելով գրոհում ամրոցի վրա:

<sup>416</sup> 1826թ. հուլիսին 30-ին տեղի ունեցած այդ իրադարձության մանրամասները տե՛ս *Кавказский сборник*, т. 24, Тифлис, 1903, Описание вторжения персиян в Грузию, с. 87; Утверждение, т. 4, ч. 1, с. 108):

Գյանջում Աղա Խանդամիրովը, որն այն ժամանակ *դալարեկի* պաշտոնն էր վարում<sup>417</sup>, բացում է հողով ամրացված դարպասը, երկու ջոկատով (ամրոցից) դուրս գալիս և նրանց հետ կռվի բռնվում: Պարեն հայրաբոլոների մի մասը հարմար պահը որսալով՝ պարիսպների վրայով ամրոց է մտնում: Գյանջում Աղան ամրոց է վերադառնում, դարպասը նորից հողով ամրացնում ու կռիվը շարունակում արդեն պարսպի ու աշտարակի վրայից: Իրանցի հետևակայիները որքան էլ ջանում են բարձրանալ ամրոցի պարիսպներն ի վեր, հրազենով ետ են մղվում: Բերդի հայերին, որոնք հողով ու սրտով ռուսների հետ էին, զնդապետը զենք էր բաժանել, ուղարկել պարիսպների վրա, և նրանք խիզախորեն կռվում էին: Մարտը շարունակվում է արևածագից մինչև կեսօր: Արաս Սիրզան օգնության չի հասնում, դեռ ավելին մարդ է ուղարկում՝ մարտը դադարեցնելու ու վերադառնալու հրամանով, որից հետո վերոհիշյալ խաները ձեռնունայն հա եմ դառնում իրենց բանակատեղին:

## ՃԱԿԱՏԱԳՐԻ ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ, ՀԱՂԹԱՆԱԿ-ՆԵՐՆ ՈՒ ՓԱՌՔԸ

Այս ընթացքում ուրախալի լուրեր են ստացվում տարբեր կողմերում [ղզլբաշ] խաների ու իշխանավորների հաջողությունների մասին, որը հարյուրապատիկ անգամ մեծացնում է նրանց [ղզլբաշների] գոռոզությունը:

Այսպես, Միր Հասան խանը գնում, հեշտությամբ գրավում է Թալիշն ու Լենքորանը, դուրս բշում ռուսներին Արզևան ամրոցից<sup>418</sup>:

(129ա) Իբրահիմ խան սարդարն ու Մուսթուֆի խանը գրավում են Շիրվանը Սալյանից մինչև Բաքու<sup>419</sup>, և զենքերալ Կրաբբեն (Նրաբբի), որին հանձնված էր այն կողմերի պաշտպանությունը, հեռանում է Ղուրա:

Հուսեյն խան սարդարը նվաճում է մինչև Փամբակ ու Շորագյալ ընկած տարածքները, ավերում շրջակայքում եղած ռուսական շինությունները: Նրա եղբայր Հասան խանը սարսափելի ասպատակության է ենթարկում Բորչալուն և մեծ թվով զեքիներ տանում այնտեղից: Այս տարածքներում եղած ռուսական բոլոր զորագնդերը նահանջում են Թիֆլիսի կողմերը<sup>420</sup>:

<sup>417</sup> Кавказский сборник, т. 24, Тифлис 1903, с. 108.

<sup>418</sup> Թալիշի խանը հարձակվում է Կասպյան ռազմածովային գնդի պահակակետերի վրա ու մեծ կորուստներ պատճառում նրանց, (տե՛ս АКАК, т. 6, ч. 2, д. 651, с. 357):

<sup>419</sup> АКАК, т. 6, ч. 2, д. 661, с. 362; д. 681, с. 375.

<sup>420</sup> АКАК, т. 6, ч. 2, д. 681, с. 375.

Գանձակի Ջուռնաբադ վայրում<sup>421</sup> եղած ոռոսական կայազորը փորձում է Գանձակ մտնել ու այնտեղից էլ Թիֆլիս գնալ, սակայն տեղի բնակչությունը բույլ չի տալիս: Նրանք [ռուսներն] էլ իրենց բեռներն ու զինամթերքը բողած Թիֆլիս են փախչում<sup>422</sup>:

Աբաս Սիրզան ի պատասխան Հուսեյն խան սարդարի դիմումին՝ գրում է.

*Ռադամի պատճենը*

«Ի գիտություն Ն. Գ. Երևանի խանության (Չոխուր Սաադի) վեհապանձ տեր, ազնվագար՝ ամիր-ալ-ումարա, բեկլարբեկ ու սարդար Հուսեյն խանին:

Թող Ալլահի անսահման զբասրտությունն ու բարեհաճությունը Ձեր մշտական ուղեկիցը լինի:

Մեծարգո իշխանի անկեղծ դիմումին ծանոթանալով՝ գոհունակությամբ իմացանք Ն. Գ. սարդարի ու Ն. Գ. Հասան խանի շարունակական հաղթանակների մասին: Գրված էր, որ հաղթական զորքով գրավել եք մինչև Փամբակ ու Շորագյալ ընկած տարածքները և պաշարելով Ղարաբիխսան՝ իշխան Սևարզամիժեին, իր ամբողջ պարծենկոտությամբ հանդերձ, հալածել այնտեղից:

(129բ) Փառք Ալլահին, քանզի Ալլի հավատի շնորհիվ է, որ այսօր մեր բշնամիների օրը խավարել է, նրանք պարտվում են, իսկ շահական բախտը հաջողակ է և հաղթանակներ է տանում:

Թալիշի բշնամիները [ղզրաշների] հաղթական զնդերի հարվածներից ջախջախվել են: Շիրվանը մինչև Սալյան մեր հպատակների իշխանության տակ է անցել: Շաքիում ու Ջառում դաջարական թմրուկներն են աղմկում: Գանձակի դարպասները ահեղ ճակատագրի բանալիներով բացվել են: Շուշիի բնակիչների ուժն ու համբերությունը հատել է, և զնդակոծումից նրանք ծանր դրության մեջ են հայտնվել: Ընդհակառակ ենք Արսրչին, որ այսքան կարճ ժամանակամիջոցում այս բոլոր հաղթանակները տարանք...

Թող քաջ ամիրն իր եղբայր Հասան խան Սարու Ասլանի հետ, արքայական հավերժ բախտով հուսավառված, իրենց զորքը արժանավայել կերպով կատարեն ու ոչ մի ճիգ ու ջանք չխնայեն բշնամու դեմ իրենց խիզախ պայքարում:

Ամենագոր Ալլահի կամքով, մենք էլ շուտով Շուշի ամրոցը կգրավենք ու Թիֆլիսի վրա կարշավենք:

Շահական բարեհաճությունն ենք հայտնում Ձեզ:

<sup>421</sup> Հայկական բնակավայր Գանձակ քաղաքի մոտակայքում, որտեղ ամուսն չոզ շրջանը անց էր կացնում Գանձակում տեղակայված ոռոսական կայազորը, (տե՛ս Օ. Есеевич, ука. соч. с. 149):

<sup>422</sup> АКАК, т. 6, ч. 2, д. 661, с. 362.

## ՊԱՇԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՅԱԾ ԻՐԱԴԱՐ- ՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Շուշի ամրոցի շուրջ դեպքերը հետևյալ ընթացքն են ստանում:

[Ամրոցի] դարպասներից ոչ մեկը բաց չի արվում: Բերդը և նրա բնակիչները մնում են [ղզլքաշների] աղմկարար զորագնդերի պաշարման օղակում: Արաս Միրզան բազմիցս առաջարկում և պահանջում է, որը ամրոցը հանձնեն, բայց ապարդյուն: Պարենի սղության հետևանքով անառիկ ամրոցը ծանր դրության մեջ է հայտնվում, նրա պաշտպանների ուժն ու կարողությունը՝ բուլանում: Նաև լուրեր են տարածվում, թե կա գլխավոր հրամանատարի հրամանը բերդը հանձնելու ու այդ երկրից ռուսների հեռանալու վերաբերյալ: (130ա) Ուստի [ղզլքաշները] այս հարցը քննարկելու, ինչպես նաև ռուսների մասին տեղեկություններ հավաքելու նպատակով գնդապետ Ռեուտի մոտ ամրոց են ուղարկում Բեջան խանին<sup>423</sup>: Ամրոցի բնակիչները գնդապետի կարգադրությամբ կապում են նրա աչքերը, որից հետո միայն քաղաք տանում՝ գնդապետ Ռեուտի մոտ: Բանակցությունների ընթացքում պայմանավորվում են, որ բերդի պարետ մայոր Չեյսակին ու կապիտան Ադիգյոզալ բեկին [ղզլքաշներին] պատանդ տան<sup>424</sup> և երկու շաբաթով զինադադար կնքեն, մինչև որ ռուսներից ու Արաս Միրզայի մարդկանցից մեկական պատգամավոր գնա Թիֆլիս՝ գլխավոր հրամանատար Երմոլովի մոտ՝ լուր պատգամավոր գնա Թիֆլիս են գնում ռուսների կողմից մայոր Կյուզեմաուն (Ֆունկլուդին), իսկ թագաժառանգի կողմից՝ նրա *յասավուլներից* մեկը: [Վերջիններս] դին, կառավարչապետին ներկայացնելով իրադրությունը՝ հարցնում են, թե արդևառավարչապետին ներկայացնելով իրադրությունը պատասխանում է, յոթ թույլ տալիս է ամրոցը հանձնել: Կառավարչապետը պատասխանում է, որ «կապիտուլյացիա» բառը ռուսերենում չկա: Այս եվրոպական բառը նշանակում է «անձնատուր լինել»:

Այդ օրերին բուժիչ հանքային ջրերից Թիֆլիս էր վերադարձել գեներալ Մադարովը: *Յասավուլին* տանում են գեներալի մոտ: Սկզբում վերջինիս վրա բարկանում է, թե ինչու՞ է ձեռնափայտով իր մոտ եկել, այնուհետև սպառնում, թե՝ «Ես Արաս Միրզայի դասը հենց այս ձեռնափայտով կտամ»:

Արքայորդին ցանկանում էր, որ Շուշի ամրոցը անձնատուր լինի ու նրա բնակիչները հնազանդություն հայտնեն, որպեսզի այնտեղի ողջ գույրին ու հարստություններին ինքը տեր դառնա, ոչ թե իր զորքն ու պաշտոնյաները:

<sup>423</sup> Արաս Միրզայի ու գնդ. Ռեուտի միջև վարվող բանակցությունների մասին տե՛ս Н. Н. Дубровин, ук., соч., т. 6, с. 637-639:

<sup>424</sup> Кавказский сборник, т. 26, Тифлис 1907, Материалы к истории персидской войны 1826-1828, с. 18.



Բայց մյուսների ցանկությունն այն էր, որ ամրոցը ուժով գրավեն, և յուրաքանչյուրը այնտեղի կողոպուտի իր բաժինը ստանա:

Մի անգամ (130թ) Աբաս Միրզան իր ծառաներին ասում է. «Դուք բոլորդ սպասում եք, որ ես Շուշի բերդը գրավեմ և դուք կողոպտեք այնտեղի հարստությունները... Բայց ո՛չ, ես այնքան եմ սպասելու, մինչև որ նրա բնակիչները իրենք անձնատուր լինեն, որից հետո իմ հայր շահի՝<sup>425</sup> գանձերն ում մոտ էլ լինեն, ես եմ վերցնելու»:

Դեռևս Շուշիի հարցերը չլուծած և ամրոցը չգրաված, այնտեղի հարուստ ու անվանի մարդկանց ունեցվածքը իրար մեջ բաժանում էին: Այսպես, ամրոցին տիրելուց հետո Ջոհրաբ Թառումյանի (Սոհրաբ Աղա Թարխմուլի)<sup>426</sup> ու Շեյխիովների հարստությանը Աբաս Միրզան էր տիրելու, Մուղղուսի Բաբա Հախումյանի (Հողումով)<sup>427</sup> և Խանդամիրովների ունեցվածքին՝ Մեհդի Դուլի խանը: Ալլահը վկա, որքա՜ն զարմանալի է. դեռ ջրին չհասած բորիկանում են:

Ամիր խան սարդարը, որը բոլորից շատ էր պնդում, որ ամրոցը գրոհով գրավեն և [թագաժառանգին] հանգիստ չէր տալիս, վերջինս իր որդի Մուհամմադ Միրզայի հետ ուղարկում է Գանձակ:

Երբ Աբաս Միրզան տեսնում է, որ ամրոցի գրավման հարցը անհաջող ընթացք է ստացել, և մնում է միայն արյունահեղության ուղին, սկսում է ամեն օր իր հպատակներից մեկնումեկին գաղտնի ուղարկել ամրոցի պարիսպների տակ՝ այնտեղի հայերին համոզելու, որ ռուսներին դավաճանեն, դադարեցնեն ամրոցի պաշտպանությունը և [իրեն] հպատակվեն: Բայց իզուր: Մի անգամ, երբ հայ տանուտերերից ոմն Սարուխան յուզբաշու ուղարկում է ամրոցի մարդկանց մոտ, որպեսզի վերջինս նրանց համոզի Իրանի պետությանը հպատակվել, ուղերձը հաղորդելուց հետո (131ա) նա հայերեն ավելացնում է. «Մե՛ր տղերք, պի՞նդ կացեք քամակները ոսան այ»: Այսինքն՝ «Մեր տղաներ դիմացեք, որովհետև նրանք թիկունքում բույլ են»:

Ղարաբաղի բուրքերից մեկը, որը հայերեն գիտեր այս հասկանում է և ամեն-ինչ հայտնում Մեհդի Դուլի խանին: Խանը, հիշյալ յուզբաշու վրա զայ-

<sup>425</sup> Աբաս Միրզան ի նկատի ունի 1797թ. Շուշիում սպանված իր հորեղբայր Աղա Մուհամմադ շահին:

<sup>426</sup> Շուշիի մեծահարուստներից Ջոհրաբ Թառումյանի և Աղա Բաբա Հախումյանի ընտանիքների հարստությունների ու առևտրական գործունեության մասին որոշ տեղեկություններ է հաղորդում Մ. Թաղիադյանը (Մ. Թաղիադեանց, Ճանապարհորդություն ի Հայս, հ. 1, Կալկարա, 1847, էջ 289-290, 292-293):

<sup>427</sup> Շուշիի մեծահարուստներն են, որոնք ակտիվ կերպով մասնակցում են քաղաքի պաշտպանությանը, այնպես որ նրանց անունները հիշատակվում են ռուսական կառավարությանը ներկայացված հայերի պաշտպանական կոիվները դեկավարող անձանց ցուցակում, (տե՛ս Кавказский сборник, т. 24, Тифлис 1903, с. 108):

րացած, հրամայում է նրա լեզուն կտրել: Բայց Ղարաբաղի բեկերից մեկը, ուրը (Սարուխան Յուզբաշու) բարեկամն էր, միջնորդում է և նրան մի կերպ փրկում:

Մի օր էլ ինքը՝ Մեհդի խանը, ղզրաշ մի քանի այլ խաների հետ գնում է ամրոցի մոտ ու կանչում բերդի հեղինակավոր մարդկանցից Աղաբեկ Քալանթարովին<sup>428</sup>: Աղաբեկը սկզբում հրաժարվում է գնալ, քանի որ խանի մերձավորներից էր եղել և վախենում էր նրա հանդիմանամբներից: Ի վերջո գնդապետի կարգադրությամբ երկու բուրքերեն իմացող պաշտոնյաների՝ ծառաների հագուստ հագած կապիտան Գուդովիչի ու մայոր Կլուգենաուի հետ ներկայանում է Մեհդի (Ղուլի) ու նրա ուղեկից մյուս ղզրաշ խաներին: Մեհդի խանը (Աղաբեկի) ատոջությունը հարցնելուց հետո ասում է. «Աղաբեկ, դուք՝ հայերդ, չե՞ք ամաչում, որ մեր աղ ու հացը մոռացած, մեզ վրա կրակում եք»:

Քալանթարովը պատասխանում է. «Մենք Չեր աղ ու հացը չենք մոռացել ու ձեզ վրա չենք կրակում: Երե Դուք բարեհաճեք մեզ մոտ գալ, մենք բոլորս կայսերը ծնկաչոր կաղաչենք ներել Չեր սխալները: Այդ Դուք պետք է ամաչեք, որ գնացել եք, Չեր հին թշնամուն, որը ծարավ է մեր արյանն ու ունեցվածքին, բերել եք, որ մեզանից վրեժ լուծի, (131թ) մեր կամանց ու հարստությանը տեր դառնա...»:

Մեհդի խանը այս խոսքերից ազդված ետ է դառնում: Դրանից հետո նա այլևս չէր պնդում, որ ամրոցը պետք է գրավել: Արևս Միրզան էլ նրա հետ դադարում է հաշվի նստել և իր մտքերը այնուհետև կիսում էր Հաջի Աղալարի հետ:

Ռուսական պաշտոնյաները զգուշավորություն հանդես բերելով՝ նախօրոք հավարում են բերդի մահմեդական բնակչության գեները<sup>429</sup>: Իսկ [քաղաքի] հայ բնակիչները ամեն հարցում ռուսների հետ միասնաբար գործելով՝ ճիգ ու ջանք չէին խնայում նրանց նվիրված կերպով ծառայելու: Հատկապես աչքի են ընկնում Շուշիքենդ և Քարինտակ (Դաշ-ալթը-լու) գյուղերի հայերը, որոնք իրենց ավագ Սաֆար յուզբաշու գլխավորությամբ ամրանալով ամրոցի մոտ գտնվող Խազիմեղարասի ձորում՝ բոլորից շատ էին կոփում ու նեղում թշնամուն<sup>430</sup>: Այն աստիճան, որ որոշ ժամանակ անց հայերի վրա բարկացած Արաս Միրզան հրամայում է, որ ով որ հայի գլուխ բերի, 10 աշ-

<sup>428</sup> Աղաբեկ Քալանթարովը, որը Մեհդի Ղուլի խանի կառավարման շրջանում քաղաքի կառավարիչն էր, Շուշիի պաշարման ժամանակ ղեկավարում էր նրա հայ պաշտպանների մարտերը պարսկական ուժերի դեմ (Утверждение, т. 4, ч. 1, Тифлис 1906, с. 107):

<sup>429</sup> Кавказский сборник, т. 24, д. 21, с. 51.

<sup>430</sup> Кавказский сборник, т. 24, с. 93.

րաֆի կստանա: Այդ պատճառով հայերից շատերն են սպանվում՝ զրկվելով քե՛ իրենց կայքից և քե՛ կյանքից<sup>431</sup>:

Վերջին շրջանում Արաս Միրզան մի քանի անգամ գրոհում է ամրոցի վրա ու քեժ մարտեր մղում, բայց միայն զուր կորուստներ է տալիս:

Երբ ամրոցի բնակչությունը ջրաղացներ չլինելու պատճառով ծանր կացության մեջ է ընկնում, նորից մեկ ամսով զինադադար է կնքվում: Մինչև որ Արաս Միրզան լուրեր է ստանում գեներալ Մադարովի գալստյան, Շամխորում ղզրաշների զորքի դեմ (նրա զորքի) մղած ճակատամարտի ու Ամիր խան սարդարի պարտության մասին<sup>432</sup>: Այս պատճառով նա [թագաժառանգը] գնում է դեպի Գանձակ:

Այդ իրադարձության մանրամասները հետևյալն են:

Ամրոցի պաշարումից մեկ ամիս անց, քանի որ Ամիր խան սարդարը շատ էր պնդում, որ ամրոցը պետք է կռվով նվաճել, (132ա) Արաս Միրզան նրան հանձնարարում է 4000 հոգուց բաղկացած չախարդուլի և այլ հեծյալների գնդով գնալ և Օղուրլու խան Ջիադօղլու հետ Գանձակում ամրանալ: Թիֆլիսից զորք գալու դեպքում նրանք այնտեղ պետք է պաշտպանվեին և իրեն լուր ուղարկեին:

Քանի որ Ամիր խան սարդարը արդեն ծեր էր ու հաճախ երկար տատանվում էր նախքան գործելը, Արաս Միրզան նրա հետ է ուղարկում իր ավագ որդի Մուհամմադ Միրզային՝ կանխելու առաջինի անվճռականությունը:

Ամիր խանը Մուհամմադ Միրզայի հետ իրենց տրամադրված զորքով ճանապարհ է ընկնում դեպի Գանձակ: Ծանապարհին նրանց է միանում Օղուրլու խանը, որը ավելի շուտ էր ուղարկվել, և նրանք միասին գնում են դեպի իրենց նպատակակետը: Զյուրակի մոտակայքում մի սուրիանդակ են բռնում, որը Թիֆլիսից նամակ էր տանում Ղարաբաղ, որտեղ Մադարովը բնակչությանը հանգստացնելու նպատակով գրել էր.

**Թուրքերենով շարադրված այդ ուղերձի պատճենը**

Ղարաբաղի ժողովրդին

*«Լուրեր ստացա, որ ապերախտ ղզրաշները մեր ռուսական պետության հետ հաշտության պայմանագիրը խախտելով՝ պատերազմ են սկսել և մեծ զորքով ներխուժելով մեր տարածքները՝ եկել, պաշարել են Շուշի քերդը... Դրա համար նրանք արժանի են ամեն տեսակի կշտամբանքի: Ուխտադրժության սև քիժը նրանց ճակատագրի վրա իր դրոշմը կրողնի, և նրանք կհատուցեն:*

<sup>431</sup> Շուշիի պաշարման ընթացքում հայերի նկատմամբ իրանական զորքի զործած դաժանությունները նկարագրում է նաև հայ սրտամազիր Առ. Կոստանյանցը (Առ. Կոստանյանց, նշվ. ձեռ., հ. 2, էջ 74):

<sup>432</sup> 1826թ. սեպտեմբերի 3-ին տեղի ունեցած Շամխորի ճակատամարտի մասին տե՛ս AKAK, т. 6, ч. 2, д. 677, с. 373, 374:

Աստծու կամքով, շուտով հաղթական զորքով (132թ) Թիֆլիսից դուրս կգանք և նրանց բազմությունը գլխովին կջախջախենք: Դուք հանգիստ ու պատրաստ եղեք, բշվառ բշմամու առաջ գլուխ մի՛ ծոծեք, նրան հարկ մի՛ տվեք ու պարեն մի՛ մատակարարեք: Աստված վկա, նրանց դեմ կռվելով, այնպես եմ պատժելու, որ այլևս պատերազմելու ցանկություն չունենան և նրկար տարիներ հիշեն ու սարսափեն»:

Նամակի բովանդակությունը ասի ու սարսափ է տարածում ամենուր: Ամբողջ [ղզլբաշ] զորքը այնուհետև միայն Մադաթովի անունը լսելով՝ խուճապի էր մատնվում...

Կանգառներ անելով՝ [ղզլբաշ զորքը] գնում է Գանձակ: Տեղի բնակչությունը քաղաքից դուրս է գալիս մինչև նրա ստորոտում գտնվող այգիները՝ իշխանագն Մուհամմադ Միրզային ու սարդարին դիմավորելու և հպատակություն հայտնելու:<sup>433</sup> Օդուրլու խանը գնում, հաստատվում է Գանձակի միջնաբերդում և հանգստացնում տեղի բնակչությանը: Իշխանագնի ու սարդարի քանակը կանգ է առնում քաղաքի ստորին մասով հոսող գետի ափին և սկսում կարգի բերել քաղաքի ու շրջանի գործերը: Այրում<sup>434</sup> ու շամշադիլու ցեղերի առաջնորդները, քաղաքի պաշտոնավորները ներկայանում են ու հպատակություն հայտնում: Քանի որ Գանձակի ցեղերը դաջարական էին համարվում, նրանց [Ամիր խան սարդարին ու Մուհամմադ Միրզային] «քեռի» անվանելով՝ անընդհատ հիշեցնում էին իրենց ազգակցության մասն: Գանձակի Քիլիսաքենդ<sup>435</sup> թաղամասի հայերը նույնպես ստիպված են լինում հնազանդություն հայտնել ու ծառայել նրանց<sup>436</sup>:

Ամիր խան սարդարը (133ա) պաշտպանական նպատակներով իր եղբորորդի Մուհամմադ Ջաման խանին հազար շահարդուլի [քրդերի] հեծյալների հետ ուղարկում է Թիֆլիսի ու Գանձակի սահմանագիծը հանդիսացող Հասան-սու և Ջազան [գետերի հովիտը], որպեսզի այնտեղ մնան, և Թիֆլիսի դրությամբ մասին իրեն լուրեր ուղարկեն:

<sup>433</sup> Նախքան պարսկական զորքերի ժամանումը Գանձակի մահմեդականները արդեն ապստամբել էին և մասամբ կոտորել, մասամբ էլ քաղաքից դուրս էին բշլ այնտեղի ռուսական կայազորի մարտիկներին (Н. Н. Дубровин, ух. соч., т. 6, с. 655-656):

<sup>434</sup> Այրումնու ցեղը ենթադրվում է որ կրոնափոխ եղած հայերից էր կազմված (տե՛ս Ս. Կարապետյան, Այրումներ, լր. «Գարդմանք», 1996, № 3, էջ 5):

<sup>435</sup> Քիլիսաքենդը Գանձակ քաղաքի հայկական թաղամասի անվանումն է, որը գտնվում է քաղաքի վերնամասում և ստորին մահմեդական թաղերից բաժանվում է Գանձակ գետով: Քիլիսաքենդ թաղամասում է Ս. Հովհաննես Սկրտիչ եկեղեցին (Մ. Բարխուդարյան, Արցախ, էջ 35):

<sup>436</sup> Ամիր խան սարդարին խոհեմաբար հնազանդություն հայտնելով՝ Գանձակի հայ բնակչությունը ամրապնդում է իր թաղամասում, բոլր չի տալիս որևէ պարսիկ զինվորականի մտնել իրենց թաղամասը և փրկվում է կոտորածից (Кавказский сборник, т. 22, Тифлис 1901, Материалы к истории персидской войны, с. 150):

Երկու շաբաթ անց հանկարծ լուր է ստացվում, որ գեներալ Մադաթովը Թիֆլիսից եկել է Աղստևի (Աղստաֆա) ավիլ և բանակն ու հրետանին պատերազմի է նախապատրաստում: Ամիր խան սարդարը դրություներ նկարագրելով հետևյալն է գրում Արաս Միրզային. «*Շուշում ես ցանկացա ստանձնել բանակի հրամանատարությունը և ամրոցը գրավել, Դուր չհամաձայնվեցիր: Այժմ խնդրում եմ, որ ինձ հինգ կամ վեց սարքազ հետևակային գումդ ու հինգ թնդանոթ տրամադրեք, որպեսզի ես գնամ Մադաթովի դեմ կռվելու: Կամ հաղթելով մինչև Թիֆլիս կարշավեմ, կամ էլ կսպանվեմ*»:

Արաս Միրզան նորից մերժում է նրա խնդիրը, որովհետև նրան հայտնում են, որ. «*Մադաթովի մոտ եղած ռուսական բանակը այնքան էլ մեծ չէ: Եթե Ամիր խան սարդարին զորք ու թնդանոթ տրամադրեք, նա Մադաթովին կջախջախի ու գրավելով մինչև Թիֆլիս կհասնի: Այդ ժամանակ նա կբարձրանա շահի աշքում*»:

Արաս Միրզան այս խոսքերով խաբված՝ հրաժարվում է սարքազ հետևակազոր ու հրետանի ուղարկել և գրում է. «*Ես ճեզ չեմ ուղարկել Մադաթովի դեմ կռվելու: Մադաթովի դեմ ես եմ պատերազմելու: Դուր միջնաբերդում ամրացնեք, ռուսներից մնացած բոլոր թնդանոթները այնտեղ տարեք և գնդակներն ու վառողը պատրաստ պահեք: (133թ) Երբ Մադաթովը գա, դուք այնտեղ կպաշտպանվեք, մինչև որ ես գամ, Մադաթովի պատասխանը տամ*»:

Գրում է նաև. «*Դուր հեծյալ խմբեր ուղարկե՛ք ու Մադաթովի հրետանին տանող ճիւղերը փախցրե՛ք, որպեսզի նրանք չկարողանան առաջ շարժվել*»:

Ամիր խանը հրաժարվում է Արաս Միրզայի հրամանը կատարել և ամրոց գնալ: Նա առանց բարցնելու գրում է. «*Ես զորավար եմ և իմ պարտականությունն է զորքն առած թշնամու դեմ մարտի ելնել, այլ ոչ թե կանանց պես ամրոցում բարձվել, որպեսզի գամ, չորս կողմս պաշարեն և կամ գերեվարեն, կամ էլ կոտորեն: Ես երբեք թերդը չեմ գնա*»:

Մուհամմադ Միրզան այս մասին մանրամասն գրում է իր հորը: Արաս Միրզային շատ է բարկացնում սարդարի անհնազանդությունը ու նա մի զայրացկոտ նամակ է հղում իր որդի Մուհամմադ Միրզային, որտեղ նշում է. «*Ոչինչ, որդի՛ս, որ բեն ամրոցի պաշտպանության համար անհրաժեշտ զինամթերքն ու պարենը այնտեղ են տարվել, բայց Ամիր խան սարդարը հրաժարվում է ամրոց մտնել: Ես Մարանդի Նազար Ալի խանին սարքազ հետևակազորի երկու գնդով ուղարկել եմ, որպեսզի գա, ամրոցը պաշտպանի: Այսուհետև ամրոցի պաշտպանության պատասխանատվությունը դրվում է Նազար Ալի խանի վրա: Ես շուտով ինքս կգամ ու իմ որդուն ծառայող այդ մորուքավոր կանանց դատը կտամ*»:

Մարխաթով կնքված մի հանդիմանական նամակ է իր ձեռքով (134ա) գրում է նաև Ամիր խանին, որի բովանդակությունը ճիշտ այսպիսին էր.

«Ո՛վ մարդ, շահի բազով եմ երդվում, որ քեզ Ամիր խան Ջահանքիզլուի օրը կզցնեմ: Մա՛րդ, Պետրոս քեկը Մաղաթովի քեռին է, իսկ դու՝ իմը, տես, քե Շուշի բերդը հայերի հետ ոնց է պաշտպանում, մինչդեռ դու անառիկ բերդը այդքան զորք ու քնդանորհներով չես ուզում պաշտպանել: Մա՛րդ, մի չամախչեցու վախից չես փախչի: Թե վախենում ես, որ սպանվելուցդ հետո երեսիսաներդ սոված կմնան, մի վախենցիր, սոված չեմ բողմի: Իսկ քե վախենում ես, որ գերի կընկնես, մի՛ մտածիր, կմոջս ակամջօղերը կծախսեմ, քեզ կազատեմ: Այս ամենի մասին խորհիր ու ջանք մի՛ խնայիր և բող Ալլահը քեզ հետ լինի»:

Այս խոսքերը ոչ միայն Ամիր խանի վրա որևէ ազդեցություն չեն ունենում, այլև ավելի են զրգռում նրա պատվախնդրությունը<sup>437</sup>: Նա մնում է ամբողջի մոտակայքում, մինչև որ տեղ է հասնում Մարանդի Նազար Ալի խանը սարքազ հետևակազորով ու հաստատվում ամրոցում: Այդ ընթացքում մարդ է գալիս Մուհամմադ Ջաման խանի մոտից՝ հաղորդելով, որ նախորդ գիշեր զեներալ Մաղաթովը զորքով նրա վրա է հարձակվել, և նա կարճատև ընդհարումից հետո, չկարողանալով դիմադրել, փախուստի է դիմել: Վերջինս գիշերը ապաստանել է անտառի անմատչելի մի վայրում, իսկ մյուս օրը եկել կանգ է առել մեկ մանգեղ հեռավորության վրա գտնվող մի տեղում: Միաժամանակ Մաղաթովը մտադիր է առաջ ընթանալ:

Ամիր խան սարդարը ղզրաշ զորավարներին ու իշխանավորներին խորհրդակցության է հրավիրում և ասում.

-Մաղաթովը անվանի զորավար է և ռուսների մեջ հայտնի է իր քաջությամբ: Եթե նա ռուսական զորքով մեր դեմ կռվի ելնի, մենք այս սակավաթիվ հետևակազորով ու հեծելազորով նրան չենք կարողանա դիմադրել:

Ոմանք այն կարծիքն են հայտնում, քե՝

-Ռուսները մորեխի են նման, (134թ) մենք լեռան վրա կամրանանք ու այնտեղ կպաշտպանվենք, մինչև որ Աբաս Միրզան զորքով գա, նրանց պատասխանը տա:

Մի մասն էլ ասում է.

- Գնանք, ապաստան գտնենք Կուրի մացառուտներում:

Այսպես, ոմանք խորհուրդ են տալիս մահանջել, ոմանք էլ՝ առաջ ընթանալ: Մինչդեռ Մուհամմադ Միրզան ասում է.

<sup>437</sup> Դժվար է Ամիր խան սարդարի համառությանը միանշանակ գնահատական տալ, քանի որ այն ուներ նաև իր օրյեկտիվ պատճառները: Պարսկական բանակը բաղկացած էր հիմնականում հեծելազորից, որով դժվար կլիներ ամրոցը պաշտպանել և բացի այդ ամրոցը պաշարող զորքը կարող էր հեշտությամբ զրկել նրա պաշտպաններին այնտեղ մտնող ջրից, որը նրանց կկանգնեցներ լուրջ դժվարությունների առաջ: Զիչ էին նաև ամրոցի պարեմի պաշարները (H. H. Дуровин, т. 6, с. 664):

- Ես դեռ չեմ տեսել ռուսների կոիվը, ուզում եմ մի անգամ տեսնեմ, թե ինչպիսին են նրանք մարտում: Առաջ շարժվենք ու կռվենք: Եթե նրանք հաղթեն, Գանձակ ամրոցը կվերադառնանք:

Ամիր խանը պատասխանում է.

-Ռուսների կոիվը կատակ բան չէ: Եթե նրանք հաղթեցին, էլ կանգ չեն առնի, մինչև որ գործը ավարտին չհասցնեն:

Այդ ընթացքում տեղ է հասնում բազաժառանգ Աբաս Միրզայի ուղարկած Արաղի *ջանրագների* չորս հազարանոց զորքը չորս քնդանոթներով, և նրանց փոքր-ինչ ոգևորում:

Նամակ են գրում այդ ժամանակ Գանձակից ոչ շատ հեռու, Գեղարքունիքում գտնվող Երևանի կառավարիչ Հուսեյն խան սարդարին, թե. «Մենք մտադիր ենք Մաղաթովի դեմ կռվել: Դուք ևս Ձեր բանակով լեռան կողմից մեզ օգնության շտապե՛ք, որպեսզի երկու կողմերից նրանց վրա հարձակվենք ու ոչնչացնենք [ռուսական բանակը]»:

Հուսեյն խանն ի պատասխան գրում է. «Ես ևս [Սևարզամիժեի] իշխանի պես հզոր թշնամի ունեմ իմ առաջ, այնպես որ զալ չեմ կարող»:

Այդ ժամանակ Ամիր խան սարդարը կանչում է տողերիս հեղինակին, որը նրա գրագիրներից էր, և հարցուփորձ է անում.

-Դուք հաղթողների ու հաղթվողների քանակը լավ գիտեք: Ո՞ր մեկս ենք հաղթելու, ե՞ս, թե՞ Մաղաթովը:

Նվաստս հետևյալն է պատասխանում.

-Մաղաթովի անունը Ռոստոմ է, իսկ այդ անունը ավելի նշանավոր է, քան Աբաս, Հուսեյն, Իբրահիմ ու մյուս այլ անունները: Ձեր անունը, որ Ամիր է, նրա անվանը համարժեք է: Եթե Դուք հարձակվեցիք նրա վրա, դուք (135ա) կհաղթեք, իսկ եթե մա, ուրեմն՝ մա:

Ամիր խանը խորհրդակցությունից հետո, ահ ու վախով, բանակն ու իրետանին վերցրած, Գանձակից Շամխոր է գնում: Գանձակի ամրոցում գտնվող Նազար Ալի խանից պահանջում է *սարքազ* հետևակազորի մեկ-երկու գնդով զալ իրենց օժանդակելու, թե՛ «Առաջ կընթանանք ու Մաղաթովի դեմ մարտի կբռնվենք, եթե հաղթեցինք, շատ լավ, իսկ եթե ոչ, նորից զինվորներին վերցրած կզանք, Գանձակի բերդում կամրանանք ու միասին այն կպաշտպանենք»:

Բայց Նազար Ալի խանը հրաժարվում է զինվոր տալ ու պատասխանում է. «Ինձ ուղարկել են, որպեսզի ամրոցը պաշտպանեմ, այլ ոչ թե ձեզ զինվոր մատակարարեմ և անհրաժեշտության դեպքում չկարողանամ կռվել»:

Ամիր խանն ու Մուհամմադ Միրզան հեծյալների ու *ջանրազ* հետևակի մույն զորքով ու չորս քնդանոթներով գնում, կանգ են առնում Շամխոր գետի այս կողմում: Մեկ օր անց լուր են ստանում, թե Մաղաթովը ռուսական զորքով ու բազմությամբ արդեն իրենց վրա է արշավում: Երկրորդ գիշերը Ամիր խանը գումակն ու բեռները Գանձակ է ուղարկում, իսկ ինքը՝ իջևանում Շամ-

խորի այս ամիսն: Երրորդ օրն առավոտյան Մուհամմադ Ջաման խանը, որը պահակագործի հրամանատարն էր, փախչելով գալիս է [Ամիր խանի բանակատեղին]: Նրա հետևից գետի մյուս ամիսն գտնվող աշտարակի տակից հայտնվում է մահ Մադարովը ռուսական զորքով: Կողմերը մարտի են մախապատրաստվում: *Մարդարի բուխին* հարցնում է, իրե՞նք սկսեն մարտը, թե՞ սպասեն ռուսների համազարկին:

Մարդարը պատասխանում է. «Առաջին համազարկը բողոնքը բշմամուն»:

Այդ ժամանակ ռուսական թնդանորը կրակում է, որին պատասխանում է (135թ) հակառակ կողմի կրակահերքը: [Ռուսական] կողմը ուժեղացնում է կրակը, այն աստիճան, որ մի անգամից սկսում են կրակել 17 թնդանորներ՝ նեղելով հակառակորդին, որը մախորդ գիշեր իր գունակը Գանձակ էր ուղարկել: Եվ զարմանալի է, որ ռուսները մարտը սկսելով՝ մի կողմից կռվում էին, մյուս կողմից՝ իրենց վրանները խփում: Ամիր խան սարդարը առկակի ամիսն ծիուց իջել, հեռադիտակով ռուսական զորքի դիրքերն ու նրանց կռիվն էր դիտում: Կռվին էր հետևում մահ պարսկական ճամբարի վերին անկյունում կանգնած Մուհամմադ Միրզան: Իսկ գեներալ Մադարովը, ձին հեծած, անընդհատ շրջում էր իր բանակում ու զինվորներին քաջալերելով, մարտի մղում: Երբ ռուսական հրանոթները սկսում են արշավել դպրաշների բանակի վրա ու կոտորել նրա մարտիկներից շատերին, հետևապես գնդերը քիչ-քիչ սկսում են մահանջել: Ռուսական բանակի կազակներն ու հեծյալ գնդերը մարտադաշտի վերին և ստորին հատվածներից սկսում են գետն անցնել: Այդ ժամանակ սարդարին է ներկայանում նրա *խիլադասին* և ասում.

«Իսկ ինչու՞ եք մտել, երբ ամբողջ բանակը փախչում է:

Նա պատասխանում է.

«Ու՞ր գնամ: Էլ չեմ կարող Արաս Միրզայի աչքին երևալ: Ավելի լավ է, որսը ինձ սպանի կամ գերի տանի, քան թե ողջ մնամ և ամորախար ապրեմ:

Այնուհետև բերում են *սարդարի* ձին, որը հեծնելով՝ կարգադրում է գնալ, Մուհամմադ Միրզային մարտի դաշտից ապահով դուրս բերել, որովհետև՝ «Եթե նրան մի փորձանք պատահի, այլևս ոչ ոք Արաս Միրզայի պատժից չի խուսափի»:

Ինքը [սարդարը] գնում է, որպեսզի բույլ չտա հրետանին ռուսների ձեռքն ընկնի: Այդ ժամանակ տեղ է հասնում նրա եղբորորդի Մուհամմադ Ջաման խանը 200 հեծյալներով: Բայց մեծ ճանապարհի կողմից, գետն անցնելով, նրա վրա է գրոհում կազակների ջոկատը: Ճակատամարտը տանուլ էր նրված:

*Մարդարն* (136ա) այնտեղ վիրավորվում է և սպանվում մի կազակի կողմից, որը տեր է դառնում նրա գեներ ու զրահին: Երբ գեներալը [Մադարովը] իմանում է, որ *սարդարը* սպանվել է, շատ է ափսոսում, որ մահ գերի չի ընկել: Մադարովը նրա ձին ու զրպանի դուրանը վերցնում է: Քանի որ նրանք հին



ծանոթներ էին, և բացի այդ [Մադաթովը] հարգալից վերաբերմունք ուներ իշխանավորների նկատմամբ, գեներալը կարգադրում է *սարդարի* գլուխը դիակին միացնել ու ինչպես հարկն է, (մահմեդական) օրենքներով հողին հանձնել...

Ամիր խանը թիկնեղ, հաստամարմին ու շատակեր մի մարդ էր: Նա [ղաջարական] յուխարի-բաշ ցեղախմբից Ջան Մուհամմադ խանի եղբայր, Շահողույի Աղա Ղաջարի որդին էր: Ներկայիս Ղաջար շահերը աշաղե բաշ<sup>438</sup> ցեղախմբից են: Երբ Նադիր շահից հետո գահ է բարձրանում Մուհամմադ Հասան խան Ղաջարը, այդ ցեղը երկու խմբի է բաժանվում, որոնք միմյանց դեմ երկպառակշակյա կռիվներ մղելով՝ շատերին են կոտորում ու գերի վերցնում: Ի վերջո ընդհարումներին վերջ տալու ու միմյանց միջև բարեկամական կապեր հաստատելու նպատակով Ղաջարական յուխարի բաշ ցեղախմբի ավագներից Ջան Մուհամմադ խանի եղբայր Շահողույի Աղայի դատերը կնուրյան են տալիս Բաբա խանին, որը հայտնի էր Ֆաթիալի շահ անվամբ: Նրանից էլ ծնվում է Աբաս Միրզան: Այդպես Ամիր խանը դառնում է նրա քեռին: Երբ նրան սպանեցին, հիսուն տարեկան էր: Նա լավ էր կրակում:

Ռուսական բանակը հետապնդում է Մուհամմադ Միրզայի զորքը մինչև Գանձակի սահմանները և շատերին կոտորում: Ընդարձակ հարթավայրը ծածկվում է սպանվածների մարմիններով, որոնք իրար վրա կուտակվելով բլրակներ են գոյացնում<sup>439</sup>: Բազմաթիվ գերիներ ու մեծ ավար է ընկնում նրանց [ռուսների] ձեռքը: Փախչողների ավանգարդը հասնելով գումակին՝ բոլորը միասին շտապում են դեպի Ղարաբաղ: Այնքան արագ էին հեռանում, որ քեռնակիրները, (136ր) իրենց գործը բողաժ, գրաստներն ու ուղտերին ազատ են արձակում և իրենց բանակի ողջ ահռելի ավարը դաշտում բողնում...

Գանձակն անցնելուց հետո Մուհամմադ Միրզան մի քանի անգամ հրամայում է կանգ առնելու շեփորները հնչեցնել, բայց ոչ ոք վախից կանգ չի առնում: Յուրաքանչյուրը շտապում է մյուսից առաջ անցնել: Ամբողջ գիշերը անց են կացնում իրենց իրերը այս ու այն տեղ թափափելով խուճապահար փախուստի մեջ: Արշալույսին հասնում են Թարքառ գետի ափը, ուր ի վերջո դադար են տալիս, որպեսզի քիչ հանգիստ առնեն:

Նազար Ալի խանը իր *սարքազ* հետևակազորով մինչև կեսգիշեր ամրոցում է մնում: Բայց հետո վախից գլուխը կորցրած՝ իր զորագնդով ամբողջ

<sup>438</sup> Մագանդարանի Ղաջարները բաժանվում էին 2 խմբի՝ յուխարի բաշ և աշաղի բաշ: Այդ խմբերից առաջինը ավագ էր համարվում (տե՛ս Н. Шонен, ук. соч., с. 532):

<sup>439</sup> Ըստ ռուսական աղբյուրների, պարսկական կողմը Շամխորի ճակատամարտում կորցնում է շուրջ 1500 մարդ (Кавказский сборник, т. 22, с. 23):

դուրս է գալիս ու փախուստի դիմում դեպի Ղարաբաղ: Վերը նշված վայրում միանում է Մուհամմադ Միրզայի զորքին:

Մուհամմադ Միրզան այս դեպքերի մասին տեղեկացնում է իր հայր Աբաս Միրզային: Վերջինս էլ, ճարահատյալ, դադարեցնում է Շուշի բերդի պաշարումը ու այնտեղից դատարկաձեռն ճանապարհի ընկնում դեպի Գանձակ:

## ԳԵՆԵՐԱԼ ՄԱԴԱԹՈՎԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ ԱՔԱՍ ՄԻՐ- ՋԱՅԻ ԴԵՄ ԳԱՆՉԱԿՈՒՄ: ԱՔԱՍ ՄԻՐՋԱՅԻ ԲԱՆԱԿԻ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

Շամխորի ճակատամարտից մեկ օր անց գեներալ Մադաթովը Գանձակ է մտնում<sup>440</sup> և կազմակերպում նրա կառավարումը: Խաղաղեցնում հեռու-մոտիկ շրջանները և ամրորում վշտացած սրտերը: (137ա) Պաշարման ծանր դրությունից հանում է Քիլիսաքենդի հայերին, որոնք իրենց կյանքի ու կայքի համար անհանգստացած ամրացել էին իրենց բաղամասերում: Նրանց մեծամեծները՝ ավագներն ու տանուտերերը ներկայանում են [Մադաթովին] ու ողջունում նրան: Երկու օր անց ժամանում է նաև Ն. Գ. կոմս Պասկևիչը 15000 զինվոր ունեցող ռուսական բանակով ու 5 մեծ բնդամորներով և միանում գեներալ Մադաթովին: Այսպիսով, բացի հեծելազորից և կազակներից [ռուսական] կանոնավոր բանակում կար 19000 զինվոր և 22 բնդամոր:

Մյուս կողմից Աբաս [Միրզան] առաջ է ընթանում՝ իր հետ վերցնելով Շուշի բերդի մոտ եղած իր ամբողջ զորքը, որը Մուհամմադ Միրզայի զորագնդի հետ միասին կազմում է ընդամենը 60000 հեծելազորային ու հետևակազորային զինվորներից բաղկացած մի բանակ, որը ուներ 25 բնդամոր՝ չհաշված Մուհամմադ Միրզայի 4 բնդամորները:

Աբաս Միրզան իրամայրում է Մարանդի Նազար Ալի խանի մորուքը խուզել և էլի վրա մտնեցրած, բանակում պտտելով ամարգել, զի ոչ ամբողջ պաշտպանելու իր իրամանն էր կատարել, ոչ էլ Մուհամմադ Միրզային զորք էր տրամադրել: Միաժամանակ Մուհամմադ Միրզայի զորքում ազդարարում են, որ իր զորավարին քած ու փախուստի դիմած զորքի պատիժը կլինի այն, որ նրան կնետեն թշնամու ու սեփական բանակի միջև, որպեսզի երկու կողմից այն կոտորեն:

Դրանից հետո Աբաս Միրզան կանգառից կանգառ շարժվելով գալիս, գիշերը կանգ է առնում Գանձակի վերևում գտնվող Ջազալու կոչված վայրում: Վախից ու անհանգստությունից մինչև առավոտ չեն քնում: Լուսաբա-

<sup>440</sup> Գեներալ Մադաթովը ռուսական զորքով Գանձակ է մտնում 1826թ. սեպտեմբերի 4-ին, (տե՛ս АКАК, т. 6, в. 2, д. 678, с. 374):

ցին այլևս չեն արշավում դեպի Գանձակ, այլ գալիս են Շեյխ Նիզամու դամբարանի մոտ և դասավորում իրենց բանակի հազարյակները: Այնտեղ ռուսաց պետությանը դավաճանած և ղզրաշների կողմն անցած մայոր Սամսոն (Սամսամ) խանը<sup>441</sup>, որը մոր մահմեդականացվածների ջոկատի հրամանատարն էր, Աբաս Միրզային հետևյալն է ասում.

-Թեև ես երդվել եմ, (137թ) որ ռուսաց թագավորի ու նրա զորքի դեմ չեմ կռվելու, բայց [իմացեք], որ ձեր փրկությունը զորքը մի քանի կողմերից կռվի համելու մեջ է: Այնպես որ, եթե մի կողմից սկսեն մեղել, մեկ այլ կողմից օգնության շտապեք և քույր շտաք, որ զորքը կազմալուծվի: Չէ՞ որ Ձեր բանակը մեծ է, իսկ նրանցը՝ փոքր:

Աբաս Միրզան Սամսոն խանի խորհուրդը չի ընդունում՝ պատճառաբանելով՝

-Զանի որ երդվել եք, ուրեմն էլ չեք կռվի, և Ձեր խորհուրդը մեզ օգտակար չի լինի:

Այնուհետև թագաժառանգը իր բանակը մեկ ամբողջական զորագունդի է վերածում և դասավորում այն իմամի դամբարանից մինչև Կուրը ձգվող մեկ շարքով: Հրետանին տեղադրում է զորքի առջևում գտնվող մի բլրի կողքին, իսկ ինքը, տեղավորվելով բլրի վրա, սկսում է դիտել զորքն ու հետևել ճակատամարտի ընթացքին<sup>442</sup>:

Մյուս կողմում ռուսական բանակը մույնպես մեկ ամբողջական զորագունդ է կազմում: Գեներալը [Մադաթովը] ասում է, որ եթե ղզրաշները երկու-երեք կողմերից գրոհի անցնեն, իրենց [ռուսների] համար փոքր-ինչ դժվար կլինի, իսկ եթե մի կողմից հարձակվեն, ապա մեկ ժամվա մեջ նրանց կջախջախեն: Այնուհետև զորավար Պասկևիչը տեղավորվում է բանակի կենտրոնում և զորքը ղեկավարելու իրավունքը համձնում գեներալ Մադաթովին<sup>443</sup>: Գեներալը կարգադրում է հրանոթները խոշոր կոտորակներով ու շղթաներով լիցքավորել և մարտադաշտի մի ցածր տեղում բացցնել, որից

<sup>441</sup> Թերևս խոսքը Սամսոն Մյակինցևի մասին է, որը պարսկական բանակում զործող ռուս զեքիներից ու դասալիքներից կազմված ջոկատի հրամանատարն էր (տե՛ս Кавказский сборник, т. 24, с. 79): Այդ ջոկատը, որ կռվում էր «բահաղե-րան» (մոնղ.- «հերոս», «հսկա»), տեղիվել էր դեռևս առաջին ռուս-պարսկական (1804-1813) պատերազմի տարիներին (عبدالرزاق دینلی، مأسر سلطانیه، ص ۲۵۵):

<sup>442</sup> 1826թ. սեպտեմբերի 13-ին տեղի ունեցած Գանձակի ճակատամարտի մասին տե՛ս Н. Н. Дубровин, ук. соч., т. 6, с. 676-680; АКАК, т. 6, ч. 2, д. 686, с. 378.

<sup>443</sup> Ռուսական աղբյուրների տվյալների համաձայն ռուսական բանակը բաղկացած էր 10319 զինվորներից, մինչդեռ պարսկական բանակի հետևակազոր կազմված էր 15000, իսկ հեծելազորը 20000 հոգուց (Н. Н. Дубровин, т. 6, с. 614): Մակայն ռուսական աղբյուրներում չի նշված պարսկական բանակին միացած անկանոն հետևակազորի ու հեծյալների բանակը, որը կազմվում էր ապստամբած մահմեդականներից:

հետո կռվի է համում զինվորների երեք զորագնդեր, որոնք ուժգին հրաձգությամբ են սկսում:

Այս կողմից մարտը սկսում են Մարանդի ու Ղարաղաղի *սարքազ* հետևակագործները, որոնք ամենաքաջն էին համարվում: Այդ զորագնդերը անմիջապես մեկ շարք կազմած, «Յա Ալի» գոչելով, առանց վախի ու երկմտանքի, գրոհում են [ոռու] զինվորների վրա ու նրանց ետ մղում: (138ա) Այդ ժամանակ գլխավոր հրամանատար Պասկեկիչը ցանկանում է նահանջի հրաման տալ, որպեսզի հաջորդ օրը մի բան հնարեն [մարտը շարունակելու համար]: Բայց գեներալ Սադաթովը չի համաձայնվում ասելով.

Մրանք նման չեն եվրոպական բանակներին: Հենց որ Դուք վերադարձի թմրուկները զարկել տաք, նրանք անմիջապես մեզ վրա կարշավեն ու մեր զորքը ցարուցրիվ կանեն:

Դրանից հետո գլխավոր հրամանատարն ասում է.

- Թող Չեր կամքը լինի:

Գեներալը կարգադրում է թաքցրած հրանոթներից միանգամից կրակ բաց անել, և այն վիշապները աջից ու ձախից սկսում են իրենց երախից կրակ ժայթքել: Կախարդ գնդուհու նման ամեն կողմից աղմուկ-աղաղակով վրա են տալիս ու հազարավոր շորաներ կախած հրդեհված խելագարի պես այս ու այն կողմ նետվում: Ունչացնում են [ղզլքաշների] քաջարի առաջամարտիկներին ու անմշակ կտավի կտորի պես ճեղքում Արաս Միրզայի բանակը: Մահը սկսում է հնձել նրա մարտիկներին, որոնց վրա է կախվում մաուշակագույն երկիրը...

Քառորդ ժամ մարտադաշտում ոչինչ չէր երևում: Երբ ցրվում է հրի ու ծխի ամպը, և օդը պարզվում, (138բ) [ղզլքաշներից] անվնաս մնացածները տեսնում են, որ իրենց ընկերները իրենց կողքին չեն, խուճապահար փախուստի են դիմում: Ոմանք առանց զենք զործածելու, անզամ առանց իրենց հրացանները պարպելու, բռնում են նահանջի ճամփան: Արաս Միրզան, երբ տեսնում է դեպքերի նման ընթացքը, քլոյի ցած է իջնում, հեծնում սրարշավ մոլոլը ու սկսում փախչել: Մինչև Արաքսի ափը ձին չի կանգնեցնում: Ամբողջ բանակը փկուրք է դարձնում ու փախուստի դիմում: Այս ճակատամարտը տևում է մեկ ու կես ժամ, մինչդեռ Շամխորինը տևել է երեքից չորս ժամ: Արաս Միրզայի բանակը փախչելով՝ այդ օրը Գանձակից հասնում է մինչև Խողա-Ալիքի մի կամուրջը և այն անցնում<sup>444</sup>: Ճակատամարտի օրը [ղզլքաշների] բանակի մի զորագունդ նշանավոր զորավար Ալլահյար խանի գլխավորությամբ ամրանում է քլոյի վրա, որը Արաս Միրզայի բանակի փախուստից հետո հանդես բերելով խիզախությամբ ու տոկունությամբ, մինչև

<sup>444</sup> Գանձակի ճակատամարտում իրանցիներից զոհվում է 2000, իսկ գերի է ընկնում 1000 մարդ (Утверждение, т. 4, ч. 1, с. 175):

մայրամուտ շարունակում է կովել: Օրվա վերջին գեներալը (Մադաթովը) մարդ է ուղարկում, թե՛ «Ջուր տեղը ձեզ կորստյան մի՛ մատնեք»:

Նրանք էլ անձնատուր են լինում, և զենքերը վայր դնելով, ցած իջնում, որով ազատվում են ստույգ մահից:

Արաս Միրզայի նահանջից հետո նրա երկու բնդանոթները մնում են Թարթառ գետի ափին, քրճի դաշտում: Օղուրլու խանին ուղարկում են, որ պեսզի գնա այդ բնդանոթները բերի, բանակ հասցնի: Բայց [նա] չի կարողանում<sup>445</sup>, և դրանք այնտեղ էլ մնում են:

Թագաժառանգը իր պարտությունից հետո մեկ օր ու գիշերվա ընթացքում Արաս գետն անցնում է և Մարանդի Նազար Ալի խանին պարանով խեղդել տալիս: Թավիլն Շամում նա ներկայանում է այնտեղ իջևանած շահին և բոլոր պարտությունների մեղքը քարդում Ամիր խանի ու Նազար Ալի խանի վրա, (139ա) թե՛ «Նրանք իրենց թուլությամբ ու դավաճանական վարքով իրանը պարտության դատապարտեցին»<sup>446</sup>:

Ֆաթհալի շահը հեռանում է Արադի կողմերը, իսկ Արաս Միրզան գնում է Թավրիզ...

Այս նշանավոր հաղթանակից հետո գեներալ Մադաթովի անունը էլ ավելի մեծ հռչակ է ստանում, և նրան անվանում են Մադաթով-Իրանեղոյ<sup>447</sup>...

## ԴՋԼԲԱՇՆԵՐԻ ՓԱՆՈՒՍՏԻՑ ՀԵՏՈ ՏԵՂԻ ՈՒՆԵՅԱԾ ՋԱՆԱՋԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երբ հզոր թշնամու ձեռնարկումները ձախողվում են, և նա զրկվում է իր զինամթերքի պաշարներից ու ավարից, Շիրվանի Մուսթոֆի խանը Իրրահիմ խան սարդարի հետ (139թ) Ղարադաղ է փախչում<sup>448</sup>: Միր Հասան խանը, Թալիշից ձեռք քաշելով, ղզրաշների կողմն է գնում: Սակայն Նուխիի Հուսեյն խանը որոշ ժամանակ շարունակում է իր նեճգ գործերը Շարիում: Խեղճ ժողովրդից, տարբեր տեղերից եկած վաճառականներից բռնագանձումներ է կատարում: Եղբորը՝ Հաջի խանին, լեզգիների ջոկատով ուղար-

<sup>445</sup> Օղուրլու խանը ձերբակալվում է ռուսների կողմից, (տե՛ս В. А. Потто, ук. соч., т. 3, вып. 1, с. 173).

<sup>446</sup> Ռուս զորավար կոմս Սիմոնովիչը իր ելիշողություններում Նազար Ալի խանին համարում է պարսիկ միակ զորավարը, որը քիչ թե շատ ուզմավարական ընդունակություններ ունենալով և ժամանակին նահանջելով Գանձակից՝ կարողանում է փրկել ոչ միայն իր զինվորներին, այլև բանակի գույքը (Кавказский сборник, т. 22, Тифлис 1901, Материалы, с. 25):

<sup>447</sup> «Իրան-ե դաշ»- պարսկ. «Իրանին հաղթող, դուրս քշող»:

<sup>448</sup> Շիրվանի Մուսթոֆի խանը սեպտեմբերի 24-ին հեռանում է Ղարաբաղ, (տե՛ս АКАК, т. 6, ч. 2, д. 694, с. 383):

կում է Կուրն անցնելու ու Ղարաբաղի քոչվոր ցեղերի ժամանակավոր կացարանները կողոպտելու: Ի վերջո Ն. Գ. գլխավոր հրամանատարը [Պասկևիչը] զորքով շարժվում է նրանց դեմ, քայց դեռ երեք *ֆարսախ* հեռու էր Նուխիից, երբ Հուսեյն ու Հաջի խաները փախչում են Իրան<sup>449</sup>:

Գլխավոր հրամանատար Պասկևիչը ռուսական զորքով գնում է Ղարաբաղի Թախթ-ե Թովուզ (Թավուս) վայրը<sup>450</sup> և այնտեղ իջևանում: Գեներալ Մաղաթովը մտնում է Շուշի ամրոցը: Տեղի հայ ու մահմեդական բնակչությունը նրան ցնծությամբ են դիմավորում: [Մաղաթովը] ողջունում ու քաջալերում է բոլոր նրանց, ովքեր ռուսական հզոր տերությանը ծառայել էին հավատարմորեն, ռուսական զորքին օգնել ու անձնագոհություն էին ցուցաբերել: Իսկ այն անձանց, որոնք անմտորեն ըմբոստանալով ու [ռուսներին] դավաճանելով ղզրաշների կողմն էին անցել, պատժում է ու սպառնալիքներով վախեցնում: Այսպես բոլորին սիրաշահելով ու ապահովություն ներշնչելով հանդարտեցնում է: Կարգադրում է Շուշիի բնակչությանը որոշ տեղերում պահվող արքունի և այլ պահեստներից պարեն ու սննդամթերք տալ, որպեսզի պաշարման օրերի չարչարանքներից հետո նրանք փոքր-ինչ հանգիստ առնեն<sup>451</sup>: Նաև վրեժ է լուծում բոլոր այն անարգանքների համար, որոնք Մեհդի Ղուլի խանը Ավետարանոցում հասցրել էր իր տոհմին:

Այդ ժամանակ գլխավոր հրամանատար Պասկևիչը Արաքսն անցնելով՝ կողոպտում է Ղարաղաղի տարածքը<sup>452</sup>, որից հետո այն կողմերի բնակիչներին հանդարտեցնում է (140ա) ու մեծ զորքով գնում դեպի Թիֆլիս:

Նույն տարվա ձմռանը Ն. Գ. գեներալ Մաղաթովը Ղարաբաղի, Շիրվանի զորքերով՝ նաև ռուս զինվորների մի քանի ջոկատ վերցրած, արշավում է Մեշքիմի ու Ահարի տարածքները կողոպտելու<sup>453</sup>: Այդ շրջանները ամբողջովին թալանելով՝ մեծ ավար է հայթայթում Ղարաբաղի բնակչության համար:

<sup>449</sup> Հուսեյն և Հաջի խաները հեռանում են Շաքիից հոկտեմբերի 18-ին (Նույն տեղում):

<sup>450</sup> Թաղթե Թավուս - Հեղինակը ամենայն հավանականությամբ նկատի ունի Գանձակի տարածքում գտնվող Թովուզ գետի հովիտը: Թախթե Թավուս տեղանունը գործածում է, նաև պարսկալեզու պատմագիր Արդ-առ-Ռազակ Դումբուլին, որի վկայությամբ այն գտնվում է Շուշիից 8 ֆարսախ (= 42 կմ) հեռու, (տե՛ս ۱۴۸ عبدالرزاق دنبلی، مأسر سلطانیة، ص. ۱۴۸):

<sup>451</sup> Кавказский сборник, т. 26, Тифлис 1907, Материалы, с. 51, 102.

<sup>452</sup> Գեներալ Պասկևիչը Ղարաղաղ է արշավում 1826թ. հոկտեմբերի 25-ին, և վերադառնում է նույն ամսվա 31-ին, (տե՛ս АКАК, т. 6, ч. 2, д. 698, с. 385):

<sup>453</sup> Գեներալ Մաղաթովի արշավանքը Ղարաղաղ սկսվում է 1826թ. դեկտեմբերի 28-ին, ավարտվում՝ հունվարի 16-ին, (տե՛ս АКАК, т. 6, ч. 2, д. 703-705, с. 387-389):

Այնտեղ (Մադաբուլը) շահսեան<sup>454</sup> խաներից պահանջում է հպատակվել կայսերը, և նրանք երդվում են, որ (ռուսներին) չեն դավաճանի:

Նրանց մեջ էր Աբա խանը, որը դեռ գլխավոր հրամանատար երմուլովի ու Մադաբուլի իշխանության տարիներին մեկ աչքից կուրացվել էր: Նա շատ խիզախ մարդու համբավ ուներ, որը անփույթ վերաբերվելով իր կյանքին, հաշվի չէր նստում ղզրաշների պետության իշխանավորների հետ: Որքան էլ Աբաս Միրզան նրան Թավրիզ էր կանչում, չէր գնում: Մի անգամ նույնիսկ Աբաս Միրզան Ղարադաղում գտնվող Ամիր խան սարդարին գաղտնի կարգադրում է, որ նրան մի ինչ-որ ձևով ձերբակալի ու Թավրիզ ուղարկի: Ամիր խանն էլ որոշում է իր դստերը Աբա խանի որդուն կնության տալու և այդպիսով նրա հետ ազգակցական կապեր հաստատելու միջոցով ձերբակալել խանին, բայց չի ստացվում: Երբ Շիրվանի Մուսթոֆի խանը Ֆիր ամրոցից փախչում է ղզրաշների երկիրը, հյուրընկալվում է Աբա խանի կողմից: Նրան Թավրիզ տանելը մեծ գործ համարելով՝ (Աբա խանն) ինքը նրա հետ է գնում, կարծելով, թե Մուսթոֆի խանը իր հանցանքների համար պիտի միջնորդի: Այնտեղ հասնելուն պես Աբաս Միրզան նրան ձերբակալում է ու մի աչքից կուրացնում:

Հիրավի, գեներալ (140թ) Մադաբուլը ասպատակում է Մեշքինից մինչև Ղարադաղի խաների նստավայրը հանդիսացող Ահաբ քաղաքն ընկած տարածքը և Ղարաբաղի բնակչության համար ձեռք բերած մեծ ավարով վերադառնում: Այդ ընթացքում ղզրաշների երկրում մի այնպիսի խուճապ ու իրարանցում է սկսվում, որ երե Մադաբուլը մինչև Թավրիզ ու Թեհրան էլ գնար, ոչ որ նրան չէր կարողանա կանգնեցնել<sup>455</sup>: Ամենուր լսելով Մադաբուլի ու ռուսական զորքի գալստյան մասին՝ քուլորը կամ հնազանդություն էին հայտնում ու սկսում նրան ծառայել, կամ էլ փախուստի էին դիմում: Նույնիսկ Բագաթառանգ Աբաս (Միրզան) Թավրիզում մտածում էր փախուստի մասին: Ամեն օր կարգադրում էր ձիերը թամբել ու բակ հանել, իր կանանց ու աղջիկներին ձի հեծնել ու ձիավարել սովորեցնել, որպեսզի նրանցից յուրաքանչյուրը, Մադաբուլի Ղարադաղն անցնելու ու Թավրիզին մոտենալու մասին իմանալուն պես, մեկական խուրջին փող վերցրած, փախուստի դիմեր: Այսպիսի մեծ վախի ու խուճապի մեջ էին, մինչև որ լուր է հասնում, թե Մադաբուլը Ահարից ետ է դարձել: Այս առթիվ շատ են ուրախանում:

Մադաբուլը այնտեղից վերադառնալով՝ գնում է Թիֆլիս: Գլխավոր հրամանատարը (Երմուլովը) նրան նորից մեծ պատրաստություններով ու բազ-

<sup>454</sup> Չանազան ցեղերից կազմված սիլ-սյուսիյուր ցեղախումբը Սեֆյանների օրոք Թուրքիայից բռնում է Պարսկաստան և իրեն հայտարարում շահսեան (թուրք. շահին սիրող): Մակայն որդւ ժամանակ անց սկսում է ասպատակել նրա տարածքները, (տե՛ս Н. П. Петрушевский, ук. соч., с. 95):

<sup>455</sup> АКАК, т. 6, ч. 2, д. 704, с. 389.

մաքանակ զորքով հանձնարարում է արշավել Իրան: Մադաթովն էլ զորքով գալիս է [Ղարաբաղ] և մտադրվում շուտով Խոդա-Աֆեթինի կամուրջն անցնել: Ղզլբաշների կողմից նրա դեմ կռվելու ու պայքարելու համար հավաքվում է չելեբիանլու<sup>456</sup> և այլ ցեղերի մի մեծ բազմություն:

Այդ ընթացքում կառավարչապետի պաշտոնից հեռացվում է Երմուլովը, և նրա փոխարեն նշանակվում է կոմս Պասկևիչը<sup>457</sup>, (141ա) որը իր հերթին գեներալ Մադաթովի փոխարեն Ղարաբաղի ու Գուշթասֆի<sup>458</sup> զավառների կառավարիչ է նշանակում Ն. Գ. իշխան Արխագովին: Մադաթովին ենթակա զորքը հանձնվում է գեներալ Պանկրատևին (Բանդրադով)<sup>459</sup>: Շտաբի պետ նշանակված իշխան Արխագովը հինգ օրում Թիֆլիսից գալիս է Մադաթովի զորակայանը, որը գտնվում էր Խոդա-Աֆեթինի կամրջի մոտակայքում: Այնտեղ Մադաթովից ստանում է իր պաշտոնը ու նրան ուղարկում Թիֆլիս: Ինքն էլ բանակը տանելով Ղազու-չալ՝ սկսում է կառավարել տարածաշրջանը:

Տարբեր կարծիքներ կան գեներալ Մադաթովի պաշտոնաթող արվելու պատճառների վերաբերյալ: Ոմանք ասում են, թե երբ կոմս Պասկևիչը գալիս է, դեռևս իր կառավարչապետ նշանակված լինելու մասին ոչ ոքի չի հայտնում, իսկ գեներալը որոշ հարցերում նրա հետ չի համաձայնվում ու հրամանները չի կատարում: Ոմանք էլ ասում են, թե դրա պատճառը Մեշքի-նի արշավանքն ու Ահաբից ետ դառնալն էր, որը կատարվել էր առանց կառավարության թույլտվության: Սի մասն էլ պնդում է, թե Ահարում նրան ոչ թե վերադառնալու, այլ ուրիշ հրաման էր տրվել: Ինչևէ, գեներալ Մադաթովը Թիֆլիս գնալով՝ այնուհետև Դարչաք է ուղարկվում:

<sup>456</sup> Չելեբիանլուները Ղարադաղում բնակվող քրդական ցեղերից են (տե՛ս Ս. И. Аверьянов, Курды в войнах России с Персией и Турцией в 19-ом столетии, Тифлис, 1900, с. 23):

<sup>457</sup> Գեներալ-ֆելդմարշալ կոմս Պասկևիչը (1827-1831) Կովկասյան առանձին կորպուսի հրամանատար և քաղաքացիական մասի կառավարիչ է նշանակվում 1827թ. մարտի 28-ի հրամանով, (տե՛ս АКАК, т. 7, д. 2, с. 1):

<sup>458</sup> Գեշթասֆը կամ Գուշթասֆը Սասանյան Պարսկաստանի քաղաք էր, հիմնված «Լոհրասալի որդի Գեշթասֆի կողմից» և ձգվում էր Արաքսի հետ միացման վայրից Կուր գետի երկայնությամբ մինչև Կասպից ծովը (Ս. Ջալալյան, նշվ. աշխ., հ. 2, էջ 364): Այդ վայրում էր հետագայում Սալյանը (В. Ф. Минорский, ук. соч., с. 108): Հեղինակը ի նկատի ունի Շիրվանի ու Շաքիի շրջանները:

<sup>459</sup> Գեներալ-մայոր Պանկրատևը արդեն 1827թ. մայիսին ռուսական բանակի ղարաբաղյան զորագնդի հրամանատարն էր, (տե՛ս АКАК, т. 7, д. 507, с. 542):



ԻՇԽԱՆ ՊԱՍԿԵՎԻՉԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ ԻՐԱՆ, ԿՈՒՎԸ  
ԱՐԱՍ ՍԻՐՋԱՅԻ ԴԵՄ: ԱՐԱՍԱՐԱԴԻ ՈՒ ԵՐԵՎԱՆԻ  
ԲԵՐԴԵՐԻ ԳՐԱՎՈՒՄՆ ԵՎ ԱՅԼ  
ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ն. Գ. Երևանի կոմս Պասկևիչը 1827թ. մարտ ամսին նշանակվում է կով-կասյան կորպուսի գլխավոր հրամանատար: Տարածաշրջանի, հեռու-մոտիկ վայրերի գործերը կարգի բերելուց, կառավարիչներ պաշտոնաթող անելուց ու նորերը նշանակելուց հետո կազմակերպում ու ամրացնում է բանակը: Մարտական զորագնդերով ու խիզախ մարտիկներից բաղկացած մեծ բանակով որոշում է դեպի Իրան արշավել: Լուրջ պատրաստություններից հետո (141ա) բազմամարդ զորքով Թիֆլիսից շարժվում է դեպի Երևան:

Երևանի *քեկյարքեկ* Հուսեյն խան սարդարը այս մասին տեղեկանալով՝ իր բոլոր ցեղերին կարգադրում է քոչել-հեռանալ (Երևանի խանությունից): Եղբորը՝ Հասան խանին է հանձնում Սարդարապատի ու Երևանի բերդերի պաշտպանությունը, իսկ ինքը զորքով սկսում շրջել իր տարածքներում: Թագածառանգ Աբաս Միրզան ևս զորք է մախսապատրաստում, որից հետո հեծյալ ու հետևակային զորագնդերով ու հրետանիով Թավրիզից օգնության է շտապում Հուսեյն ու Հասան խաներին: Խոյի ճանապարհով գալիս է Արաքսի ավիղ, կանգ առնում Քեջլար լեռան մոտակայքում գտնվող Կարազիաղին (Ղարա-զիա-աղ-դին) վայրում և այնտեղ հաստատում իր բանակատեղին:

Այդ ընթացքում Իրանի պետության կողմից Նախիջևանի սահմանների մոտ Դարալագյազ (Դարե-ալ-քյաս) կոչված վայրն ուղարկված զեներալ-մայոր Մեհդի Ղուլի խանը սուրհանդակի միջոցով հայտնում է գլխավոր հրամանատարին՝ Իրանից հեռանալու ու կրկին Ռուսաստանի հզոր պետությանը հպատակվելու իր ցանկության մասին: Գլխավոր հրամանատարի հրամանով իշխան Արխագովը զեներալ Պանկրատևի հետ զինվորների երկու ջոկատով գնում են ու հիշյալ խանին իր մերձավորների ու հպատակների հետ քերում Ղարաբաղ<sup>460</sup>: Գլխավոր հրամանատարի կարգադրությամբ անմիջապես նրան ու նրա հպատակներին բնակության վայր է տրամադրվում:

Սա գլխավոր հրամանատարի առաջին ձեռնարկումն էր:

Նախիջևանի էհսան խանը, որին հանձնված էր Աբասաբադ բերդի պաշտպանությունը ու նախիջևանյան զորքերի հրամանատարությունը, լինելով հեռախոս ու կրթված անձնավորություն, նկատում է ղզրաշների պետության բուլացումն ու անկումը: Նա գաղտնի մարդ է ուղարկում գլխավոր

<sup>460</sup> Մեհդի Ղուլի խանի վերադարձի մասին տե՛ս (ԱԿԱԿ, Խ. 7, Է. 402, Ը. 453, 454; В. А. Потто, укр. соч., т. 3, вып. 4, Ը. 407, 412):

հրամանատարի մոտ և հայտնում, որ երբ էլ որ Ն. Գ. զորքով (142ա) այն կողմերը գա, մա Արասաբաղ բերդը կհանձնի<sup>461</sup>:

Գլխավոր հրամանատարը այս իմանալուն պես դեպի Նախիջևան է շարժվում: Դժբալների պետության իշխանավորները ևս իմանում են էհսան խանի մտադրության մասին: [Նրանք] Արասաբաղը<sup>462</sup> պաշտպանելու համար 4000 զորքով ու բախտիարների հետևակազորով մի քանի խաների հետ այնտեղ են ուղարկում Մուհամմադ Ամին խան Դաջարին, որը այն պետության բարձրաստիճան իշխանավորներից էր, Ֆաթիալի շահի փեսան ու Արաս Միրզայի զորագնդերի հրամանատարներից մեկը<sup>463</sup>:

Ն. Գ. գլխավոր հրամանատար Պասկևիչը պաշարում է Արասաբաղը և սկսում ուժգին մարտեր մղել թե՛ Նախիջևանի, թե՛ Խոյի կողմից, որը Արաքսի մյուս ափին է:

## ՔԵԶԼԱՐԻ ՈՒ ԶԵՎԱՆԲՈՒԼԱՐԻ ՃԱԿԱՏԱՍԱՐՏԵՐԸ, ԱՐԱՍ ՄԻՐԶԱՅԻ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԴՐՈՇՆԵՐԻ ԿՈՐՈՒՍԸ

Արաս Միրզան լուրեր է ստանում, որ ռուսները թեժ մարտեր են մղում Արասաբաղի համար, և կազակ հեծյալները ամեն օր անցնելով Արաքսը՝ խիզախորեն կռվի են բռնվում Իբրահիմ խան սարդարի բանակի հետ, որը իրենց կողմից այնտեղ էր ուղարկվել: Արաս Միրզան որոշում է մի քանի հազար հեծյալներով գնալ, Արաքսի ափին, [Արասաբաղից] հրազենի զնդակի հեռավորության վրա գտնվող Քեզլար լեռան ստորոտում դարան մտնել: Առավոտյան, երբ կազակները իրենց ամենօրյա սովորության համաձայն Արաքսն անցնելով՝ իրենց զորքի հետ մարտի կրոնվեն, Իբրահիմը իր զորագն-

<sup>461</sup> Թե՛ ռուսական, թե՛ պարսկական տղայություններում հիշատակություններ կան Նախիջևանի խանության կառավարիչ էհսան խանի Պարսկաստանի նկատմամբ դրսևորած դավաճանական վարքագծի և ռուսների կողմն անցնելու միտումների վերաբերյալ (AKAK, տ. 7, ձ. 510, c. 545; رضاقلخان هدایت. تاریخ روسیه):

<sup>462</sup> (الصفاى ناصرى. ص. ۷۶):

<sup>463</sup> Արասաբաղի բերդը կառուցվել է Նախիջևանի Աստապատ վայրում՝ Արաքսի ափին 1810թ. ֆրասիացի ճարտարեսպետների նախագծով եվրոպական ռազմական իր ժամանակի պահանջներին համապատասխան (عبدالرزاق دتلی. (مأسر سلطانیه. ص. ۱۳۵; رضاقلخان هدایت. تاریخ روسیهالصفاى ناصرى. ص. ۷۶):

Պարսիկ պատմագիրները գովեստով են խոսում նրա ամառիկության մասին, սակայն անգլիացի ուղեգիր Ջ. Մորիսը այնքան էլ բարձր կարծիքի չէր նրա ամրության (Հ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. 2, էջ 309-311):

<sup>464</sup> AKAK, տ. 7, ձ. 513, c. 550.

դով կարճ ընդհարումից հետո փախուստի կղիմի և նրանց դեպի ծուղակը կառաջնորդի: Արաս Միրզան էլ դարանից դուրս գալով՝ նրանց կկոտորի:

Այսպես, Արաս Միրզան 5000 մարտական մի զորք վերցրած գնում, (142բ) գիշերը դարան է մտնում Ջևանբուլաղ անունը կրող մի բավական խոր ձորում ու սպասում արշալույսին<sup>464</sup>: Լուսաբացին, երբ արեգակի ոսկե-բազ գլուխը սկսում է նշմարվել հորիզոնում, լուր է ստացվում, թե ահա դրագուն կազակների<sup>465</sup> գունդը իր սովորության համաձայն Արաքսը անցել ու կռվում է Իբրահիմ խանի զորքի դեմ: Իբրահիմ խանը, նախորդ օրվա պայմանավորվածության համաձայն, պարտված ձևանալով, իր զորագնդով կեղծ փախուստի է դիմում դեպի դարանավայրը: Կազակներն էլ իրենց երկու քնդանորսներից կրակ բացելով՝ իրենց երկուսից երեք հազարանոց կանոնավոր զորագնդով սկսում են նրանց հետապնդել: Արաս Միրզայի զորքը դարանից դուրս է գալիս ու խառնվելով Իբրահիմ խանի փախչող զորագնդին՝ սկսում է փախչել: Ղզրաշ զորքը կարծում էր, թե կազակները իրենց հետապնդելիս միմյանցից կհեռանան ու կցրվեն, որից հետո իրենք կշրջվեն ու [ռուսներին] պարտության կմատենեն: Բայց կազակները, առանց իրենց դասավորվածությունն ու շարքերը խախտելու [ղզրաշներին] հետապնդում են՝ գնդակոծելով ու կոտորելով նրանցից շատերին: Այդպես 4-5 *խարսախ* Արաս Միրզային իր զորքի հետ հալածում են, շատերին սպանում, ոմանց էլ գերի են վերցնում: Վերջիվերջո Արաս Միրզան արշավում է դեպի Քեջլար սարը, իսկ նրա հետևակագործն ու հեծելազորը ցրվում է տարբեր ուղղություններով: (143ա) Մինչ նրանք [ղզրաշները] մտածում էին, թե կազակները ցրիվ կգան, իրենք են ցարուցրիվ լինում... Ռուսները ձեռք են բերում մեծ ավար ու մի դրոշ, որով վերադառնում են և ներկայանում գլխավոր հրամանատարին:

Այս պարտությունից հետո Արաս Միրզան Կարազիադիմից փախչում է Խոյի կողմերը:

Գլխավոր հրամանատարը [պարսկական] դրոշն ուղարկում է Արասաբադ և խորհուրդ տալիս, որ գուր տեղը բերդը պաշտպանելու ջանքեր չսփռեն, քանի որ Արաս Միրզան դրոշը բողբ, փախել է: Ռուսական զորքը գլխավոր հրամանատարի կարգադրությամբ ամրոցը պաշարելով՝ մի ուժգին կռիվ է սկսում: Չորս կողմից գրոհի են անցնում և պարսպակործան մեքենաները մոտեցնելով՝ սկսում շուրջը խրամատներ ու ստորգետնյա անցուղիներ փորել: Արասաբադի քնակչությունը Արաս Միրզայից օգնություն ստանալու հույսը կտրում է, և Նախիջևանի Էհսան խանին էլ, որը [ռուսներին] խոսք էր տվել ամրոցը հանձնել, դավաճան էր համարում: Ուստի տազնապահար

<sup>464</sup> Ջևանբուլաղի ճակատամարտի մասին տե՛ս AKAK, т. 7, д. 515, с. 551:

<sup>465</sup> Դրագունական լեյք-գվարդիայի եզերների հիմնվազողային գունդը ստեղծվել է 1814թ. Վերսալում (*Энциклопедический словарь, изд. Ф. А. Брокгауза и И. А. Ефрона, СПб. 1893, т. XI, с. 94*):

[բնակչությունը] որոշում է հանձնվել ու իր անցյալի սխալների համար ներում խնդրել<sup>466</sup>:

Արասարաղի բերդը գրավելուց հետո գլխավոր հրամանատարը այնտեղի բնդանորմներն ու զինամթերքը բռնագրավում է: Մուհամմադ Ամին խանին դադարաւ մյուս խաների ու զինվորների հետ կալանավորելով՝ Քեջլարի կովի գերիների հետ Ղարաբաղի ճանապարհով ուղիղ դեպի Թիֆլիս է ուղարկում: Էհսան խանին իր մատուցած ծառայության համար գովեստի ու պատվի է արժանացնում: Այնուհետև նրան է՝ հանձնվում Նախիջևանի կառավարչի պաշտոնը (143թ) և շնորհվում իր պաշտոնակիցները մեջ առավել հարգարժանն ու հեղինակավորը լինելու պատիվը:

Արասարաղի հաղթանակը տեղի է ունենում 1827/1243թ. հուլիս ամսին:

Մուհամմադ Ամին խանին Թիֆլիս տանելու ժամանակ մի քանի օր Շուշի բերդում են պահում: Նա կարճահասակ, աննշան մազ-մորուքով ու թույլ կազմվածքով մի մարդ էր: Ղաջար ազնվականներից էր համարվում: Շատ մեծ ու սլացիկ մի նժույգ ուներ, այնպես որ այն հեծնելիս երեխայի էր նմանվում: Արաս Միրզան նրան իր ցուցաբերած բուլությունն ու ամբողջ հանձնելու համար իր աստիճանից զրկում ու պաշտոնաթող է անում: Այդ բարձր պաշտոնը այնուհետև տրվում է Ամիր խան սարդարի ավագ որդուն: Արաս Միրզայի քույրը, որը նրա [Մուհամմադ Ամինի] կինն էր, բաժանվում է՝ ասելով, թե՝ «Նա, ով ամբողջը բշնամուն է հանձնում, արժանի չէ իմ ամուսինը լինելու պատվին»:

Ն. Գ. գլխավոր հրամանատարը կազմակերպում է Նախիջևանի ու Արասարաղի կառավարումը և կարգուկանոն հաստատում այնտեղ: Այնուհետև, քանի որ ամռան շոգն ու անտանելի տապը վրա էին հասել, ամբողջում պարեռն նշանակելով ու կայազոր թողնելով՝ Ղարաբաքայի ճանապարհով գնում է Սիսիանի լեռների ու Ղարաբաղի ամառանոցային վայրերի կողմը՝ տաքերն այնտեղ անցկացնելու:

## ԱՐԱՍ ՄԻՐԶԱՅԻ ԺԱՄԱՆՈՒՄԸ ԵՐԵՎԱՆ ԵՎ ՆՐԱ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ ԱՊԱՐԱՆԻ ՌՈՒՄՆԵՐԻ ԴԵՄ

Արաս Միրզան իր կրած դառն անհաջողություններից, Արասարաղի բերդը կորցնելուց հետո ցանկանում է փոքր-ինչ մեղմել իր պարտությունների Բողած ծանր տպավորությունը, որպեսզի խուսափի ժողովրդի կշտամբանքից ու դժգոհությունից: Իմանում է, որ գլխավոր հրամանատար Պասկևիչի գլուխակն ու ռուսական քանակը Ապարանում են, իսկ նրանց հետևից բնդա-

<sup>466</sup> Արասարաղի բերդը հանձնվում է 1827թ. հուլիսի 7-ին, (տե՛ս ԱԿԱԿ, տ. 7, Ճ. 515, с. 552):

նորմեր են բերվում [Երևանի ու Սարգսրապատի] ամրոցները ավերելու համար: Ուստի որոշում է (144ա) դեպի Երևան գնալ, որ միգուցե կարողանա մի քան անել: Իր զորքն ու հրետանին վերցրած Արարատ ամունով հայտնի Ադրի Դադ լեռան կողմով շարժվում է դեպի Երևան: Մտնելով այն տարածքները՝ հանդիպում է Հուսեյն խան սարդարին և որոշ հարցերի շուրջ նրա հետ խորհրդակցում: [Աբաս Միրզան] կարգի է բերում ու կազմակերպում Երևանի [պաշտպանության] գործերը: Հուսեյն խանը խորհուրդ չի տալիս հարձակվել ռուսների գումակի ու Ապարանի բերդի վրա, որովհետև նրանց դիրքն անառիկ է, իսկ մեծ թնդանորմները արդեն տեղ էին հասել:

Աբաս Միրզան երկու հարյուր ընտիր հեծյալներից բաղկացած պահակազորային ջոկատով գնում է և Ապարանի դիմաց գտնվող մի լեռան լանջից դիտելով [ռուսների] դիրքերն ու ամրությունները, ետ է դառնում: Երևանից ճանապարհ է ընկնում դեպի Էջմիածին ու մոտենալով Աշտարակին՝ կանգ է առնում 2 *ֆարսախ* հեռավորության վրա: Ջոհրաբ (Սոհրաբ) խան Գորջիին<sup>467</sup> *սարքազ* հետևակազորի երկու զորագնդերով ու երկու թնդանորմներով ուղարկում է Էջմիածինը գրոհելու ու այն գրավելու: Գլխավոր հրամանատար Պասկևիչի հրամանով նրա պաշտպանության համար 500 զինվորների մի խումբ էր թողնվել այնտեղ: Ջոհրաբ խանը պաշարում է Էջմիածինը և ամեն օր գնդակոծում այն: [Ռուս] զինվորների պարենի պաշարները սկսում են սպառվել: Վանականները սուրհանդակ են ուղարկում Ապարանում գտնվող Կրասովսկու մոտ ու խնդրում, որ կամ իրենց օգնության գան ու պարեն հասցնեն, կամ էլ զորք ուղարկեն, քանի որ «Լավ չէ, երբ աշխարհիկ գործերի համար վանքը զնդակոծում են ու ավերում»:

(144բ) Այս պատճառով գեներալ Կրասովսկին 4000 զինվորներով ու մի քանի հրանոթներով Ապարանից Էջմիածին օգնության է շտապում: Երեկոյան [ղզլբաշների] ժամապահները տեղեկացնում են, թե ահա ռուսները Ապարանից դուրս են եկել ու գալիս են: Ղզլբաշների բանակում խուճապ է սկսվում: Բոլորը իրենց բեռները կապած, ձիերը թամբած, այն գիշերը մինչև առավոտ պատրաստ, սպասում են, որ ռուսական զորքի հարձակվելուն պես փախուստի դիմեն, որովհետև ղզլբաշները գիշերը չեն կռվում, այլ միայն իրենց կյանքը փրկելու խնդրով մտահոգված, փախուստի են դիմում: Իսկ ռուսները ուշանում են ու չեն կարողանում գիշերով հարձակվել, որովհետև ստիպված էին նորոգել իրենց ճանապարհը հատող գետի կամուրջը, որը ղզլբաշներն էին քանդել, որպեսզի կանխեն ռուսների գիշերային հանկար-

<sup>467</sup> Ջոհրաբ խան Ղուլամ *փիշխեղմարքաշին* պարսկական արքունիքում ծառայության մեջ գտնվող հայազգի անձանցից էր, (Նրա մասին ավելի մանրամասն տե՛ս Գ. Շերմազանյան, Նիսբեր ազգային պատմութեան համար, Դոնի Ռոստով 1890, էջ 132-136):

ծակի հարձակումները իրենց վրա: Արևածագից երկու ժամ հետո լուր են ստանում, թե՝ ահա ռուսական բանակը գալիս է:

Արաս Միրզան իր ամբողջ հեծելազորը դասավորում է Էջմիածին տանող ճանապարհի երկու կողմերում, իսկ հետևակազորն ու հրետանին՝ ճանապարհի եզրին գտնվող մի բլրի վրա: Ինքը ևս այնտեղ է մնում ու կարգադրում, որ առանց իր հրամանի ոչ ոք չհամարձակվի բլրից ցած իջնել, որովհետև զգուշանում էր ռուսական զորքի հարձակումից: Բայց հորիզոնում նշմարվող ռուսական զորքը չորս կանոնավոր գնդերով, հանգիստ ու կազմակերպված, աջ կողմի ճանապարհով դեպի Էջմիածին էր շարժվում: Ղզրաշենի զորքը դադախ, բորչալու ու դարափափախ ցեղերի հեծյալների հետ տարբեր կողմերից ռուսների վրա է արշավում (145ա) ու սկսում ճակատամարտը<sup>468</sup>: Այդ օրը թեժ կռիվ է տեղի ունենում: Ցերեկվա ժամը երկուսից մինչև ուշ երեկո հրետանին ու հրացանները չեն լուծ, ու ճակատամարտի կրակը չի դադարում: Հակառակորդները կռվելիս ճիգ ու ջանք չեն խնայում: Ռուսները տեսնելով, որ ղզրաշենցիները տարբեր կողմերից սկսում են իրենց ճնշել, մահուղով ու այլ իրերով լցված բնդանոթասայլերը դիտավորյալ թողնում են, և առաջ շարժվում: Ղզրաշենցիները կարծելով, թե դրանցում գանձ ու հարստություն է, վրա են տալիս ու սկսում բալանել: Այդ ժամանակ ռուսները բնդանոթներից մեկը փցրավորում են մանրագնդակով ու ղզրաշենի վրա պարպում՝ կոտորելով նրանցից շատերին: Երբ ռուսաց զորքը մոտենում է Էջմիածնին, Ջոհրաք խանը, հրագնի աղմուկը լսելով, այնտեղից հեռանում է և իր զորագնդի ու հրետանու հետ գնում դեպի Արաս Միրզայի բանակը: Երբ նրա առաջապահ մարտիկները հանդիպում են ռուսների ավանգարդին, վերջինս գրոհում է նրանց վրա: Ղզրաշենցիները այլ ելք չտեսնելով՝ մահաճում են դեպի ճանապարհի եզրին գտնվող բլուրը: Ռուսները նրանցից շատերին են սպանում: Խոյի հետևակազորը՝ զորավար Իբրահիմ Խալիլ բեկի գլխավորությամբ, որ Արաս Միրզայի հրամանով ամրացել էր մոտակայքում գտնվող մեկ այլ բլրի վրա, նրանց օգնության է շտապում ու [վերոհիշյալ զորագնդի] ողջ մնացած մարտիկներին ռուսներից ազատում: Այնտեղ իսկ Իբրահիմ Խալիլ բեկին խանի տիտղոս է տրվում՝ անհրաժեշտ պահին մատուցած կարևոր ծառայություն համար:

Այսպես կռվելով ռուսները Էջմիածին են հասնում: Երեք ջոկատները (145բ) պարիսպներից ներս են մտնում: Վերջին չորրորդ ջոկատը, հասնելով ամրոցի վերևով հոսող առվակին, սաստիկ ծարավից ու շոգից տանջված, ցրիվ է գալիս նրա երկայնքով՝ ջուր խմելու: Այդ ժամանակ ղզրաշենցիները նրանց վրա են հարձակվում և սկսում կոտորել ու գերեվարել նրանց: Ռուսներից այստեղ շատերն են զոհվում ու գերի ընկնում. ընդհանուր առ-

<sup>468</sup> Աշտարակի ճակատամարտը տեղի է ունենում 1827թ. օգոստոսի 17-ին, (տե՛ս ԱԿԱԿ, տ. 7, լ. 517, ց. 560):

մամբ շուրջ հինգ հարյուր հոգի: Գեներալ Կրասովսկին հրազենի վերք է ստանում: Արաս Միրզան այս առթիվ բավականին ուրախանում է: Գեորգենին շահի մոտ է ուղարկում, իսկ ինքը հեռանում է Երևանի վերին մասում գտնվող Թոխմախ կոչվող ամառանոցը<sup>469</sup> ու այնտեղ կանգ առնում:

Մի քանի օր այնտեղ մնալուց հետո անսպասելի լուր է ստացվում, թե գլխավոր հրամանատար Պասկևիչը, [Աշտարակի] միջադեպի մասին լսելով, 15000 հոգանոց ռուսական զորքով իրենց կողմն է շտապում: Արաս Միրզան, անհանգստացած, հեռանում է Խոյի կողմերը: Կեսօրին, Երևանի բերդի կողքով անցնելիս, տեղի բնակչությանը քաջալերում է, որ ամրոցը պաշտպանելիս հաստատակամությամբ ու տոկոսմոթյամբ հանդես բերեն, իսկ ինքը ուշ երեկոյան իր զորքով ու զինամթերքով Արաքսի գետանցով Արարատի կողմն է անցնում և կանգ առնում: Երբ զինվորները ցրվում են ամասնակեր հայրաքելու ու այլ կարիքները հոգալու, անսպասելիորեն լուր է տարածվում, թե՝ ահա ռուսական զորքը մոտենում է: Բանակում աղմուկ-աղաղակ, իրարանցում է սկսվում: [Գլխաւորը] վրանները մի կողմ նետելով՝ սկսում են իրենց բեռները կապկպել: Եվ քանի որ արդեն գիշեր էր, թնդամոթով կրակում են, (146ա) որպեսզի դեսուդեն ցրված մարդիկ հավաքվեն: Ջինվորականները կարծելով, թե այդ ռուսական բնդանոթն է կրակում, և հրաձգություն է սկսվել, բեռները բողած փախուստի են դիմում: Ոմանք ծայրահեղ վախից իրենց ձիերը բողած ուրիշի ձին են հեծնում ու փախչում: Ամբողջ գիշեր մինչև լույս իրարանցման ու վազվզուրի մեջ են անցկացնում: Ոչ ոք տեղյակ չէր, թե իրականում ինչ է պատահել: Լուսարացին պարզվում է, որ ոչ մի կոիվ էլ չի եղել: Ուղղակի ժամապահները մի քանի հեծյալների նկատելով՝ կարծել են, թե դրանք ռուսական պահակազորայիններն են: Լուր են հասցրել, թե ռուսական զորքը եկել է, որից էլ բանակում խառնաշփոթ է սկսվել...

Արաս [Միրզան] այնտեղից նորից Նախիջևանի կողմն է գնում՝ հուսալով, որ միգուցե կկարողանա գլխավոր հրամանատարի զորքին վնասել: Այդ ժամանակ լուր է ստանում, որ գլխավոր հրամանատար Պասկևիչը իշխան Էրիստովին հրամանատար է նշանակել ու կարգադրել, որ վերջինս Նախիջևանից շարժվի դեպի Թավրիզ: Այդ գեներալի քաջությունը հայտնի էր դրքաշ գործին: Արաս Միրզան այլևս չհապաղելով՝ հնարավորին չափ արագ Արաքս անցնում է ու շտապում դեպի Խոյ: Էյվօղլիի<sup>470</sup> մոտակայքում ճամբար է խփում ու այնտեղ կանգ առնում:

<sup>469</sup> Այս տեղանունը իր ծագումով կապվում է Երևանի Մուհամմադ Թոխմախ խանի (XVI դար) անվան հետ, որի հետ է կապվում մահ Թոխմախ-գյուլի անվանումը, (տե՛ս Թ. Խ. Հակոբյան, Երևանի պատմությունը 1500-1800թթ., Երևան, 1971, էջ 21, 264):

<sup>470</sup> Էյվօղլի- Խոյից դեպի հյուսիս գտնվող մեծ գյուղ է (տե՛ս Дорожная карта Кавказского края): Միմոսկու ենթադրությամբ «դա նախկին Իվն գյուղն է, որը հիշատակում է Նասալին իր «Ջալալ-ադ-դինի կյանքը» երկում Արդեբեյլից դեպի

## ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՈՒ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՆԹԱՆԱԿՆԵՐԸ

Պատկերը գալով Երևան՝ մեծ բնդանոթները տառնում է Սարդարապատ: Նույն տարվա սեպտեմբեր ամսին սկսում է գնդակծեղ նրա ազարիսպները: Թնդանոթների համազարկերով նրա պատերն ու աշտարակները հողին է հավասարեցնում ու նվաճում ամրոցը<sup>471</sup>: Բռնագրավում է այնտեղ եղած պարեմի ու զինամթերքի հսկայական պաշարները, (146թ) որից հետո նույն տարվա հոկտեմբերի 10-ին հարձակվում է Երևանի բերդի վրա: Մի քանի օր նույն ձևով այն հրետակոծում է ու ավերելով քաղաքի հյուսիսային կողմի պարիսպը՝ այն մոխրակույտի է վերածում: Թեև քաղաքի բնակչությունը ջանում է դիմադրել, ի վերջո քաղաքը գրավվում է: Հասան խանն ու մյուս իշխանավորները գերի են ընկնում<sup>472</sup>: Այնտեղ կարգուկանոն հաստատելուց հետո [Պատկերիչը] գնում է Խոյի կողմերը՝ Արաս Միրզայի դեմ պատերազմելու:

## ԻՇԽԱՆ ԷՐԻՍՏՈՎԻ ՀԱՐՁԱԿՈՒՄԸ ԹԱՎՐԻՋԻ ՎՐԱ

Խոյից ներքև Էյվոզլի վայրում գտնվելու ժամանակ Արաս Միրզան տեղեկանում է, որ իշխան Էրիսթովը գլխավոր հրամանատարի կարգադրությամբ Արասարաղի մոտակայքից Մարանդի ճանապարհով դեպի Թավրիզ է շարժվում<sup>473</sup>: Թագաժառանգը, հույս ունեն, որ իշխանը իր ճանապարհը կշնդի ու Թավրիզի փոխարեն դեպի Հարզանդ<sup>474</sup> կոչվող ջրապատվարը կգնա: Ինքը՝ արքայորդին, պահակազորի հետ Հարզանդ գնալով՝ տեսնում է, որ իշխանը այնտեղով արդեն անցել է ու այն պաշտպանելու համար զինվորներ թողել: Նորից Էյվոզլի է վերադառնում: Լուրեր են տարածվում մաս, որ գլխավոր հրամանատարը Սարդարապատն ու Երևանը նվաճելով՝ դեպի Խոյ է շարժվում:

Մի օր ուշ երեկոյան Արաքսի կողմից փոշու ամպ է բարձրանում: Կարծելով, թե դրա պատճառը Արաքսն անցած ու իրենց վրա արշավող գլխավոր

و. فد. مینورسکی، سازمان اداری) (حکومت صفوی، تهران ۱۳۳۴، ص. ۲۵۳:

<sup>471</sup> Սարդարապաղի բերդը գրավվում է 1827թ. սեպտեմբերի 19-ին, (տե՛ս AKAK, Դ. 7, ձ. 518, c. 566):

<sup>472</sup> Երևանի բերդը գրավվում է 1827թ. հոկտեմբերի 1-ին, (տե՛ս AKAK, Դ. 7, ձ. 523, c. 566):

<sup>473</sup> Էրիստովի ջոկատը Մարանդի տարածքն է մտնում 1827թ. հոկտեմբերի 3-ին (տե՛ս Капкаевский сборник, Դ. 28, Тифлис 1908, c. 214):

<sup>474</sup> Հարզանդ վայրը գտնվում է Արաքսից հարավ Մարանդից դեպի հյուսիս (տե՛ս Карта Армении и приграничных стран):



հրամանատարի բանակն է, ղզլբաշ գինվորները, բեռները կապած, փախուստի են դիմում դեպի Խոյ: Երբ հետախուզությունը պարզում է, որ այդ փոշին բարձրացրել է ոչխարների հոտը, որը գետի մոտ ջուր խմելու (147ա) էր տարվել, Աբաս Միրզան շատ է վշտանում: Նա ասում է. «Մի բանակ, որ, ոչխարների բարձրացրած փոշուց վախեցած փախուստի է դիմում, ինչպե՞ս կարող է ռուսների դեմ պատերազմել»...

[Աբաս Միրզան] ավելացնում է նաև. «Ես շահերից ամենադժբախտն եմ, որովհետև բոլոր շահերի թշնամիները նրանց հավասարն ու մրցակիցն են եղել: Նրանց կամ հաղթել են, կամ էլ նրանցից փախչելով փրկվել: Բայց իմ թշնամին ինձ հավասարը չէ, նա ռուսների պես հզոր մի հակառակորդ է: Ոչ կարողանում եմ հաղթել, ոչ էլ փախչելով ազատվել»:

Այնուհետև այնտեղից հեռանում է և Գունեի ու Թասուջի<sup>475</sup> ճանապարհով շարժվում դեպի Թավրիզ, որպեսզի փորձի ռուսներից շուտ այնտեղ մտնել և նրանց հետ հաշտության բանակցություններ վարել: Սակայն երբ ընդամենը մեկ *մանգել* հեռավորություն էր մնացել մինչև Թավրիզ, գիշերը լուր է ստացվում, որ իշխան Էրիստովը Մարանդի Նազար Ալի խանի որդիների առաջնորդությամբ Թավրիզ է մտել<sup>476</sup>:

Այդ դեպքի մանրամասները հետևյալն են: Իշխան Էրիստովը, որը գլխավոր հրամանատար Պասկևիչի հրամանով զորքով անցնում է Արաքսը և շարժվում դեպի Թավրիզ, իրեն տրամադրված բանակով զալիս է Մարանդ: Այնտեղ Նազար Ալի խանի որդիները, որոնք իրենց հորը սպանելու պատճառով Աբաս Միրզայից երես էին դարձրել ու [վրեժ լուծելու համար] հարմար առիթի էին սպասում, այնտեղ ներկայանում են իշխանին, հպատակություն հայտնում ու խոստանում հավատարմորեն ծառայել<sup>477</sup>: Իշխանը նրանց սիրալիր ընդունում է ու հուսադրում: Մի քանի օր անց (նրանք) իշխանին հրահրում են Թավրիզի վրա հարձակվել: Այնուհետև, (147բ) ինչպես որ նախօրոք մտադրվել էր, նրանց ուղեկցությամբ իշխան Էրիստովը Մարանդից դեպի Թավրիզ է շարժվում: Երբ ռուսական բանակը հասնում է Թավրիզի մոտակայքը, քաղաքի բնակչությունը դարպասները բաց է անում ու իր իշխանների, ազնվատոհմիկների, *թեկալարեկ* Ֆարհալի խանի ու Աղա Միր Ֆաթեհ *մոջբեհիդի*ի հետ դարպասների բանալիները վերցրած քաղաքից դուրս են գալիս՝ Ն. Գ. իշխանին աղուհացով դիմավորելու, որը նույնն էր, ինչ

<sup>475</sup> Գունեի կամ Դունեի մահալը գտնվում է Ուրմիա լճի հյուսիսային կողմում, Թասուջը այդ մահալի մեջ մտնող բնակավայրերից է (տե՛ս Հ. Հակոբյան, Ուղեգրություններ, Խ. Զ, էջ 257-258), որը հիշատակվում է դեռևս XIV դարում (տե՛ս ٩٢ (حماد الله مستوفى قزویتی. نزاهة القلوب, ص. ٩٢):

<sup>476</sup> Թավրիզը գրավվում է 1827թ. հոկտեմբերի 13-ին, (տե՛ս Кавказский сборник, т. 28, Тифлис 1908, Материалы, с. 220; АКАК, т. 7, д. 526, с. 568, с. 659):

<sup>477</sup> Մարանդի խանը Աբաս Միրզայի զորքերի դեմ կռվի էր ելել դեռ ռուսական զորքերի այնտեղ հասնելուց առաջ (Кавказский сборник, т. 29, с. 17):

հայատաևկության երդում տալը<sup>478</sup>։ Նախքան իշխանին ներկայանալը, դարպասներից մեկի վրայից բնդանորով կրակում են։ Իշխանը կարծում է, թե ուրոշել են կռվել։ Բայց նրան բացատրում են, թե դա ողջույնի համազարկն է։ Այնուհետև բոլորը ներկայանում են իշխանին և մեծ հարգանքով առաջնորդում նրան դեպի քաղաք։

Աբաս Միրզան այդ սրտամորմոք իրադարձության մասին լսելով՝ նույն գիշերին իսկ իր պաշտոնյաների ու ղզլբաշ խաների հետ խորհրդակցություն է անցկացնում՝ պնդելով, որ՝ «Այսուհետև իմ հոր ու եղբայրների մոտ գնալը, նրանցից ներողություն հայցելը ու նրանց տարածքներին հավակնելը ինձ համար մահվանից վատ է։ Ավելի լավ է, ռուսաց կայսերն ապավինեմ։ Նա մեծ ու բարեգութ բազավոր է։ Նրա պալատում ինձ նման բազում արքաներ ու արքայորդիներ կան։ Անշուշտ ինձ էլ իր որդիներից կամ զենեքալներից մեկը համարելով՝ մի կտոր հաց կտա ու ես հանգիստ կառնեմ»։

[Թագաժառանգը] վճռում է իր խաներից ու խանորդիներից 500 հոգու հետ գնալ ռուսաց կայսերը ներկայանալ։ Իր այս մտադրության մասին նույն գիշերն իսկ իր սանդուղդար Բեջան խանի<sup>479</sup> միջոցով մի նամակ է ուղարկում Ն. Գ. գլխավոր հրամանատար Պասկևիչին, որը իր զորաքանակով եկել էր Մարանդ ու այնտեղ կանգ առել։ Գլխավոր հրամանատարը ի պատասխան հետևյալն է գրում. «Այս հարցն առայժմ մի կողմ դնենք, (148ա) մինչև որ այս քանի օրս Թավրիզ կմտնեմ։ Այնտեղ Չեզ հետ կհանդիպենք ու մի բան կմտածենք»։

Աբաս Միրզան, որի բանակի ու հայատակների մեծ մասը ցրվել էր, ամուրահար ու զլխիկոր, իր սակավաթիվ մարդկանցով այնտեղից Սալմաստի ճանապարհով հեռանում է դեպի Մարաղա ու Դեհխարդան<sup>480</sup>։

Գլխավոր հրամանատար Պասկևիչը մտնում է Թավրիզ և սկսում կազմակերպել երկրամասի գործերը, այնտեղ կարգուկանոն հաստատել։ Տեղի

<sup>478</sup> Ռուսական աղբյուրների տվյալներով, բագաժառանգը հանձնարարել էր Ալլահյար խանին 2000-անոց զորագնդով քաղաքի զինված քնակության հետ կազմակերպել Թավրիզի պաշտպանությունը, սակայն ոչ միայն բնակիչները այլև զինվորներն են հրաժարվում դիմադրություն ցույց տալ ռուսական զորքին (М. М. Шербагов, Генерал-фельдмаршал князь Паскевич, его жизнь и деятельность, т. 3, СПб. 1891, с. 9)։

<sup>479</sup> Բեջան կամ Հաջի Բեջան խանը ծագումով հայ էր Սոմխեթի Դամանի գյուղից, որը 14-15 տարեկան հասակում գերվում է մահմեդականների կողմից և որպես ծառա ընծայվում Աբաս Միրզային, որի կողմից մահմեդականացվում է և հետագայում վարում բագաժառանգի սենեկապանի պաշտոնը (տե՛ս Գ. Շիրմազանյան, նշվ. աշխ., էջ 172-175)։

<sup>480</sup> Դեհխարդան քաղաքը գտնվում է Ուրմիայից դեպի արևելք, Թավրիզից 54 կմ հեռավորության վրա, այժմ այն վերանվանված է Ազարշահր (محمد علی خلصی)։

<sup>481</sup> (فهرست بناهای تاریخی آذربایجان شرقی تهران ۱۳۷۱, ص. ۱۹)։

կառավարիչներին ու պաշտոնյաներին հանգստացնում ու սիրաշահում է, իսկ իր զենեքալներին մի քանիսին՝ ուղարկում շրջակա փոքր քաղաքները գրավելու: Գեներալ Լապտևը (Լաֆետովինը) գրավում է Ուրմիան<sup>481</sup>, զենեքալ-մայոր Պանկրատևը (Բանդրադիվը)՝ Մարաղան, իսկ կոմս Սուխտելենը (Սուխդիլինը)՝ Արդեբիլը<sup>482</sup>:

Դրանից հետո [կողմերը] հանդիպում են ունենում Մարաղայի Դեհիսարդան վայրում ու սկսում հաշտության բանակցությունները: Ն. Գ. գլխավոր հրամանատարը [Աբաս Միրզային] վայելույ հարգանք է ցուցաբերում և որևէ անմիջականություն թույլ չի տալիս: Հաշտության բանակցությունները որոշ ժամանակ շարունակվում են, և կողմերի միջև քարեկամական հարաբերություններ են հաստատվում: Գլխավոր հրամանատարը շոշափում է պատերազմի վնասների փոխհատուցման հարցը, բայց Ֆարսիայի շահը չի համաձայնում [տուգանքը վճարել] ու սկսում է զորքը ձգձգել<sup>483</sup>: Որոշ ժամանակ անց գլխավոր հրամանատարը Թավրիզ է գնում, իսկ Աբաս Միրզան վերադառնում է դեռևս իրեն պատկանող տարածքները: Սակայն նրանց [թագաժառանգի ու Պասկևիչի] միջև հաստատված բարյացակամ փոխհարաբերությունները պահպանվում են: Գլխավոր հրամանատարը վստահ էր, որ այս բոլոր տարածայնությունների ու վեճերի պատճառը Ն. Մ. շահն է: Նրանից բացի ոչ ոք չէր կարող միջամտել ու խանգարել այս հարցի լուծմանը: (148թ) Այս պատճառով գլխավոր հրամանատարը ռազմական զործողությունները վերսկսելու հրաման է տալիս, որպեսզի զորագնդերը նախապատրաստվեն դեպի Թեհրան ու Արաղ արշավելու: [Նա] հայտարարում է, որ մինչև Թեհրան կգնա ու մայրաքաղաքը կգրավի:

Աբաս Միրզան իր հորը լուր է ուղարկում, թե՛ «Ահա, ուր որ է, զորավար Պասկևիչը, տարերային աղետի պես անսպասելի. Չեզ այցելության կգա»:

Դրանից հետո ճարահատյալ Ֆարսիայի շահ Ղաջարը համաձայնվում է հաշտություն կնքել: Թուրքմենչայ կոչված վայրում վերսկսվում են հաշտության բանակցությունները և ամրապնդվում բարեկամության հիմքերը: Կողմերը խաղաղության երաշխիքներ են տալիս և պայմանագիր կնքում: Արաքս գետը հաստատվում է որպես երկու մշտնջենական պետությունների սահմանագիծ: [Գլխավորները] համաձայնվում են որպես տուգանք 7 քորուր<sup>484</sup> փող

<sup>481</sup> Գեներալ-մայոր Լապտևի զորքը Ուրմիա է մտնում 1828թ. հունվարի 15-ին (Кавказский сборник, т. 29, Материалы, с. 48):

<sup>482</sup> М. М. Щербатов, ух. соч., т. 3, с. 9.

<sup>483</sup> Ֆարսիայի շահի ժառանգար էր բացառում տուգանքի մոծման հարցում հանդես բերված անփութությունը նաև ռուսական աղբյուրներում (Кавказский сборник, т. 29, с. 20):

<sup>484</sup> Պետք է լինի 10 քորուր, (տե՛ս Բ. П. Балаев, Дипломатическая история русско-персидских войн и присоединения Восточной Армении к России, Ереван 1988, с.

վճարել, որը հավասար էր 500000 *բաբախանի թումանի*, երբ վերջինիս մեկ հատը ռուսական չորս դրամից պակաս արժեք: Ռուսական փողով այն հավասար էր 13 միլյոնի: Հաշտության պայմանագիրը մի քանի կետերից ու պայմաններից էր բաղկացած: Խոյի տարածքը (ռուսներին) գրավ է բողնվում մինչև տուգանքի լրիվ վճարումը:

Հաշտությունը կնքվում է 1828/1244թ. փետրվար ամսին<sup>485</sup>: Փոխհատուցման մնացյալ ողջ գումարը ստանալուց հետո *դառ-ալ-սաֆա* Խոյը հանձնվում է Իրանի իշխանություններին<sup>486</sup>: Ն. Գ. զենեբալ, Երևանի կոմս Պասկևիչը զորքը վերցրած գնում է Թիֆլիս...

(149ա) Այս կարևոր հաշտության կնքումից հետո ղզլբաշների դեմ կռիվներ այլևս տեղի չեն ունենում: [Սակայն ռազմական] գործողություններ են ծավալվում Դաղստանում, որոնց մասին կխոսվի առանձին գրքում՝ նվիրված Դաղստանի պատմությանը: Աստված մեզ օգնական և աջակից:

---

194): 1 *քորուրը* այն ժամանակվա ռուսական դրամով հավասար էր 1 միլյոն արծաթ ռուբլու:

<sup>485</sup> Թուրքմենչայի հաշտության պայմանագիրը կնքվում է 1828թ. փետրվարի 10-ին (ԱԿԱԿ, տ. 7, ձ. 554, շ. 596):

<sup>486</sup> Ուրմիայի ու Խոյի տարածքներում ռուսական զորքերը մնում են մինչև ռազմատուգանքի լրիվ վճարումը, (տե՛ս ԱԿԱԿ, տ. 7, ձ. 579, շ. 614):

## Հարկային, սոցիալական և այլ տերմինների

Աբասի- عباسی - արծաթ դրամ, որ շրջանառության մեջ դրվեց Սեֆյան Շահ Աբբաս Ա-ի օրոք: Մեկ արասին հավասար էր 200 դինարի: XVII դարի 30-ական թթ. մեկ արասին պարունակում էր 4,66 գր. արծաթ, մինչդեռ Շահ Աբբաս Ա-ի օրոք այն կշռում էր 7,7 գր.:

Ախունդ- آخوند - մոլլա, կրոնական ուսուցիչ:

Ամիր- امیر - բարձրաստիճան գորավար, ցեղերից հավաքագրվող ֆեոդալական զորագնդի հրամանատար: Այս կոչումը տրվում էր նաև հողատեր ֆեոդալներին, որոնք զբաղեցնում էին կարևոր պաշտոններ: Մեծ ամիրը կրում էր նաև խանի տիտղոս՝ ունենալով այլ տարրերակիչ նշաններ ևս. շահի կողմից շնորհված խալ'աթ, ոսկեհյուս գլխարկ: Ամիրները բաժանվում էին երկու խմբի. «սահմանային ամիրներ» (վալի, բեկլարբեկ, խան, սուլթան) և «պալատական ամիրներ (ղորչի բաշի, դուլարուդասի, իշիքադասիբաշի, քոֆանգչիադասի):

Ամիր-ուլ-ումարա- امیرالامرا - Այսպես էին կոչվում գլխավոր հրամանատարները, մահաճգապետներն ու կուսակալները: Բառացի նշանակում է «ամիրների ամիր» և համապատասխանում է հայոց «իշխանաց իշխան» տերմինին: Սա փաստորեն թուրքական «բեկլարբեկ» տերմինի արաբական համանիշն է:

Աշրաֆի- اشرفی - իրանական ոսկեդրամի անվանումը:

Բաջադի- باجادی - հողանդական ոսկեդրամ:

Բեկ - بیک - տիտղոս, որ տրվում էր կրտսեր զինվորականներին և մանր ֆեոդալներին: Հաճախ այն դառնում էր հատուկ անունների բաղադրիչ: Բեկերը երկու խմբի էին բաժանվում. անկախ սեփականատեր-բեկեր և ծառայության մեջ գտնվող բեկեր: Անկախ սեփականատեր-բեկերը խոշոր հողատերեր էին և ունեին չնչին ծառայողական պարտականություններ: Պալատական արիստոկրատիան և պաշտոնյաները կազմում էին ծառայության մեջ գտնվող բեկերի երկրորդ խումբը:

Բեկլարբեկ- بیگلربیگ - Այդպես էին կոչվում Իրանի սահմանամերձ մահաճներում իշխող խաներն ու ամիրները: XVI-XVII դարերում Իրանում կար 13 բեկլարբեկություն, որոնցից հյուսիս-արևմտյան սահմանի վրա էին գտնվում Աղրբեջանի, Ղարաբադի, Շիրվանի և Երևանի բեկլարբեկությունը: Բեկլարբեկի հոմանիշն էր ամիր-ալ-ումարան: Բեկլարբեկերը Սեֆյան Պարսկաստանի իշխանավորների աստիճանակարգում համարվում էին երկրորդը վալիներից հետո:

Դառ-ալ-խալաֆ - دارالخلافة – խալիֆայության, բազմություն կենտրոն: Դաջարների ժամանակաշրջանում Թեհրանը այդպես էր կոչվում:

Դառ-ալ-մարզ - دارالمركز - գավառամասի, նահանգի կենտրոն: Հանդես է գալիս ինչպես Խոյի, Շիրազի ու Ռեշտի հոմանիշի դերում:

Դառ-ալ-սալթանե - دارالسلطنة - մարաթադար, Թավրիզ քաղաքի հոմանիշը:

Դառ-ալ-սորուր - دارالسور - ուրախության և զվարճության վայր, դրախտ: Այդպես էր կոչվում Թիֆլիսը, Լաիորը, Նիշապուրը:

Դիվան - دیوان – պետական գործերի ատյան կամ գրասենյակ: Հասկացվում էր հատկապես պետության կամ նրա բարձրագույն օրգանի իմաստով: Զար - زرع - երկարության միավոր, որ հավասար է 1,4 մետրի:

Թարին - ثابین - ենթակա, ստորադաս, շարքային: Այսպես էին կոչվում հատկապես կրտսեր զինվորականները, որոնք կցված էին այս կամ այն բարձրաստիճան զինվորականին և գտնվում էին նրա հրամանատարության տակ:

Թա'լիզ - تعلیق - հողի սեփականաշնորհման հրամանագիր, որը սեփականատիրոջը ազատում էր պետական հարկերից:

Թավադ - تواد - վրաց իշխան, ազնվական:

Թոֆանգշի - تونغجی - հրացանակիր:

Թուփշի - توپی - հրետանավոր:

Թուփշիքաշի - توپی باشی - հրետանու հրամանատար:

Թուման - تومان - Դրամական խոշոր միավոր, որ հավասար էր 10000 դինարի: XVII դարում դրամական ամենափոքր միավորը եղել է 5 դինարը, որը կոչվում էր մեկ «ղազրեկի», մեկ «փարա»-ն հավասար էր 10 դինարի, 20 դինարը՝ կոչվում էր «քիսթի», 50 դինարը՝ «շահի», 100 դինարը՝ «մահմուդի» կամ «սաննար», 200 դինարը՝ «արասի», որը արծաթ դրամի հիմնական միավորն էր: Խոշոր դրամական հաշվումները կատարվում էին «թումանով»:

Իշիքադասի - ایشیکاداسی - Սեֆյան Պարսկաստանի արքունի պաշտոնյաներից էր, պալատի արարողապետը:

Իշիքադասիքաշի - ایشیکاداسی باشی - Շահի վարչական ապարատի ղեկավար, արքունի գլխավոր արարողապետն էր:

Խալ'աթ - خلعت - պատվավոր, բանկարժեք հագուստ:

Խան - خان - տիտղոս, որով մեծարվում էին բարձրաստիճան զինվորականության ներկայացուցիչները, վրաց վալիները և թեկլարբեկերը:

Դազավաթ - غزلوت - Մահմեդականների Սրբազան պատերազմը անհավատների դեմ:

Ղազի - غازی - մահմեդական հավատի մարտիկ, զինվոր:

Ղալաբեկ - قلعبيک - ամրոցի պետ:

Ղչլաղ - فحلاق - քոշվորների ձմեռանոց:

Ղուլամ - غلام - Բառացի նշանակում է «ստրուկ», «ծառա»: Այսպես կամ պարզապես «ղուլ» էին կոչվում այն հեծյալները, որոնք մեծ մասամբ կամ իրենք էին նոր մահմեդականություն ընդունել և կամ հանդիսանում էին մեկ կամ երկու սերունդ առաջ մահմեդականություն ընդունած քրիստոնյաների զավակներ: Սրանք փաստորեն կազմում էին շահի անձնական թիկնապահների զվարդյիան՝ «ղուլլար», որոնց թիվը տատանվել է 10-30 հազարի միջև:

Ղուլլարաղասի - قوللارغاسی - դուլ կոչված զինվորների գնդի հրամանատար:

Մահալ - محال - շրջան, գավառ, XVII-XIX դարերում Անդրկովկասի վարչական բաժանման միավորներից է, որոնք որոշ ժամանակ պահպանվում են Ռուսաստանի տիրապետության տակ անցնելուց հետո նույնպես:

Մալիյյե - مالىيه - XV դարից և ավելի վաղ ժամանակներից գոյություն ունեցող գլխավոր եկամտահարկի՝ մալի տարբերակներից (մալը «գլխավոր եկամտահարկը և սեփականության հարկն էր, որ գանձվում էր ամեն տեսակի եկամտաբեր օբյեկտներից, շենքերից, այգիներից ու վարելահողերից և այլն), որ ավելի գործածական դարձավ XII դարում և փոխարինում էր մալին կամ մալոջհարին: XIX դարում և մինչև օրս էլ իրանում այն գործ է ածվում հոգնակի մալիյյուս-مالیات دولت:

Մանզել - منزل կայան, իջևան- այդպես էր կոչվում մի կայանից մինչև մյուսն ընկած հեռավորությունը:

Մդիվանբեկի- գլխավոր դատավոր: Պարսկերեն դիվանբեկի վրացական տարբերակը:

Մինրաշի - مینراشی - հազարյակի պետ: 1000 հոգուց բաղկացած զորաբաժինները գտնվում էին մինրաշիների հրամանատարության ներքո, որոնք իրենց ծառայության դիմաց հողակտորներ էին ստանում և դրանց վրա ևս տարածվում էր այդ տերմինը: Քանի որ Սեֆյան շահերի զորքերը հիմնականում բաղկացած էին քոշվոր ցեղերից, ապա մինրաշիներ էին դառնում ցեղային աուսջնորդները: Ռուսաստանի տիրապետության տակ անցումից հետո ևս քոշվոր ցեղերը շարունակում էին ենթարկվել իրենց ցեղապետերի իշխանությանը և կազմում էին մինրաշիություններ, որոնք Արևելյան Անդրկովկասում այդ շրջանում կիրառվող վարչական միավորներից էին:

Մեաղալ - متغال - Միսղալը բանկարժեք քարերի ու մե-

տաղների կշռի չափման միավոր է, որը հավասար էր 24 նոխոդի (սիսեռա-  
հատիկ) 1 նոխոդը = 0,193 գրամ, 1 մեսդալը = 4,64 գրամի:

Միրզա - میرزا - «Ամիր զադե» (իշխանագուն) բառի աղավաղված ձևն է:  
Երբ այն դրվում է անունից հետո նշանակում է «տեր», «իշխան», «արքա-  
յազն», իսկ երբ հիշվում է անունից առաջ նշանակում է, «դայիր», «գրագիր»:

Մուլա - مولا - «տեր», հոգևորականներին տրվող կոչում:

Մոջեբիդ - مجتهد - մահմեդական հոգևորական, քարոզիչ: Այսպես էին  
կոչվում իսլամի խոշոր տեսաբաններն ու մեկնիչները:

Յալադ - بیلاق - քոչվոր ցեղի ամառային ճամբար:

Յասավուլ - یساول - բարձրաստիճան պաշտոնյաների հեծյալ ծառա, ո-  
րը մասնակցում էր պալատական արարողակարգին: Շատ սուրհանդակ:

Յուզբաշի - یوزباشی - զինվորական հարյուրակային զնդի հրամանա-  
տար:

Շահի - شاهی - դրամական միավոր, որ հավասար էր 50 դինարի:

Շիա - شیعه - Իսլամի երկու ուղղություններից մեկը, որը իր դրույթները  
հիմնում է Մուհամմադ մարգարեի ընտանիքի քացառիկ հեղինակության  
վրա, մինչդեռ ուղղադավան սուննիները ընդունում են Շաե մարգարեի  
հետևորդների վկայությունները: Շիաները օրինական խալիֆաներ են հա-  
մարում միայն Մուհամմադի ազգական 4-րդ խալիֆա Ալիին և նրա ժա-  
ռանգ-իմամներին: Սեֆյանների օրոք այն դառնում է պետական կրոն:

Չարխաշիրաշի - چرخچیباشی - պարսից զորքի առաջապահ զորագնդի  
հրամանատար:

Չերիք - چریک - Այդպես էին կոչվում Սեֆյան Պարսկաստանում քոչվոր  
ցեղերից հավաքագրվող ֆեոդալական զորագնդերը:

Ջանբազ - جانباز - XIX դարում անգլիացիների և Աբաս Միրզայի կազ-  
մակերպած կանոնավոր հետևակազորը, որը գտնվում էր Ֆարսի շահի  
տրամադրության տակ:

Ջիհադ - جهاد - տե՛ս Ղազավաթ:

Ռադամ - رقم - պաշտոնական գրություն, թագավորական հրովարտակ:

Սանդուդդար - صندوقدار - ծախսարար:

Սարբազ - سرباز - XIX դարի սկզբին անգլիացիների օգնությամբ Աբաս  
Միրզային կազմակերպած և նրա տրամադրության տակ գտնվող կանոնա-  
վոր հետևակազորի անվանումը:

Սարդար - سردار - Ղաջարական Իրանում մահմադային զորքի և ամբողջ  
ռազմական ուժերի հրամանատար:



Սարխաթ - سرخط - ֆեռդալներին, հոգևորականությանը, բարձրաստի-  
ճան պաշտոնյաներին և հատկապես զինվորականությանը տրվող ռոճիկնե-  
րը ու այլ կարգի պարգևատրությունները վերահսկող և հաշվառման ենթար-  
կող հատուկ գրասենյակ:

Սեիդ - سيد - մահմեդական հոգևորական, իմաստուն: Սեիդները սերված  
էին համարվում Ալիից:

Սդնախ - سندان - պարսկերեն նշանակում է «ամրացված վայր, ամրութ-  
յուն»: Այդպես էին կոչվում Արցախի և Սյունիքի հայության ազատագրա-  
կան պայքարի կենտրոնները որտեղ գտնվում էին նրա ռազմական ամրութ-  
յունները և զինված ուժերը:

Սուլթան - سلطان - Սեֆյան Իրանում այդպես էին կոչվում սահմանային  
փոխարքայությունների կամ բեկլարբեկությունների մեջ մտնող ավելի փոքր  
վարչական միավորների կառավարիչները: Նրանք նշանակվում կամ հե-  
ռացվում էին բեկլարբեկի կողմից և գտնվում էին վերջինիս անմիջական  
հրամանատարության տակ:

Վարիլ - وکیل - լիազոր անձ, ներկայացուցիչ կամ կառավարիչ, փոխա-  
նորդ:

Վալի - والی - Իրանի ծայրամասային 4 վիլայեթներից (Արաքիստան,  
Լուրիստան, Վրաստան և Ջրդստան) մեկի կառավարիչն է: Վալիները  
պատկանում էին տվյալ վիլայեթի տիրակալների տոհմին և ունեին ինքնա-  
վարության իրավունք: Համարվում էր, որ այդպիսի վիլայեթի եկամուտը չէր  
մտնում Իրանի պետական զանձարան: Վալին պարտավոր էր կառավա-  
րությանը ցուցաբերել ռազմական աջակցություն և շահին ուղարկել բառխա-  
նե: Վրաստանի վալին Իրանից որպես ռոճիկ ստանում էր այնտեղ հավաք-  
վող հարկերից: Այդպիսով ենթադրվում էր, որ վրաց վալին Իրանի պաշտոն-  
յա էր:

Վարս - փուսական «верста» քառն է, որը XIX դարում օգտագործվող եր-  
կարության միավորներից էր և հավասար էր 1066,78 մ; 1,067 կմ; մոդնի 2/3-  
ին:

Վիլայեթ - ولایت - երկիր, երկրամաս, նահանգ: Աղբյուրներում և վավե-  
րագրերում գործածվում է փոփոխակի իմաստով: Երբեմն «վիլայեթ» անվան  
տակ հասկացվում էր մի ամբողջ երկիր, երբեմն՝ ընդարձակ նահանգ, իսկ  
երբեմն՝ նույնիսկ մեծ գավառ:

Փիշխեդմաբբաշին - پیشخدمت باشی - ձիավոր սեմեկապալանների զվեսավորը:

Քորուր - کورور - քանակական թվականի անվանում է, որ հավասար է  
500000-ի:

Օլլա - ٲلا - Բառացի նշանակում է «երկիր»: Այն սեփականության մի ձև  
էր, որի ժամանակ հողը որպես ազատ տրվում էին քոչվոր ցեղերի պարագ-

լուխներին և բարձրաստիճան գինվորականությանը՝ ամիրներին: Օլթա ստացող ամիրները պարտավոր էին պահանջված դեպքում որոշյալ բանակությամբ զորք տրամադրել կենտրոնական իշխանությանը: Օլթայի ամիրները իրավունք ունեին առանձին դրոշակ ունենալ և հանդիսավոր նրբերի ու զորաշարժերի ժամանակ հատուկ թմբուկներով թմբկահարել:

Ֆարսախ կամ Ֆարսանգ - فرسخ - երկարության միավոր, = 6 կմ:

Ֆիրման - فرمان - քաղավորական հրովարտակ:

## Գրականության ցանկ

- Առաքել Կոստանեանց, Պատմութիւն Արցախի, Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. 7822, 7823:
- Յակոբ Ջաքարեանց Շուշեցի, Պատմութիւն գաւառին Արցախու, Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. 2734:
- Վարդան Օձնեցի, Պատմութիւն հայոց, Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. 4331:
- Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, Կաթող. դիվան, քղթ. 1գ, վավ. 1006:
- Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, Կաթող. դիվան, քղթ. 2բ, վավ. 169:
- Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, կաթող. դիվան, քղթ. 241, վավ. 206:
- Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, քղթ. 241, գործ 1, վավ. 26
- Միրզա Աղիզեղզաւ-բէկ, Որպիսութիւնք խանացն Գանձակայ, Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. 4463:
- Ա. Գ. Արքահամյան, Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից, Երևան 1953:
- Ղ Ալիշան, Արցախ, Երևան 1993:
- Ղ Ալիշան, Սիսական, Վենետիկ 1893:
- Մ. Բարխուդարեանց, Աղուանից երկիր և դրացիք (Միջին Դաղստան), Թիֆլիս, տպ. Շարածե, 1893:
- Մ. Բարխուդարյան, Պատմութիւն Աղուանից, հ. Բ, Թիֆլիս 1907:
- Մ. Բարխուդարյան, Արցախ, Բագու, 1895:
- Վ. Ռ. Գրիգորյան, Երևանի խանությունը XVIII դարի վերջին, Երևան, 1958:
- Ս. Գ. Բարխուդարյան, Դիվան հայ վիմագրության, պրակ 5, Արցախ, Երևան 1982:
- Դիվան հայոց պատմության, գիրք Ա-Բ, Թիֆլիս, 1893; գիրք Ժ, Մանր մատենագիրք, Թիֆլիս 1912:
- Ե. Լալայան, Երկեր, հ. 2, Երևան, 1988:
- Ե. Լալայան, Ջանգեղուր (Պատմական համառոտ տեսություն), Ազգագրական հանդես, գիրք Դ, 1898:
- Ե. Լալայան, Սիսիան, Ազգագրական հանդես, գիրք Գ, 1898
- Լէո, Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական դպրոցի, Թիֆլիս 1914:
- Ս. Կարապետյան, Այրումներ, լրագիր «Գարդմանք», 1996, № 3
- Ս. Կարապետյան, Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Աղբյուրների բռնակցված շրջաններում, Երևան 1999:
- Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, Երևան, 1982:
- Հ. Ա. Կնյազյան, Ազատագրական պայքարը Դավիթ Բեկի զվարթությունը, Երևան, 1963:
- Առ. Կոստանեանց, Դիզակի մելիքությունը, «Նիսբե հայ մելիքության մասին», պրակ Ա, Վաղարշապատ 1913:

- Զ. Կոստիկյան, Արդ-սո-Ռազակ իրն Նազաֆդուլի Դումբուլիի «Մասսեր-ե Սուլ-բանին» պատմական աշխատությունը Արևելյան Հայաստանի XIX դարի սկզբի քաղաքական իրադարձությունների մասին, Երիտ. արևել. հանր. XX գիտական նստաշրջան, Ջեկոնցունների բեզեր, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ, Երևան 1999:
- Զ. Կոստիկյան, Ղարաբաղի պատմության լուսաբանությունը XIX դարի պատմագրության էջերում, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», XVII, Երևան 1998, էջ 73-89:
- Զ. Կոստիկյան, Ղարաբաղի XVIII դարի պատմության մի քանի հարցեր, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», XVIII, Երևան, 1999, էջ 118-135:
- Զ. Կոստիկյան, Ղարաբաղի XVIII դարի պատմությունն ըստ Միրզա Յուսուֆ Ներսեսուլի «Թարիխ-ե Սաֆի», «Պատմա-բանասիրական հանդես», Երևան 1999, № 2-3, էջ 342-357:
- Զ. Կոստիկյան, Սյունիքի Օրբելյանները XVIII-XIX դարերում, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», XIX, Երևան, 2000:
- Ա. Ա. Հակոբյան, Ա. Հ., Սյունյան, Դադիվանքի նորահայտ արձանագրությունը և Տալէի տեղադրության հարցը, «Պատմա-բանասիրական հանդես», Երևան 1998, № 1-2:
- Հ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. 2, Երևան 1934:
- Թ. Խ. Հակոբյան, Երևանի պատմությունը 1500-1800թթ, Երևան 1971:
- Վ. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դարեր, հ. 1, Երևան 1951, հ. 2, Երևան 1956:
- Հայ ժողովրդի պատմություն, հ. 4, Երևան, 1972, հ. 5, Երևան 1974:
- Հ. Միրզայե Վ. Հովհաննէսեան-Մխիթարեան, Հայաստանի բերդերը, Վեհ. Ս. Ղազար 1970:
- Ն. Խ. Մախմուդով, Զուրդ ժողովուրդը, Երևան 1959:
- Մանր ժամանակագրություններ, հ. 1, Երևան 1951:
- Մատենադարանի պարսկերեն վավերագրերը: Հրովարտական, պլակ 2, Երևան, 1959:
- Լ. Մ. Մելիքսեթ-բեկ, Վրաց աղբյուրները հայերի ու Հայաստանի մասին, հ. Գ, Երևան, 1955:
- Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, Երևան 1969:
- Գ. Շերմազանյան, Նյութեր ազգային պատմության համար, Դոմի Ռոստով 1890
- Գ. Շերմազանյան, Ճանապարհորդություն Հայաստանում, «Արարատ», Էջմիածին, 1877, № 10:
- Մ. Չամչյան, Հայոց պատմություն, հ. Գ, Երևան 1985:
- Պ. Ա. Չոբանյան, Շոշ և Զարազուխ սղմախների նույնացման հարցի շուրջ, ՊԲՀ, 1994, № 1-2, էջ 183-187:
- Ֆ. Պողոսյան, Խամսայի մեկնքների իրավունքների ու պարտականությունների մասին, «Բանբեր Հայաստանի արխիվներին», 1966, № 1:

- Մ. Սմբատեանց, Նկարագիր ծովագարդ գաւառին Գեղարքունու, Վաղարշապատ, 1895:
- Ս. Ջալալյան, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, Տիփսիս, հ. 1, 1842, հ. 2, 1858:
- Ռ. Հ. Տեր-Գասպարյան, Ըուշի, Երևան 1993:
- Կ. Տեր-Սկրտչեան, Դօփեանք և Ալիք-Շահնազարեանք, «Նիւրեր հայ մեկրութեան մասին», պրակ Բ, Էջմիածին, 1914:
- Հ. Դ. Փափազյան, Մելիք Եզանի ընդունարանի մուտքի վիճագիր արձանագրությունը, «Լրագիր հասարակական գիտությունների», Երևան 1985, № 5:
- Դաֆֆի, Խանսայի մեկրությունները, Երկերի ժողովածու, հ. 10, Երևան 1964:
- Г. Абдуллаев, Азербайджан в XVIII в. и взаимоотношения с Россией, Баку 1965.
- А. Х. Аванесов, Бахман Мирза и его сочинение "Шукур-наме-йи шахиншахи", Автореферат диссертации на соискание уч. ст. канд. наук, Ташкент 1972.
- П. И. Аверьянов, Курды в войнах России с Персией и Турцией в 19-ом ст., Тифлис, 1900.
- А. А. Акопян, Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, Ереван, 1987.
- Акты Кавказской Археологической Комиссии (АКАК), т. 1-12, Тифлис 1866-1888.
- Армяно-русские отношения в 18-м веке. Сборник документов., т. 2, ч. 1, Ереван 1964.
- Армяно-русские отношения в 18-м веке. Сборник документов. т. 3, Ереван, 1978; т. 4, Ереван, 1990.
- А. К. Артамонов, Персия как наш противник в Закавказье, Тифлис, 1889.
- П. Т. Арутюнян, Освободительное движение армянского народа в первой четверти 18-ого века, Москва 1954.
- Ахмед-бек Джеваншир, О политическом существовании Карабагского ханства, Баку 1961.
- А. Бакиханов, Гюлистан-ирам, Баку, 1926.
- А. Бакиханов, Сочинения. Записки. Письма, Баку, 1983.
- Б. П. Балаян, Дипломатическая история русско-персидских войн и присоединения Восточной Армении к России, Ереван 1988.
- В. В. Бартольд, Сочинения, т. 5, Москва 1968, т. 7, Москва 1971.
- П. Г. Бутков, Материалы для новой истории Кавказа с 1722 по 1803гг, т. 1, 2, СПб. 1869.
- Грамоты и другие исторические документы относящиеся до Грузии, ч. 1, СПб. 1891.
- "Джихан-номе" и "Фезвеке" Кятиба Челеби как источник по истории Армении 17-ого века, Ереван, 1973.
- Документы и материалы по истории армянского народа. Социально-политическое положение Восточной Армении после присоединения к России (1830-1870), Ереван, 1993.

- Дорожная карта Кавказского края, составлена и литографирована в военно-топографическом отделе Кавказского военного округа, Тифлис 1870.
- Н. Н. Дубровин, История войны и владычества русских на Кавказе, т. 6.
- О. Евецкий, Статистическое описание Закавказского края, СПб. 1835.
- С. П. Зелинский, Племенной состав, религия и происхождение государственных крестьян. Свод материалов по изучению экономического быта государственных крестьян Закавказья, т. 2, Тифлис, 1887.
- Г. Иманов, Вопросы историографии Азербайджана, Труды Азербайджанского филиала АН, т. 30, Баку 1936.
- История, география и этнография Дагестана 18-19-ого веков, Архивные материалы, Москва, 1958.
- Кавказская старина, Тифлис, 1872, № 2.
- М. Нерсисян, Из истории русско-армянских отношений. кн. 1, Ереван, 1956.
- Кавказский сборник, т. 1-29, Тифлис 1876-1909.
- Карта Армении и пограничных стран, Х. Ф. Б. Линча и Ф. Освальда.
- Карта Кавказского края с показанием густот населения, Баку, 1908.
- Карта J-38-11-6, (Uşurplıñı) изд. 1973.
- Карта Закавказского края до 1917г.
- К освещению проблем истории и культуры Кавказской Албании и восточных провинций Армении, т. 1, Ереван 1991.
- Н. А. Кузнецова, Иран в первой половине 19-ого века. Москва-Ленинград 1983
- В. Н. Левиатов, Очерки из истории Азербайджана в 18-ом веке. Баку 1948.
- П. Лерх, Исследования об иранских курдах и их предках, северных халдеях, кн. 1, СПб., 1856.
- Ш. А. Месхиа, Города и городской строй феодальной Грузии, Тбилиси 1959
- В. Ф. Минорский, История Ширвана и Дербенда, Москва 1963.
- Мирза Адигезаль-бек, Карабаг-наме, Баку 1950
- Мирза Джамаль Джеваншир Карабаги, История Карабага, Баку 1959
- Обозрение Российских владений за Кавказом, в статистическом, этнографическом, топографическом и финансовом отношениях, ч. 3, СПб. 1836.
- Описание Карабагской провинции, сост. полк. Ермоловым и Могилевским в 1823г, Тифлис 1866.
- А. Д. Папазян, Аграрные отношения в Восточной Армении, Ереван, 1972.
- И. П. Петрушевский, Очерки из истории феодальных отношений Азербайджана и Армении в 16-м начале 19в.в., Ленинград, 1949.
- В. А. Потто, Кавказская война в отдельных очерках, эпизодах, легендах и биографиях, т. 1-3, вып. 1-4, СПб. 1887-1889.
- В. А. Потто, Первые добровольцы Карабага в эпоху водворения русского владычества. Тифлис, 1902.
- Присоединение Восточной Армении к России, Сборник документов, т. 1, Ереван 1972.

- Сборник материалов для описания Тифлисской губернии, т. 1, вып. 1, Тифлис 1870.
- Свод статистических данных о населении Закавказского края, извлеченных из посемейных списков 1886, Тифлис, 1893, Елизаветпольская губерния.
- Сеид-Заде, Мирза Юсиф Нерсесов, Известия Азерб. Фил. АН СССР, 1942, № 9.
- Симеон Ереванши, Джембр, Москва, 1958.
- Советский Азербайджан, Баку, 1958.
- Статистическое обозрение Персии составленное подполковником И. Ф. Бларамбергом в 1841 году, СПб. 1853.
- Утверждение русского владычества на Кавказе, т. 1-4, Тифлис, 1901-1908.
- В. Н. Худатов, Закавказье (Историко-экономический очерк), Москва-Ленинград, 1926.
- И. Шопен, Исторический памятник Армянской области в эпоху ее присоединения к Российской империи, СПб. 1852.
- М. М. Щербатов, Генерал-фельдмаршал князь Паскевич, его жизнь и деятельность, т. 3, СПб. 1891.
- Г. А. Эзов, Сношения Петра Великого с армянским народом. Документы, СПб. 1898.
- Энян Олла Реза, Азербайджан и Арран, Ереван 1993.
- Энциклопедический словарь, издатели Ф. А. Брокгауз, И. А. Ефрон, т. XX<sup>a</sup>, СПб. 1897 СПб. 1894, т. 13-а.
- Allen W. E. D., A History of the Georgian People. London 1932.
- Encyclopedie de L'Islam, Vol.-1, Paris 1960, Vol. 2, Paris 1965.
- Hewsen, R., The Meliks of Eastern Armenia, Revue des etudes Armenians, Paris 1975-1976.
- History of Persia under Qajar rule, Translated from Persian of Hasan-e Fasa'is Farsnama-ye Naseri, by Herbert Busse. New York-London 1972.
- History of Persia, by Sir Percy Sykes, London 1921, Vol. 2.
- Researches of R. E. Smith and R. G. Dwight in Armenia: including a Journey through Asia Minor, and into Georgia and Persia, Vol. 2, Boston 1833.
- The Life and Adventures of Joseph Emin, an Armenian. London 1792, Vol. 2.
- Travels in Georgia, Persia, Armenia, ancient Babylonia etc. during the years 1817, 1818, 1819 and 1820, by Sir Ker Porter, London 1821, vol. 1, 2.
- ۱۳۲۲ تذکره الملوك. تهران.
- ۱۳۳۶ حمدالله مستوفی قزوینی، نزهة القلوب. تهران
- دهخدا علی اکبر لغتنامه جلد ۱-۲۷ تهران
- ۱۳۳۹ رضاقلیخان هدایت، تاریخ روضه الصفای ناصری، جلد نهم، تهران.
- ۱۳۵۱ عبدالرزاق دنبلی، مآسر سلطانیه. تهران
- ۱۳۷۱ محمد علی مخلصی، فهرست پناهای تاریخی آذربایجان شرقی. تهران
- ۱۳۷۲ میرزا محمد صادق موسوی، تاریخ گیتی گشای. تهران.

Միրզա Յուսուֆ Ներսեսուվ, Թարիխ-ե Սաֆի, Վրաստանի Հանրապետության ԳԱ, Կ. Կեկելիձեի անվան ձեռագրերի ինստիտուտի Արևելյան լեզուների բաժին, P- 195:

Միրزا Եոսոփ Նրսոփ, واقف و دیگر معاصرین, دمیرخانشورا ۱۲۷۲

Միրزا Մեհմեդ Խան Աստրաբադի Թարիխ Նադրի, Թեհրան ۱۲۶۷

Մյունոսկի Վ. Գե. , سازمان اداری حکومت صفوی, تهران ۱۳۳۱



## ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ

- Արաշիճե Եվգ., իշխան 66, 93  
 Արաս, շահ 38, 53, 116, 153  
 Արաս բեկ 74, 75  
 Արաս Միրզա 13, 28-29, 30-32, 88, 89, 93, 94, 100-103, 106-107, 109, 110, 112-124, 126-134, 136-, 138, 140-148, 153  
 Արասյան խալիֆաներ 99  
 Արդալահ Քյոփրուլու փաշա 43  
 Արդ-առ-Ռազակ Դումրուլի 27, 28, 38, 135  
 Արդու-Սամեդ-բեկ Բահման Միրզա 12  
 Արխազով Ի. Ն. իշխան, գեներալ-մայոր 137, 138  
 Արրահամ, մարզաբե 68  
 Արուլ Ֆաթի խան, Իբրահիմ խանի որդին 72, 78, 92  
 Աղեկ կամ Ալի շահ, իշխել է 1747-1748թթ. 48, 55  
 Ազատ խան Աֆշար 53, 59  
 Աբա Ալլահ Մեշքինի 73  
 Աբա խան 136  
 Ալեքսանդր Միրզա 77, 89, 108, 111  
 Ալեքսանդր Պավլովիչ I 102, 109, 111  
 Ալի 120, 153, 154  
 Ալի աղա (Վադիֆի որդին) 76  
 Ալի Դուլի (Աղա Մուհամմադ խանի եղբայրը) 67  
 Ալլահյար Բեկ Ռամուլու 93  
 Ալլահյար խան 133, 147  
 Ալլահվերդի յուզբաշի, Ջրաքերդի 25  
 Ալլահ դուլի սուլթան 43, 51  
 Աիմեդ խան Խոյի 63  
 Աիմեդ-բեկ Ջևանշիր 11, 24  
 Աղա Բիքե (Իբրահիմ խանի կինը), տե՛ս Բիքե Աղա 63, 74, 93  
 Աղա Բիքե (Իբրահիմ խանի դուստրը) 78, 114  
 Աղաբեկ Քալանթարով 123  
 Աղա Քիչի բեկ, Շաքիի Հաջի Չելեբիի որդին 58, 59  
 Աղա Միր Ֆաթեհ 146  
 Աղա Մուհամմադ խան, շահ (1796-1797) 15, 26, 46, 52, 64, 66-80, 115, 118, 122  
 Աղա Սեիդ (Մուհամմադ) Մոջրեհիդ 108, 109  
 Ամիր Ասլան խան Ղրղլու 48-49, 55

Ամիր խան սարդար 13, 14, 28-31, 34, 35, 95, 111-119, 123-131, 134-137, 142  
 Ամիր խան Ջահանբեգլու 94, 127  
 Անա Խանում, Իբրահիմ խանի կինը, 93  
 Աննա, Ներսեսովի դուստր 14  
 Առաքել Կոստանանց 11, 40, 41, 50, 124  
 Ավան Յուզբաշի 19-20, 46  
 Արզուման Յուզբաշի 52  
 Բաբա խան, տե՛ս Ֆարհադի շահ  
 Բադիր խան Շահսևան 93  
 Բակիխանով, Ա., 12  
 Բադդասար արքեպիսկոպոս Հասան-Ջալալյան 14  
 Բարխուդարյանց, Մ. 56  
 ՕԲեջան խան 121  
 Բեջան խան սանդուղդար 147  
 Բուլզակով Ս. Ա., գեներալ 97  
 Բուտկով Պ. Գ. 48, 63  
 Գարսևան բեկ Շավանվաճե 79  
 Գեորգի, Վրաստանի վալի 76-78, 82-83  
 Գեշթասի Սասանյան թագավոր 137  
 Գլազենապ Գ. Ի., գեներալ-մայոր 97  
 Գյանջում աղա Խանդամիրով 119  
 Գուդուլիշ Ի. Վ., գեներալ-ֆելդմարշալ 96-98,  
 Գուդուլիշ, կասիխան 123  
 Գուլյակով Վ. Ս., գեներալ-մայոր 80, 85  
 Դալի-Մահրասա 52  
 Դավիդ Միրզա, Գեորգի XII թագավորի ավագ որդին 78-79, 82-84  
 Դավիթ Բեկ 19, 46  
 Դավիթ, թագավոր 75  
 Դարիա թագուհի, Հերակլ թագավորի կինը 69, 77, 84  
 Դուայթ, Ռ. Գ., 45  
 Եկատերինա, Ներսեսովի դուստր 14  
 Եկատերինա թագուհի 71-72  
 Եսայի Հասան-Ջալալյան 13  
 Զեմդով Ա. Պ., հետևակագործի գեներալ-լեյտենանտ 103-105, 137  
 Զոհրաթ Թառումյան 122  
 Զոհրաթ խան Գորջի 142-143  
 Զուրով Վ., գեներալ 26, 33, 71-72  
 Էհսան խան 138-140  
 Էրիստով Գ. Ե., գեներալ-մայոր 144-146  
 Թադիսդյան Մ. 122  
 Թյուլի-Արզումանի տե՛ս Արզուման  
